Ներմուծված խումբը կազմված է ամֆորաների, օլպիոս-սափորի, ունգվեն-տարիների, կանթարոսի, խնկարկման անոթի, թրծակավային արձանիկ-տերրակոտաների բեկորներներից, որոնց ձևերը վերականգնվում են Հայաստանի և հելլենիստական աշխարհի մյուս հնագիտական շատ հուշարձանների հայտնաբերված լավ ուսումնասիրված և ճշգրիտ թվագրվող խեցեղենի համադրության միջոցով:

Ամֆորաների բեկորները երկուսն են: Առաջինը ողջ իրանը հորիզոնական մատնեքավոր գոտիներով ձևավորած ոչ մեծ , նրբախեցի անոթի է պատկանում (բեկորի h=55 սմ, լայն. 43 սմ, խեցու հաստ. 3-4 մմ, մատնեքների հեռավորություն 5-9 մմ): Այն գտնվել է քաղաքային Առաջին թաղամասի (93Mi քառ.) պեղումների ժամանակ, գետնի արտաքին մակերեսից 1,20մ, խորությունից, ստորին՝ հելլենիստական շերտից: Պատրաստված է մանրահատ սպիտակ մանր հատիկների պարունակություն ունեցող, լավ հունցած կավից, որը թրծումից ստացել է բաց դեղնաշագանակագույն երանգ: Բեկորի ներքին մակերեսը պատած է ինչ որ սև,թանձր քսուզով, որը ներծծված է բեկորի պատին և թույլ է տալիս մտածել, որ ծառայել է անոթի մեջ լցվող նյութի պահպանությանը, քանի որ ամֆորաները ծառայել են որպես առևտրական տարա: Բեկորի ներսույթի աղեղի փոքրությունից, խեցու նրբությունից, առվակոսների խտությունից և խորությունից կարելի է եզրակացնել, որ անոթը եղել է ոչ մեծ և նրբիկ: Չունենալով անոթի պսակի, իրանի, նստուկի ձևերը՝ այն վերականգվում է հունական ամֆորաների բազմահարուստ տեսականու մեջ՝ աղերսներ փնտրելու եղանակով: Այդպիսի արտաքին մշակում ունեցող, հատկապես փոքր չափերի ամֆորաներն ունեն ոչ լայն, կոնաձև դեպի վեր լայնացող իրան, կլորավուն ուսերին նստած, ուռուցիկ շուրթով ավարտվող վզիկ: Կանթերը ամրացված են շուրթի տակ և հանգչում են անոթի ուսերին[1] (աղ. I, նկ.1): Ուսումնասիրողները գտնում են, որ այս մատնեքավոր ամֆորաները ստեղծվել են Արևելամիջերկրածովյան կենտրոններում և տարածվել անտիկ աշխարհի մյուս երկրներ[2]: Դրանց ամենավաղ օրինակները փյունիկյան ամֆորաներն են, հայտնաբերված Կարթագենից, Հյուսիսային Աֆրիկայից, որոնք թվագրվում են մ.թ.ա. 3-2-րդ դարերով (բարձր. 60-70 սմ, լայնք. 40 սմ): Միջերկրածովյան մյուս երկրներում դրանք տարածվել են մ.թ.ա. 1-ին - մ.թ. 1-ին դարում, իսկ մերձսևծովյան-հունական գաղութներում՝ միայն մ.թ. 2-րդ – 4-րդ դարերում[3]:

Հայաստանի անտիկ հուշարձաններում այս ամֆորաներից հայտնաբերվել են մեկ ամբողջական, միջին չափերի, օրինակ, Պաղնիկի[4], փոքր ամֆորայի հատակամերձ հատված՝ Արմավիրի միջնաբերդի գագաթի պալատական շինության[5] և ահա քննարկվող բեկորը՝ Տիգրանակերտի քաղաքային առաջին թաղամասի պեղումների միջոցին : Արմավիրի օրինակի կարևորությունը այն է, որ մենք պատկերացում ենք ձեռք բերում անոթի իրանի ստորին մասի և նստուկի վերաբերյալ՝ կլորավուն, կենտրոնում փոքրիկ փոսիկ: Այն կրկնում է Տանաիսում հայտնաբերված նույնատեսակ ամֆորաներին ոչ միայն նստուկի ձևով, այլև արտաքին մակերեսի մատնեքների խորությամբ և խտությամբ[6] , որը թույլ է տալիս առաջարկել անոթի ձևի վերականգնումը:

Հայաստան մ.թ.ա II դարից են ներմուծված ամֆորաների մյուս տեսակները՝ հայտնաբերված հիմնականում Արտաշատի, Արմավիրի պեղումներից դրանց ներկայացնում են Հռոդոսի (մ.թ.ա. II-Iդդ.), Կոսի (մ.թ.ա.I - մ.թ.Iդդ.), Պոնտական Հերակլեայի (մ.թ. I-IIդդ.), ուշ աթենական (մ.թ. III-IVդդ.) արտադրանքը[7]:

Այժմ այս նոր տեսակը ներկայացնում է մ.թ.ա. I – մ.թ. I -ին դարերում երկիր բերված, ամֆորաների հինգերորդ տեսակը:

Ամֆորայի երկրորդ բեկորը, կրկին հայտնաբերված քաղաքային Առաջին թաղամասից, խիստ զանգվածեղ հատակամաս է, դուրգով պատրաստման հետևանքով առաջացած փոսիկ- գալարներով (տրամ. 4,2 սմ):Արտաքին բաց գույնի մակերեսը հարթեցված է, թեթև փայլեցրած, խեցին կարմրաշագանակագույն, բավական խիտ, մանրահատ ավազի խառնուրդով: Բեկորի զննումից երևում է, որ անոթի հատակամասը ագուցված է մի յուրօրինակ ոտքի մեջ: Կրկին անդրադառնալով հելլենական ամֆորաների բազմազանությանը՝ կարծես պարզեցինք այն տեսակը որին պատկանել է քննարկվող բեկորը: Դա հարթ շուրթով, բարձր գլանաձև վզիկով, կտրուկ ուսերից կոնաձև ցած իջնող իրանով ամֆորաներ են, որոնց նստուկների այդ յուրօրինակ ձևը գրականության մեջ անվանվում է “ հոլաձև” (куборовидный, աղ.1, նկ. 2): Հունական ամֆորաների դասակարգմամբ զբաղվող Վ. Գրեյսը և Ի.Բ.Բրաշինսկին այսպիսի նստուկով ամֆորաները համարում են Հռոդոսյան արտադրանք[8], իսկ Ս.Բ.Զեեստը, դրանք բնորոշ է համարում Արևելյան միջերկրածովյան շատ

[1] **Д. В. Шеглов**, Узкогорлые, светлоглиняные амфоры первых веков нашей эры, классификация и хронология, КСИА 156, М., 1978, с. 16, рис. 9.
[2] **И.Б. Зеест**, Керамическая тара Боспора ,МИА(Материалы и исследования по археологии СССР) 83, М.,1960,с.114, табл. XXXII; **Щеглов Д.,Б**., указ,раб., с., 20
[3] **V. R. Grece.** Amporas and the ancient wine trade,(The American Schoolof classical studies at Athans), Princeton, 1961, p. 37; **В. Ф, Гайдукевич**,Раскопки Тиритаки и Мирмекия в 1946 – 1952гг., МИА 85, 1958, с. 168 табл. рис. 20; **Г., М., Мелентьева,** Ольвийский ” керамический “ комплекс первых веков нашей эры КСИА(Краткие сообщения Института археологии АН СССР), 116, 1969, с. 24 – 25, рис. 2 / а .
[4] **R.P. Heper,** Pagnik Oreni excavations 1971,(Keban Project, 1971 activites, Middle East Technical University, Keban project publications, ser.,1, 4)Ankara, 1974. p.108, taf. 95 / 2
[5] Տեղեկությունը մեզ տրամադրել է Մ.Հ. Զարդարյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը
[6] Т.,М., Арсеньева, Д.,Б., Шелов, Раскопки юго- западного участка Танаиса (1964 – 1972гг.), Археологические памятники Нижнего Подонья, т. I, М., 1974, с. 149, табл. X / 3.
[7] М. Зардарян, Амфоры из раскопок Арташата, ИФЖ, 1977, 1,с., 270-271
[8] V.R. Grase, Notes on the Amphoras from the Koroni Peninsula, - Hesperia, vol. XXXII, 1963, fig. 1,5; И. Б. Брашинский, Греческий имппорт на Нижнем Дону, Л., 1980, с. 31, табл. X, XXIII / 4,5:

կենտրոնների[1]: Տիգրանակերտի նմուշը ամենայն հավանականությամբ պետք է համարել Հռոդոսյան արտադրանք, քանի որ Հայաստան ներմուծված խեցեղենի մեջ ամենաբազմաքանակը այդ կենտրոնի ամֆորաներն են[2]:

Հաջորդ ներմուծված տեսակը սև լաքապատ անոթների՝ վզից ուսերին անցման մասեր են՝ պատրաստված դուրգով, խիստ մաքուր, լավ հունցած միատար կավից: Արտաքին մակերեսները պատած են թույլ մետաղական փայլ ունեցող, ոչ թանձր, սև, իսկ ներքուստ տաք կարմիր լաքերով (բեկորի H= 5,0 սմ , ներքին D= 3,5 սմ , իսկ խեցու հաստությունը 0,5մմ է): Տեխնիկական չափերի քննությունը հուշում են, որ բեկորները չեն կարող պատկանել ամֆորայի կամ սրվակ- բալզամարիի , քանի որ առաջինի համար դրանք փոքր են, իսկ երկրորդի համար՝ մեծ: Մեր պրպտումները հունական խեցանոթների տեսականու մեջ թույլ տվեցին առաջադրել դրանց անտիկ աշխարհում լայն տարածում ունեցող մեկ այլ տեսակի՝ սևալաք օլպիս- սրվակի[3] կամ սափորիկի[4], պատկանելու հավանականությունը (աղ.I, նկ. 3):

Վ.Ֆ. Գայդուկևիչը Մերձսևծովյան հուշարձաններից (Միրմեկի, Տիրիտակի և այլնի) գտնված ոչ թանձր սևալաքապատ տեսականին ներմուծված է համարում փոքրասիական կենտրոններից մեկից, քանի որ մետրոպոլիայում այն այլևս չէր արտադրվում[5]: Հայաստանի հուշարձաններ Արտաշատից, Արմավիրից հայտնաբերված և մ.թ.ա III վերջով – մ.թ.ա I դարով թվագրվող նմանատիպ ներմուծումները Մ. Զարդարյանը համարում է Հոնիական, Էգեիդյան կենտրոնների արտադրանք[6], և մենք կարծում ենք, որ Տիգրանակերտի քննարկվող բեկորները կլրացնեն Հայաստան ներմուծած ոչ բազմաքանակ, բայց լավ հայտնի փոքրասիական սևալաք անոթների այդ շարքը :

Երկու օրինակով հայտնաբերված անուշահոտ յուղերի տեղափոխմանն ու պահպանմանը ծառայող **սրվակ-ունգվենտարիները** (աղ.I, նկ.4) երկու տեսակ են ներկայացնում: Առաջինը իլիկաձև իրանով, նեղ, բարձր ոտքով և նույնքան երկար վզով , բաց օքրայավուն քսուքով պատված արտաքինով տեսակի ստորին մաս է , իսկ երկրորդը՝ արտաքինը սև լաքանման քսուքով պատած ու փայլեցրած, շատ խիտ ու մաքուր, մոխրագույն կավից պատրաստված անոթի հատակամերձ հատված է: Երկրորդի ուռուցիկ իրանի կողերը կտրուկ անցումով է միացված գոգավորություն ունեցող նստուկին: Այս երկու տեսակի ունգվենտարիների հայտնաբերումները շատ առատ են Հայաստանի և հարևան երկրների հուշարձաններում և շատ որոշակիորեն թվագրվում են մ.թ.ա 1 – ին - մ.թ. 3- րդ դարերով[7]:

Տիգրանակերտի անտիկ առաջին թաղամասի պեղումների միջոցին հայտնաբերված հաջորդ անոթի բեկորները, կարծում ենք, պատկանում են մատնեքավորած ուսերով, հարթ կոնաձև ներքնամասով, ցածր օղակաձև նստուկով , ուղղահայաց ամրացված կանթերով, արտակարգ գեղեցիկ **կանթարոսի** : Այն ևս վերը ներկայացրած երկրորդ ունկվենտարիի նման պատրաստված է շատ խիտ_մոխրագույն խեցուց և ծածկված է թանձր լաքանման սև քսուքով և փայլեցված է կատարյալ (աղ.I, նկ.5): Այս անոթները ևս հունական ներմուծվող խեցեղենի տարածված ձևերից են:

Ներմուծված խեցեղենի հաջորդ խումբը **անտիկ ջնարակած** անոթները ներկայացնող բեկորներն են; Դրանք հայտնաբերվել են Միջնաբերդի հյուսիսային պարսպապատի մաքրման, և քաղաքային Առաջին թաղամասի պեղումների ժամանակ: Միջնաբերդից գտնվածը հարթ նստուկից հավասարաչափ վեր լայնացող կողերով անոթի հաստապատ հատակամաս է: Այն պատրաստված է շատ մաքուր, զտված, կաթնաճերմակ կավից, պատված է նույնքան որակյալ երկնագույն թանձր ջնարակով: Քանի որ չունենք տվյալներ անոթի վերնամասի ձևի վերաբերյալ, ենթադրում ենք որ այն կարող էր պատկանել միականթ փարչանման անոթի: Քաղաքային թաղամասի բեկորները, թեև հայտնաբերվել են տարբեր տարիներ, բայց պատկանում են միևնույն անոթին:

Դրանք պատրաստված են դուրգով, դեղնավուն, շատ մաքուր, լավ հունցած խիտ կավից: Կապտականաչավուն ջնարակը, որը տեղ-տեղ ավելի մուգ ու թանձր է քսած, ծածկում է անոթի ողջ արտաքինը և շուրթի ներքին եզրահատվածը: Անոթի շեփորաձև լայնացող շուրթով ավարտվող գլանաձև վիզը և ողջ իրանի կեսը հարդարված է հորիզոնական ներձկված գոտիներով: Կանթի պահպանված բեկորը ոլորուն է և ամրացված է եղել շրթեզրից ցած, թեթև վեր ձգվելով՝ իջել է ցած ու ամրացել անոթի ուսին: Իր ձևակազմական և հարդարման բոլոր տվյալներով անոթն իր աղերսներն է գտնում Արմավիրի ու Արտաշատի պեղումներով հայտնաբերված, ոլորուն կանթերով, օղակավոր նստուկով, լայնաբերան անոթների հետ[8] (աղ.II, նկ.6) և իր պատրաստման տեխնիկական հատկանիշներով, ջնարակով և այն հանգամանքով, որ հայտնաբերվել են մ.թ.ա. I-ին դարի կեսերին

[1] И.,Б., Зеест, Внутренная торговля Прикубанья с Фанагорией, МИА, 19, 1951, с. 117
[2] М. Зардарян, Амфоры из раскопок Арташата, ИФЖ, 1977, 1, с.266
[3] Francine Blonde, Jacque Y. Perreault et C.Peristeri, Les Ateliers de Potiers dans le Monde Grec aux Epoques Geometrique, Archaique et Classique, bulletin de corespondance Hellenique ,supplement XXIII, 23,fig, 11/6,7, fig. 12/6,7
[4] *И.Б Брашинский*, указ, раб., табл.XVIII/225,226; *В.А. Латышева*, Раскопки античнего поселения Маслины в Северозападном Крыму, КСИА 156, М., 1978, с. 56, рис. 4,2.
[5] **В.Ф.Гайдукевич,** Раскопки Мирмекия в 1935-1938гг, МИА 25, 172,рис.71
[6] *М.А.Зардарян,* Торгово-экономические связи Армении с элленистическом миром в III-I вв. До н.э., автореферат, Ер., 1986 с. 7-8.

[7] **В.Ф.Гайдукевич,** Загородная сельская усадьба эллинистической эпохи ж районе Мирмекия, в кн.Боспор-ские города, Ленинград, 1981, с. Рис. 6 / 2,3; **Гагошидзе Ю.М**. Самадло (археологичские раскопки)-Тбилиси, 1979,с.43-44, рис. 32,39,40, рис. 6, 231;**О., Лордкипанидзе** Ванское Городище, в ВаниI,с.63, рис.85; Տիրացյան Գ.Ա, Արմավիրի պեղումները, Լրաբեր 1972թ, 2, էջ 41: Նույնի Արմավիրի 1973թ պեղումների նյութերից,ՊԲՀ 1974, 3, նկ3

[8] *Գ.Ա.Տիրացյան*, Արմավիրի պեղումները, Լրաբեր, 1972, № 2, էջ 40, Նույնի Լրաբեր1973, № 5, էջ 100-101, *Ժ.Դ.Խաչատրյան*, Հայաստանի անտիկ շրջանի ջնարակած խեցեղենը, ՊԲՀ 1977, № 3, էջ 187, աղ II_{3-7}:

կառուցած քաղաքում, լրացնում են Հայաստանում մ.թ.ա. 2-րդ – մ.թ.2-րդ դարերում լայն տարածում ստացած, ջնարակած խեցեղենի շարքը, հայտնաբերված Արմավիրում, Արտաշատում, Սիսիանի իշխանական դամբարանում, Գառնիում և այլուր : Տիգրանակերտի նմուշները նաև ընդարձակում են անտիկ ջնարակի տարածման սահմանները դեպի Հայոց ծայր արևելյան կողմերը: Այս բնագավառում կատարված ուսումնասիրությունները բացահայտել են Հայաստանի անտիկ ջնրակած խեցեղենի միջագետքյան ծագումը, դրա պատկանելիությունը ջնարակած խեցեղենի արևելյան թևին՝ վերագրելով դրանք զանգվածային արտադրանք ունեցող կենտրոններ Տիգրիսի վրայի Սելևկիայի և Դուրա Եվրոպոսի արտադրանքին[1]:

Մ. Հ. Զարդարյանը, զբաղվելով Հայաստանի և հելլենիստական աշխարհի առևտրատնտեսական կապերի ուսումնասիրությամբ, կոնկրետացրեց Հայաստանի ջնարակած խեցեղենի արտադրության կենտրոնը Տիգրիսի Սելևկիայում՝ նշելով, որ այդ կենտրոնը իր առևտրական կապերը իրականացնում էր հիմնականում Մերձեփրատյան և ուղղակի Տիգրիսյան մայրուղիներով[2]: Կարծում ենք, որ Տիգրանակերտը այս հարաբերությունների մեջ կարող էր ընդգրկվել հայկական հելլենիստական առևտրի III շրջափուլում միայն՝ մ.թ.ա 60 – մ.թ 50- ական թվականներին[3]:

Խնկարկման անոթի բեկորը ,որը շատ հաստախեցի է, պատրաստված խիտ մանրահատ կավից և ձևավորված է երկու հատած կոնաձև մասերի, գագաթներով իրար միացման եղանակով: Միացման տեղում անոթը ունի զարդարուն ուռուցիկ գոտի (աղ.II, նկ.7): Խնկարկման անոթի նմանատիպ ձևակազմությունը նորություն է թվում հայկական միջավայրում, սակայն հյուսիսմերձսևծովյան անտիկ հուշարձաններում դրանք առատ են, կազմում են մի քանի տարատեսակների խմբեր: Դրանց բազմության մեջ հանդիպում են մեր անոթին նման օրինակներ և թույլ են տալիս մեր նմուշի արտադրության կենտրոնը տեսնել այդ տարածքաշրջանում:

Հելլենիստական մշակույթին խիստ բնորոշ մի ճյուղի՝ **կորոպլաստիկայի՝** օրինակներ Տիգրանակերտից հայտնաբերվել են առայժմ միայն երկու բեկոր: Մեկը գլխաշորով կնոջ արձանիկի հետնամասի բեկոր է (աղ.II, նկ.8) (6,5 X 3,0 սմ), մյուսը՝ թռչնի իրանի կենտրոնական մաս (3,2X2,5սմ, աղ.II, նկ.9): Համադրելով ուշ հելլենիստական հուշարձաններում հայտնաբերված տերակոտային արձանիկների հավաքածուների մեջ հանդիպող նմանատիպ աղերսների հետ առաջինը կարելի է վերագրել որևէ աստվածուհու, իսկ երկրորդը վերականգնել որպես աղավնու արձանիկներ: Դրանք պատրաստված են երկփեղկ կաղապարով, շատ լավ հունցած, միատարր՝ առաջինը թրծումից ստացված մուգ շագանակագույն, երկրորդը `դեղնաօքրայավուն կավերից: Արձանիկների ներսույթում պարզորոշ ընթերցվում է պատրաստած վարպետի մատների, իսկ եզրերին՝ երկու մասերի միացման կարերի հետքերը: Թեև արձանիկները կրում են սխեմատիկության, մարմնաձևերի մշակման պայմա-նականության հատկանիշեր, այնուամենայնիվ պատկանում են հելլենիստական դարաշրջանում իր զարգացման գագաթնակետին հասած, բազմաժանր, բազմաթեմատիկ և գաղափարական ծանրաբեռվածություն կրող կորոպլաստիկային[4]:

Այսպիսի արձանիկները գիտական գրականության մեջ համարվում են խաղալիքներ կամ պաշտամունքի նվիրատվական առարկաներ: Մենք հակված ենք երկրոդ կարծիքին և գտնում ենք, որ դրանք նվիրատվություններ են, աստվածությունների խորհրդանիշներ, հատկապես աղավնիների պատկերները, որոնք հանդիպում են աստվածուհիների արձանիկների հորինվածքներում: Դրանք դրվել են տաճարների և տնային պաշտամունքի անկյունների նվիրատվական սեղաններին և դամբարաններում ննջեցյալների հետ, որպես զոհաբերություններ խտոնիկ աստվածներին[5]:

Տիգրանակերտի պեղումներով ձեռք բերված ներմուծված այս նյութերի և կորոպլաստիկայի թեև համեստ, բայց հատկանշական նմուշների առկայությունը խոսում է քաղաքի բնակչության հելլենիստական մշակույթի բոլոր կողմերին լավատեղյակ և հաղորդակից լինելու մասին: Ներմուծված նյութերի սակավությունը, բեկորային վիճակը առայժմ թույլ չեն տալիս հստակորեն խոսել դրանց արտադրող, ներմուծող և երկրում տարածող կենտրոնների մասին: Ուստի ընդունված կարգով Արցախի Տիգրանակերտի ներմուծումը կապում ենք Հայաստանի ավանդական գործընկերներ Փոքր Ասիայի, Հոնիայի, Միջագետքի, Հյուսիսմերձսևծովյան արտադրական կենտրոնների հետ, որոնց հետ առևտրի ծավալը մ. թ. ա առաջին հազարամյակի սկզբից ակտիվանալով մ. թ. ա 1-ին – մ.թ. 1-ին դարերում ընդլայնվեց և հասավ իր ծաղկման գագաթնակետին: Դա պայմանավորված էր Տիգրան Մեծի ստեղծած լայնածավալ պետության պայմաններում կումունիկացիոն ուղիների վրա հաստատուն հսկողություն սահմանելու և արևելքում առևտրա-քաղաքական միջնորդ դառնալու հետ:

Համոզված ենք, որ Արցախի Տիգրանակերտի հետագա ուսումնասիրության գործընթացը կառատացնի քաղաքի առևտրատնտեսական և մշակութային կապերը բացահայտող նյութերի նորանոր գյուտերով:

---

[1] *Գ.Ա.Տիրացյան*, նշվ աշխ., 1973, 5, էջ 100-101; *Ժ.Դ.Խաչատրյան*, նշվ. աշխ., ՊԲՀ 1977,7 , էջ 188
[2] *M.Зардарян,* Торгово-экономические связи Армении с элленистическом миром в III-I вв. до н.э., автореферат, Ер., 1986 с. 8.
[3] Նույն տեղում , էջ 16-17:
[4] М. А. Налижкина, Терракоты Мирмекия и Тиритаки, МИА 25, 1952 , с.334, рис.22/2 : М.М.Кобылина, Терракотвжые статуэтки Пантикапея и Фанагории, М.1961,с. 35 – 36, таб. 57/5
[5] П.Ф, Силантьева, Терракоты Пантикапея, САИ, вып. Г 1-11, ч . II, 1971, с. 16-17, таб, 4/ 2,4,5,6: Денисьева Б.И., Коропластика Босфора, Л. 1981, таб. XII/ г, д, з

Աղյուսակ I

1



2



3

4

5

Աղյուսակ II

6



7

8

9

ՀՏԴ 352(479.243) Պատմություն

Տարոն Հակոբյան
ավագ դասախոս, պ.գ.թ , ԱրՊՀ պատմության ամբիոն

ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ և ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1992 Թ. ՀՈՒՆՎԱՐ - ԱՊՐԻԼ ԱՄԻՍՆԵՐԻՆ)

ԼՂՀ-ի հռչակումից հետո սկսվեց նոր իշխանական կառույցների, առաջին հերթին՝ օրենսդիր մարմնի՝ Գերագույն խորհրդի ձևավորման գործընթացը: ԼՂՀ-ում պետական շինարարության առանձնահատկությունն այն է, որ հանրապետության հռչակումից հետո սկզբնավորված իշխանական կառույցների, առաջին հերթին՝ օրենսդիր, ապա եւ գործադիր մարմինների ձեւավորումը ընթանում էր ռազմական շինարարության խնդիրների լուծմանը զուգահեռ՝ չընդհատվող ռազմական գործողությունների պայմաններում: ԼՂՀ օրենսդիր մարմինն իր գործունեության հենց սկզբից միջազգային տարբեր կոնվենցիաներին միանալու ուղեգիծ որդեգրեց՝ նպատակ ունենալով ստեղծեւ ազատ, իրավական եւ ժողովրդավարական պետություն:

Բանալի բառեր՝ Լեռնային Ղարաբաղի հանրապետության հռչակում, Գերագույն խորհուրդ, Նախարարների խորհուրդ, ինքնապաշտպանական ուժեր, պաշտպանության խորհուրդ, ԼՂՀ պաշտպանության կոմիտե:

Тарон Акопян,
к.и.н., кафедра истории АрГУ

НАЧАЛО И ОСОБЕННОСТИ ПРОЦЕССОВ ГОСУДАРСТВЕННОГО СТРОИТЕЛЬСТВА В НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКЕ (январь – апрель 1992г.)

После провозглашения независимости НКР начался процесс формирования органов власти и в первую очередь – законодательного органа, Верховного совета. Особенность государственного строительства в НКР заключается в том, что формирование органов власти, в частности, законодательной, а затем и исполнительной власти, начавшееся после провозглашения республики, проходило параллельно с решением вопросов военного строительства, в условиях непрекращающихся военных действий. С самых первых дней своей деятельности законодательный орган НКР встал на путь присоединения к различным международным конвенциям, преследуя цель создать свободное, правовое и демократическое государство.

*Ключевые слова**:** провозглашение Нагорно-Карабахской Республики, Верховный совет, Совет министров, силы самообороны, Совет обороны, комитет обороны НКР.*

Taron Hakobyan,
PhD, History department of Artsakh State University

THE BEGINNING AND FEATURES OF STATE BUILDING IN THE NAGORNO-KARABAKH REPUBLIC (January-April of 1992)

The formation process of power bodies and first of all of the legislative one – the Supreme Council - started after the proclamation of the independence of the NKR. The feature of state-building in the NKR lies in the fact that the establishment of authority bodies, particularly, the legislative and then executive powers which started after the proclamation of the republic, passed simultaneously with solution of issues of military building in conditions of unceasing military actions. Just since the first days of its activity, the NKR legislative body has performed its commitment to various international conventions aiming at the creation of a free, legal and democratic state.

Keywords: declaration of the Nagorno Karabakh Republic, Supreme Council, Council of Ministers, Self-Defense forces, Council of Defense, the NKR Defense Committee.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) հռչակումից հետո սկսվեց նոր իշխանական կառույցների, առաջին հերթին՝ օրենսդիր մարմնի՝ Գերագույն խորհուրդի (ԳԽ) ձեւավորման գործընթացը: Պետական եւ ռազմական շինարարության խնդիրները լուծվում էին զուգահեռաբար չընդհատվող ռազմական գործողությունների պայմաններում: ԼՂՀ առաջին գումարման ԳԽ-ում, որը հետագայում անվանվեց ԼՂՀ խորհրդարան (այժմ՝ ԼՂՀ Ազգային ժողով), պետք է ընտրվեր 81 պատգամավոր: Ընտրությունների օր նշանակվեց 1991թ. դեկտեմբերի 28-ը: Ընտրությունների անցկացման կարգը քննարկվեց ԼՂՀ գործկոմի դեկտեմբերի 19-ի նիստում[1]: Կազմավորվեց 81 ընտրատարածք[2], այդ թվում նաեւ բոլոր ադրբեջանաբնակ վայրերում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ հաստատվեց Է. Պետրոսյանը:

Դեկտեմբերի 28-ին կայացան ԼՂՀ ԳԽ ընտրությունները, որոնք անցկացվեցին մեծամասնական ընտրակարգով՝ ընդհանուր, հավասար եւ ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ:

[1] Տես՛ Աբրահամյան Հ., Ճակատագրին ընդառաջ, Երեւան, 2001, էջ 147:
[2] Տես՛ Օհանջանյան Մ., Անկախության քայլերը. ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն եւ ընտրությունները (1991-1998թթ.), Ստեփանակերտ, 1998, էջ 12:

Հանրապետության ԳԽ ընտրությունների մասին տեղյակ էին պահվել Շուշիի եւ ադրբեջանական մյուս բնակավայրերի բնակիչները: Ադրբեջանցիները կատարեցին Մութալիբովի հրամանը եւ չմասնակցեցին ընտրություններին, ինչպես որ չէին մասնակցել հանրաքվեին:

ԼՂՀ ԳԽ ընտրություններից հետո՝ 1992 թ. հունվարի 6-ին, Ստեփանակերտում՝ նախկին մարզխորհրդի նիստերի դահլիճում, ընտրված 51 պատգամավորներից 48-ի մասնակցությամբ (ճանապարհները փակ լինելու պատճառով 3 պատգամավորներ չէին կարողացել հասնել Ստեփանակերտ) եւ 80 դիտորդների ու լրագրողների ներկայությամբ, »Հայր մեր« տերունական աղոթքով աշխատանքն սկսեց ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը: Նույն օրը ընդունվեց »ԼՂՀ պետական անկախության հռչակագիրը«, ըստ որի՝ ԼՂՀ-ն հայտարարվեց անկախ պետություն, որի տարածքում պիտի գործեին ԼՂՀ Սահմանադրությունն ու օրենքները: Հռչակագրում այնուհետեւ ասված է, որ ԼՂՀ-ում ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին, նրա տարածքում ապրող բոլոր բնակիչները հանդիսանում են հանրապետության քաղաքացիներ, հանրապետության տարածքում թույլատրվում է երկքաղաքացիությունը, բոլոր քաղաքացիները գտնվում են ԼՂՀ-ի պաշտպանության տակ, երաշխավորվում են նրանց իրավունքներն ու ազատությունը՝ անկախ ազգային պատկանելությունից: Հանրապետության ամբողջ տարածքի նյութական եւ հոգեւոր հարստությունները պատկանում են հանրապետությանը եւ նրա ժողովրդին: Հայրենիքը պաշտպանելու համար ստեղծվում են սեփական զինված ուժեր, եւ հանրապետության քաղաքացիները զինծառայություն են անցնում ԼՂՀ տարածքում: ԼՂՀ պետական լեզուն հայերենն է[1]:

Հանրապետության սահմանները պաշտպանելու եւ բնակչության անվտանգությունն ապահովելու համար հենց առաջին նիստում որոշվեց ստեղծել հանրապետության իշխանության բարձրագույն մարմիններին ենթակա սեփական ռազմական ուժեր, հասարակական կարգի պահպանության ու պետական անվտանգության մարմիններ եւ բոլոր ռազմական ուժերը միավորել մեկ հրամանատարության ներքո:

Հունվարի 7-ի նիստում պատգամավորները ձեռնամուխ եղան ԳԽ նախագահի ընտրության հարցի լուծմանը: Առաջադրվեցին 7 թեկնածուներ՝ Լ. Պետրոսյան, Օ. Եսայան, Ռ. Քոչարյան, Ա. Մկրտչյան, Լ. Մելիք-Շահնազարյան, Ա. Մանուչարով եւ Շ. Մեղրյան: Թեկնածուներից հինգը ինքնաբացարկ հայտարարեցին, եւ մնացին Ա. Մկրտչյանն ու Լ. Պետրոսյանը: Մի քանի անգամ քվեարկություն կատարվելուց հետո 42 ձայնով ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ ընտրվեց ՀՅԴ անդամ, պատմական գիտությունների թեկնածու, 33-ամյա Ա. Մկրտչյանը[2]: Ստեղծվեց նաեւ Նախարարների խորհուրդ (ՆԽ), որի նախագահ հաստատվեց Օ. Եսայանը, իսկ տեղակալ՝ Բ. Առուշանյանը[3]: Ընտրված պատգամավորների մեծամասնությունը ՀՅԴ անդամներ էին, եւ, ԳԽ նախագահի ընտրություններում հաղթանակ տանելով, ՀՅԴ-ն որոշում ընդունեց երկրում ներքաղաքական կայունությունը պահպանելու նպատակով մի շարք կարեւոր ղեկավար պաշտոններ, այդ թվում ՆԽ նախագահինը, հանձնել մյուս քաղաքական ուժերին: ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի առաջարկով ԼՂՀ ԳԽ նախագահի առաջին տեղակալի պաշտոնի համար առաջադրվեց Ռ. Քոչարյանի թեկնածությունը, սակայն փակ գաղտնի քվեարկության ժամանակ թեկնածուն անհրաժեշտ քվեներ չստացավ: Նախագահի առաջին տեղակալի պաշտոնը մնաց թափուր:

ԼՂՀ ԳԽ առաջին նստաշրջանը կոչով դիմեց ՄԱԿ-ին, աշխարհի բոլոր պետություններին, ԱՊՀ երկրներին՝ խնդրելով ճանաչել ԼՂՀ-ն, նրան օգնություն ցույց տալ եւ կանխել արցախահայության ցեղասպանությունը:

Նստաշրջանի աշխատանքում հայտարարվեց ընդմիջում, եւ աշխատանքները շարունակվեցին հունվարի 17-20-ը:

Հունվարի 11-ին տեղի ունեցան ԼՂՀ ԳԽ պատգամավորների լրացուցիչ ընտրություններ. 11 թափուր տեղի համար ընտրվեց 9 պատգամավոր, որոնց իրավունքները հաստատվեցին ԳԽ նստաշրջանի հունվարի 17-ի նիստում: Նույն օրը ԼՂՀ ԳԽ նախագահի տեղակալ ընտրվեց ՀՅԴ անդամ Գ. Պետրոսյանը, քարտուղար՝ պատմական գիտությունների թեկնածու, անկուսակցական Վ. Հակոբյանը[4]:

ԳԽ նստաշրջանն ընդունեց »Արտակարգ դրության մասին« օրենքը: Ապա կազմավորվեցին ԳԽ մշտական հանձնաժողովները: Մանդատային, պարկեշտության, մարդու իրավունքների եւ ազգությունների հանձնաժողովի նախագահ ընտրվեց Հ.Խաչատրյանը, ագրարային հարցերի եւ գյուղական կյանքի մշտական հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ալեքսանյանը, գիտության, կրթության, լեզվի, մշակույթի եւ լրատվական հանձնաժողովի նախագահ՝ Հ. Գրիգորյանը, առողջապահության, սպորտի, սոցիալական հարցերի, բնապահպանության հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աղաբալյանը, ֆինանսավարկային եւ բյուջետային հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ղազարյանը, արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ՝ Լ. Մելիք-Շահնազարյանը, պաշտպանության եւ անվտանգության հանձնաժողովի նախագահ՝ Վ. Բալայանը, պետական շինարարության, իրավական հարցերի եւ օրինականության ամրապնդման հանձնաժողովի նախագահ՝ Կ. Բաբուրյանը: ԳԽ մշտական հանձնաժողովները մինչեւ ՆԽ-ի լրիվ կազմավորումը իրենց վրա վերցրին նաեւ ՆԽ-ի մի շարք լիազորություններ[5]:

Այսպիսով՝ արցախահայության ազատագրական պայքարը թեւակոխեց նոր շրջան՝ անկախ հանրապետության գոյության շրջանը: Ինչպես ցույց է տալիս պատմությունը, Արցախյան շարժումը սկզբնավորվեց համաժողովրդական զարթոնքի հորձանուտում: Հետագայում Շարժման մեջ ձեւավորվեց երկու հակառակ ուղղություն: Մի ուղղությունը Ադրբեջանի ագրեսիային պատասխանում էր խաղաղարար երկխոսության քաղաքականությամբ, ինչը հետագայում չարդարացվեց, իսկ դրան զուգահեռաբար գնում էր այլ գործընթաց՝ ինքնապաշտպանության ջոկատների կազմավորումը, պարտիզանական շարժումը բռնազավթված գյուղերում: Եվ այդ խնդրում վճռական դեր խաղաց Արախսում ՀՅԴ: ՀՅԴ-ի ակտիվությունը, ըստ երեւույթին, գործի մղեց նաեւ ՀՀՇ-ին, որի խողովակով նույնպես սկսվեց զենք մատակարարվել: Սա չէր կարող Ղարաբաղյան շարժման առաջնորդների խմբավորում չառաջացնել. հայտնվեցին Լ. Տեր-Պետրոսյանի կողմնակիցներ, բայց հիմնական մասը ընդգրկվեց ՀՅԴ-ի մեջ:

Այս քաղաքական կուսակցության հաղթանակը ակնհայտորեն դուր չեկավ պաշտոնական Երեւանին, որի գլուխ էր կագնած ՀՀՇ-ն: Եվ դա քաղաքական ցնցում հանդիսացավ Հայաստանի նոր իշխանության համար, որը տակավին չէր հասցրել հասկանալ, թե ինչ է կատարվում Արցախում: Որոշ առումով նուրբ իրավիճակ ստեղծվեց: Այսպես, ԼՂՀ ԳԽ նստաշրջանն սկսելուց մի քանի օր առաջ՝ հունվարի 3-ին, Ստեփանակերտ էր ուղարկվել Հայաստանի Հանրապետության (ՀՀ) ԳԽ-ի դիմումը: Այդ փաստաթղթում նշված էր, որ արցախահայության ազգային

[1] Տեմ՛ Арутюнян В., События в Нагорном Карабахе, хроника часть IV, январь 1993г.-июль, Ереван, 1997, с. 109 (այսուհետեւ՝ Հարությունյան Վ.):
[2] Տեմ՛ Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 151-152:
[3] Տեմ՛ Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 107:
[4] Տեմ՛ Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 152:
[5] Տեմ՛ Հակոբյան Տ., ԼՂՀ հռչակումը եւ պետական շինարարության գործընթացը (1991-1994թթ.), Երեւան, 2011, էջ 39:

ազատագրական պայքարը թեւակոխել է նոր՝ պետականության հաստատման շրջան: ՀՀ ԳԽ-ն համոզված էր, որ այն կընթանա միջազգային իրավունքի հանրաճանաչ ժողովրդավարական նորմերին համապատասխան՝ դրանով օրինական հիմքի վրա դնելով ԼՂՀ քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը: Այնուհետեւ ասված է, թե ՀՀ ԳԽ-ն ողջ հայ ժողովրդի անունից հավաստիացնում է ԼՂՀ ԳԽ-ին, որ բոլոր միջոցներով զորավիգ կլինի Արցախի պետականության հաստատմանն ու ամրապնդմանը: Սակայն մի քանի օր անց պարզվեց, որ վերոհիշյալ դիմումը պարզապես քաղաքական դեմարշ էր. ՀՀ-ի ՀՀԾ-ական իշխանությունները չէին սպասում դեպքերի նման ընթացքի, եւ հունվարի 12-ին, երբ ՀՀ ԳԽ նախագահության նիստի ժամանակ առաջարկվեց շնորհավորանքի խոսք հղել ԼՂՀ նորընտիր իշխանություններին, նախագահության 12 անդամներից Է. Եգորյանը եւ Ա. Ոսկանյանը դեմ քվեարկեցին՝ շատ լավ իմանալով, որ որոշում ընդունելու համար անհրաժեշտ է 11 ձայն: Այսպիսով, ՀՀ ԳԽ-ն չշնորհավորեց ԼՂՀ նորընտիր իշխանություններին[1]: Պատճառը պարզ է. Արցախում իշխանության էին եկել ՀՀ-ի ՀՀԾ-ական ղեկավարության համար ոչ ցանկալի ուժեր: Փաստորեն, պաշտոնական Երեւանը ԼՂՀ-ի համար այդ դժվարին պայմաններում բացահայտ քաղաքական առճակատման գնաց Ստեփանակերտի հետ: Դրա արտահայտությունը դարձան ԼՂՀ իշխանությունների նկատմամբ ՀՀ ղեկավարության հետագա վերաբերմունքն ու ձեռնարկած քայլերը:

ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանը հունվարի 26-ից փետրվարի 2-ը կատարեց առաջին պաշտոնական այցը Երեւան: Պաշտոնական տեղեկագրերում մանրամասություններ չեն պահպանվել նաեւ այդ այցի վերաբերյալ: Սակայն գոյություն ունեն տեսակետներ այն մասին, թե ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը Ա. Մկրտչյանին ընդունել է խիստ սառը եւ պահանջել հրաժարական տալ[2]:

Իսկ ռազմական իրադրությունը ԼՂՀ-ում շարունակում էր շիկանալ: Օրեցօր սաստկացող մարտական գործողությունները հրամայաբար պահանջում էին կատարելագործել ոչ միայն ինքնապաշտպանական ուժերի (ԻՊՈՒ) կառուցվածքային ու մարտական բնութագրերը, այլ նաեւ կառավարման համակարգը: Մարտի 4-ի ԳԽ նախագահության նիստում Արցախի ԻՊՈՒ հրամանատար նշանակվեց գնդապետ Ա. Տեր-Թադեւոսյանը: Նույն օրը նախագահությունը որոշեց ԼՂՀ ԳԽ 1992թ. հունվարի 9-ի որոշմանը համապատասխան՝ հաստատել ԼՂՀ պաշտպանության խորհրդի (ՊԽ) կազմը, որը ներկայացրել էր ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանը: ՊԽ-ում ընդգրկվեցին Ա. Մկրտչյանը (նախագահ), Օ. Եսայանը, Վ. Բալայանը, Ս. Սարգսյանը, Ա. Տեր-Թադեւոսյանը, Ռ. Քոչարյանը եւ Ա. Կարապետյանը: Այնուհետեւ նախագահությունը հանձնարարեց ՊԽ-ին՝ ԼՂՀ ԳԽ պաշտպանության եւ անվտանգության, պետական շինարարության, իրավական հարցերի եւ օրինականության ամրապնդման հանձնաժողովների հետ համատեղ նախապատրաստել եւ ԼՂՀ ԳԽ նախագահության քննարկմանը ներկայացնել »Պաշտպանության խորհրդի մասին«, »Ինքնապաշտպանության ուժերի մասին« կանոնադրությունների նախագծերը[3]:

Այնուհետեւ ԳԽ նախագահությունը ձեռնամուխ եղավ նաեւ կառավարության մի շարք պաշտոնների նշանակման, ԼՂՀ ՆԽ կազմը հաստատելու մասին, ԼՂՀ կառավարության անհատական կազմի մասին որոշումների նախագծերի քննարկմանը[4]: »ԼՂՀ ՆԽ-ի մասին« ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, հաստատվեց ԼՂՀ կառավարությունը՝ հետեւյալ կազմով. Օ. Եսայան՝ ԼՂՀ ՆԽ նախագահ, Բ. Առուշանյան՝ ԼՂՀ ՆԽ նախագահի առաջին տեղակալ, Ա. Ծատրյան՝ ԼՂՀ ՆԽ նախագահի տեղակալի եւ ԼՂՀ գյուղատնտեսության եւ պարենամթերքների նախարարի պաշտոնակատար, Ա.Իսագուլով՝ ՆԳ նախարարի պաշտոնակատար, Ս. Թեւոսյան՝ ԼՂՀ ֆինանսների նախարարի պաշտոնակատար, Յու. Դավթյան՝ ԼՂՀ վիճակագրության պետական վարչության պետի պաշտոնակատար, Է. Շահրամանյան՝ շինարարության պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատար, Յու. Ներսիսյան՝ տպագրության, պոլիգրաֆիայի, հրատարակչության եւ գրքի առեւտրի պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատար, Վ. Թովմասյան՝ ԼՂՀ ՆԽ գործերի կառավարիչ: Հանձնարարվեց հանրապետության կառավարությանը՝ առաջնորդվելով »ԼՂՀ ՆԽ-ի մասին« ԼՂՀ օրենքով, անցնել իր լիազորությունների կատարմանը:

Այսպիսով, ոչ վերջնականապես, բայց ձեւավորվեց ԼՂՀ գործադիր իշխանությունը, որը պետք է լուծեր երկրին վերաբերող սոցիալ-տնտեսական եւ մի շարք այլ հարցեր: Սակայն պետք է նշել, որ, կազմավորելով ԼՂՀ կառավարությունը, ԼՂՀ ԳԽ նախագահությունը գործադիր իշխանության կարեւորագույն լիազորությունները իրեն վերապահեց մինչեւ 1992թ. օգոստոս (Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը): Դա մեծապես պայմանավորված էր նրանով, որ իրադրությունը ռազմաճակատում դեռեւս անչափ լարված էր եւ հնարավորություն չէր տալիս ԳԽ նախագահությանը ավարտելու իշխանական լիազորությունների օպտիմալ բաշխումը, կառավարման համակարգի կենտրոնացումն ու կատարելագործումը:

Ելնելով ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրադրությունից եւ ղեկավարվելով »ԼՂՀ ՆԽ-ի մասին« ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածով՝ հանրապետության անվտանգության եւ պաշտպանության ապահովման անհետաձգելի միջոցառումների մշակման ու իրագործման շրջանակներում, մինչեւ ԼՂՀ պաշտպանության նախարարության կազմավորումը, 1992թ. մարտի 26-ին ԼՂՀ ՆԽ-ին առընթեր ստեղծվեց ԼՂՀ պաշտպանության կոմիտե[5] (ՊԿ):

Հանրապետությունում ներքին կայունություն պահպանելու նպատակով՝ ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը, ներքին պայմանավորվածության համաձայն, որոշեց ՊԿ նախագահ նշանակել Ս. Սարգսյանին, որին հանձնարարվեց 10-օրյա ժամկետում առաջարկություններ ներկայացնել ՊԿ-ի կառուցվածքի, կանոնադրության եւ անվանակազմի մասին: Կոմիտեն իր ողջ գործունեությունը պետք է կազմակերպեր ԼՂՀ ԳԽ եւ ՆԽ որոշումների ու կարգադրությունների հիման վրա: Այդ որոշումից հետո ԳԽ նախագահությունը նպատակահարմար գտավ, որ ԼՂՀ ԳԽ նախագահը մի անգամ եւս հանդիպում ունենա ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ՝ երկկողմ հարաբերությունների բարելավման նպատակով: Ա. Մկրտչյանը Երեւան մեկնեց մարտի 30-ին եւ հաջորդ օրը հանդիպեց ՀՀ նախագահի հետ: Զրույցի ընթացքում ՀՀ նախագահը Ա. Մկրտչյանին նորից հասկանալ տվեց, որ նա իր տեղը պետք է զիջի ՀՀԾ-ական որեւէ մեկին, հակառակ դեպքում Հայաստանը կարող է դադարեցնել ռազմական օգնության ցուցաբերումը Արցախին[6]:

ԼՂՀ ԳԽ նախագահության եւ ԻՊՈՒ հրամանատարության ազդեցիկ ղեկավարների մեծամասնությունը դեմ էր նախագահի պաշտոնից Ա. Մկրտչյանի հնարավոր հրաժարվելուն: Մինչդեռ, առանց ՀՀ-ի ամենաբարձր մակարդակով օգնության, հնարավոր չէր պաշտպանել Արցախը: Փաստորեն, ԼՂՀ ԳԽ նախագահը կանգնած էր երկընտրանքի առաջ: Եվ այդ ժամանակ էլ Արցախում արդեն նշմարվում էր երկիշխանության ուրվականը: Հակված ենք կարծելու, որ Ա.

[1] Տեսՙ Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 153-154:
[2] Տեսՙ Հակոբյան Տ., նշվ. աշխ., էջ 42:
[3] Տեսՙ ԼՂՀ պետարխիվ, ֆ. 254, ց.1, պ. մ. 2, կ.1, թ. 5-6:
[4] Տեսՙ Նույն տեղում, թ. 11-14:
[5] ԼՂՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՆԽ 1992թ. մարտի 26-ի նիստի արձանագրություն, N 3:
[6] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 160:

Մկրտչյանի եւ ԼՂՀ-ում ՀՅԴ-ի գործունեության սխալը պատերազմական իրադրությունում ժողովրդավարական պետություն կառուցելու ուղղությթ ընտրելն էր, ինչի արդյունքում հարկ եղավ իշխանության մի շարք կարեւոր պաշտոններ հանձնել ընդդիմադիր կուսակցական գործիչներին: Նման ռազմավարությունը իրեն կարդարացներ, թերեւս, արտաքին միջամտության բացակայության դեպքում: Հետագայում կնկատենք, որ Ա. Մկրտչյանի մահից հետո պետության ներսում ստեղծվեց ներքաղաքական քաոսային իրավիճակ:

Այսպիսի ծայրաստիճան լարված ռազմաքաղաքական իրադրություն էր տիրում հակամարտության գոտում, երբ տեղի ունեցավ ԼՂՀ-ի ներքաղաքական կյանքի ամենառողբերգական իրադարձությունը, որը շրջադարձային կետ հանդիսացավ ԼՂՀ պետական շինարարության գործընթացում. ապրիլի 14-ի երեկոյան զոհվեց ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանը:

Մինչ օրս դժվար է պատասխան տալ այն հարցին, թե արդյո՞ք մտատանջություններն ու հուսահատության ապրումները դարձան կատարված ողբերգության պատճառը: Պատմական փաստն այն է, որ Ա.Մկրտչյանը իրենից հետո թեւ ոչ մեծ, բայց թողեց քաղաքական ու բարոյական ժառանգություն. նա ավանդույթներ ստեղծեց, որոնք պահպանվեցին մինչեւ Գ.Պետրոսյանի հրաժարականը, որը տեղի ունեցավ արդեն պաշտոնական Երեւանի հետ ծանր պայքարի պայմաններում: Այսինքն՝ Ղարաբաղը չէր միջամտում ՀՀ ներքաղաքական կյանքին եւ պահպանում էր իր չեզոքությունը:

Այսպիսով՝ իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Արցախում իշխանության գլուխ հաստատված նոր ուժերը, փաստորեն, գտնվելով կրկնակի ճնշման տակ, կարողացան իրենց ուժերով, միջազգային իրավունքի բոլոր նորմերին համաձայն, ստեղծել իրավական եւ ժողովրդավարական մի պետության հիմքերը, որին վիճակված էր դիմակայելու Ադրբեջանի ագրեսիային եւ պահպանելու իր անկախությունը:

ՀՏԴ 008(479.243) Պատմություն

Հայկ Հակոբյան
ՀՀ ԳԱԱ Հ նագիտության և ազգագրության ինստիտուտի
ու Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու
hayk.hakobyan.88@mail.ru,

ԽՈՐԱՆԱՇԱՏԻ ՎԱՆՔՆ ՈՐՊԵՍ ԱՐՑԱԽԻ ԿՐՈՆԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԵՍ ՄԻ ՎԱՌ ՎԿԱ (ՁԵՌԱԳՐԵՐԻ ՈՒ ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳՐԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Խորանաշատը հանդիսանում է միջնադարյան Հայաստանի Արցախ աշխարհի ամենանշանավոր կրթական, գիտամշակութային ու աստվածաբանական կենտրոններից մեկը: Հիմնել է Վանական Վարդապետը 1220-ական թթ-ի սկզբին և ինքն էլ վարել է վարդապետարանի ուսուցչապետությունը մինչև իր մահը (1251 թ): Խորանաշատի վարդապետարանում շրջանավարտները ստացել են վարդապետական աստիճան և ուսանել 7-8 տարի: Այստեղ ուսանել են Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Գրիգոր Ակներցին, Ստեփանոս Աղթամարցին, Առաքելը, Արտազ գավառի թեմակալ, դավանաբանական հարցերում մեծ հեղինակություն վայելող Հովսեփ վարդապետը, Խաչենի քաղաքական կյանքում ակնառու գործիչ Մարկոս վարդապետը, ականավոր փիլիսոփա Սոսթենեսը, Հայսմավուրքային ժողովածուների խմբագիր՝ Ներքին Խաչենի արքեպիսկոպոս Իսրայելը, Գրիգոր Աղթամարցին և ուրիշներ: Այս հոդվածում փորձ է արվում նորահայտ վիմագրերի ու ձեռագիր նյութի համադրմամբ լուսաբանել Խորանաշատի պատմության նոր, դեռևս չբացահայտված էջերը, որը հատկապես կարևոր է աղրբեջանական բանակի կողմից վանքի պարբերաբար հրետակոծման և տեղի վիմագրերի ուսումնասիրության հնարավորության գրեթե բացակայության պայմաններում:

Айк Акопян,
Институт археологии и этнографи РА,
старший научный сотрудник в Матенадаране имени Месропа
Маштоца, кандидат исторических наук
hayk.hakobyan.88@mail.ru

ХОРАНАШАТСКИЙ МОНАСТЫРЬКАК ЕЩЕ ОДНО ПОДТВЕРЖДЕНИЕ АРЦАХСКОЙ РЕЛИГИОЗНО-ПОЛИТИЧЕСКОЙ И КУЛЬТУРНОЙ ЖИЗНИ (ОСНОВАННЫЕ НА НОВЫХ РУКОПИСЯХ И ЛИТОГРАФИИ)

Хоранашат является одним из наиболее значимых образовательных, научных, культурных и теологических центров провинции Арцах средневековой Армении. Храм был основан архимандритом Ванаканом в начале 1220 года, который также являлся заведующим этой монастырской школы вплоть до своей смерти (1251). В Хоранашате выпускники получали степень архимандрита (ученого) и обучались 7-8 лет. Здесь учились Киракос Гандзакеци, Вардан Аревелци, Григор Акнерци, Степанос Ахтамареци, Аракел, прелат провинции Артаз и имеющих в богословских вопросах большой авторитет, архимандрит Овсеп, имеюший большой весь в политической жизни Хачена - архимандрит Маркос, видный философ Состенес, составитель и редактор "Жития Святых", епископ Внутреннего Хачена - Исраел, Григор Ахтамареци и другие. В этом докладе будет сделана попытка на основе нововыявленного эпиграфического материала и манускриптов выявить до селе неизвестные страницы истории Хоранашата, что особенно важно в связи систематической бомбардировкой монастыря армией Азербайджана, при почти полнейшем отсутствии изучения эпигафики храма.

Hayk Hakobyan
Candidate of Historical Sciences,
Senior Researcher of the Archeological and Ethnographical Institute AN RA and
Matenadaran-Institute of Ancient Manuscripts after Mesrop Mashtots.
hayk.hakobyan.88@mail.ru

KHORANASHAT MONASTERY AS BRIGHT WITNESS OF ARTSAKH'S RELIGIOUS-POLITICAL AND CULTURAL LIFE (ON THE BASIS OF NEWLY DISCOVERED MANUSCRIPTS AND LAPIDARY INSCRIPTIONS)

Khoranashat is one of the most significant educational ,scientific ,cultural and theological centers of Medieval Armenian Artsakh province. It was founded by Vanakan Vardapet in the early 1220 ,who also headed the professorship of this high school until his death (1251) .In the high school of Khoranashat graduates received degree of a scholar after and 7-8 years of study . Kirakos Gandzaketsi,Vardan Areveltsi,Grigor Aknertsi,Stephanos Akhtamartsi,Arakel ,the prelate of the Artaz province and the most authoritative archimandrite Hovsep, archimandrite Markos, an outstanding figure in the political life of Khachen, prominent philosopher Sostenese, Israel-an aditor of synaxarian collections and also archbishop of Nerkin Khachen ,Grigor Akhtamartsi and others studied here.This report is aimed at elucidating new and unknown pages of Khoranashat's history combinating new lapidary inscriptions and manuscripts' material , which is especially important in the absence of the opportunity to study the lapidary inscriptions and the sistematic bombing of the monastery by the army of Azerbaijan.

13-րդ դարում միջնադարյան Արցախում քաղաքական, հոգևոր ու մշակութային կյանքի զարգացումը նշանավորվեց բազմաթիվ վանքերի ու եկեղեցիների կառուցմամբ, մասնավորապես՝ Հավոցտուկը կամ Հավապտուկը (1163թ.), Խաղավանքը (1204թ.), Խորանաշատը (1211-1222թթ.), Դաղիվանքը (1214թ.), Գանձասարի վանքը (1216-1238-1240թթ.), Գտչավանքը (1241թ.), Ծարա Սբ. Աստվածածինը (1301թ.) և այլն:

Մեր զեկույցի քննության առարկան է լինելու Խորանաշատի վանքը՝ իր պատմությամբ, վիմագրերով ու ձեռագրերով:

Խորանաշատի վանքը գտնվում է Փառիսոսի գավառում և հանդիսանում է այդ գավառի հռչակավոր վանքերց մեկը՝ հանդիսանալով նաև գրչության կենտրոն: Վանքի վարդապետարանի հիմնադիրն է համարվում Վանական վարդապետ Տավուշեցին, ով Մխիթար Գոշից ստանալով վարդապետական գավազան (1207 թ.), հայրենի Խորանաշատ է վերադառնում և 1220-ական թվականների սկզբին իշխան Վահրամ Գ Գագեցու հովանավորությամբ հիմնում համալսարանական բնույթ կրող իր վարդապետարանը՝ դառնալով այդ կրթարանի առաջին ռաբունապետը[1]: Վանական վարդապետը ծնվել է 1181 թվականին, Ուտիք նահանգի Տավուշ գյուղաքաղաքում: Ծննդավայրի անունով երբեմն կոչվել է նաև Տավուշեցի: Եղբոր՝ Պողոս քահանայի մոտ սկզբնական կրթություն ստանալուց հետո նա գալիս է Նոր Գետիկ՝ տեղի բարձրագույն դպրոցում ուսումը կատարելագործելու, աշակերտում Մխիթար Գոշին, որտեղ էլ 1201 թվականին նրա կողմից ձեռնադրվում է քահանա: Վանականը դառնում է Գոշի գաղափարակիցն ու օգնականը, նրա հետ մասնակցում Լոռեի (1204 թ.) և Անիի (1207 թ.) եկեղեցական ժողովներին: 1240 թվականին Խաչենի իշխան Հասան-Ջալալ Դոլայի հրավերով մասնակցում է Գանձասարի օծման արարողությանը: Վանական վարդապետ Տավուշեցին վախճանվում է 1251 թվականին և իր կտակի համաձայն թաղվում Խորանաշատի մոտ գտնվող աղքատների գերեզմանոցում[2]:

Խորանաշատի դպրոցը միջնադարյան Հայաստանի նշանավոր գիտական, մշակութային ու հոգևոր կենտրոններից էր, իսկ նրա ուսուցչապետը՝ ժամանակի հեղինակավոր աստվածաբաններից ու գիտնական վարդապետներից մեկը[3]: Վանականը Խորանաշատում կրթական գործին զուգահեռ վարում էր նաև գրչական ու քարոզչական բեղմնավոր աշխատանքեր: Նա իր սաներին ստույգ և ընտիր օրինակներից արտագրել էր տալիս ձեռագիր մատյաններ, որոնցով հարստացնում էր վանքի մատենադարանը: Այստեղ են գրվել և որպես դասագրքեր օգտագործվել են նաև Վանականի երկերը: Վարդապետարանի աշակերտների համար աշխարհիկ և հոգևոր առարկաների մասին իմացական շտեմարան էր նրա «Հարցմունք և պատասխանիքը» (Երուսաղեմ, ձեռ. 587, թերթ 8-83, ձեռ. 1288, թերթ 2-142), որը պարունակում է բոլոր այն գիտելիքները, որ պարտավոր էին իմանալ նրա սաները ուսման ընթացքում: Օգտվելով Անանիա Շիրակացուց՝ աշակերտներին աստղաբաշխական ու տոմարագիտական գիտելիքներ տալու նպատակով գրում է «Յաղագս տարեմտին» ճառը, որը նախատեսված է եղել Ամանորին եկեղեցիներում կարդալու համար[4]: Խորանաշատում են գրվել Վանական վարդապետի նաև մյուս երկերը՝ «Բացատրութիւն Աղօթից Ամբակումայ Մարգարէի» (Ճռաքաղ, 1859), «Մեկնութիւն Յոբայ», որը նախորդ մեկնիչներից (Հեսիքսոս, Ստեփանոս Սյունեցի, Դավիթ Քոբայրեցի) արված քաղագրություն է (Երուսաղեմ, ձեռ. 68, թերթ 252-378), «Համեմատութիւն Հնոյ և Նորոյ կտակարանաց» (Երուսաղեմ, ձեռ. 587, թերթ 1-3, ձեռ. 1273, թերթ 143-6), «Պատճառք վասն առաջաւորաց պահոց» (Երուսաղեմ, ձեռ. 173, թերթ 496-500), «Տեսութիւն շարականին Ուրախացիր պսակ կուսից» (Երուսաղեմ, ձեռ. 617, թերթ 151-6), «Գովեստ Հայոց ազգի» (Երուսաղեմ, ձեռ. 773, թերթ 163-5): Կիրակոս Գանձակեցու և Վարդան Արևելցու վկայությամբ Վանական վարդապետը հեղինակել է նաև մի պատմություն, որը կարևոր սկզբնաղբյուր է եղել մոնղոլների՝ Հայաստան կատարած արշավանքների վերաբերյալ[5]: Այս վերջին գործը, դժբախտաբար, մեզ չի հասել:

Վանականը ժամանակի դավանաբանական վեճերի ակտիվ մասնակիցներից էր: Հայտնի է նրա «Խրատ դաւանութեան» ճառը, որ գրվել է 13-րդ դարի կեսին սկիզբ առած հռոմեա-բյուզանդական դավանաբանական մի վեճի առիթով: Այն պահպանվել է Կիրակոս Գանձակեցու Պատմության մեջ (Կիրակոս Գանձակեցի, Գլ. Ծ): 1250 թվականին, երբ Վերին Խաչենի Ծար գավառում սկիզբ առած Դավիթ Ծարեցի Մոլորեցուցչի գլխավորած աղանդավորական շարժումն ընդգրկել էր «զամենայն գաւառս» Հայոց արևելից կողմանց և դարձել էր խիստ վտանգավոր, վրդովվել ու պայքարի էին ելել անվանի հոգևոր գործիչները՝ բանադրելով Դավիթ Ծարեցուն և նրա կողմնակիցներին, որոնց մեջ կային նաև հոգևորականներ ու ավատատեր ազնվականներ[6]: Վանական վարդապետը այս առիթով գրում է «Գիր սաստից և մեղադրանաց» թուղթը:

Վանականի դպրոցում, որտեղ սաներն ուսանել են 7-8 տարի, հոգևոր առարկաներից բացի դասավանդել են պատմություն, իմաստասիրություն, մատենագիտություն, երաժշտություն, քերականություն, ճարտասանություն, թվաբանություն, երկրաչափություն, աստղաբաշխություն, տրամաբանություն և այլ առարկաներ: Խորանաշատի վարդապետարանի կրթական համակարգում դրված էր քառյակ արվեստների ուսուցումը: Վանականի մոտ սովորելու էին գալիս տարբեր վայրերից: Նրա դպրոցում աճեցին Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Մաղաքիա կրոնավորը, Ստեփանոս Աղթամարցին, Գրիգոր Ակներցին, Մարկոսը, փիլիսոփա Սոսթենեսը, Առաքելը, Հովսեփ վարդապետը, Ներքին Խաչենի Իսրայել արքեպիսկոպոսը, Խաչենի Մարկոս վարդապետը՝ բոլորն էլ իրենց գործի լավագույն գիտակներ, որոնք վարդապետական աստիճան ստանալուց հետո իրենց վարդապետի գործը շարունակեցին տարբեր գրչության կենտրոններում:

---

[1] Այս մասին մանրամասն տե՛ս **Հ. Ոսկեան,** Յովհաննէս վանական եվ իւր դպրոցը, Վիեննա, 1922:
[2] **Ն. Պողարեան,** Հայ գրողներ, Ե-ԺԵ դար, Երուսաղէմ, 1971, էջ 290:
[3] **Հ. Ոսկեան,** Յովհաննէս վանական եվ իւր դպրոցը, էջ 20-36:
[4] **Լ. Խաչիկյան**, «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ», «Բանբեր Մատենադարանի», թիվ 1, 1941, էջ 156-169:
[5] Նույն տեղում, էջ 151:
[6] **Կիրակոս Գանձակեցի**, էջ 326-328:

Գրչության արվեստը ծաղկում էր Խորանաշատի վանքում ու կապվում Վանականի անձի հետ: Մեծ էր դպրոցի և նրա ղաբունապետի հեղինակությունը: Գրիչներն իրենց օրինակած ձեռագրերի հիշատակարաններում հաճախ գրչության վայրը ճանաչում ու նշում էին նրա անունով՝ «ի վանս վարդապետի Վանականի»: Ուսուցչի մասին հատկապես հիացմունքով են խոսել նրա աշակերտները: Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ դպրոցը, ի դեմս ուսուցչապետի, ձեռք էր բերել մեծ անուն և համբավ, որտեղ կրթություն ստանալու էին գալիս տարբեր վայրերից. «Բազումք դեգերէին առ նա ուսման աղագաւ ոչ միայն վարդապետական բանի, այլ ամենայն կեանք նորա և շարժումն անգիր օրէնք էին տեսողացն»[1]: Վարդան Արևելցին նրան անվանում է «համբաւատենչ և արդիւնական, փառաւորեալ հայրն մեր»[2]: Գրիգոր Ակներցին՝ «Ի դառն ժամանակիս փայլէր իբրեւ զարեգակն Սուրբ Հոգի վարդապետն մեր Վանական յերկիրն արեւելից, յերկրորդ արեւելք անուանեալ»[3]:

Վանականը, դպրոցում ձեռագրեր ընդօրինակելուց բացի, մեծ տեղ էր հատկացնում նաև խմբագրական աշխատանքներին: Այդ աշխատանքներում հատկապես հմուտ էին Իսրայելը և Կիրակոս Գանձակեցին, որոնք ուսուցչի հանձնարարությամբ խմբագրում էին Հայսմավուրքային ժողովածուներ: Ստեփանոս Աղթամարցին 1223 թվականին «ի վանքս Խորանաշատու՝ ի գաւառիս Գարդմանայ առ ոտս ուղիղաճեմ և աստուածարդիւնական վարդապետիս Վանականի» ընդօրինակում է մի Ժողովածու, որի հիշատակարանում նախ հիշում է ղաբունապետ Վանական վարդապետին, որ «փայլէ ի ժամանակիս որպէս զաստղ առաւաւտու», ապա հորը՝ տեր Սարգսին, հորեղբորը՝ տեր Հովհաննեսին, և եղբորը՝ Իգնատիոս քահանային[4]: Գրիչը անմեղադրություն է խնդրում, որովհետև «ի ձմեռնային յաւուրս գրեցաւ, այլ աղաչեմ չլինել մեղադիր թիւրութեան, զի զհոլովն ճրագով գրեցի»:

Սրանից մեկ տարի հետո՝ 1224 թվականին, Ջաջուռ Խաղբակյանի դստեր և Կուկ Սևադյաց իշխանի կնոջ՝ Վանենու պատվերով գրվում ու նկարազարդվում է մագաղաթյա երկաթագիր մի Ավետարան, որը վանքի անունով կոչվում է «Խորանաշատի Ավետարան»[5]: Հայտնի չեն ձեռագրի գրիչն ու ծաղկողը: Ձեռագիրն ունի չորս ավետարանիչների պատկերներ, ութ խորաններ, կիսախորաններ, զանազան լուսանցազարդեր, որ պարզ ու ներդաշնակ ծաղկազարդել է տաղանդավոր, բայց մասնագիտական հմտություն չունեցող նկարիչը[6]: Ծաղկողն օգտագործել է ոսկի և բազմազան գույներ: Ձեռագրի հետագա ճակատագրի մասին հաղորդումները նրա գերեվարումների և փրկագնումների մասին են: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Վանական վարդապետը, 1229 թվականին Ջալալեդդինի արշավանքներից խուսափելով, ապաստանում է Լորուտ գյուղի մերձակա մի քարայրում, այստեղ էլ շարունակում է ուսուցանել[7]: Մոնղոլներն իմանում են Վանականի տեղը, պաշարում են քարայրը 1236 թվականին, ուսուցչապետին և աշակերտներին, որոնց մեջ էր նաև Կիրակոս Գանձակեցին, գերեվարում են՝ իրենց հետ տանելով ողջ գույքը՝ շուրջառներ, արծաթյա խաչեր, անոթներ և երկու արծաթակազմ Ավետարան, որոնցից մեկը այդ գեղեցիկ մագաղաթյա մատյանն է. «...եւ խուզեալ առին, որ ինչ կայր առ ումեք... խաչ արծաթի և երկու Աւետարանս ընդելուզեալ»[8]: Որոշ ժամանակ անց՝ մեծ փրկագնով Գագ բերդի բնակիչները ազատում են Վանական վարդապետին, իսկ Կիրակոսը, որ մոնղոլների բանակում թարգմանիչ էր ու գրագիր, փախչում է ու ապաստանում Նոր Գետիկի վանքում: Վանականը նորոգում է Խորանաշատը, վերականգնում դպրոցը և նորից սկսում է ուսուցանել: Մոնղոլների կողմից գերված երկրորդ ձեռագրի ճակատագիրը ցայսօր անհայտ է, իսկ «Խորանաշատի Ավետարանը» 1238 թվականին Տփխիսում մոնղոլները հանում են աճուրդի: Բարեբախտաբար, այստեղ է լինում նաև Վանական վարդապետը, որը մեծ փրկագնով ձեռք է բերում մատյանը և վերադարձնում Խորանաշատ: Նրա ձեռքով է գրված Ավետարանի հետագայի հիշատակարանը. «Ես՝ Վանականս, գրեցի իմով ձեռամբս ի Տփխիս քաղաքի՝ ի դրան Սբ. Քառասնիցս, զի գերեալ էր Աւետարանս ի Տաւշոյ ի Մուղան ի թաթարեն, եւ յետ երից ամաց բերեալ անվնաս վաճառեցին ի ՈՁԷ (1238) թուիս, որ փառաւոր աւագերէց Սարգիս, հասարակ պատուական քահանայիւք և աստուածասէր ժողովրդական տանուտէրաւք բազում ծախաւք և աշխատութեամբ գնել ետուն ի մեզ» (թերթ 155ա): 1517 թվականին Ավետարանը տարվում է Տաթև, որտեղ Ալեքսանոս աբեղան Ղասումի խնդրանքով փոխում է արծաթյա կազմը, նոր կոստղազարդ կաշվե կազմ է դնում՝ մետաղյա անկյունազարդերով և Ա փեղկին մետաղյա մի խաչ: Մատյանն այս կազմով էլ հասել է մեզ: 16-րդ դարում նորից գերվում է ձեռագիրը և փրկագնվում մելիք Հովասափի կողմից ու ընծայվում Վանի Սբ. Վարդան Զորավար եկեղեցուն: 1915 թվականին բանասեր Ս. Տեր-Ավետիսյանը Վանում տեսնում է Ավետարանը և նահանգապետ Դիտմենի միջնորդությամբ ուղարկում է Սբ. Էջմիածին[9]: Վանենին «Խորանաշատի Ավետարանից» ութ տարի հետո՝ 1232 թվականին, Գետիկա վանքում Ստեփանոսից ստանում է նոր ու շքեղ ձեռագիր և նվիրում Հավապտուկ վանքին[10]: Այս ձեռագրի հետագա ճակատագիրը հայտնի չէ:

---

[1] **Կիրակոս Գանձակեցի,** էջ 218:
[2] **Վարդան Վարդապետ**, 146:
[3] **Գրիգոր վրդ. Ակներցի**, Պատմութիւն թաթարաց, Երուսաղէմ, 1974, էջ 27:
[4] ՄՄ ձեռ. 2101, թերթ՝ 205, նյութ՝ թուղթ, 17,2 × 12,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 22:
[5] ՄՄ ձեռ. 4823, թերթ՝ 319, նյութ՝ մագաղաթ, 36 × 23, գիր՝ բոլորագիծ երկաթագիր, տող՝ 19: «Խորանաշատի Ավետարանին» են անդրադարձել Գ. Սրվանձտյանցը (**Գ. Սրվանձտեանց**, Թորոս Աղբար, Կ. Պոլիս, 1884, էջ 272-275), Գ. Հովսեփյանը (**Գ. Յովսէփեան,** Խաղբակեանք կամ Պռոշեանք …, էջ 34, նույնի՝ Յիշատակարանք ձեռագրաց, էջ 837-842), Ա. Սվիրինը, (А. Н. Свирин, նշվ. աշխ., էջ 90), Վ. Լազարևը (В. Н. Лазарев, նշվ. աշխ., էջ 12): Լ. Դուրնովոն (**Л. А. Дурново,** նշվ. աշխ., էջ 32), Հ. Հակոբյանը (**Հ. Հակոբյան**, Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը XIII-XIV դդ., էջ 51-62):
[6] Հայկական մանրանկարչություն, աշխատասիրությամբ՝ Լ. Դուռնովոյի և Ռ. Դրամբյանի, Երևան, 1967, էջ 204:
[7] Քարայրը կոչվում է Վանական վարդապետի քարայր և գտնվում է Տավուշ բերդի հարավային կողմում՝ Լորուտ գյուղի մոտ: Արցախ, էջ 434, **Հ. Ոսկեան,** Յովհաննէս Վանական եվ իւր դպրոցը, էջ 13:
[8] **Կիրակոս Գանձակեցի,** էջ 247:
[9] **Յու. Վարդանյան,** Խորանաշատի գրչագրի դեգերումները, «Գրքերի աշխարհ», 1979, թ. 5, մայիսի 15:
[10] **Գ. Յովսէփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք…, էջ 29, նույնի՝ Յիշատակարան ձեռագրաց, էջ 882, **Ա. Մաթևոսյան,** Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 181-183:

1230 թվականին Եսայի գրիչը գրում է մի Սաղմոսարան «ի յերկիրս Տայուշ և ի գիւղս, որ կոչի Թաւուշ ընդ հովանեաւ Սբ. Աստուածածնիս... յաթոռս Խորանաշատի և Վանական վարդապետի»[1]:

Խորանաշատի վարդապետարանի գործունեության բեղուն շրջանն ավարտվում է Վանականի մահով: Ռաբունապետի մահից հետո դպրոցը գլխավորում են Գրիգորիս և Պողոս վարդապետները, որոնք չեն կարողանում նույն բարձրության վրա պահել դպրոցը, և աստիճանաբար խամրում է երեսուն տարի գիտական, մանկավարժական և քաղաքական գործունեություն ծավալած վարդապետարանի փառքը: Չնայած դրան՝ հետագայի գրիչները, նկատի ունենալով վարդապետարանի երբեմնի հռչակը, հիշատակարաններում վանքն անվանում են «բարձրահամբաւ», «մեծայարկ գումբեթաձև», «հռչակաւոր սուրբ ուխտն Խորանաշատ»:

Վանական վարդապետի ամենից բեղմնավոր սանն ու վարդապետարանի առաջին շրջանավարտներից էր Վարդան Արևելցին, որ Ժամանակակիցների կողմից մեծարվել է «սուրբ», «հոգիապայծառ սուրբ հայր», «լուսավոր վարդապետ», «եռամեծ», «տիեզերալուսյս վարդապետ» պատվանուններով: Իսկ Գրիգոր Տաթևացին նրան պատվել է «Մեծն Վարդան» անունով:

Մխիթար Գոշի մոտ կրթություն ստանալուց հետո Վարդանը գալիս է Խորանաշատ և աշակերտում Վանական վարդապետին, նրանից ստանում վարդապետական աստիճան և 1235 թվականից զբաղվում գիտական, մանկավարժական, եկեղեցական ու քաղաքական բեղմնավոր գործունեությամբ: Նա բացում է դպրոցներ, սկզբում՝ Կայենո բերդի Սբ. Անդրեաս վանքում, ապա՝ Խոր Վիրապում, որտեղ շարունակում է Վանական վարդապետի դպրոցի ավանդները: Խոր վիրապում Արևելցուն աշակերտում են Գրիգոր Բջնեցի վարդապետը, Արարատյան գավառի Գրիգոր եպիսկոպոսը, Գևորգ Սկևռացին, Հովհաննես Երզնկացի Պլուզը, Եսայի Նչեցին, Ներսես Մշեցին: Վերջինս Սուրբ գրքի մեկնություն էր դասավանդում, իսկ ռաբունապետի մահից հետո փոխարինում է նրան, ապա դպրոցը տեղափոխում Մշո Առաքելոց վանք:

Վարդան Արևելցու թողած մատենագիտական հարուստ ժառանգությունը՝ պատմական, մեկնողական, քերականական բնույթի երկեր, ճառեր, ներբողներ, խրատներ, թղթեր, շարականներ, թարգմանություններ, նրան դնում են մեր մատենագիրներից լավագույնների շարքերում: Վարդան Արևելցին հայ մեկնաբանական մտքի ամենանշանավոր դեմքերից էր, հիմնադիրը մի ամբողջ մեկնաբանական դպրոցի: Վարդանը ճանաչված էր միջնադարյան Հայաստանում ու Կիլիկիայում և ակտիվ մասնակցություն ուներ դավանաբանական խնդիրներում: Նա մասնակցել է Սսի 1243 թվականի եկեղեցական ժողովին, այնտեղ սահմանված կանոնները 1245 թվականին բերել Հայաստան: 1248 թվականին կրկին մեկնել է Կիլիկիա՝ իր հետ տանելով «արևելյան» վարդապետների պատասխան թուղթը, մասնակցել Սսի 1251 թվականի ժողովի ընդունած կանոնների մշակմանը: Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսի հանձնարարականով գրել է «Թուղթ խրատականը», Հեթում Ա թագավորի պատվերով՝ «Ժղլանքը»: Վարդանը 1267 թվականին խմբագրում ու լրացնում է Տոնապատճառ ծիսական ժողովածուն: Իսկ նրա «Հաւաքումն պատմութեան» երկը կարևոր աղբյուր է ժամանակաշրջանի՝ Հայաստանի և հարևան երկրների ու ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար[2]:

Ե՛վ Գետիկավանքում, և՛ Խորանաշատում Վարդան Արևելցու ուսումնակիցն էր Կիրակոս Գանձակեցին: Նոր Գետիկի վանքում վաղ մանկությունից աշակերտելով Վանական Վարդապետին՝ 1215 թվականին նրա հետ գալիս է Խորանաշատ և ուսումը շարունակում այստեղ: 1236 թվականին նա ուսուցչի հետ գերեվարվում է մոնղոլների կողմից: Փախչելով մոնղոլների բանակից՝ ապաստանում է Նոր Գետիկում, որի դպրոցը Մխիթար Գոշի մահից հետո էլ (1213 թ.) դեռ շարունակում էր իր գործունեությունը: Այդ ժամանակ դպրոցում դասավանդում էին Աբրահամը, Մխիթարը, Հովասափը, նշանավոր Հովհաննես Արմանեցին, որ այստեղ էր եկել Հաղբատից, իսկ դպրոցը գլխավորում էր Գոշի աշակերտ Մարտիրոսը: Վերջինիս մահից հետո Նոր Գետիկավանքի դպրոցի ռաբունապետն է դառնում Կիրակոս Գանձակեցին:

Կիրակոս Գանձակեցու գլխավոր երկը «Հայոց պատմությունն» է, որտեղ հեղինակը՝ որպես ականատես, տեղեկություններ է հաղորդում մոնղոլների՝ Հայաստան կատարած արշավանքների, լեզվի, կենցաղի, բարքերի, հասարակական կառուցվածքի, Հուլավյանների պետության քաղաքական, տնտեսական պատմության, Հայաստանի հայ իշխանների, Կիլիկիայի հայկական պետության և մոնղոլների փոխհարաբերությունների մասին:

Գրիգոր Ակներցի պատմիչը 1265-1266 թվականներին մեկնում է Կիլիկիա և դառնում Ակներ վանքի միաբան: Այստեղ Ստեփանոս վանահոր համար Գրիգորը 1273թ. ընդօրինակում է Միքայել Ասորու «Ժամանակագրութիւնը» և գրում «Պատմութիւն թաթարաց» երկը[3]: Երկու երկերն էլ պահպանվել են Երուսաղեմի Սբ. Հակոբյանց գրատան թիվ 32 ձեռագրում, որ հենց հեղինակի ինքնագիրն է[4]: Հիշատակարանում Գրիգորը հիշում է իր ուսումնակից ընկերների՝ Վարդան Արևելցու և Կիրակոս Գանձակեցու մահվան թվականները. «Ի թուականին Հայոց Չ և Ի (1271) փոխեցան ի Քրիստոս փառաւոր վարդապետքն Հայոց՝ Վարդան և Կիրակոս»[5]: Ակներցու Պատմությունը ընդգրկում է 1220-1273 թվականների իրադարձությունները, և կարևոր սկզբնաղբյուր է Հայաստանում մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանի վերաբերյալ: Հեղինակը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում ժամանակի տնտեսական և քաղաքական կյանքի, մոնղոլների կրոնի, հավատալիքների, կենցաղի և սովորույթների մասին:

---

[1] **Հ. Ոսկեան**, Յովհաննէս վանական եվ իւր դպրոցը, էջ 10:

[2] Վարդան Արևելցու կյանքին ու գործունեությանը ծավալուն ուսումնասիրություն է նվիրել Փ. Անթապյանը, տե՛ս Փ. Անթապյան, Վարդան Արևելցի, հ. Ա, Երևան, 1987, հ. Բ, Երևան, 1989:

[3] **Գրիգոր վրդ. Ակներցի**, Պատմութիւն թաթարաց: Այս երկը վերագրվել է Մաղաքիա աբեղային: Տե՛ս **Մաղաքիա աբեղայի** Պատմութիւն վասն ազգին նետողաց, Ս. Պետերբուրգ, 1870:

[4] **Ն. Պողարեան,** Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ա, Երուսաղէմ, 1966, էջ 144-147: **Ա. Մաթևոսյան,** Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 427, 429: Հմմտ. **Գրիգոր վրդ. Ակներցի**, Պատմութիւն թաթարաց:

[5] **Ն. Պողարեան,** Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ա, էջ 146: **Ա. Մաթևոսյան,** Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 403:

Վանականի լավագույն աշակերտներից էր Առաքելը, որին հանդիպում ենք Գրիգոր Ակներցու մոտ՝ Վարդանի, Կիրակոսի, Հովսեփի հետ հիշվելիս. «Նոյնպէս եւ գովելի աշակերտքն իւր Վարդան եւ Կիրակոս, Առաքելն եւ Յովսէփ խաչանման բաժանեալ զաշխարհն Արևելից լուսաւորեցին կենարար վարդապետութեամբ Հոգւոյն Սրբոյ»[1]: Գ. Հովսեփյանը Վանականի աշակերտ Առաքելին նույնացրել է Մահկանաբերդո գավառի Դեղձուտ և Առաքելոց վանքերի առաջնորդ և բապունապետ նշանավոր Առաքել վարդապետի հետ, որը, Վանականից ստանալով վարդապետական աստիճան, գալիս է Մահկանաբերդո գավառ և Դեղձուտում հիմնում վարդապետարան: Առաքելի դպրոցը գավառի նշանավոր գրչության կենտրոններից էր, որտեղ ձեռագրեր էին ընդօրինակվում ընտիր և ստույգ օրինակներից: Ձեռագրերի բազմացման համար ընտիր և ստույգ օրինակ ունենալու համար այստեղ էին գալիս անգամ Նոր Գետիկից[2]:

Իսկ Հովսեփը, որ դավանաբանական հարցերում բարձր հեղինակություն էր վայելում, դառնում է Արտազ գավառի թեմակալ:

Վանականի աշակերտներից Մարկոսը ևս բարձր դիրքի էր հասել Խաչենում. նա Հասան Ջալալի շքախմբի կազմում բանակցությունների էր գնացել Բաթու խանի մոտ[3]:

Գրիգորիս քահանան, որը Վանականի աշակերտն ու եղբորորդին էր, 1252 թվականին Ստեփանոս քահանայի համար «ի նեղ և դառն ժամանակիս... զի բազմացաւ անհնարին վիշտք և նեղութիւնք ի վերայ ամենայն աշխարհի ի ձեռն անաւրէն և այլակերպ զաւրուն նետողաց... ի վանս վարդապետի Վանականի Խորանաշատ կոչեցեալ ընդ հովանեաւ Սբ. Աստուածածնիս» (թերթ 361ա) ընդօրինակում է մի Ժողովածու[4], իսկ 1255 թվականին Թադե և Հայրապետ եղբայրների համար գրում է Վանականի «Հարցմունք ու պատասխանիքը»[5]:

1266-ին Սարգիս գրիչը Մխիթար բապունապետի համար արտագրում է Վարդան Արևելցու Երգ երգոցի մեկնությունը[6]: Մատյանը կազմում է Յոհանը և հիշում իր ծնողներին և աշակերտ Հովհաննես կրոնավորին:

1283-ին Պետրոս վարդապետի առաջնորդության տարիներին «ի վանս Վանական վարդապետի» Մարտիրոս գրիչը ծերացյալ հասակում արտագրում է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգությանը»[7]:

Խորանաշատի վարդապետարանի գործունեության մասին հետագայի գրավոր տեղեկությունները վերաբերում են 16-րդ դարին: Իսկ 17-րդ դարի ձեռագրերում արդեն Խորանաշատը հիշվում է Զակամ գավառի կազմում:

1503 թվականին Հունան եպիսկոպոսի օրինակած մատյանը Խորանաշատի Սբ. Աստվածածին եկեղեցում ավետարանիչների պատկերներով և կիսախորաններով ծաղկում է Ստեփանոս եպիսկոպոսը և Ղուկասի նկարի տակ թողնում հիշատակարան. «Նկարող Ստեփանոս եպիսկոպոսս յիշեցե՛ք» (թերթ 137բ)[8]:

1620 թվականին Հակոբ երեցը Ավետարան է գրում «ի դուռն սուրբ, բարձրահամբաւ Սբ. Խորանաշատու և ընդ հովանեաւ Սբ. Աստուածածնիս սուրբ Վանական վարդապետիս և Գրիգոր վարդապետիս, և Սբ. Յովանիսիս՝ ի ծորս Զակամա՝ ի գեղս, որ կոչի Լղարակ» (թերթ 284բ) և հիշում իր ծնողներին՝ Ղազարին և Ուստիանին, ինչպես նաև տնտեսին՝ Էթարին, որ ձեռագրերի ստեղծման աշխատանքներում իրեն շատ է օգնել[9]: Գրիչը թողություն է խնդրում սխալների ու խոշոր գրի համար ու բերում է մի քանի պատճառներ. «զի նուազեալ էր զաւրութիւն մարմնոյս և ի աչացա լոյսն պակասեալ, զի չէշմաւ գրէի, զի չար ժամանակիս գրեցաւ, զի բազում նեղութիւնք ունէաք ի ձեռն տաճկաց, որ Աբազ…աւերաց զաշխարհն, զմեծամեծս կոտորեաց և այրէաց զաշխարհն և զամէն առու գերի արաւ, տարաւ» (թերթ 284բ):

1637 թվականին Եսայի գրիչը Աստվածատուր քահանայի համար «ընդ հովանեաւ մեծայարկ գումբեթաձև Խորանաշատ Սբ. Աստուածածնիս և Վանական վարդապետի սուրբ գերեզմանիս» օրինակում է մի Ժողովածու: Իսկ Թումա կրոնավորի համար օրինակած Ավետարանում Եսայի գրիչը գրչության տեղի մասին գրում է. «ընդ հովանեաւ Սբ. Խորանաշատայ Աստուածածնիս ի գաւառս Զագամ»[10]: 1642 թվականին որդու՝ Դավիթ սարկավագի համար Թամուրը Ժամագիրք է պատվիրում, որը «ի դուռս Խորանաշատայ Սբ. Աստուածածնիս եւ գերեզմանացս Վանականայ եւ Գրիգորի սուրբ վարդապետացս» ավարտում է Եսային[11]:

1674 թվականին Ավետիս քահանան Մաշտոց ձեռաց է օրինակում «ի հայրապետութեան տէր Պետրոսի և յաթոռ Խորանաշատու»[12]:

---

[1] **Գրիգոր վրդ. Ակներցի**, էջ 67:
[2] **Գ. Յովսէփեան**, Հավուց թառի Ամենափրկիչը, Երուսաղէմ, 1937, էջ 62: Դիվան հայ վիմագրության, Իջևանի շրջան, պր. VI, կազմ. **՝ Ս.Ավագյան, Հ. Ջանփոլադյան**, Երևան, 1977, էջ 110:
[3] **Բ. Ուլուբաբյան,** Խաչենի իշխանությունը…, էջ 197-202, **Կիրակոս Գանձակեցի**, էջ 225:
[4] ՄՄ ձեռ. 2273, թերթ՝ 364, նյութ՝ թուղթ, 17 ×12, գիր՝ բոլորգիր, տող՝ 26-28:
[5] ՄՄ ձեռ. 6106, թերթ՝ 274, նյութ՝ թուղթ, 12 × 8, գիր՝ բոլորգիր, տող՝ 24:
[6] ՄՄ ձեռ. 5452, թերթ՝ 205, նյութ՝ թուղթ, 24,5 × 15, գիր՝ բոլորգիր, տող՝ 26:
[7] ՄՄ ձեռ. 1563, թերթ՝ 340, նյութ՝ թուղթ, 17 × 12,2, գիր՝ բոլորգիր, տող՝ 19-22:
[8] ՄՄ ձեռ. 5601, թերթ՝ 311, նյութ՝ թուղթ, 17,5 × 13, գիր՝ բոլորգիր, տող՝ 21:
[9] ՄՄ ձեռ. 6669, թերթ՝ 286, նյութ՝ թուղթ, 20,5 × 15, գիր՝ բոլորգիր, տող՝ 19-20:
[10] Արցախի վանքերը, էջ 157-158:
[11] ՄՄ 8882, թերթ՝ 160, նյութ՝ թուղթ, 25 × 20, գիր՝ բոլորգիր, տող՝ 26:
[12] ՄՄ 3536, թերթ՝ 134, նյութ՝ թուղթ, 20 × 15, գիր՝ բոլորգիր, տող՝ 21:

ՀՏԴ 902(479.243) Պատմություն

Լյուբա Կիրակոսյան
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան (ՃՇՀԱՀ)

ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԱՄՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Արցախի Տիգրանակերտի պաշտպանական համակարգը, որը բացվել է պեղումների շնորհիվ, ներկայումս ամենահզորն է Անդրկովկասում և հելլենիստական քաղաքաշինության վերաբերյալ հարուստ նյութեր է տալիս: Սրանք սկզբնաղբյուրի նշանակություն ունեն, քանզի շատ չեն Հայաստանի այս ժամանակաշրջանի ամրաշինական համակարգերի մասին գրավոր աղբյուրների հաղորդած տեղեկությունները: Քաղաքի Ամրացված թաղամասը հատակագծում եռանկյունաձև է, կրկնում է տեղանքի ռելիեֆի ուրվագիծը և ընդգրկում է Վանքասարի ժայռի՝ հարթավայրին հարող բարձունքի (բարձրությունը ստորոտից 20-120մ) վերնամասի 6,0 հա տարածքը, որի 0,5հա զբաղեցնում է միջնաբերդը: Ամրաշինական համակարգը բաղկացած է պարիսպ-աշտարակ-մուտք կառուցվածքային տարրերից: Պաշտպանական համակարգի հարավային և հյուսիսային հատվածների այսօր բացված երկարությունը 700,0մ է: Դրանք կազմված են պարսպապատերից և քառանկյուն (7,05մ, 8,6մ) ու շրջանաձև (տրամագծերը 9,0մ, պահպանված բարձրությունը որոշ տեղերում մինչև 5,0 մետր) աշտարակներից: Առայժմ անհայտ է ամրոցի մուտքի տեղադրությունը: Պարիսպները կառուցվել են բեկված գծերի տեսքով: Այսպես են իրականացված ինչպես հելլենիստական հայկական՝ (Արմավիր, Արտաշատ, Գառնի), այնպես էլ այլ տարածաշրջանների (Պերգամոս, Պրիենե, Միլեթոս, Դուրա-Եվրոպոս) օրինակները: Պարիսպներն ու աշտարակները հիմնականում կցվել են իրար և կոնստրուկտիվորեն կապված չեն: Պաշտպանական գործառույթը լիարժեք իրականացնելու համար աշտարակները պարսպի արտաքին կողմից կիսով չափ դուրս են գալիս: Այսպիսին էր նաև Արտաշատի, Գառնիի, Դուրա-Եվրոպոսի աշտարակ-պարիսպ հարաբերությունը:

Շինարարական տեխնիկան: *Արցախի Տիգրանակերտի Ամրացված թաղամասում լեռան լանջերը դարավանդաձև մշակվել են և դրանց վրա է իրականացվել կառուցապատումը: Այսպես են կառուցապատվել մայրաքաղաք Արտաշատը, հելլենիստական Պրիենեն, Իբերիայի քաղաքները: Պետք է նկատել, որ բնական թեքության արհեստական դարավանդեցման առկայությունն ու բնակավայրի կառուցապատման կազմակերպումը այդ դարավանդների վրա հատուկ է Հայաստանի շինարարական գործին դեռևս III հազարամյակից:*

Ռելիեֆին համապատասխան սահուն և անընդմեջ կառուցապատում ապահովելու համար բնական խոչընդոտները վերացվել են ժայռի հարթեցման, աստիճանաձև մշակման, փորման և օգտագործման ճանապարհով: Պարիսպներն ու աշտարակները կառուցված են կրաքարե վեմերով (0,45x0,55x0,5 - 1,2x0,8x0,75մ)՝ չոր շարվածքով: Քարերն իրար հետ ամրացվել են միայն հորիզոնական, ծիծեռնակապոչ փորվածքների մեջ տեղադրված փայտերով և որոշ դեպքերում նաև կրափոշու լցոնով: Կրաշաղախն օգտագործվել է որպես դատարկ տարածությունները լրացնող միջոց, հիմնական կրող մասսան քարն է: Հիմքերը ժայռափոր և ժապավենաձև են: Տիգրանակերտի պաշտպանական համակարգի առանձնահատկությունն այն է, որ այն քարակերտ է: Մինչդեռ անտիկ մյուս օրինակներում քարե ցածր (0,5-մինչև 2,0մ) հիմքերի վրա կառուցվել են հում աղյուսով պատեր:

Հայաստանի անտիկ քաղաքների և մասնավորապես Արցախի Տիգրանակերտի պաշտպանական համակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեղական վարպետները, մինչհելլենիստական ամրաշինության ավանդույթները հարստացնելով հելլենիստական կառուցողական արվեստի նվաճումներով, հասել են ավելի բարձր մակարդակի և հիմք նախապատրաստել միջնադարյան բերդաշինության համար:

Lyuba Kirakosyan
NUACA

DEFENSE SYSTEM OF TIGRANAKERT OF ARTSAKH IN THE CONTEXT OF HELLENISTIC ARCHITECTURE

Defense system of Tigranakert of Artsakh which was discovered during the excavations, is the most powerful construction in the region, It provides rich materials related to Hellenistic urban development. These are kind of primary sources, as there are very few written sources about defense systems of Armenia in that period. Reinforced district of the town has a triangular shape in the construction plan, which repeats the outline of the district relief. It includes 6.0 hectar area of the upper part of lowlands near the Vanqasar rock (the height is 20-120 m). 5.0 hectares is occupied by the citadel.

Defense system consists of the following structural elements: fence-tower-entrance. The opened length of southern and northern parts of the defense system is 655,0 m. They consist of stone-walls and square (7,0x7,5m, 8,6x8,2m), circular (9m diameter, the preserved height of some parts is up to 5,0 m) towers. The location of the castle entrance is still unknown. The fences are constructed in the form of polarized lines. The same style of construction is implemented as in Hellenistic Armenian examples (such as Armavir, Artashat, Garni), as in international examples (such as Pergamos, Priene, Miletos, Dura-Europos). Fences and towers are attached to each other and are not connected constructively.

Construction technique.

In the attached district of Tigranakert of Artsakh the slopes of the mountain have been furbished. The construction has been carried out on them. The capital of Artashat, Hellenistic Priene, cities of Iberia were built in this way. It is worth to mention that the existence of artificial furbishes of natural slope and the settlement construction on the terrace is typical of Armenian construction style since III millennium.

In order to ensure the smooth and uninterrupted construction appropriate to the relief the natural barriers have been removed through smoothing and the stepped processing of the rock. The fences and towers are built of limestone dry walls (0,45x0,55x0,5 - 1,2x0,8x0,75m).

The stones are attached to each other with horizontal sticks inserted in the swallowtail openings. The limestone was used as a complementary means of empty spaces. The main mass is from stone. The stones are carved in the rock and like.

The main feature of Tigranakert of Artsakh is the fact that it is stone-made. In the other examples of Antique world the brick walls are built on low stone base (0.5-2 m height).

The study of defense system of antique cities of Armenia, especially the research of Tigranakert of Artsakh shows that the local masters enriched pre-Hellenistic traditions of construction with achievements of Hellenistic construction period, therefore they have reached the upper level of constructing art and prepare the ground for medieval fortress construction.

Люба Киракосян
НУАСА

ОБОРОНИТЕЛЬНЫЕ СООРУЖЕНИЯ АРЦАХСКОГО ТИГРАНАКЕРТА В КОНТЕКСТЕ ЭЛЛЕНИСТИЧЕСКОЙ ФОРТИФИКАЦИИ

РЕЗЮМЕ

Фортификационная система Арцахского Тигранакерта, выявленная благодаря раскопкам, на сегодняшний день является наиболее мощной в Закавказье и дает богатый материал о градостроительстве эллинистического периода. Она служит первоисточником, поскольку письменных источников относящихся к фортификационной системе этого периода в Армении немного.

Треугольная в плане укрепленная часть города повторяет рельеф месности, включая 6,0 га верхней части горы Ванкасар, примыкающую к долине (высота от подножья 20-120м), из которых 0,5га занимает цитадель. Фортификационная система состоит из стен, башен и входа. Раскопанные на сегодняшний день северная и южная части фортификационной системы состовляют примерно 700,0м. Они состоят из стен и квадратных (7,0 х 7,5м; 8,6х8,2м) и круглых (диаметр 9,0м, местами высотой 5,0м) башен. Пока не неизвестно местонахождение входа в крепость. Крепостные стены построены в виде преломленных линий. Так построены эллинистические памятники как в Армении (Армавир, Арташат, Гарни), так и в других регионах (Пергам, Приене, Милет, Дура-Европа).

Стены и башны, в основном, пристроены и конструктивно не связаны друг с другом. Чтобы полностью осуществить защитные функции, башни наполовину выступают с внешней стороны стен. Взаимосвязь башня-стена аналогичная в Арташате, Гарни и Дура-Европе.

Строительная техника. *В Укрепленном квартале Арцахского Тигранакерта склоны горы обработаны террасообразно и застроены. Такой принцип застройки имели и столица Арташат, эллинистический Приене, города Иберии. Нужно отметить, что при естественном наклоне искусственно обработанные террасы и постройки на них типичны для строительства Армении еще с III тыс. до.н.э.*

Для обеспечения плавного строительства в соответствии с рельефом местности естественные барьеры сглажены тромбовкой, ступенчатой обработкой и рубкой в скале, а также путем использования естественного рельефа. Башни и стены построены из известняка (0,45х0,55х0,5-2,1х1,1х0,9м) сухой кладкой. Камни соединялись только горизонтально, с деревянными стержнями поставленными в камни в виде ласточкиных хвостов. Пустоты заполнялись известняковым раствором, но основная несущая масса-камень. Основы крепостных стен и башен лентообразны и выдолблены в скале.

Отличительной чертой фортификационной системы Тигранакерта является то, что она каменная, тогда, как в других античных памятниках на низкой (0,5-2,0м) каменной основе воздвигались стены из сырцвого кирпича.

Исследование оборонительных сооружений Армении античного времени и, в частности, Арцахского Тигранакерта показывают, что местные мастера, обогатив до эллинистических традиций фортификации эллинистическими достижениями, поднялись на более высокий уровень и подготовили почву для строительства средневековых крепостных сооружений.

Արցախի Տիգրանակերտի պաշտպանական համակարգը, որը բացվել է պեղումների շնորհիվ, ներկայումս ամենահզորն է Անդրկովկասում և հելլենիստական քաղաքաշինության վերաբերյալ հարուստ նյութեր է տալիս: Սրանք սկզբնաղբյուրի նշանակություն ունեն, քանզի շատ չեն այս ժամանակաշրջանի Հայաստանի ամրաշինական համակարգերի մասին գրավոր աղբյուրների հաղորդած տեղեկությունները: Քաղաքի Ամրացված թաղամասը հատակագծում եռանկյունաձև է, կրկնում է տեղանքի ռելիեֆի ուրվագիծը և ընդգրկում է Վանքասարի ժայռի՝ հարթավայրին հարող բարձունքի (բարձրությունը ստորոտից 20-120մ) վերնամասի 6,0 հա տարածքը, որի 0,5հա զբաղեցնում է միջնաբերդը: Ամրաշինական համակարգը բաղկացած է պարիսպ-աշտարակ-մուտք կառուցվածքային տարրերից: Պաշտպանական համակարգի հարավային և հյուսիսային հատվածների այսօր բացված երկարությունը 700,0մ է: Դրանք կազմված են պարսպապատերից և քառանկյուն (7,0մ, 8,6մ) ու շրջանաձև (տրամագծերը 9,0մ, պահպանված բարձրությունը որոշ տեղերում մինչև 5,0 մետր) աշտարակներից: Առայժմ անհայտ է ամրոցի մուտքի տեղադրությունը: Պարիսպները կառուցվել են բեկված գծերի տեսքով: Այսպես են իրականացված ինչպես հելլենիստական հայկական՝ (Արմավիր, Արտաշատ, Գառնի), այնպես էլ այլ տարածաշրջանների (Պերգամոս, Պրիենե, Միլեթոս, Դուրա-Եվրոպոս) օրինակները: Պարիսպներն ու աշտարակները հիմնականում կցվել են իրար և կոնստրուկտիվորեն կապված չեն: Պաշտպանական գործառույթը լիարժեք իրականացնելու համար աշտարակները պարսպի արտաքին կողմից կիսով չափ դուրս են գալիս: Այսպիսին էր նաև Արտաշատի, Գառնիի, Դուրա-Եվրոպոսի աշտարակ-պարիսպ հարաբերությունը:

Շինարարական տեխնիկան: Արցախի Տիգրանակերտի Ամրացված թաղամասում լեռան լանջերը դարավանդաձև մշակվել են և դրանց վրա է իրականացվել կառուցապատումը: Այսպես են կառուցապատվել մայրաքաղաք Արտաշատը, հելլենիստական Պրիենեն, Իբերիայի քաղաքները: Պետք է նկատել, որ բնական

թեքության արհեստական դարավանդեցման առկայությունն ու բնակավայրի կառուցապատման կազմակերպումը այդ դարավանդների վրա հատուկ է Հայաստանի շինարարական գործին դեռևս III հազարամյակից:

Ռելիեֆին համապատասխան սահուն և անընդմեջ կառուցապատում ապահովելու համար բնական խոչընդոտները վերացվել են ժայռի հարթեցման, աստիճանաձև մշակման, փորման և օգտագործման ճանապարհով: Պարիսպներն ու աշտարակները կառուցված են կրաքարե վեմերով (0,45 - 1,25մ)՝ չոր շարվածքով: Քարերն իրար հետ ամրացվել են միայն հորիզոնական, ծիծեռնակապոչ փորվածքների մեջ տեղադրված փայտերով և որոշ դեպքերում նաև կրափոշու լցոնով: Կրաշաղախն օգտագործվել է որպես դատարկ տարածությունները լրացնող միջոց, հիմնական կրող մասսան քարն է: Հիմքերը ժայռափոր և ժապավենաձև են: Տիգրանակերտի պաշտպանական համակարգի առանձնահատկությունն այն է, որ այն քարակերտ է: Մինչդեռ անտիկ մյուս օրինակներում քարե ցածր (0,5-մինչև 2,0մ) հիմքերի վրա կառուցվել են հում աղյուսով պատեր:

Հայաստանի անտիկ քաղաքների և մասնավորապես Արցախի Տիգրանակերտի պաշտպանական համակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեղական վարպետները, մինչհելլենիստական ամրաշինության ավանդույթները հարստացնելով հելլենիստական կառուցողական արվեստի նվաճումներով, հասել են ավելի բարձր մակարդակի և հիմք նախապատրաստել միջնադարյան բերդաշինության համար:

Արդիականությունը

Հելլենիստական Հայաստանի պաշտպանական կառույցների մասին գրավոր աղբյուրների հաղորդած տեղեկությունները շատ քիչ են, ուստի պեղումներով բացված պաշտպանական համակարգերը շատ հաճախ ստանում են սկզբնաղբյուրի նշանակություն: Այս տեսակետից ավելի քան խոսուն է Արցախի Տիգրանակերտի պաշտպանական համակարգը, քանզի չնայած ենթարկված ավերածություններին, այն անխաթար է պահել իր նախնական վիճակը և ներկայումս ամենահզորն է Անդրկովկասում: Վերջին տասը տարիներին Արցախի Տիգրանակերտում իրականացված պեղումները[1] շատ հարուստ նյութեր են տալիս անտիկ և հելլենիստական քաղաքաշինության վերաբերյալ, որոնց հետազոտությունը **հրատապ** անհրաժեշտություն է դարձել և ճարտարապետական քննությամբ ներկայացվում է առաջին անգամ:

Հետազոտության **նպատակն** է ներկայացնել Արցախի Տիգրանակերտի պաշտպանական համակարգը, բացահայտել վերջինիս քաղաքաշինական և ճարտարապետական առանձնահատկությունները՝ դիտարկված Մերձավոր Արևելքի մշակութային փոխառնչությունների ոլորտում և հայ ճարտարապետական մշակույթի հետ միասնականության մեջ: Թեմայի հետ կապված որոշ խնդիրներ արծածվել են Արցախի Տիգրանակերտի արշավախմբի հրապարակումներում [1]:

Հետազոտության մեթոդը: Հետազոտության ընթացքում կիրառվել է բնօրինակների չափագրության և քննության, ճարտարապետական վավերացումների և իրողությունների բովանդակային ու պատմահամեմատական վերլուծության եղանակը:

Տեղադրությունը: Ամրացված թաղամասը հատակագծում եռանկյունաձև է՝ կրկնում է տեղանքի ռելիեֆային ուրվագիծը և տարածվում է Վանքասարի ժայռի՝ հարթավայրին հարող բարձունքին՝ ստորոտի նկատմամբ մինչև 110-120մ բարձրության վրա: Գերիշխող այս դիրքը հնարավորություն էր տալիս վերահսկելու շրջակայքը և ապահովելու բնական անառիկությունը: Արցախի Տիգրանակերտի Ամրացված թաղամասը պարագծված է հզոր պարիսպներով և ընդգրկում է մոտ 6,0 հա տարածք: Եռանկյան բարձրադիր, պաշտպանական տեսակետից առավել շահեկան անկյունը զբաղեցնում է միջնաբերդը (0,5հա): Այն կառուցվել է նախապես, որից հետո հավելվել, և շուրջը սփռվել են մյուս քաղաքամասերը (նկ.1): Նպատակահարմար են օգտագործվել բնական պայմանները, և ստեղծվել է պաշտպանական կառուցվածքների հուսալի համակարգ, որն ապահովել է քաղաքի անվտանգությունը: Այսպիսի տեղադրություն ունեն հելլենիստական աշխարհի ինչպես հայկական (Արմավիր[2], Արտաշատ [3], Գառնի[4], , այնպես էլ մյուս տարածաշրջանների (Պերգամոս, Միլեթոս[5], Պրիենե[6], Բազինեթի[7]) օրինակները:

2005-2016թթ. իրականացված պեղումների շնորհիվ բացվել են քաղաքի պաշտպանական համակարգի կարևոր հատվածները՝ աշտարակներով ամրացված միջնաբերդը, ամրացված թաղամասի հարավային պարսպի հիմքերի համարյա ողջ երկարությունը, հյուսիսային պարսպի երկարության մոտավորապես կեսը, դարավանդներից մեկի հենապատը (նկ.1):

Տիգրանակերտի ամրաշինական համակարգի հարավային հատվածը:

Համարյա ամբողջությամբ պեղվել և ուրվագծվում են ամրացված թաղամասի հարավային պարսպի ժայռափոր հիմքերը, որոնք ձգվում են Վանքասարի ժայռի հարավային զառիթափի վերնամասով՝ արևելքից արևմուտք, ստորոտից մինչև գագաթ մոտ 450,0 մ երկարության և մինչև 120,0մ բարձրության վրա: Նախքան պեղումները պարիսպների այս կողմի որոշ հատվածներում էին միայն պարզորոշ երևում դրանց հիմքերի փորվածքները: Այսօր արդեն լեռան ստորոտից դեպի գագաթ ձգվում են ժապավենաձև հիմքերը (չորսից-հինգ գոտի ունեցող), որոնց մեջ կողք-կողքի՝ առանձին փորածո բնիկների մեջ շարվել են խոշոր կրաքարե բլոկները (միջինը 0,9x0,6x 0,5 մ չափերով): Պաշտպանական համակարգի այս հատվածը կազմված է պարսպապատերից և երկու բոլորաձև և մեկական կիսաշրջանաձև ու քառանկյուն աշտարակներից (նկ.1): Հարավային կողմում պահպանվել են հիմնականում դրանց ժայռափոր հիմքերը: Շրջանաձև աշտարակներն ունեն 9,0մ տրամագծեր, իսկ քառանկյուն աշտարակը՝ 7,0x7,5մ չափեր: Ակնհայտ է հատակագծի երկրաչափական գծագրությունը: Պաշտպանության

[1] Պեղումներն իրականացրել է ՀՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի հնագիտական արշավախումբը՝ պ.գ.դ. Հ. Պետրոսյանի գլխավորությամբ: Հնագիտական աշխատանքներն առանձին տեղամասերում ղեկավարել են հնագետներ պ.գ.թ. Վ. Սաֆարյանը, պ.գ.թ.Ի. Կարապետյանը, պ.գ.թ. Տ. Վարդանեսովան, Ա. Գաբրիելյանը:

նպատակով և օգտագործելով տեղանքի ընձեռած հնարավորությունները պարիսպները կառուցվել են բեկված գծերի տեսքով: Պարսպահիմքերի մեջ մի տեղում պահպանվել են 7,0 մ երկարություն կազմող պատի 9 բլոկներ, որոնց հյուսիսահայաց՝ դեպի միջնաբերդի ներս նայող կողմն ունի «ռուստիկ» մշակում: Այսինքն՝ պարիսպների ներքին երեսը բաց է թողնվել և կից շինություններ չկան, հետևաբար դեպի պարիսպներ անցում-մոտեցումներ են թողնվել, որոնք ապահովել են պարիսպների վերին՝ պաշտպանական հարթակների վրա բարձրանալու հարցը:

Տիգրանակերտի ամրաշինական համակարգի հյուսիսային հատվածը:

Ամրաշինական համակարգի այս հատվածը այսօր բացված է մոտ 300,0մ, որը բաղկացած է երեք բոլորակ, մեկ քառանկյուն աշտարակներից և պարսպապատերից (նկ.1): Մինչև պեղումները այստեղ երևում էր միայն ամենավերին շրջանաձև աշտարակին կցված պարսպին պատկանող անկյունային բլոկի մի փոքրիկ մասը միայն: Եթե պաշտպանական համակարգի հարավային հատվածը պահպանված է պարիսպների ժայռափոր հիմքերի մակարդակում, ապա հյուսիսային կողմում հիմնականում կանգուն են այդ պարիսպները մինչև 5,0մ բարձրությամբ: Բոլորակ աշտարակներն ունեն 9,0 մ տրամագիծ, իսկ քառանկյունը՝ 8,6x8,2մ չափեր: Պարսպի հաստությունը 2,6մ է:

Միջնաբերդը: Արցախի Տիգրանակերտի Միջնաբերդն ընդգրկում է 0,5 հա տարածք: Եռանկյունաձև հատակաձևի ծայրագույն անկյունը փակում է սեղանաձև հատակագծով հոծ աշտարակը (6,0x9,0 x 12,0մ): Այս աշտարակին է, թերևս վերագրվում ողջ քաղաքն ու շրջակայքը հսկող՝ դիտակետ աշտարակի և հրամանատարական բարձունքի դերը: Այստեղից քաղաքի տարածքն ու ինչպես նաև ողջ հարթավայրը կարծես «ափի» մեջ լինեն և վերահսկելի են: Աշտարակի դիմաց 12,0x10,0մ-ի մի հարթակ է բացվել, որը ենթադրվում է, որ բակ էր, որտեղ ժամանակին կենտրոնացվում էին քաղաքի պաշտպանական ուժերը: Ամրացված այս ծայրամասն ավարտվում է կտրուկ իջվածքով՝ խանդակով, որի մյուս կողմում՝ հանդիպակաց ժայռի եզրը նույպես փորվածքներ ունի: Հավանաբար, ժամանակին այս խանդակի վրայով անհրաժեշտության դեպքում կամրջի դեր կատարող փայտից տախտակամած է օգտագործվել, որը հնարավորություն է տվել ամրոցի պաշտպաններին իրենց պարտականությունները կատարելիս օգտագործել այս ճանապարհը: Առայժմ անհայտ է ամրոցի մուտքի տեղադրությունը:

Արցախի Տիգրանակերտի Ամրացված թաղամասի ներքին կառուցապատումն իրականացնելու համար քաղաքաշինարարները լեռան թեք լանջերը դարավանդաձև մշակել են: Այժմ հստակորեն կարելի է խոսել առնվազն չորս դարավանդների մասին, որոնցից մեկի հենապատը բացվել է 83,0 մ երկարությամբ: Այն միջնաբերդը ամրացված մյուս հատվածից բաժանող պարիսպ է նաև: Շարված է մինչև 1,7մ երկարություն և 0,5-0.7մ լայնություն ունեցող կրաքարե կոպտատաշ խոշոր քարերով: Որոշ տեղերում պատը պահպանվել է երկու քարի բարձրությամբ: Պարիսպների համեմատ՝ այն շատ ավելի կոպիտ է շարված: Ընդ որում, հորիզոնական շարքերը կազմվել են տարբեր բարձրություն ունեցող քարերով: Տեղ-տեղ պատը դրվել է հարթեցված ժայռի վրա, մնացած դեպքերում այն հողի վրա է, որի արդյունքում այդ հատվածներում նստվածք է տվել: Հենապատին կից բացվել են նաև այդ պատն ամրացնող որմնահեցի մնացորդներ: Այսպես են կառուցապատվել մայրաքաղաք Արտաշատը [8], հելլենիստական Պրիենեն [6], Իբերիայի [7] քաղաքները: Պետք է նկատել, որ բնական թեքության արհեստական դարավանդեցման առկայությունն ու բնակավայրի կառուցապատման կազմակերպումը այդ դարավանդների վրա հատուկ է Հայաստանի շինարարական գործին դեռևս III հազարամյակից [9]:

Միջնաբերդում հելլենիստական ժամանակաշրջանին վերաբերող կառուցապատումը բավական խաթարված է միջնադարում կառուցապատման ենթարկված լինելու պատճառով: Հիմնականում պահպանվել են այդ դարաշրջանին վերաբերող պատերի ժայռափոր հիմքերի պատառիկներ միայն:

Շինարարական տեխնիկան և շինարվեստը: Արցախի Տիգրանակերտի Ամրացված թաղամասում կառուցապատումն իրականացվել է քարի վարպետ մշակման, բնական ժայռի լիարժեք օգտագործման և լեռան լանջերի դարավանդեցման պայմաններում: Ռելիեֆին համապատասխան սահուն և անընդմեջ կառուցապատում ապահովելու համար բնական խոչընդոտները վերացվել են ժայռի հարթեցման, աստիճանաձև մշակման, փորման և օգտագործման ճանապարհով:

Կառուցապատված է ազատ պարագծով: Ամրաշինական համակարգը իրականացված է շինարարական այնպիսի եղանակով, ինչպիսին պարիսպների խոշոր բլոկների տակ փորվածք-բների ստեղծումն է: Այդ փորածո բջիջը հիմնականում նախատեսված է մեկ պարսպաքարի համար: Որոշ տեղերում փորված հիմնատակի մեջ տեղադրված են եղել մեկից ավելի բլոկներ: Խոշոր բլոկների տակ հորիզոնական մակարդակ ապահովելու համար ժայռը ոչ միայն փորվել է, այլև որոշ տեղերում, ըստ անհրաժեշտության, լցվել մանր քարերի և քարափոշու լիցքով: Մանրահատիկ կրաքարի այսպիսի բաղադրությունը օգտագործվել է նաև շարվածքներում՝ քարերի արանքները լցնելու նպատակով: Կրաշաղախն օգտագործվել է որպես դատարկ տարածությունները լրացնող միջոց, հիմնական կրող մասսան քարն է:

Հյուսիսային պարսպին ներսից հարող որոշ հատվածներում բացվել են քարե հիմքերի վրա կառուցված հում աղյուսի պատերի մնացորդներ: Պարիսպներն ու աշտարակները հիմնականում կցվել են իրար և կոնստրուկտիվորեն իրար հետ կապված չեն, որն ապահովում էր ամրաշինական համակարգի առավել կայունությունը (նկ.2): Պաշտպանական գործառույթը լիարժեք իրականացնելու համար աշտարակները պարսպի արտաքին կողմից կիսով չափ դուրս են գալիս: Այսպիսին էր նաև Արտաշատի, Գառնիի, Դուրա-Եվրոպոսի [10] աշտարակ-պարիսպ հարաբերությունը:

Տիգրանակերտը կառուցող ճարտարապետների ու վարպետների բարձր պատրաստվածության և շինարարական հմտությունների մասին են վկայում նաև քարերի կատարյալ համաչափությունն ու նուրբ մշակումը, հսկայածավալ քարերն իրար միացնելու եղանակը: Պարիսպներն ու աշտարակները շարված են խոշոր

կրաբլոկներով (0,45x0,55x0,5 - 1,2x0,8x0,75մ): Բլոկներն ունեն շփման մակերեսների իդեալական տաշվածք՝ սրբատաշ մշակված շրջանակներով, երեսների կոպտատաշ (ռուստիկում) բարձիկներով մշակում: Խոշոր բլոկներն ուղղակի դրված են իրար վրա և կանգուն են ծանրության հաշվին, իսկ մանրները լրացուցիչ իրար են միացվել §ծիծեռնակապոչ¦ կապերով, որպեսզի կանխվեն հորիզոնական տեղաշարժերը: Այդ կապերը ծիծեռնակի պոչի նմանվող, երկու իրար կողքի գտնվող քարերի վրա խնամքով արված փոսիկներ են (լայն. 10-20սմ, խորությունը՝7-14սմ), որոնց մեջ ագուցել են, հավանաբար, փայտից սեպերը և կապել քարերը: Որոշ տեղերում այդ փոսիկները լցվել են նաև կրափոշու լցոնով: Ինչքան փոքր են կվադրերը, այնքան հաճախակի են «ծիծեռնակապոչ» կապերը: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ փոքր բլոկներով պատը պակաս ամուր էր և ենթակա՝ լրացուցիչ ամրացման: Կարելի է նաև փաստել, որ ավելի հաճախ նման կապերով ամրացվել են արտաքին շարքերի քարերը: Շինանյութը սպիտակ կրաքարն է: Օգտագործվել է նաև կավ:

Եզրակացություններ

Արցախի Տիգրանակերտի այսօր բացված ավերակները թույլ են տալիս խոսել նրա աշտարակներից ու պարսպապատերից կազմված պաշտպանական համակարգի մասին, բացառությամբ մուտքի՝ որի տեղադրությունը դեռ վավերացված չէ:

Այս պաշտպանական համակարգի առանձնահատկությունն այն է, որ այն քարակերտ է: Հում աղյուսով պատերը հիմնականում պատկանում են Ամրացված թաղամասի ներսի շինություններին:

Արցախի Տիգրանակերտի պաշտպանական համակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեղական վարպետները, մինչհելլենիստական ամրաշինության ավանդույթները հարստացնելով հելլենիստական կառուցողական արվեստի նվաճումներով, հասել են ավելի բարձր մակարդակի և հիմք նախապատրաստել միջնադարյան բերդաշինության համար:

Գրականության ցանկ

[1] Petrosyan H., Kirakosyan l., Safaryan V., Zhamkochyan A., Vardanyan R., Karapetyan I., Vardanesova T. The Discovery and First Results of Archaeological Investigations of Tigranakert in Artsakh: 2005–2009 // Archaeology of Armenia in the Regional Context. Yerevan, Gitutiun, 2012, p. 223-235.

Պետրոսյան Հ, Կիրակոսյան Լ. Վարդանեսովա Տ. և ուր. Արցախի Տիգրանակերտի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները // Տիգրան Մեծ, Երևան, §Գիտություն¦, 2011, էջ 227-238:

Պետրոսյան Հ. Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., Վարդանեսովա Տ. և ուր., Արցախի Տիգրանակերտի հետազոտության հիմնական արդյունքները. 2005-2009թթ. // Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2005-2010 թթ., Ստեփանակերտ, 2011, էջ 3-23, -//- 2011-2012թթ., Ստեփանակերտ, 2015, էջ 36-109:

Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Մշակութային հետազոտություններն Արցախում.Շուշի, Հանդաբերդի վանք, Տիգրանակերտ, Երևան,2009, էջ 25-38:

Կիրակոսյան Լ., Նորահայտ ամրոցը Արցախի Տիգրանակերտի մերձակայքում, Հայագիտական ուսումնասիրություններ, Ստեփանակերտ, 2014, էջ 14-22:

Կիրակոսյան Լ., Արագածոտնի վաղմիջնադարյան ամրոց-բնակատեղիների տիպաբանական վերլուծությունը, Արագածոտն, Հոգևոր և մշակութ. Ժառանգ., Օշական, 2003թ., էջ 67- 69:

[2] Тирацян Г.А., Культура древней Армении (VI в. до н. э.-III в. н. э.), Ереван, 1988, էջ, 80-82.

[3] Խաչատրյան Ժ., Հայաստանի անտիկ շրջանի պաշտպանական կառույցները, ՊԲՀ, 1987թ., թիվ 4, էջ 161:

[4] Սահինյան Ա., Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը, Երևան, 1983, էջ 31:

[5] Тарн В.,Эллинистическая цивилизация, М., 1949, с.280.

[6] Всеобщая история архитектуры в 12 томах (ВИА), т. 2, М.1973, с.304.

[7] Лордкипанидзе О., Иберия, в кн.,Древнейшие государства Кавказа и Средней Азии, М., 1985, с. 80,81.

[8] Կիրակոսյան Լ., Հակաերկրաշարժային միջոցառումները Հին Հայաստանի ամրաշինական համակարգերում, ԵՃՇՊՀ գիտ. աշխ. ժող. II, Երևան, 2001թ., էջ 65-68:

[9] Խաչատրյան Ժ., Արտաշատը պատմահնագիտական հետազոտությունների լույսի ներքո, ՊԲՀ, թիվ 2, էջ 14:

[10] Gumont F., Foulle de Doura-Europas, Paris, 1926, p. 22, A. von Gerkan, The Fortificatione.The excavations at Dura-Europos. Preliminary Report of 7-8 season of work. New-Haven, 1939, p. 4-61, Кошеленко Г.,Парфянская фортификация, Советская археология (СА), 1963, N 2, 66-68.

Նկարների ցանկ

Նկ.1 Արցախի Տիգրանակերտի գլխավոր հատակագիծը՝ քաղաքամասերի նշումով:

Նկ. 2 Հյուսիսային պարսպի մի հատվածի ճակատն ու հատակագիծը:

ա

Նկ.1 Արցախի Տիգրանակերտի գլխավոր հատակագիծը՝ քաղաքամասերի նշումով: ա-Ամրացված թաղամաս, բ-Կենտրոնական թաղամաս, գ-Անտիկ թաղամաս:



Նկ. 2 Հյուսիսային պարսպի մի հատվածի ճակատն ու հատակագիծը:

УДК 330/338(479.243) *История*

Александр Крылов
доктор исторических наук,
Президент Научного общества кавказоведов, эксперт ИМЭМО РАН (Москва)

ПЕРВОЕ ДЕСЯТИЛЕТИЕ НКР: ОСОБЕННОСТИ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ

Доклад Крылова А.Б. показывает особенности социально-экономического развития НКР в течение первого послевоенного десятилетия. Показаны особенности налоговой и аграрной реформ, которые обеспечили решение наиболее острых социальных и экономических проблем, стали удачным примером преобразования постсоветского общества. Доклад написан на основе данных, полученных в ходе полевых исследований, а также сведений и статистических данных, которые были предоставлены министерствами, ведомствами, сельскими администрациями и предприятиями НКР.

Ключевые слова: НКР, экономика, реформы, инвестиции, приватизация, сельское хозяйство, производство, развитие

Alexander Krylov
Doctor of Historical SciencesPresident of the Scientific Society of Caucasians, an expert of the Institute of World Economy and International Relations of the Russian Academy of Sciences (Moscow)

THE FIRST DECADE OF THE NKR: PECULIARITIES OF ECONOMIC DEVELOPMENT

The report by A. Krylov shows trends of socio-economic development of the NKR during the first post-war decade. The report reveals peculiarities of tax and agrarian reforms that provided resolution of the most pressing social and economic problems and became a good example of transformation of the post-soviet society. The document is based on the facts obtained during field researches as well as on the information and statistical data given by the ministries, departments, countryside administrations and enterprise of the NKR.

Ալեքսանդր Կռիլով
Կովկասագիտական գիտական միության նախագահ,
Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի
Միջազգային տնտեսության և միջազգային հարաբերությունների ինստիտուտի նախագահ /Մոսկվա/

ԼՂՀ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԸ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամփոփագիր՝ Հոդվածը ցույց է տալիս ԼՂՀ հետպատերազմյա առաջին տասնամյակի տնտեսական զարգացման առանձնահատկությունները: Ներկայացվում են հարկային և ագրարային բարեփոխումների առանձնահատկությունները, որոնք ապահովեցին առավել սուր սոցիալական և տնտեսական խնդիրների լուծումը, դարձան հետխորհրդային հասարակության վերափոխման հաջող օրինակ: Հոդվածը գրվել է դաշտային հետազոտությունների հիման վրա ստացված փաստերի, ինչպես նաև տեղեկագրերի և վիճակագրական տվյալների հիման վրա, որոնք տրամադրել են ԼՂՀ նախարարությունները, գյուղատնտեսական վարչական կառույցները և ձեռնարկությունները:

Բանալի բառեր՝ ԼՂՀ, տնտեսություն, բարեփոխումներ, ներդրումներ, սեփականաշնորհում, գյուղատնտեսություն, արտադրություն, զարգացում

Распад СССР в 1991 г. привел к политическому и социально-экономическому кризису на постсоветском пространстве. Прежний единый государственный механизм со всеми его политическими и социальными институтами, централизованным плановым хозяйством, общностью образовательного пространства, культурных связей и т.п., оказался разрушенным. Особенно сложной была ситуация в зонах конфликтов, где население оказалось в наиболее бедственном положении, а многие населенные пункты были буквально стерты с лица земли в ходе военных действий.

Первое послевоенное десятилетие имело в истории НКР принципиально важное значение. Именно в эти годы решалась задача ее выживания и закладывалась основа для дальнейшего развития.

После заключения перемирия и окончания военной стадии конфликта (1994 г.) местные власти контролировали примерно 85 % территории НКР, а также несколько прилегающих к НКР районов Азербайджана, где была создана т.н. "зона безопасности".В конце 1990-х гг. руководство НКР начало экономические реформы, направленные на облегчение налогового бремени, либерализацию рыночных отношений и привлечение иностранных инвестиций.

Специфика реформ была продиктована не только послевоенной разрухой, но и тем, что республика оказалось в числе постсоветских непризнанных государств и юридически не былапризнана мировым сообществом. Основой экономической реформы стало беспрецедентное снижение налогов. В течение нескольких послевоенных лет налоговая система республики практически полностью копировала Армению. В результате местные и иностранные инвесторы предпочитали вкладывать капитал в экономику Армении, а не в рискованное для себя непризнанное государство.

Чтобы привлечь иностранные инвестиции власти НКР осуществили в 2001 г. реформу налоговой системы: ставка налога на прибыль была снижена с 32 % до 5 %[1]. Это намного ниже, чем в соседних странах. В Азербайджане, например, ставка налога на прибыль юридических лиц даже после ее снижения в 2004 г. составляет 24 % (вместо прежних 25 %). В Армении ставка НДС составляет 20 %, налог на прибыль – 25 %[2]. Ставка подоходного налога была снижена с 30 % – до 5 %, полностью отменены все налоги на торговлю за исключением единого 2,5 % налога с товарооборота. В результате в республику пришли значительные по местным меркам иностранные инвестиции, которые послужили стимулом для развития частного сектора.

В сельском хозяйстве был введен единый налог на землю в размере 6 %, с 2004 г. – 10 % от кадастрового чистого дохода земли (5-7 долл. в год за 1 га), причем все, что на ней производится налогом не облагается. Правительство также полностью освободило от НДС всю продукцию от переработки сельскохозяйственного сырья. Размеры социальных налогов были снижены с 28 % до 13 %.

О положительном итоге реформ наглядно свидетельствовала последующая динамика развития промышленного и сельскохозяйственного производства. Еще в 1999 г. в НКР продолжался спад промышленного производства, который составил примерно на 11 % по сравнению с предыдущим годом. Однако уже в 2000 г. (первый год после начала реформ) был достигнут рост промышленного производства на 16,8 %. В последующие годы рост промышленного производства постоянно нарастал: в 2001 – 21,6 %, в 2002 – 36,2 % и в 2003 г. – 43,8 %.

В 2000 г. продукция, произведенная частным сектором, составляла всего 25 % промышленного производства республики. Уже через несколько лет на него приходилось более чем 75 % промышленной продукции. В 2003 г. в республике было выработано 130,6 млн квт\ч электроэнергии, что превышало показатели предыдущего года на 20,3 %. Среднемесячная зарплата одного работника составила около 60 долл. (годовой рост – 13,4 %), денежные доходы населения составили 34,4 млрд. драмов (рост – 13,5 %) и денежные расходы населения 33,3 млрд. драмов (рост – 13,9 %).

В 2003 г. наблюдался беспрецедентный рост (на 41,8 %) доходов госбюджета, в том числе: по линии налога на прибыль – на 25,6 % и подоходного налога – на 34,6 %. Таким образом, именно 2003 г., который стал беспрецедентным по росту макроэкономических показателей, позволил окончательно преодолеть последствия распада СССР и послевоенную разруху, и заложить основу для дальнейшего экономического развития НКР.

Стабильная внутриполитическая ситуация и радикальная налоговая реформа повысилиа привлекательность НКР для иностранных инвесторов. С 2000 г. в республику начали поступать прямые иностранные инвестиции (до этого их практически не было). В 2003 г. приток прямых капиталовложений в карабахскую экономику из-за рубежа увеличился по сравнению с предыдущим годом более чем на 60 %. Одним из наиболее успешных промышленных предприятий НКР стал Дрмбонский горно-обогатительный комбинат.

Это предприятие было создано в Мартакертском районе (пос. Дрмбон). Благодаря инвестициям московского предпринимателя В. Меджлумяназдесь была налажена добыча медной руды и построен горно-обогатительный комбинат по производству медного концентрата.Оборудование было закуплено на Украине по цене металлолома, по морю привезено в грузинский порт Поти, а оттуда по горным дорогам – в Карабах. Предприятие заработало в 2003 г. еще под открытым небом. Стены и крыша возводились уже после того, как оборудование было смонтировано и началось производство медного концентрата. Через несколько лет на комбинате перерабатывалось по 400-600 тонн медной руды в сутки. В производстве занято более двух тысяч человек, средняя зарплата составляла около 200 долл. Зарплатазависела от производительности: у работающих в шахте проходчиков она могла достигать 2 тыс. долл. в месяц. В середине первого десятилетия 2000-х годов данное предприятие обеспечивало 9,3 % промышленного производства НКР (на сумму 1085 млн. драмов в год).

Представители армянской диаспоры Иранасовместно с партнерами из Германии и Сирии инвестировали средства в производство полиэтиленовых труб и наладили их производство в Шуше. Благодаря иностранным инвестициям был модернизированСтепанакертский комбинат стройматериалов (позднее он был приватизирован и преобразован в ЗАО "Карин"). Значительные зарубежные инвестиции были сделаны в предприятия пищевой и перерабатывающей промышленности (производство алкогольных напитков, молочных продуктов, макарон и т.п.).

Серьезные инвестиции в гостиничный бизнес были сделаны армянами из США, Великобритании, Австралии и других государств (большинство инвесторов данной группы имеют аналогичный бизнес в странах постоянного проживания). Швейцарская фирма «Франк Мюллер»вложило средства в строительство гостиницы "Карабах" в Степанакерте. Эта же фирма, специализирующаяся на производстве высококачественных часов, реализовала в НКР и другие проекты, в частности, производство ювелирных изделий и футляров для дорогих механических часов.

Одним из наиболее крупных и успешных экономических проектов, осуществленных в середине первого десятилетия 2000-х годов, стал проект налаживания на территории НКР стационарной и мобильной телефонной связи. Начальная стоимость данного проекта составила 10 млн. долл. и он был осуществлен за счет инвестиций, сделанных арабскими предпринимателями из Ливана. В большинстве случаев проекты с участием иностранного капитала оказались успешными, это вело к дальнейшему росту капиталовложений.

После специального президентского указа о запрете вывоза с территории Карабаха необработанной древесины (его целью было предотвратить истребление лесных богатств Карабаха), здесь было налажено производство дубовых бочек, шпона, паркета и т.п. продукции.

Особенно активно развивалась пищевая промышленность республики. В начале 2000-х гг. было введено в строй несколько новых мельниц с использованием западных технологий, начало работать несколько предприятий по производству макарон по итальянской технологии, построено нескольких консервных предприятий.

Важнейшей частью экономических реформ в НКР стала радикальная земельная реформа, которая пока не имела аналогов на постсоветском пространстве. Ее необходимость была обусловлена тем, что в результате продолжавшихся несколько лет военных действий сельское хозяйство республики оказалось в состоянии полной разрухи. Было уничтожено большинство крупных скотоводческих комплексов, предприятий пищевой и перерабатывающей промышленности, садов и виноградников, практически полностью разрушена ирригационная система. Ущерб экономике

[1] Статистические данные были предоставлены автору соответствующими министерствами, ведомствами и предприятиями НКР.
[2]Центральная Азия и Кавказ, № 5, 2000, с. 189-190.

НКР от войны и экономической блокады превысил 5 млрд. долларов, причем почти половина (до 2,3 млрд. долл.) приходится на долю сельского хозяйства.

Накануне начатой в 1998 г. аграрной реформы власти подсчитали все имеющиеся в наличии сельскохозяйственные земли и приняли решение поделить их поровну между всеми сельскими жителями республики (реформа не затрагивала население Степанакерта). В результате реформы большинство сельскохозяйственных угодий (за исключением той части, которая была выделена в резервный государственный фонд) было приватизировано: все сельское население получило от государства в свою собственность и совершенно бесплатно по 0,6 га земли на каждого члена семьи или в среднем по 2,5 га на семью.

Сельские жители сами определяли, какие участки колхозной земли они будут приватизировать. Затем все жители каждого села принимали участие в жеребьевке, которая определяла, какой участок кому достанется. Чтобы не дробить свои будущие земельные угодья, члены семьи и родственные семьи часто объединяли свои доли и тянули общий жребий на всех родственников. В то же время, бывали примеры, когда участки оказывались раздробленными даже внутри отдельных семей (к примеру, из стремления получить не только пашню, но и участки на виноградниках, участки с фруктовыми деревьями и т.п.). Жеребьевка гарантировала равенство всех жителей, так что бывшие сельские управленцы не получили никаких привилегий при распределении земли.

Некоторая часть сельских жителей поначалу не понимала сути земельной реформы и посчитала ее очередной попыткой государственного вымогательства с целью заставить их платить дополнительные налоги. Однако уже скоро пример успешных соседей убедил скептиков в том, что они совершили ошибку. Поэтому в связи с настоятельными требованиями продолжить земельную реформу и наделить землей тех, кто еще недавно от нее отказывался, власти были вынуждены продлить срок реформы до июня 2004 г.

Земельная реформа совпала с периодом длительной засухи, которая продолжалась в Карабахе три года подряд (1998-2000 гг.). Засуха окончательно разорила даже те единичные (и прежде наиболее успешные коллективные хозяйства и государственные предприятия), которые еще пытались выжить. В то же время, несмотря на засуху, уже в 1999 г. собранный урожай составил почти 30 тысяч тонн – т.е. Карабах впервые сумел полностью удовлетворить собственные потребности в зерне исключительно за счет частных хозяйств.

После окончания засушливого периода начался интенсивный рост сельскохозяйственного производства. Постоянно возрастали площади засеваемых зерновыми земель, согласно официальной статистике в 2002 г. урожай составил 66 тыс. тонн, в 2003 г. – 85 тыс. тонн. В последующие годы собранный урожай превысил показатели последнего предвоенного 1990 г. (тогда было собрано 106 тыс. тонн).

Государство освободило крестьян от всех налогов за исключением небольшого фиксированного налога на землю. Средства от аренды общинных земель были направлены в бюджет сельской общины. В результате зависимость сел от государственных дотаций и займов постоянно снижалась, сельские общины переходили на самофинансирование. За счет арендной платы сельская администрация получила возможность обеспечить функционирование школ, медпунктов, решение социальных вопросов, ремонт дорог и т.п.

Проведенная в Нагорном Карабахе радикальная аграрная реформа имела противоречивый характер и свои негативные последствия[1]. Но она решила главную задачу: удалось предотвратить массовый отток населения за пределы НКР, в течение нескольких послевоенныхлет была решена проблема обеспечения собственным продовольствием, страна превратилась в экспортера зерна на армянский рынок. Реформа изменила социальное положение крестьян, они превратились в собственников земли, стали ее хозяевами, а ненаемными работниками.

За короткое время руководству НКР удалось решить задачу послевоенного восстановления. Экономические реформы проводились в крайне неблагоприятных условиях: нерешенность карабахской проблемы, постоянная напряженность на линии разграничения, непредсказуемые внешние факторы и т.п. Несмотря на это, реформы стали удачным примером преобразования постсоветского общества. Они позволилиреспублике выжить, решить наиболее острые социально-экономические проблемы, преодолеть послевоенную разруху и открыть новые перспективы будущего развития.

[1]См. подробнее: Багдасарян В.Б. Будущее сельского хозяйства НКР за коллективизацией. 15.06.2006 // http://old.novopol.ru/-buduschee-selskogo-hozyaystva-nkr-za-kollektivizatsie-text9436.html

ՀՏԴ 001(479.243) Պատմություն

Մարինե Հարությունյան,
պ.գ.թ. , գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
e-mail: marina-arutunyan@mail.ru

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՃՅՈՒՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՐՑԱԽՈՒՄ XVII Դ.ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII Դ. ՍԿԶԲԻՆ

Հոդվածում բերված տեղեկությունները ևս մեկ անգամ փաստում են պատմական այն ճշմարտությանը, որ տվյալ բարդ պատմափուլում հայ մշակույթի գործիչները ոչ միայն ջանացել են պահպանել դարերից եկող հայկական մշակութային արժեքների ժառանգությունը, այլև նրանց զուգահեռ ստեղծելու նոր մշակութային գոհարներ: XVII դ. երկրորդ կեսին և XVIII դ. սկզբին հիմնվեցին Գյուլիստանի Սբ. Ամենափրկիչ վանքի, Դրախտիկ գյուղի Ս. Գրիգոր Նարեկացի, Շոշ գյուղի Սբ. Ստեփանոսի, Ղազանչի գյուղի Սբ. Գևորգի, Կուսապատի Սբ. Աստվածածինի, Երից Մանկանց վանքի, Զրակույս գյուղի Սբ. Ստեփանոսի, Առաջաձոր գյուղի Սուրբ Աստվածածի, Խանձք գյուղի Սուրբ Ստեփանոսի, Վարանդայի Հերհեր գյուղի Սուրբ Գրիգորիսի, Փառիսոսի Հին Փիփի գյուղի և այլ վայրերի եկեղեցիները, որոնք դրսևորվեցին որպես գիտական օջախներ: Գիտության բնագավառում հայտնի են Գայանեն, Հովհաննես երեցը, Մարիամ ապաշխարողը, Մկրտիչ աբեղան, Գրիգոր երեցը, Հովհաննես Ապահունեցին, Իգնատիոս Մեծշենցին, Սիմոնը, Մխիթարը, Բարսեղը, Եսայի Հասան-Ջալալեանցը և ուրիշներ: Նրանց եռանդուն ջանքերի շնորհիվ, ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախում (թեև որոշ ընդհատումներով) շարունակվում է առաջ ընթանալ գիտական կյանքը:

Բանալի բառեր-Գյուլիստան, Սբ. Ամենափրկիչ վանք, Սբ. Ստեփանոսի եկեղեցի, Ղազանչի, Պետրոս Խանձքեցի կաթողիկոս, Մատթեոս սարկավագ Ծարեցի, Սբ. Ստեփանոսի եկեղեցի, Թրղի գետակ, Եսայի Հասան-Ջալալյան, Խանձք:

Марине Арутюнян,
кандидат исторических наук,
научный сотрудник, Институт истории НАН РА

РАЗВИТИЕ НЕКОТОРЫХ ОТРАСЛЕЙ НАУКИ В АРЦАХЕ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 17-ГО ВЕКА И В НАЧАЛЕ 18-ГО ВЕКА

Таким образом, представлены данные еще раз подтверждают историческую правду о том, что армянские деятели культуры не только стремились сохранить многовековую наследие культурных ценностей, но и параллельно создавать новые культурные ценности в течение этого трудного периода. Во второй половине XVII века и в начале XVIII века были построены церкви - церковь Монастыря Св. Аменапркич (в Гюлистане), Св. Григор Нарекаци (в селе Драхтик), Св. Степанос (в селе Шош), Св. Геворг (в селе Газанчи), Св. Аствацацин (в селе Кусапат), Монастыря Ериц Манканц, Св. Степанос (в селе Джракуйс), Св. Аствацацин (в селе Арачадзор), Св. Степанос (в селе Хандзк), Св. Григорис (в селе Гергер, Варанда), древнего села Пипи (в Парисосе) и друге, которые были использованы как научные центры.

В сфере науки были известны Гаянэ, иерей Ованес, Мариам, монах Мкртич, иерей Григор, Ованес Апахунеци, Игнатий Мецшенци, Симон, Мхитар, Барсех, Есаи Гасан-Джалалян и другие. Благодаря их энергичным усилиям, в Арцахе научная жизнь продолжала продвигаться вперед (хотя и с некоторыми перерывами).

Marine Harutyunyan,
candidate of historical science, scientific worker, Institute of History of NAS RA

THE DEVELOPMENT OF SOME BRANCHES OF SCIENCE IN ARTSAKH IN THE SECOND HALF OF THE 17TH CENTURY AND AT BEGINNING OF THE 18TH CENTURY

Thus, the presented informations confirms once again the historical truth on, that Armenian cultural figures not only endeavored to keep the centuries-old heritage of cultural values, but also to create new cultural values parallel them during that difficult period. In the second half of the XVII century and in the beginning of the XVIII century churches of St. Amenaprkich Monastery (in Gulistan), St. Grigor Narekaci (in Drakhtik), St. Stepanos (in Shosh), St. Gevorg (in Ghazanchi village), St. Astvacacin (in Kusapat), Yerits Mankants Monastery, St. Stepanos (in Jrakuys village), St. Astvacacin (in Arajadzor), St. Stepanos (in Khandzk), St. Grigoris (in Herher village of Varanda), ancient Pipi village (in Pharisos) and others were built, which were used as scientific centers.

Gayane, John Elder, Mariam, Mkrtich monk, Grigory Elder John Apahunetsi, Ignatius Metsshentsi, Simon, Mkhitar, Barsegh, Esai Hasan -Jalalian and others are known in the field of science. Thanks to their vigorous efforts, scientific life continued to advance (though with some interruptions) in Artsakh.

Keywords: Gyulistan, St. Amenaprkich Monastery,Church of Sts. Stepanos,Ghazanchi,Patriarch Petros Khandzgezi, Mateos deacon Tsaretsi,The river Trhy, Yesayi Hasan Jalalyan, Xakdzq.

Հայկական գիտական միտքն ունի հազարամյակների պատմություն և բոլոր պատմական դարաշրջաններում դիտվում է որպես մշակույթի զարգացման, ազգային ինքնուրույնության դրսևորման և գոյապահպանման կարևորագույն գործոններից մեկը:

Ուսումնասիրվող նյութի նպատակն է Մատենադարանում պահվող ձեռագրերի, պարբերական մամուլում լույս ընծայված նյութերի, գրականության հիման վրա ցույց տալ, որ, չնայած ժամանակաշրջանի ծանր փորձություններին[1], ինչպես հայկական գաղթօջախներում, այնպես էլ Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում (խոսքը հիմնականում վերաբերում է Արցախին) գիտության անխոնջ ներկայացուցիչները նախորդ դարաշրջանների մշակութային ավանդույթներին զուգահեռ ստեղծել են նոր գիտական համակարգ, որը նոր հող է պատրաստել հետագա դարերի մշակութային արժեքների ձևավորման և զարգացման համար:

Արցախի գիտական օջախների ստեղծման ու կայացման ամբողջական համակարգում իր առանձնահատուկ տեղն ունի հայոց եկեղեցին: Տարբեր եկեղեցական և վանական համալիրները դրսևորվել են որպես գիտամշակութային առաջադիմության խոշորագույն օջախներ: Այդ գիտական հաստատությունները հսկայական դեր են ունեցել ոչ միայն հայոց մշակութային գանձերը ոչնչացումից փրկելու, ուսուցիչների, բժիշկների, նկարիչների, երաժիշտների, շինարարների և այլ գիտության ներկայացուցիչների պատրաստման ասպարեզում, այլև հայ ժողովրդին կործանման վտանգից փրկելու գործում:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում (երբեմն որոշ ընդհատումներով) շարունակում էին գործել Ամարասի, Գանձասարի, Դադի վանքի, Խաթրավանքի, Գտչավանքի, Սբ. Հակոբա վանքի գիտական կենտրոնները[2]: Վերջիներիս զուգահեռ Արցախ աշխարում կառուցվեցին Գյուլիստանի Սբ. Ամենափրկիչ վանքի[3] (1641 թ.), Սպիտակ Խաչ վանքի[4] (XVII դ., Հադրութի շրջանում), Դրախտիկ գյուղի Ս. Գրիգոր Նարեկացի[5] (ԼՂՀ-ի Հադրութի շրջանում, 1645 թ.), Թոդանի[6] (1647 թ.), Շոշ[7] գյուղի Սբ. Ստեփանոսի (1655 թ.), Սբ. Գևորգի[8] (Մարտակերտի շրջանի Ղազանչի գյուղում, 1671թ.), Սբ. Աստվածածինի (Մարտակերտի շրջանի Կուսապատ[9] գյուղում, 1686 թ.) Երից Մանկանց վանքի[10] (Մարտակերտի շրջան, Թարթառի վտակ Թրղի գետակի ափին գտնվող եկեղեցին, 1691թ.), Ջրակույս գյուղի Սբ. Ստեփանոսի[11] (Հադրութի շրջանում, 1698 թ.) և այլ եկեղեցիների գիտական կենտրոններ:

Արցախում գիտության որոշ ճյուղերի զարգացման գործում բարձր է գնահատվում Գանձասարի Պետրոս Խանձքեցի կաթողիկոսի (կաթողիկոս՝ 1653-1675[12] /1653-1678[13] թթ.) դերը, որի շինարարական գործունեության շնորհիվ, երկրում զարկ տրվեց ոչ միայն նյութական, այլ նաև հոգևոր մշակույթի զարգացմանը: Խնդիրն այն է, որ գործող եկեղեցական, վանական գիտական կենտրոններին զուգահեռ, Արցախի տարբեր վայրերում նրա կողմից կառուցված՝ Վարանդայի Հերհեր գյուղի Սուրբ Գրիգորիսի (1667 թ.)[14], Խաչեն գավառի Առաջաձոր գյուղի Սուրբ Աստվածածինի (1668 թ.)[15], Փառիսոսի Հին Փիփի գյուղի (1670 թ.)[16] Խանձք գյուղի Սուրբ Ստեփանոսի (1673 թ.)[17], եկեղեցիները դրսևորվեցին որպես գիտության փայլուն օջախներ: Ավելին, Պետրոս կաթողիկոսի պատվերով Արցախի տարբեր գիտական օջախներում գրվել, ընդօրինակվել և ծաղկազարդվել են մի շարք ձեռագիր

---

[1] 16-րդ դարի սկզբներին սկսված թուրք-պարսկական բախումները ավարտվեցին 1639 թ. Կասր ի Շիրինի (Կասրե-Շիրին) հաշտության պայմանագրով: Հայաստանը կրկին երկատվեց. Սեֆյան Պարսկաստանին անցան Հայաստանի արևելյան տարածքները՝ Գուգարքը, Շիրակը, Արշարունիքի մի մասը, Արարատյան դաշտը, Սյունինքն ու Արցախը, Վասպուրականի արևելյան հատվածը: Իսկ Օսմանյան Թուրքիային՝ Հայաստանի արևմտյան տարածքները: Այդ ժամանակահատվածում Արցախի մելիքությունները Գանձակի բեկլարբեկության կազմում գտնվելով պարսկական տիրապետության տակ, ունեին ներքին ինքնավարություն, որն էլ խթան հանդիսացավ մշակութային որոշ արժեքների ստեղծման համար:

[2] Մանրամասը տե՛ս Բարխուտարեանց Մ., Արցախ, Բաքու, 1895: Ալիշան Ղ., Արցախ, Եր., 1993: Ոսկեան Հ., Առաքելական վանքերը, Վիեննա, 1953: Ղլուրբաբյան Բ., Արցախի պատմություն, Եր., 1994:

[3] Տե՛ս Լալայան Ե., Նշանավոր վանքեր, Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1899, գիրք Ե (№ 1), էջ 348:

[4] Դիվան հայ վիմագրության, պր. 5, (Արցախ), Եր., 1982, էջ 187:

[5] Բարխուտարեանց Մ., նշվ.աշխ, էջ 88: Տե՛ս նաև Դիվան հայ վիմագրության, պր. 5(Արցախ), էջ 172:

[6] Ըստ Ղ. Ալիշանի Թոդան գյուղը տեղադրված է եղել Խաչենի զառիթափ ձորում: Ներկայումս այն գտնվում է Ադրբեջանի Խանլարի շրջանում (Ալիշան Ղ.. նշվ. աշխ, էջ 106: Տե՛ս նաև Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Մասն Ա, Տիոխ, 1848, էջ 210):

[7] Շոշ (նաև՝ Շուշիքենդ) գյուղը նեղհայտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանում. Շուշի քաղաքից 4 կմ հարավ-արևելք: Ե. Լալայանը նշում է, որ գյուղի բնակիչների շատ քիչ մասն է բնիկ, շատերին Մելիք Բաղին Սոթից բերել և բնակեցրել է այստեղ, իսկ մի քանի գերդաստան էլ Ջրաբերդից են եկել (տե՛ս Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1897, գիրք Բ, էջ 33: Դիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 145-146):

[8] Դիվան հայ վիմագրության, պր. 5(Արցախ), էջ 90:

[9] Ջալալեանց Ս., նշվ. աշխ., Մասն Ա, էջ 180:

[10] Խաչիկ Ծ. վարդապետ Դատեան, Երկերի ժողովածու, Ս. Էջմիածին, 2007, էջ 35:

[11] Դիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 172:

[12] Մարգարյան Ա., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսների գավազանագիրքը, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 2008, № 3, էջ 270:

[13] Մկրտումյան Լ., Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանձքեցու օրոք (1653-1678), Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 2000, № 1, էջ 88 :

[14] Դիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 164:

[15] Նույն տեղում, էջ 87:

[16] Մկրտումյան Լ., Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանձքեցի կաթողիկոսի օրոք (1653-1678թթ), Լրաբեր հասարակ. գիտությունների, Եր., 2000, թ. 1, էջ 96:

[17] Դիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 143:

աշխատություններ, որոնց մի մասը, ավաղ, չեն պահպանվել: Այդ գիտական կենտրոններում գրվել, ծաղկազարդվել, ինչպես նաև պահպանվել են արժեքավոր այլ ձեռագիր մատյաններ, որոնց շնորհիվ ոչ միայն շարունակում է զարգանալ գիտական կյանքը (թեպետ որոշ ընդհատումներով), այլև իրավական հիմք հանդիսանալ Արցախում գոյություն ունեցող նյութական և հոգևոր մշակութային հարուստ ժառանգության համար: Մյուս կողմից էլ՝ ավելի վաղ և ուսումնասիրվող ժամանակաշրջանում գրված և ընդօրինակված հայկական բազմաթիվ ձեռագրերը[1] հաստատում են Հայաստանի երկու հատվածներում (արևմտյան և արևելյան) տարբեր պատմական փուլերում գոյություն ունեցող գիտական օջախների մասին:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախում գիտական մտքի դրսևորվորումները նկատելի են հիմնականում քերականության, աշխարհագրության, պատմագրության, աստվածաբանության, տպագրության բնագավառներում[2]: Գիտության բնագավառում հայտնի են Վարանդայի մելիք Հուսեինի դուստրը՝ Գայանեն (Մաշտոց Ձեռաց[3],1641թ.), Հովհաննես երեցը (Ժողովածու[4],1644), Մարիամ ապաշխարողը (օրինակել է Ներսես Շնորհալու <<Բանք Ձափաւ>>[5] ստեղծագործությունը, 1647 թ.), Մկրտիչ աբեղան (Հայսմավուրքի ցանկ[6], 1654 թ.), Գրիգոր երեցը (Խորհրդատետր[7], 1657 թ.), Հովհաննես Ապահունեցին (Ժողովածու[8], 1659 թ.), Իգնատիոս Մեծշենցին (Ժողովածու[9], 1661թ.), Սիմոնը (օրինակել է Մովսես Կաղանկատվացու աշխատությունը՝ <<Պատմութիւն Աղուանից>>[10], 1664 թ.), Մխիթարը (Մաշտոց[11],1678), Բարսեղը (Ժողովածու[12],1687) և ուրիշներ, որոնց աշխատությունները մանրակրկիտ տեղեկություններ են հաղորդում Արցախի հոգևոր մշակութային արժեքների դրսևորումների, պատմական հետաքրքիր իրադարձությունների վերաբերյալ:

Հայոց իրականության մեջ, գիտության մյուս ճյուղերին զուգահեռ մեծ տեղ է հատկացվում քերականական մտքի զարգացմանը: Այդ իսկ պատճառով, եվրոպական քերականական մտքին համապատասխան, կազմվում և հրատարակվում են նոր քերականական երկեր: Այս ուղղությամբ մեծ աշխատանքներ էր կատարել Մկրտիչ աբեղան, որը 1660 թ. եկել է Գանձասար՝ աշակերտներին << Քերականություն>> ուսուցանելու: Վերջինիս մասին հիշատակում է Հ. Ոսկյանը. <<ՌՃԹ թուին (1660-ին) Մկրտիչ աբեղան Գանձասար կու գայ սակս ուսուցանելոյ զքերականութիւն>>[13]: Արցախում քերականական մտքի դրսևորումների մասին ուշագրավ տեղեկություններ կան Մատենադարանի N 2277 ներքո պահվող ձեռագրում, որը վերագրվում է Հովհաննես Ապահունեցուն: Վերջինիս <<Ժողովածու>>-ում, ներառվել են Հայոց լեզվի Քերականության հետ առնչվող տեղեկություններ, որոնք ընդգրկվել են սաների ուսումնական ծրագրերում: 1659 թ. Հովհաննես Ապահունեցի երեցն <<ի գեղջէն Ապահինու>> եկել է <<սուրբ աթոռն Գանձասար>>՝ քերականություն սովորեցնելու եւ իր ցանկությամբ օրինակել է Թովմա Իտալացու Քերականությունը[14]: Սակայն աշխատությունը գրվել է որոշ թերացումներով, որի մասին նշում է նաև հեղինակը: Նա դա բացատրում է նրանով, որ ձեռքի տակ ստույգ և ընտիր օրինակ չի ունեցել և գրել է թերացումներով, ինչի համար թողություն է խնդրում. <<Աղերսեմ զձեզ, ով ոք, որ հանդիպեք սմա վերծանելով կամ օրինակելով, թողութիւն շնորհեցէք սակս վրիպմանացս կամ խոշոր եւ վատ գրոցս, քանզի կար մեր այս էր[15]>>: Այս փատը ևս վկայում է այն մասին, որ Արցախի դպրոցների ուսուցման ծրագրերում կարևոր մաս է կազմել քերականության ուսուցումը, և այդ նպատակով հատուկ ուսուցիչներ են հրավիրվել ու քերականական դասագրքեր ընդօրինակվել: Հարկ է նշել, որ Արցախի գրեթե բոլոր դպրոցներում քերականության նկատմամբ հետաքրքրությունը բխում էր ձեռագիրը ճիշտ վերարտադրելու, ուղղագրությունը բարելավելու պահանջներից:

Գրիչ Սիմոնի օրինակած՝ Մովսես Կաղանկատվացու <<Պատմութիւն Աղուանից>> աշխատությունում լայն պատկերացում է տրվում Աղվանից աշխարհի թագավորների՝ Վաղարշակի[16], Ուռնայրի[17], Վաչէի[18], Վաչագան

---

[1]Ձեռագրերը հնադարյան ոչ տպագիր գրքեր կամ մատյաններ են՝ գրված աղյուսե, կավե սալիկի, պապիրուսի, մագաղաթե, թղթի վրա, որոնք ստեղծվել են հիմնականում վանքերին ու մենաստաններին, եպիսկոպոսարաններին ու դպրոցներին կից գրատներում: Դրանք պարունակաում են արժեքավոր տեղեկություններ գրիչների, մատյանների ստեղծման հանգամանքների, ինչպես նաև ժամանակաշրջանի պատմական կարևոր իրադարձությունների մասին:

[2]Իսկ Արևելյան Հայաստանի մյուս շրջաններում գիտության ճյուղերից զարգացած են եղել աշխարհագրությունը, պատմագրությունը, փիլիսոփայությունը, իրավագիտությունը, գրականությունը, բնական գիտությունները:

[3] ՄՄ, ձեռ. N 2404:

[4] Նույն տեղում, ձեռ. N 10882:

[5] Նույն տեղում, ձեռ. N 4281:

[6] Տե՛ս «Արդ, գրի Տօնացոյցս և ցանկ Այսմաւուրաց կարգին համառօտաբար ի թվականիս Հայկազան սեռի ՌՃԳ(1654)»:

[7] Մինասյան Թ., Գանձասարի գրչության կենտրոնը, Բանբեր Մատենադարանի, Եր., 2014, N 20, էջ 238: Տե՛ս նաև Պողարեան Ն., Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբեանց, հ. VII, Երուսաղեմ, 1974, էջ 366:

[8] ՄՄ, ձեռ. N 2277:

[9] Նույն տեղում, ձեռ. N 3446:

[10] Նուն տեռում. ձեռ. N 2561: Առառատ. 1895. N 10. էջ 388: Տե՛ս նաև Թօփճեան Յ., Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, Մասն Ա, Վաղարշապատ, 1898, էջ 100:

[11] ՄՄ, ձեռ. N 968:

[12] Նույն տեղում, ձեռ. N 713:

[13] Հ. Ոսկեան, նշվ. աշխ., էջ 68:

[14] Տե՛ս ՄՄ, ձեռ. 2277, թ. 235:

[15] Նույն տեղում, թ. 154ա:

[16] Նույն տեղում, ձեռ. N 2561, թ. 7ա:

[17] Նույն տեղում, թ. 10 բ:

[18] Նույն տեղում, ձեռ. թ. 12 բ:

Բարեպաշտի օրոք Հայոց Արևելից նահանգներում (Արցախ և Ուտիք նահանգներում) կատարված պատմաքաղաքական, մշակութային իրադարձությունների մասին:

Գիտության բնագավառում իր մեծ ավանդն ունի Իգնատիոս վարտապետը, որի օրինակած Մովսես Խորենացու <<Հայոց պատմություն>> (1661 թ.)[1] աշխատությունը մանրամասն տեղեկություններ է տալիս հայ ժողովրդի պատմական անցյալի մասին:

Հոգևոր գրականության ընդլայնման գործում կարևորվում են Մխիթարի (Աւետարան[2], 1647թ.) Միքայել սարկավագի, (Աւետարան[3], 1652 թ.), Մարտիրոս Խնձորեկցու (Աւետարան[4], 1653-1654 թթ.), Հարություն դպիրի (Աւետարան[5], 1657թ.), Եսայի երեցի (Աւետարան[6],1663 թ.), Նազար դպիրի (Աւետարան[7],1661թ.), Աղվանից կաթողիկոս Պետրոս Խանձքեցու եղբայր Մատթեոս քահանայի (Ավետարան[8], 1668 թ.), Հովսեփ քահանայի (Աւետարան[9], 1682), Հովհաննես երեցի, Ղազար սարկավագի (Աւետարան[10], 1691) և այլոց դերն ու նշանակությունը:

Անշուշտ, ցանկանում ենք ընդգծել, որ XVII դարի երկրորդ կեսի և XVIII սկզբի գիտության զարգացման հիմքում ընկած էին ոչ միայն ազգային ձեռագրերը, այլև տպագիր գրականությունը[11]: Հայկական տպագրության զարգացման գործում բարձր է գնահատվում հայ հոգևորական և հրատարակիչ Մատթեոս սարկավագ Ծարեցու[12] (1590-1661) դերն, ով իրեն նվիրել է հայ ժողովրդի հոգևոր, կրթական լուսավորության գործին: 1656 թ. Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը (1598 - 1680, կաթողիկոս՝ 1655-ից) նրան գործուղել է Եվրոպա՝ տպարան հիմնելու և հայերեն գրքեր տպագրելու նպատակով (վերջինս եղել է Ամենայն հայոց կաթողիկոսի՝ Փիլիպպոսի քարտուղարն ու սպասավորն[13]): Սկզբում դպիր Ծարեցին այդ առաքելությունը փորձում է իրականացնել Իտալիայում, սակայն նա այնտեղ հանդիպում է որոշ խոչընդոտությունների[14]: Ինչպես Լեոն է բնութագրում, բարեբախտաբար լեռնցի (դարաբաղցի) դպիրը հեշտ ընկճվող բնավորություններից չէր[15]: Այս մասին սարկավագը այսպես է նշում. <<...ընթացեալ ի տպարանս գրոց բազում ջանիւք հող տարեալ...վերահասու եղէ գործառնութեանս եւ զի ի Վենետիկ ոչ գոյին արհեստաւորք պատշաճք այսմ գործոյ... ութ ամիս դեգերելով բնակութեամբ, աղերսական խնդիրը իմացոյց ծիրանաւորաց ժողովոյն ու նաեւ քահանայապետին, սակայն չկրցաւ յաջողիլ: Վասն որոյ գնաց յԱմստերդամ Հոլանտիոյ, ուր գտաւ ուզած վարպետ արուեստաւորքը...>>[16]:

Իտալիայում չհասնելով նախատեսված հաջողության՝ Ծարեցին մեկնում է Հոլանդիայի Ամստերդամ քաղաքը, որտեղ գործում էր Լյուդվիկ և Դանիել Էլզեվիրների հարուստ տպարանը[17]: Այստեղ Էջմիածնի պատվիրակը ևս հաղթահարում է բազմապիսի դժվարություններ, որի մասին Ծարեցին նկարագրում է հետևյալ կերպ. <<ի ցայգ եւ ցերեկ մահու չափ աշխատելով միայն եւ առանց ուրեք օգնականի, յերկարելով յաշխատութիւնս Դ ամ եւ Ը ամիս, զանձն առնելով զվիշտս եւ զտառապանս…>>[18]:

Ինչպես նշում է Ռ. Իշխանյարը, Ծարեցին, ի վերջո, կարողանում է ստեղծել բաղձալի տպարանը[19]: Այս կարծիքի հետ համամիտ է Արամ Բաբայանը, որը Ծարեցուն համարում է Ամստերդամի հայկական տպարանի հիմնադիրը[20]:

---

[1] Հ. Ոսկեան, նշվ. աշխ., էջ 126:
[2] ՄՄ, ձեռ. N 223:
[3] Նույն տեղում, ձեռ. N 7606:
[4] Նույն տեղում, ձեռ. N 3647:
[5] Եգանյան Օ., Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի <<Նկարագիր Շամախւոյ թեմի>> գրքում հիշատակված ձեռագրերը, Էջմիածին, 1970, N 1, էջ 46:
[6] Ցուցակ ձեռագրաց, հ. Ա, Եր., 1965, էջ 1138:
[7] ՄՄ, ձեռ. N 5072:
[8] Տե՛ս Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ,1898, էջ 270:
[9] Ոսկեան Հ., նշվ. աշխ., էջ 123:
[10] ՄՄ, ձեռ. N 10660:
[11] Չնայած տարբեր կրթօջախներում գրիչների ձեռքով գրվում և օրինակվում են բազմաթիվ աշխատություններ, այնուամենայնիվ վերջիններս չէին կարող համահունչ լինել ժամանակի պահանջներին: Այդ իսկ պատճառով հայ մշակույթի կառկառուն ներկայացուցիչները ձեռնամուխ եղան կազմակերպելու և բարելավելու տպագրական գործը: Գուտենբերգյան տպագրությունը 1440-ական թվականներին ծագելով Գերմանիայում՝ 1465 թ. արդեն անցել էր Իտալիա: XVI սկզբներից Վենետիկը դարձավ հայկական տպագրության ծննդավայրը: Հայկական տպագրության զարգացման միտումներն առավել նկատելի դարձան հետագա դարերում:
[12] Ծնվել է Արցախի Ծար գավառում: Համարվում է 17-րդ դարի Ամստերդամի հայկական տպագրության հիմնադիրը: Հայրը եղել է՝ Ավագն, մայրն՝ Պեկիխան, եղբայրները՝ Ղարիպխանը, Վարդանը, Պալասանը, Մնկասարը, Հախնազարը (տե՛ս Պատմութիւն հայկական տպագրութեան սկզբնաւորութենէն մինչ առ մեզ (1513-1895), Վենետիկ, 1895, էջ 98):
[13] Լեո, Երկերի ժողովածու, հ. Գ, գիրք առաջին, Եր., 1969, էջ 432: Տե՛ս նաև Հայոց Պատմություն, հ. Գ, գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես- XIX դարի վերջ), Եր., 2010, էջ 98:
[14] Հռոմում այդ ժամանակ մի կողմից համաձարակ էր տարածված, մյուս կողմից էլ Վենետիկից սկսվել էր տարածվել հերետիկոսների դեմ պայքարը (ինկվիզիցիան): Կաթոլիկ հոգևորականությունը միջամտում էր հայ տպագրության կարգավորման հետ առնչվող հարցերին :
[15] Լեո, Երկերի ժողովածու, հ. Գ, գիրք առաջին, էջ 432:
[16] Պատմութիւն հայկական տպագրութեան սկզբնաւորութենէն մինչ առ մեզ(1513-1895), էջ 96-97:
[17] Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, գիրք առաջին, էջ 433: Տե՛ս նաև http://hygradaran.weebly.com/history-of-armenian-printing---1512.html
[18] Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Եր., 1972, էջ 614: Տե՛ս նաև Իշխանյան Ռ., Հայ գիրքը 1512-1920 թթ., Եր., 1981, էջ 58:
[19] Իշխանյան Ռ., նշվ. աշխ., էջ 58:
[20] Բաբայան Ա., Հայ գիրքը և տպագրությունը, Եր., 1963, էջ 58:

Մատթեոս Ծարեցին 1658 թ. նոյեմբերի 27 արվեստագետ, Էյգեվիրների տպարանատան փորագրիչ-գրաձույլ գերմանացի Քրիստոֆել Ֆոն Դիկի (հոլանդերեն՝ Վան Դեյկ) հետ կնքեց պայմանագիր՝ Աստվածաշունչ տպագրելու համար: Ծարեցին հոլանդական մի տպարանից գնում է նաև հայտնի նկարիչ-փորագրիչ Քրիստոֆել վան Զիխեմ Կրտսերի տպատախտակներ, որոնք Աստվածաշնչի թեմաներով պատկերներ էին պարունակում՝ ընդօրինակված եվրոպացի նշանավոր արվեստագետների՝ Ռաֆայել, Ալֆրեդ Դյուրերի, Գոլցիուսի և ուրիշների հայտնի գործերից[1]: 1660 թ. Ամստերդամում հայկական տպարան հիմնադրելուց[2] հետո, 1661 թ. Վան Դեյկի պատրաստած բոլորագիր և գլխագիր տպատառերով (պատրաստել է երեք տեսակի հայկական տառեր՝ Ծարեցու տված գծագրերով) Ծարեցին նախ հրատարակության է պատրաստել Ներսես Շնորհալու <<Յիսուս որդի>> խորագիրը կրող աշխատությունը[3], սակայն 1661 թ. հունվարի 22-ին[4] նա մահացավ (նախքան գրքի լույս ընծայվելը): Այս մասին ուշագրավ հիշատակում է արվել Վենետիկում տպագրված գրքերից մեկում. <<...Երբ գրքին շարումն հասաւ 38 թերթին եւ տպագրեցաւ 28-ն, նօտար Մատթեոս վախճանեցաւ ի թուին ՌՃԺ ի 22 յունուարի. կենդանութեան ատեն պատրաստելով գրքին վերջը դրուելիք յիշատակարանն, եւ տեղնիտեղը պատմելով այս տպագրական գործոյն համար իր գլխէն ամեն անցածները>>[5]:

Նրա մահվանից հետո Ոսկան վարդապետ Երևանցու եղբայրը՝ մեծ վաճառական Ղլիջենցի (նաև՝ Ղլճենցի) Ավետիսը, նախ մարում է տպարանի պարտքերը, այնուհետև այդ տպարանը հանձնում Էջմիածնին (Ծարեցու կտակի համաձայն), որն էլ 1661թ. ստանում է <<Տպարան Էջմիածնի և Ս. Սարգսի[6]>> անունը: Նա նաև <<Յիսուս որդի>> գրքին 1661 թ. ավելացրեց հիշատակարան, որում նշվում է. <<...Մատթէոսն որ մեռաւ, թէ որ ես չէի ո՞վ պիտի տիրէր ի վերայ քէրխանային. հազար մառչիլ չոր պարտք էր քէրխանային, որ հինգ հարիւր մառչիլ չէր արժէր... յանձն առի յորժամ մեռաւ>>[7]: Այս հիշատակարանի մի դրվագից հետաքրքիր մեջբերում է արել Ն. Պողոսյանը <<...Ես իբրև որբ մնացի Ամէսէրդամ, վասն այն որ սրբագրող ոչ գոյր, բայց միայն ես ի կարդացող, որ չի խիստ հէմուտ, ժամանակ մի տարէկուսեալ եւ պարապ մնացի ես եւ սահմանք եւ գործն եւ մրշակն Բ ամիս ժամանակ անցաւ, սկսան նաւերն գնալ ի դէմ արեւելս ի քաղաքն Զրմրոնա>>[8]: Վերջինս հավելում է, թե 1661 թ. Ղլճենցի հրատարակած <<Յիսուս Որդի >> գրքի հիշատակարանի այս մի հատվածը կարող է պատկերացում տալ նրա ընդհանուր նկարագրի մասին[9]:

Ըստ Լեոյի՝ Մատթեոս Ծարեցու շնորհիվ Ամստերդամը դարձավ հայ լուսավորության մի նոր Վենետիկ, որ մի ժամանակ նույնիսկ գերազանցեց Ադրիանի գեղեցիկ թագուհուն[10]:

Ծարեցու տպագրության զարգացման գործը շարունակել է Ոսկան Երևանցին, և 1666 թ. իր օգնականներ Կարապետ Ադրիանացու և Օհան Երևանցու հետ սկսում է Աստվածաշնչի տպագրությունը, որը տևում է մինչև 1668 թ.: Նրանց ջանքերի շնորհիվ առաջին անգամ հայերեն լեզվով տպագրվել է Աստվածաշունչը[11] (մինչ այդ վերջինիս տպագրությունը մի քանի անգամ ձախողվել էր): Հարկ է նշել որ մինչև Աստվածաշնչի հրատարակումը, Ամստերդամի հայկական տպարանում (հետո կոչվեց Ոսկանյան տպարան) լույս են ընծայվել երկու <<Ժամագիրք>>, երկու <<Սաղմոսարան>>, <<Շարականոց>> գրքերը: Ոսկանյան տպարանում տպագրվեցին բազմաթիվ գրքեր[12], որոնք իրենց բարձր գիտականությամբ գրավեցին եվրոպացի ուսումնասիրողների ուշադրությունը:

XVIII դարի սկզբներին գիտության բնագավառում հայտնի են Արիստակես երեցը (Հայսմաւուրք[13],1703 թ.) Ստեփանոս սարկավագը (Աւետարան[14], 1708 թ.), Սարգիսն ու Վարդանը (օրինակել են Ծերենցի՝ Գրիգոր Խլաթեցու, խմբագրած աշխատությունը՝ <<Հայսմաւուրք>>-ը, 1709 թ.[15]), Յակոբ Երեցը (Գիրք աղօթից և տաղք[16],1713 թ.) Սարգիս երեցը (Ժողովածու[17], 1717թ.), Սարգիսը (Ժողովածու[18], 1721թ.) և ուրիշներ:

XVIII դարի սկզբներին պատմագրության բնագավառում թողած իր մեծ գիտական ավանդի համար առանձնանում է նշանավոր հոգևորական, մատենագիր, պատմագիր, հայ ազգային-ազատագրական շարժման

---

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, էջ 614: Տե՛ս նաև Իշխանյան Ռ., նշվ. աշխ., էջ 59:
[2] Բաբայան Ա., նշվ. աշխ., էջ 59:
[3] Տե՛ս Ներսես Շնորհալի, Հիսուս որդի, Ամստերդամ, 1660-1661: http://greenstone. flib.sci.am /gsdl /collect/armenian/ Books/hisus _ vordi _1660 _1661_index.html
[4] Տե՛ս Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1946, էջ 102:
[5] Պատմութիւն հայկական տպագրութեան սկզբնաւորութենէն մինչ առ մեզ(1513-1895), էջ 98:
[6] Ս. Սարգիս է կոչվել ի պատիվ համանուն անունը կրող զորավարի: Մյուս կողմից էլ նպատակ կար որպեսզի հիշատակվեր Ուշի գյուղի Ս. Սարգիս վանքի անունը, որտեղ վանահայր էր եղել Ավետիսի եղբայր Ոսկան Երևանցին ժամանակին ամենակիրթ ու զարգացած հայ մտավորականներից մեկը:
[7] Լևոնյան Գ., նշվ. աշխ., էջ 102-103:
[8] Պողոսյան Ն., XVI-XVII դարերի հայ հնատիպ գրքի հիշատակարանների լեզուն, Բանբեր Երևանի համալսարանի, <<Բանասիրություն>>, 133. 2, Եր., 2011, էջ 23-24:
[9] Նույն տեղում, էջ 23:
[10] Լեո, Երկերի ժողովածու, հ. Գ, գիրք առաջին, էջ 433:
[11] Մանրամասը տե՛ս Լևոնյան Գ., նշվ. աշխ., էջ 105: Տե՛ս նաև Էջմիածին, 1966, N 11-12 (ԹԱ-ԺԲ), էջ 4:
[12] Մանրամասը տե՛ս Իշխանյան Ռ., նշվ. աշխ., էջ 58: Լևոնյան Գ., նշվ. աշխ. էջ 105-111: Բաբայան Ա., նշվ. աշխ. էջ 60-63:
[13] ՄՄ, ձեռ. N 9088:
[14] Նույն տեղում, ձեռ. N 5143:
[15] Նույն տեղում, ձեռ. N 3813:
[16] Օ. Եգանյան, Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն, Էջմիածին, 1971, N 4, էջ 59:
[17] ՄՄ, ձեռ. N 1574:
[18] Նույն տեղում, ձեռ. N 7008:

երախտավոր Եսայի Հասան-Ջալալյանը[1], որի անունը հիշատակվում է XVII-XVIII դարերի հայ պատմագիտության կարկառուն ներկայացուցիչների՝ Գրիգոր Դարանաղցու (կամ Կամախեցի, 1576-1643), Առաքել Դավրիժեցու (մոտ 1590-1670), Զաքարիա սարկավագ Քանաքեռցու(1627-1699),Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի (1637-1695),Աբրահամ Կրետացու (մոտ XVII դ. 70-ական թվականներից-1737), Աբրահամ Երեանցու (XVIII դ.) կողքին :

Եսայի Հասան-Ջալալյանի պատմագիտական ժառանգությունում աչքի է ընկնում «Համառոտ պատմություն Աղվանից» աշխատությունը, որը գրվել է 1711 թ.: Ընդգծենք, որ վերջինս ամբողջությամբ մեզ չի հասել: Այն լույս է տեսել ավելի ուշ՝ 1839թ., Արցախի (Ղարաբաղի) հոգևոր թեմի տպարանում (Շուշիում)՝ Բաղդասար մետրոպոլիտ (նաև՝ միտրոպոլիտ) Հասան-Ջալալյանի ջանքերով[2] (վերահրատարակվել է 1868 Երուսաղեմում): Առաջին հրատարակությունում[3] մանրակրկիտ նկարագրվում է 1160-1711 թթ. Հայաստանի պատմական իրադարձությունները: Երկրորդում կաթողիկոսը մանրակրկիտ նկարագրելով իր ժամանակի՝ Պարսկաստանի, Վրաստանի և Աղվանաց աշխարհի պատմական դեպքերը, հասցնում է մինչև 1723 թ.[4]: Հետագայում երկը լույս է տեսել ֆրանսերեն(1876), վրացերեն (1971), ռուսերեն (1989) լեզուներով:

Եսայի Հասան-Ջալալյանի գիտական ժառանգությունում արժեքավոր սկզբնաղբյուր է Արցախի ճարտարապետական հուշարձանների՝ Գանձասարի, Խաթրավանքի, Դադիվանքի (Խութավանքի) և բազմաթիվ այլ կոթողների վիմական արձանագրությունները (1718 թ.)[5]:

Բացի ընդգծվածներց, ուսումնասիրվող ժամանակաշրջանում գործող մնացած եկեղեցիներն ու վանքերը այս կամ այն չափով ևս ունեն իրենց ներդրումը հայոց աշխարհի գիտական համակարգի զարգացման համակարգում:

[1]Ծնվել է Արցախում XVII դարի երկրորդ կեսին, մահացել՝ 1728: Սերվել է Առանշահիկների թագավորական տոհմից: Կրթությունը ստացել է Արցախի Գանձասարի վանքում: Եղել է Գանձասարի կաթողիկոսը 1701-1728 և 18-րդ դարի 20-ական թվականների Արցախի ազգայի-ազատագրական շարժման գլխավոր կազմակերպիչներից մեկը (կաթողիկոս հաստատվելու և քաղաքական գործունեության վերաբերյալ տե՛ս ՄՄ, արխիվ Ա. Երիցյանի, թղթ. 157, վավ. 1, էջ 8, 17: ԳԱԹ, ֆոնդ Ս. Քամալյանի, g. 2, բաժին, VI, N 28, էջ 1-6):

[2] Եսայի Հասան Ջալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղեմ, 1868, էջ 6: Տե՛ս նաև http://digitale-sammlungen.ulb.uni-bonn.de/ulbbn/content/pageview/2478504

[3]Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից ի թուականին հայոց 1160, իսկ ի թուականին տեառն մերոյ փրկչին Յիսուսի 1711, Շուշի, 1839: Տե՛ս նաև http://greenstone.flib.sci.am/gsdl/collect/armbook/books/patmutyun_kam_jishatak_index.html

[4] Տե՛ս Եսայի Հասան Ջալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, էջ 6:

[5]ՄՄ, ձեռ. N 7821: Ս. Հասան-Ջալալյան, Կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի քաղաքական գործունեությունն ու պատմագրական ժառանգությունը, Լրաբեր հասարակական Գիտությունների, 2011, N 3, էջ 96:

УДК 323(470) *История*

Арсен Мелик-Шахназаров

АВГУСТОВСКИЙ ПУТЧ 1991 ГОДА И ПРОВОЗГЛАШЕНИЕ НКР

19 августа 1991 года была попытка государственного переворота в Советском Союзе.Его провал изменил ситуацию на территории бывшего СССР, в том числе и в Нагорном Карабахе, где Кремль поддерживал руководство Азербайджанской Советской Республики и вел борьбу с "армянским сепаратизмом".

Поражение августовского путча прекратило депортацию армян советскими войсками, стало основой политической изоляции между Баку и Степанакертом, которая привела к провозглашению НКР 2 сентября 1991 года.

Ключевые слова: путч, самоопределение, независимость, репрессии, чрезвычайное положение, террор, декларация, Конституция СССР, референдум.

Արսեն Մելիք-Շահնազարով

1991թ-Ի ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊՈՒՏՉԸ ԵՎ ԼՂՀ ՀՌՉԱԿՈՒՄԸ

1991թ-ի օգոստոսի 19-ին պետական հեղաշրջման փորձը տեղի ունեցավ Խորհրդային Միությունում: Նրա տապալումը փոխեց իրավիճակը նախկին ԽՍՀՄ տարածքում, այդ թվում Լեռնային Ղարաբաղում, որտեղ Կրեմլը աջակցում էր Ադրբեջանական Խորհրդային Հանրապետության ղեկավարությանը և պայքար էր մղում «հայկական սեպարատիզմի» դեմ:

Օգոստոսյան պուտչի պարտությունը դադարեցրեց հայերի տեղահանությունը խորհրդային զորքերի կողմից, հանգեցրեց Բաքվի և Ստեփանակերտի քաղաքական մեկուսացմանը, որի արդյունքում 1991թ-ի սեպտեմբերի 2-ին հռչակվեց ԼՂՀ-ն:

Բանալի բառեր՝ պուտչ, ինքնորոշում, անկախություն, ռեպրեսիաներ, արտակարգ իրավիճակ, տեռոր, հռչակագիր, ԽՍՀՄ սահմանադրություն, հանրաքվե:

Arsen Meliq- Shahnazarov

THE AUGUST 1991 PUTSCH AND NKR INDEPENDENCE

In August 19th, 1991 there was a coup attempt in the Soviet Union. Failure changed the situation in the former USSR, including Nagorno-Karabakh, where Kremlin supported the leadership of Soviet Republic of Azerbaijan and waged a fight with "Armenian separatism".

The defeat of August putsh put an end to the deportations by the Soviet troops of Armenians and accelerated the political isolation between Baku and Stepanakert, bringing forth the proclamation of the Republic of Nagorno-Karabakh in September 2nd, 1991.

Keywords: putsch,self-determination, independence, repressions, state of emergency, terror, declaration, Soviet constitution, referendum.

19 августа 1991 года в Советском Союзе произошла попытка государственного переворота, заключавшаяся в создании неконституционного органа власти и управления - Государственного Комитета по чрезвычайной ситуации (сокращенно ГКЧП). Этот орган был призван стать своего рода военно-политической хунтой, которая фактически отстранила на несколько дней от власти президента СССР М. Горбачева. Главной целью, которая декларировалась членами ГКЧП, было сохранение Союза ССР в условиях, когда ряд республик были против подписания нового Союзного договора, а противостояние между президентом Российской Федерации Борисом Ельциным и президентом СССР Михаилом Горбачевым достигло высокой степени накала.

Путч провалился в течение нескольких дней, что радикально изменило ситуацию на просторах бывшего СССР. В том числе и в Нагорном Карабахе, где в предыдущие два года центральное руководство вело жесткую борьбу с «армянским сепаратизмом», безусловно поддержав внешне прокоммунистическое руководство Азербайджанской ССР. При этом широко использовалось то самое «чрезвычайное положение», которое в августе 1991 ГКЧП ввёл уже на всей территории Советского Союза.

Путч августа 1991-го и его провал, равно как и предшествующие ему события в регионе ускорили политическую развязку в конфликте между Баку и Степанакертом, приведя к вполне логичному решению карабахцев – провозглашению Нагорно-Карабахской Республики 2 сентября 1991 года.

Остановимся вкратце на предшествовавших августу 1991-го основополагающих решениях и постановлениях, принятых органами власти НКАО, СССР, Азербайджанской и Армянской ССР по вопросу о статусе Нагорного Карабаха.

20 февраля 1988 года - решение внеочередной сессии Совета народных депутатов НКАО «О ходатайстве перед Верховными Советами Азербайджанской ССР и Армянской ССР о передаче НКАО из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР».

15 июня: Верховный Совет Армянской ССР дал согласие на вхождение НКАО в состав Армянской ССР (на основе статьи 70 Конституции СССР).

17 июня – Постановление ВС АзССР «О ходатайстве депутатов Совета народных депутатов Нагорно-Карабахской автономной области о передаче НКАО из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР», в котором одобрялось Постановление Президиума ВС АзССР от 13 июня о неприемлемости передачи НКАО из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР. В постановлении содержалась ссылка на статью 78 Конституции СССР, в соответствии с которой территория союзной республики не могла быть изменена без ее согласия.

12 июля – решение восьмой сессии Совета народных депутатов НКАО «О провозглашении выхода Нагорно-Карабахской автономной области из состава Азербайджанской ССР».

18 июля – Постановление Президиума Верховного Совета СССР «О решениях Верховных Советов Армянской ССР и Азербайджанской ССР по вопросу о Нагорном Карабахе», в котором говорилось о невозможности изменения границ республик в соответствии со статьей 78 Конституции СССР.

1 декабря 1989 года – совместное Постановление ВС Армянской ССР и Национального совета Нагорного Карабаха «О воссоединении Армянской ССР и Нагорного Карабаха».

Другие решения по Нагорному Карабаху, принятые органами власти СССР, Армянской и Азербайджанской ССР, носили промежуточный характер, не затрагивая вопроса статуса НКАО.

Фактически никаких решений по статусу НКАО и других армянских территорий Нагорного Карабаха после 1 декабря 1989 к лету 1991 года принято не было, и каждая сторона продолжала оставаться на своей позиции.

Исходя из необходимости сохранения Союза ССР, Кремль шел на серьезные уступки союзным республикам, принимая все новые законодательные акты, которые укрепляли суверенитет и права республик в ущерб автономным образованиям.

Так, например, в «Основах законодательства Союза ССР и союзных республик о земле», проект которых был опубликован в печати в конце 1989 года, право распоряжаться землями фактически отводилось лишь союзным и в малой степени автономным республикам. Автономные области и округа были практически лишены права распоряжаться своими землями: в их распоряжении оказывались лишь пахотные земли. На примере НКАО это означало, что горбачевская «либерализация и самоуправление» лишали автономную область права распоряжаться 150 тысячами гектаров лесов, Сарсангским и Мадагисским водохранилищами с их правобережными и левобережными каналами и прилегающими к ним землями, отнесенными к землям водного фонда, и так далее[1].

Аналогичная политика велась и в области политической, то есть партийной, поскольку «руководящей и направляющей» силой в стране официально оставалась КПСС. То есть тенденция была повсеместной: вместо расширения прав местных органов власти и автономных образований происходило перераспределение прав в пользу союзных республик, становившихся этакими «мини-эсэсэсерами».

Однако страх перед распадом СССР заставил Кремль предпринять и шаги по предупреждению или ограничению возможных действий союзных республик, направленных на выход из состава Союза.

3 апреля 1990 г. был принят Закон СССР «О правовом режиме чрезвычайного положения», который был опубликован в газете «Известия» 10 апреля.

10 же апреля 1990 года был принят Закон СССР «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР», регламентирующий порядок выхода союзной республики, проведения с этой целью референдума и так далее.

Статья 3 закона гласила: «В союзной республике, имеющей в своем составе автономные республики, автономные области и округа, референдум проводится отдельно по каждой автономии. За народами автономных республик и автономных образований сохраняется право на самостоятельное решение вопроса о пребывании в Союзе ССР или в выходящей союзной республике, а также на постановку вопроса о своем государственно-правовом статусе.

В союзной республике, на территории которой имеются места компактного проживания национальных групп, составляющих большинство населения данной местности, при определении итогов референдума результаты голосования по этим местностям учитываются отдельно»[2].

Таким образом, практически все республики, покидая СССР, должны были или, во всяком случае, могли вынужденно отказаться от целого ряда своих приобретенных в советский период территорий. Из всех 15 республик разве только Армянская ССР, не имевшая в своем составе ни автономий, ни районов с преобладающим инонациональным населением, могла вполне на законном основании покинуть Советский Союз. Что, собственно говоря, и было реализовано в марте-сентябре 1991 года, в полном соответствии с Законодательством СССР.

Очевидно, что закон от 10 апреля 1990 года предназначался отнюдь не для самоопределения Нагорного Карабаха, а для сдерживания республик Прибалтики, которые уже тогда предпринимали шаги по провозглашению независимости от Союза ССР.

Для Баку с новой силой встал вопрос необходимости фактической ликвидации НКАО и Шаумянского района, которые, в соответствии с законом от 10 апреля 1990 года, получили вполне реальную возможность на основании советского законодательства распрощаться с Азербайджанской ССР в случае реализации последней своего конституционного права выхода из СССР.

Эти обстоятельства заставили Баку усилить репрессии и ускорить подготовку карательных операций по депортации армян из Нагорного Карабаха. Благо силы и средства для этого были как в распоряжении собственно Баку, так и поддерживавших его советских войск. Было и «правовое» прикрытие – режим чрезвычайного положения, который односторонне использовался исключительно против армянского населения Арцаха.

Если за весь 1990 год в районе чрезвычайного положения НКАО было убито 57 человек, то лишь за первые три месяца 1991 года – уже 50 человек[3].

В апреле-августе 1991 года отряды и части ОМОН и МВД АзССР совместно с внутренними войсками МВД СССР и частями и подразделениями 4-й Армии (23-я дивизия, дислоцированная в г. Кировабаде) предприняли крупномасштабную военно-полицейскую операцию «Кольцо» по частичной депортации армянского населения Нагорного Карабаха. Операция «Кольцо» стала первым со времен сталинских депортаций народов насильственным выселением больших масс людей исключительно по этническому признаку, санкционированным Кремлем.

Операция «Кольцо» резко повысила уровень напряженности в регионе и бесповоротно перевела карабахский конфликт в новое - военное измерение.

Всего в ходе операции «Кольцо» было депортировано 24 села: Геташен и Мартунашен в Ханларском районе, 4 села (под общим названием Бердадзор) в Шушинском районе НКАО, 15 – в Гадрутском районах НКАО, 3 - в Шаумянском районе Нагорного Карабаха. Все деревни были разграблены, некоторые из них были сожжены и стерты с лица земли; хозяйства, дома и имущество присвоены грабителями.

[1] «Советский Карабах», 27.12.1989 г.
[2] Ведомости Съезда народных депутатов СССР и Верховного Совета СССР, 1990, № 15, стр. 252.
[3] «Советская Россия», 24.04.1991 г.

Были полностью ограблены и изгнаны с родных очагов около 7 тысяч человек. Только в первый период депортации, с 20 апреля по 20 мая 1991 г. в Геташене и Мартунашене, по данным спецкомисии Верховного Совета Республики Армения, было убито 22 человека, а в НКАО - 14 человек.

Впрочем, эти цифры нельзя считать точными. Как справедливо отмечали позже петербуржцы Игорь Бабанов и Константин Воеводский в брошюре «Карабахский кризис», «многие из депортированных умерли уже в Армении – от ран и пережитых потрясений»[1].

В первых числах июля карательные акции с новой силой возобновились и по всей НКАО. Так, массовые аресты прошли в селах Мартунинского и Мардакертского районов. В селе Каринтак Шушинского района было арестовано 12 человек с санкции районного прокурора-азербайджанца и с ведома военного коменданта района чрезвычайного положения Жукова. Еще тридцать человек без всяких санкций были задержаны и увезены[2].

6 июля после вывода подразделений внутренних войск МВД СССР из Шаумянского района Нагорного Карабаха началась операция по депортации сёл этого района, остававшегося последним оплотом армян Арцаха за пределами НКАО.

В начале августа 1991 года, при попытке начать депортацию крупного горного села Атерк в Мартакертском районе НКАО местные ополченцы захватили в плен более 40 солдат и офицеров внутренних войск вместе со всем их оружием и бронетехникой.

19 августа 1991 года, когда в блокадном Карабахе бесчинствовали внутренние войска и азербайджанский ОМОН, стало известно о путче в Москве. Там, как известно, был образован «старший брат» азербайджанского оргкомитета по НКАО - Государственный Комитет по чрезвычайному положению (ГКЧП). В. Поляничко и его команда ещё днем 19-го на радостях срочно вылетели в Баку для консультаций, как оказалось, навсегда.

В тот же день, 19-го в редакцию газеты «Хорурдаин Карабах»-«Советский Карабах» поступил приказ за подписью военного коменданта района чрезвычайного положения полковника В. Жукова: увеличить тираж на 1 тысячу экземпляров и опубликовать документы ГКЧП. Кстати, автор этой статьи как раз дни путча находился в Арцахе (будучи московским корреспондентом «Советского Карабаха», сопровождал в Шаумянский район и потом в Степанакерт корреспондента московского журнала «Столица») и наблюдал все происходившие события, так сказать, на месте.

Даже в условиях перманентного террора и репрессий редакции газеты удалось «заволокитить» приказ, который уже через два дня стал совершенно неактуален в силу произошедших в Москве событий и провала путча. После провала путча последовало самоубийство министра внутренних дел СССР Б. Пуго и страшная паника в соседнем с редакцией здании обкома, где располагалась военная комендатура района чрезвычайного положения.

Так, начальник ее политотдела полковник А.Полозов направил в редакцию записку, в которой сообщал: «Распоряжение об опубликовании постановлений ГКЧП, засланное в редакцию газеты 19 августа, комендант района чрезвычайного положения полковник В. М. Жуков не подписывал. Его подпись была сфальсифицирована. По данному факту проводится служебное расследование»[3].

Поражение коммунистического путча в августе 1991-го положило конец депортациям с участием войск МВД СССР и Советской армии. Характерно, что в дни путча ГКЧП атаки на осажденный Нагорный Карабах усилились. В Баку потирали руки, предвкушая новые опустошения. Говорили уже не только о необходимости «окончательного решения надуманного карабахского вопроса» путем поголовной депортации всех армян из НКАО, Шаумяна. Но также об «освобождении» от армян Зангезура, отделявшего населенную азербайджанцами Нахичеванскую автономную область от бывшей Азербайджанской ССР.

После провала августовского путча 1991 года стало ясно, что Советский Союз доживает последние месяцы. В этих условиях многие республики СССР декларировали свою независимость.

30 августа Верховный Совет Азербайджанской Республики провозгласил восстановление независимости Азербайджанской Демократической республики 1918-1920 гг. Последняя, как известно, была марионеточным образованием, чье непризнание Лигой Наций было обусловлено именно неурегулированными территориальными спорами, в том числе и с Армянской республикой из-за Нагорного Карабаха, Зангезура и Нахичевани.

Напротив, Нагорный Карабах объявил свою независимость от бывшей Азербайджанской ССР в полном соответствии с законодательством Союза ССР. 2 сентября совместная сессия депутатов Облсовета НКАО и районного Совета Шаумянского района провозгласила Нагорно-Карабахскую Республику (НКР). А 10 декабря 1991 года состоялся всенародный референдум, на котором подавляющее большинство населения НКР высказалось за независимость. Это произошло до формального распада СССР, на основании статьи 3 Закона СССР «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР» от 10 апреля 1990 года.

В ответ на решение ВС АР от 30 августа 2 сентября 1991 года в Степанакерте была провозглашена Нагорно-Карабахская Республика. Не приводя весь текст Декларации о провозглашении Нагорно-Карабахской Республики, который хорошо известен, приведем те её положения, которые относятся к рассматриваемому нами вопросу:

«Совместная сессия депутатов Нагорно-Карабахского областного и Шаумяновского районного Советов народных депутатов с участием депутатов Советов всех уровней…

- основываясь на действующей Конституции и законах Союза ССР, предоставляющих народам автономных образований и компактно проживающим национальным группам право на самостоятельное решение вопроса о своем государственно-правовом статусе в случае выхода союзной республики из ССР;

- считая стремление армянского народа к воссоединению естественным и соответствующим нормам международного права;

- стремясь к восстановлению добрососедских отношений между армянским и азербайджанским народами на основе взаимного уважения прав друг друга;

- принимая во внимание сложность и противоречивость обстановки в стране, неопределенность судьбы будущего Союза, союзных структур власти и управления;

[1] Санкт-Петербург, 1992, издание Санкт-Петербургского Комитета Гуманитарной помощи Карабаху, стр. 49
[2] «В Арцахе вновь царит разбой», «Голос Армении», 05.07.1991 г.
[3] «Советский Карабах», 29.08.1991 г.

- уважая и следуя принципам Всеобщей Декларации прав человека и Международного пакта об экономических, социальных и культурных правах, Международного пакта о гражданских, политических и культурных правах и рассчитывая на понимание и поддержку международного сообщества

Провозглашают: Нагорно-Карабахскую Республику в границах нынешней Нагорно-Карабахской автономной области и сопредельного Шаумяновского района. Сокращенно НКР.

Нагорно-Карабахская Республика пользуется полномочиями, предоставленными республикам Конституцией и законодательством СССР, и оставляет за собой право самостоятельно определять свой государственно-правовой статус на основе политических консультаций и переговоров с руководством страны и республик.

На территории Нагорно-Карабахской Республики до принятия Конституции и законов НКР действуют Конституция и законодательство СССР, а также другие ныне действующие законы, которые не противоречат целям и принципам настоящей Декларации и особенностям Республики»[1].

Тем самым был сделан первый шаг на пути официального расставания Нагорного Карабаха с бывшей АзССР на основании действующего советского законодательства.

20-23 сентября 1991 года президенты России и Казахстана Борис Ельцин и Нурсултан Назарбаев предприняли первую миротворческую миссию высокого уровня в регионе, посетив Баку, Степанакерт и Ереван, где провели переговоры с руководством Азербайджанской Республики, Нагорно-Карабахской Республики и Республики Армения. Во многом эта миссия была обусловлена желанием двух поднявшихся на ноги амбициозных лидеров союзных республик противопоставить себя президенту СССР М. Горбачеву.

26 ноября ВС Азербайджанской Республики принял решение об упразднении НКАО. СССР был на грани распада, и прежняя политика «послушания» Баку некогда могучему Центру была отброшена за ненадобностью.

В ответ, прошедшая 27 ноября в Степанакерте сессия Совета народных депутатов Нагорно-Карабахской Республики утвердила дату проведения референдума по вопросу о статусе Нагорного Карабаха и приняла временное положение о выборах в Верховный Совет НКР.

На протяжении последующих лет официальный Баку и его союзники не смогли придумать ни одного серьезного аргумента против безукоризненного, с точки зрения международного права, становления Нагорно-Карабахской Республики, кроме одного лживого и заведомо несостоятельного.

«Во время существования СССР ни одна союзная республика, в том числе Азербайджан и Армения, не воспользовались предусмотренной в Законе процедурой выхода», - пишет советник первого класса дипломатической службы Азербайджанской Республики Тофик Мусаев в статье «Армяно-азербайджанский конфликт: от притязаний к военной оккупации»[2].

Между тем, именно Республика Армения стала единственной из республик СССР, вышедшей из Союза в полном соответствии с Законом СССР от 10 апреля 1990 г., проигнорировав референдум о сохранении СССР 17 марта 1991 года и тогда же объявив о предстоящем референдуме о независимости, который и был проведен 21 сентября того же года. Точно так же НКАО стала единственной бывшей советской автономией, реализовавшей свое право на самоопределение в точном соответствии с этим Законом СССР.

Вплоть до официального распада Советского Союза никто и никогда юридически не отменял Закон СССР от 10 апреля 1990 года. То же обстоятельство, что другие республики получили независимость по факту распада СССР, - предрешенного декабрьским решением лидеров России, Украины, Белоруссии в Беловежской пуще, - вовсе не могло означать юридическую неправомочность предыдущих действий Нагорно-Карабахской Республики по реализации своего законного права на постановку вопроса о собственном государственно-правовом статусе.

Поэтому непонятно, по какой логике противники права реализации армянским народом Нагорного Карабаха права на самоопределение считали и считают, что невыполнение подавляющим большинством союзных республик СССР норм действовавшего законодательства при распаде Союза ССР «отменяет» законность приобретения НКР независимости в полном соответствии с этим самым законодательством.

Кстати говоря, о Законе СССР от 10 апреля 1990 года живо вспомнили в период грузинской агрессии против народа Южной Осетии в августе 2008 года. Именно на основании этого закона на заседаниях Госдумы и Совета Федерации РФ было задним числом объявлено о неправомочности Грузии вершить судьбу своих бывших автономий в 1991 году. По сути, Закон СССР от 10 апреля 1990 года стал юридической базой для признания Российской Федерацией государственной независимости Республики Южная Осетия и Республики Абхазия 26 августа 2008 года…

Между тем, в конце ноября 1991-го события развивались лавинообразно. 26 ноября Верховный Совет АР принял упраздняющий НКАО закон, опубликованный в азербайджанской печати почему-то лишь в начале января 1992 года[3].

Как полагает Тофик Мусаев в упомянутой выше статье «Армяно-азербайджанский конфликт: от притязаний к военной оккупации», «до восстановления в полном объеме государственной независимости Азербайджанской Республики и ее признании международным сообществом Нагорный Карабах продолжал быть частью Азербайджана, а действия, направленные на одностороннее отделение этого региона, не имели никаких юридических последствий»[4].

Страницей выше Т. Мусаев, пытаясь доказать, что к сентябрю 1991 года Закон СССР от 10 апреля 1990 года утратил свою «актуальность и юридическую силу», ссылается на документы последнего руководящего органа Советского Союза – Госсовета СССР, постановлениями которого «6 сентября 1991 года было оформлено признание независимости Латвии, Литвы и Эстонии»[5].

Но и тут г-н Мусаев попадает пальцем в небо. Ему, видимо, неизвестно, или он сознательно «утаивает» от читателя реакцию того же Госсовета СССР на законодательный акт по статусу Нагорного Карабаха, принятый Азербайджанской Республикой 26 ноября 1991 года

[1] «Статус Нагорного Карабаха в политико-правовых документах и материалах». Библиотека центра русско-армянских инициатив. Ереван: 1995, стр. 69-70
[2] Ученые записки, выпуск 2. Непризнанные государства Южного Кавказа. МГУ им. М.В.Ломоносова. Москва. 2008, стр. 63
[3] «Бакинский рабочий», 07.01.1992 г.
[4] Т.Мусаев, указ. статья, стр. 70.
[5] Там же, стр. 68-69.

Քրիստոսի երկրորդ գալուստը, պայմանավորում էր ինչպես հավատացյալի ծիսական շարժումն արևմուտքից դեպի արևելք, այնպես էլ սրբազան տարածքի, այդ թվում և սրբազան կառույցների կողմնորոշումը արևմուտքից դեպի արևելք (արևմուտք-արևելք ուղղվածություն և ձգվածություն, գլխավոր մուտքի տեղադրում արևմուտքում, արևելյան մուտքի բացառում, աբսիդ-բեմի տեղադրում արևելքում և այլն): Նույնիսկ մեր դամբարանում, որն ունի միակ արևելյան մուտք, դեպի արևելք «շարժումը» փաստվում է նիշաների կառուցվածքով, որոնց արևելյան մասերին տրվել է կլորացող լուծում: Տիգրանակերտի դամբարանի այս յուրահատկության պարզաբանման խնդիրը հիմք հանդիսացավ պեղումներ նախաձեռնել Արցախի ամենահայտնի վաղքրիստոնեական դամբարանային կառույցում՝ Ամարասի սուրբ Գրիգորիսի դամբարան-մատուռում (պեղումներն իրականացրել են Հ. Պետրոսյանը և Ն. Երանյանը, չափագրությունը՝ Լ. Կիրակոսյանը և Լ. Մինասյանը), որի հիմնական ծավալը գտնվում է ներկա եկեղեցու արևելյան խորանի տակ, և որը հարավային ու հյուսիսային մուտքերի հետ միասին, ըստ որոշ դիտարկումների, ունեցել է նաև արևելյան մուտք, որի հետքերը պետք էր փնտրել եկեղեցուց դուրս՝ նրա արևելյան պատին կից հատվածում: Իրոք՝ եկեղեցու արևելյան պատին կից ձեռնարկած պեղումները երևան բերեցին մատուռ-դամբարանի շարունակությունը՝ արևելյան շքամուտքը, շքամուտքի առջևի սալահատակը և դեպի դամբարանը իջնող վեց աստիճաններից բացկացած մուտքը (նկ. 8, 9): Այս պեղումների էական արդյունքներից մեկն էլ մակերեսից 3 մ խորության վրա պատերը շրջանցող գետնախարսխի հայտնաբերումն էր, ինչը հնարավոր դարձրեց հաավաստել, որ դամբարանը եղել է ոչ թե ստորգետնյա, այլ կիսագետենափոր: Այդ մասին մինչև պեղումները հուշում էին նաև բեմի տակի հատվածի հարավային աստիճանավանդակի վերևում և սրահի արևմտյան պատում եղած լուսամուտների բացվածքները, որոնք այժմ փակված են: Կառույցը պեղումներով բացված արևելյան մուտքի առաջին աստիճանի մարկարդակից ներքև գտնվել է գետնի տակ, իսկ դրանից վերև գետնից վերև: Պեղումներով հայտնաբերված հարյուրից ավելի վաղմիջնադարյան կղմինդրի բեկորները վկայում են, որ կառույցի տանիքը եղել է կղմինդրապատ:

Տիգրանակերտի և Ամարասի դամբարան-մատուռների շարքին կարելի է դասել և Արցախի մեկ այլ՝ Սուրբ Ստեփանոսի երկհարկ մատուռ-դամբարանը (պատմական Վաճառ բնակավայրում), որն ունի միակ արևելյան մուտք (նկ. 10): Այն ուշագրավ է նաև նրանով, որ մասունքների համար հատուկ բաժանմունք է ունեցել արևմտյան պատին կից առանձնացված հատվածում: Հուսով ենք, որ այս վերջինիս պեղումները նոր մանրամասներ կբացահայտնեն. ի մասնավորի՝ մուտքի և վերգետնյա կառույցի առումով (վերջինիս հետքեր տեղում դեռ դիտելի են): Այսպիսով, եթե Տիգրանակերտի դամբարանն ուղղակի ներառված է եկեղեցու ավագ խորանի տակ, ապա Գրիգորիսի մատուռը կարծեք փորձում է համադրել դամբարանն ու մատուռը. այն ստորգետնյա հատվածի հետ միասին ունեցել է նաև լուսամուտներով պսակվող վերգետնյա հատված, բավականին ընդարձակ սրահ, ինչը ենթադրելի է դարձնում ծիսական արարողությունների հավանականությունը հենց դամբարանում: Վաճառի դեպքում մենք արդեն գործ ունենք երկհարկ կառույցի հետ. ընդ-որում երկրորդ հարկը առկա տվյալներով եղել է ռոտոնդայի տիպի՝ այսինքն որոշակիորեն բաց: Նման բազմազանությունը հիմք է տալիս ենթադրել, ճարտարապետներն ու շինարարները ըստ էության փորձում էին գտնել թաղման կառույցի և ծիսական տարածքի փոխհարաբերության ավելի հարմար ձևեր, ինչը նաև կարող է նման կառույցների ժամանակագրության մասին խոսել՝ Տիգրանակերտ, Ամարաս, ապա Վաճառ: Գրիգորիսի մատուռի թվագրությունը 5-րդ դարի վերջերով թվում է որևէ կասկած չի հարուցում: Որոշակիորեն հստակեցված պատմական կոնտեքստից զատ այդ մասին կարող են վկայել նաև քանդակները: Տիգրանակերտի դամբարանը նախորդել է փոքր եկեղեցուն, որն էլ նախորդել է մեծ եկեղեցուն: Վերջերս մենք ստացել ենք նաև փոքր եկեղեցուն արևմուտքից կից տապանաբակի երկու թաղումների ոսկորների կարբոնային անալիզի տվյալները. սարկոֆագ՝ 420-565 թվականներ, սալարկղ՝ 566-655 թվականներ[1], ընդ-որում պիտի նկատի ունենալ, որ թաղումները կատարվել են, երբ եկեղեցին արդեն կառուցված էր՝ քանի որ դրանք անմիջապես հպվել են նրա արևմտյան պատին: Հատկապես կարևոր է առաջին անալիզի տվյալները, ըստ որոնց առաջին սարկոֆագում թաղումը կատարվել է 420 թվականից հետո, բայց ոչ ուշ քան 565 թվականը: Այնպես որ Տիգրանակերտի դամբարանի կառուցումը 5-րդ դարի երկրորդ կեսում և ամենուշը 6-րդ դարի սկզբներին՝ նկատի ունենալով նաև երկու եկեղեցիների ծավալա-տարածական, շինարարական ու մեծ բազիլիկի քանդակային հորինվածքները, կասկած չի հարուցում: Սրան կարելի է հավելել և մեծ բազիլիկում գտնված կավե սկավառակի արձանագրությունը, որին կանդրադառնանք քիչ հետո:

Առայժմ կարելի է խոսել երեք դամբարանների մասին, որոնց ծավալային լուծման առանձնահատուկ կողմը դրանց արևելյան մուտքն է:[2] Վաղքրիստոնեական Արևելքում մեզ, ցավոք, արևելյան մուտքով դամբարաններ

[1] Այս անալիզների համար ես երախտապարտ եմ արշավախմբի մարդաբան Պոլ Բեյլիին, հայագետ Պատրիկ Տոնապետյանին և արվեստաբան Աննա Էյլոյանին՝ իրենց մասնագիտական, ընկերական և ֆինանսական աջակցության համար:

[2] Նկատենք, որ արևելյան մուտքն ամենևին էլ չի նշանակել քրիստոնեության մեջ ընդունված արևմուտք-արևելք գաղափարա-ծիսական ուղղության դոմինանտի անտեսում: Այդ մասին վկայում են ինչպես Գրիգորիսի մատուռի ծավալա-տարածական լուծումը, այնպես էլ Տիգրանակերտի դամբարանի խորշերի կառուցվածքը, որոնց ներքին արևելյան ծավալներն ունեն ընդգծված կորացումներ՝ այսինքն սրբերի մասունքներին երկրպագելու ուղղվածությունը եղել է արևմուտքից-արևելք:
Արևելյան մուտք է վերագրվել նաև Աղվանքի որոշ վաղ եկեղեցիների: Օրինակ, ադրբեջանցի հնագետ Ռ. Վահիդովը, ենթադրել է որ արևելյան մուտք է ունեցել Մինգեչաուրի ամենավաղ եկեղեցին (4-5-րդ դարեր): Քանի որ կառույցի երեք պահպանված պատերի մեջ մուտք չկա, իսկ արևելյան աբսիդը չի պահպանվել, նա եզրակացրել է, որ մուտքը հավանաբար եղել է արևելքից (Ваидив Р. М. Мингечаур в 3-8 веках, Баку, 1966, с. 95-97): Ռ. Գեուշևը ենթադրել է, որ տվյալ դեպքում բեմը եղելէ կառույցի կենտրոնում, իսկ մուտքն՝ արևելքում (Геюшев Р. Б.,

հայտնի չեն: Նման ծավալա-տարածական լուծում չեն երևան բերում նաև Հայաստանի այլ վայրերից հայտնի դամբարանները (Աղցք, Հռիփսիմե, Գայանե, Թալին, Օշական, Նախճավան ևն): Միակ դամբարանը, որն ունի արևելյան մուտք՝ Տիրոջ գերեզմանն է Երուսաղեմում (Wilkinson, John. The Church of the Holy Sepulchre // Archaeology, Vol. 31, No. 4 (July/August), 1978, pp. 6-13): Մեր նախնական վարկածն այս առումով այն է, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք կոնկրետ կրոնական մի բարեփոխման (ռեֆորմի) հետ, որը փորձել է վարչա-քաղաքական նպատակներով առանձնահատուկ՝ Հայ եկեղեցուց տարբերվող ծագումնաբանական և դրանից բխող դավանական ու ծիսական կերպար հաղորդել Աղվանից եկեղեցուն: Այս առումով արտակարգ հետաքրքրություն է ներկայացնում Աղվանից արքա Վաչագան Բարպաշտի կողմից հինգերորդ դարի վերջին քառորդում կամ վեցերորդ դարի սկզբում իրականացված եկեղեցական բարեփոխումը, որի արդյունքում նոր կանոնակարգ մշակվեց Աղվանից եկեղեցու համար: Ընդ-որում դրա տակ կարելիէ հասկանալ գուցե և ավելի մեծ ժամանակամիջոց, քան Վաչագանի թագավորության տարիներն են՝ ասենք 5-րդ դարի երկրորդ կեսից մինչև 6-րդ դարի կեսերը: Այս տեսակետից հարկ ենք համարում հատուկ ուշադրություն դարձնել հենց Վաչագան Բարեպաշտի բարեփոխումների և դրանց հետ կապվող երկու թեմաների՝ Աղվանքի որպես արևելյան երկրի և Եղիշայի վարքաբանության վրա:

Առաջինը դա հենց Վաչագանին վերագրվող կրոնական ռեֆորմն է, նրա հատկապես այն միջոցառումները, որոնք ուղղված էին Աղվանից եկեղեցու սրբադասության ընթացակարգի սահմանմանը (պատմական հիմք, պաշտամունք-պահեցողություն, երազ-տեսիլք, լույսի հրաշալի ծագում-ցուցում, անուշահատություն, արդեն հայտնաբերված նշխարների օգտագործում, նշխարների հայտնաբերում և բաժանում), անվանացանկի հստակեցմանը (Զաքարիա, Պանդալեոն, Գրիգորիս, Գրիգոր, Հռիփսիմե, Գայանե), և ի վերջո՝ մասունքներն ամփոփող մատուռ-դամբարանների կառուցմանը (Գրիգորիսինը՝ Ամարասում, Պանդալեոնինը՝ Դյուտականում, Եղիշայինը՝ Ջրվշտիկում): Ընդ-որում, հին եկեղեցիները պաշտամունքային նոր խթան են ստանում հենց այս վերահայտ մասունքների շնորհիվ (Կաղանկատուացի, էջ 56-88):

Աղվանքի որպես արևելյան երկրի (ընդ-որում մի շարք կոնտեքստներում էլ որպես հենց դրանով Հայաստանից տարբերվող) գաղափարաբանությունը, որը վկայված ենք տեսնում ինչպես Վաչագանի պատմությունում (Կաղանկատուացի, էջ 56-88), այնպես էլ հետագայում, ուղղակի կապ ունի հենց Երուսաղեմի՝ որպես քրիստոնեական աշխարհի կենտրոնի և փրկագործության գաղափարի հետ: Սրա հետ կարծեք համահունչ է Աղվանից եկեղեցու ծագումը Երուսաղեմից բխեցնելուն ուղղված Եղիշա առաքյալի վարքաբանությունը, որն ըստ այդ պատմության համապատասխան հատվածի՝ Աղվանք եկավ հատուկ շրջանցելով Հայաստանը (Կաղանկատուացի, էջ 10-11):

Այսպիսով, մենք ունենք 5-6-րդ դարերի սահմանագծում Տիրոջ գերեզմանի ուղղությանը համապատասխանեցված դամբարանային կառույցներ, երկիրը արևելյան համարող գաղափարաբանություն, եկեղեցուն երուսաղեմյան ծագում վերագրող լեգենդ: Եվ ունենք մի հզոր տիրակալ, ով փորձել է կրոնական ռեֆորմների միջոցով իր թագավարության եկեղեցուն հաղորդել անկախ կարգավիճակ:

Ալեքսան Հակոբյանն իր վաղ քննություններում Վաչագանի պատմությունը (ներառյալ և «Աղվենի կանոնները» համարում էր «ծրագրային լեգենդ»՝ ստեղծված 6-րդ դարի կեսերին և դրանով իսկ կասկածի տակ էր առնում նրա պատմականությունը (Акопян А. А. Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, Изд-во АН АрмССР, 1987, с. 186-187): Նորագյուտ դամբարանների և պատմական տվյալների համադիր մեր քննությունը կարծեք թե ցուցում է, որ այս մոտեցումներն ու պատկերացումները շատ ավելի վաղ են ձևավորվել:[1] Մեր կարծիքով հենց հզոր արքան է, որ պիտի փորձեր երկրի եկեղեցուն իր թագավարությանը պատշաճող ինքուրույնություն հաղորդել, գործընթաց, որը կարող էր ավելի հստակեցվել ու վերջնական տեսքի բերվել հետագա դարերում:[2] Վաչագանի ռեֆորմը փորձում էր համաքրիստոնեական, հայ-քրիստոնեական ավանդույթների կողքին ձևավորել նաև սեփական ավանդույթները (Արևելյան երկիր, Երուսաղեմյան առաքյալ, «սեփական» սրբեր): Եվ դրա նյութականացված, մեզ հասած արտահայտություններից մեկն էլ մեր կարծիքով արևելյան մուտքով մատուռ-դամբարաններն են:

Христианство в Кавказский Албании, Бакы, Элм, 1964, с. 83): Ըստ Ռ. Գեուշևի արևելյան մուտք է ունեցել և Եղիշեի նախնական տաճարը (էջ 83):

[1] Իր վերջին հրապարակումներում Ա. Հակոբյանը «Վաչագանի վեպը» վերագրում է 6-րդ դարի ամենասկզբին («Աղուանից թագաւոր Վաչագան II-ի «Բարեպաշտ» կերպարի կերտումը «Վաչագանի վէպ»-ում (VI դարի սկիզբ)», ձեռագրի իրավունքով): Անկախ, թե ինչ չափով են հետազոտողներն այն համարում իրական դեպքերի արտացոլում, չենք կարող չընդունել, որ այս պատմությունը ստեղծելուց առաջ Արցախում և Ուտիքում սրբերին նվիրված մատուռ-դամբարաններն արդեն պիտի կայացված փաստ լինեին, որպեսզի ներկայացվեին որպես եկեղեցական բարեփոխման արդյունք: Նույնանման իրավիճակ մենք ունենք, օրինակ, Գրիգոր Լուսավորչի դեպքում, երբ արդեն գոյություն ունեցող կոթողները 5-րդ դարի կեսերին ներկայացվել են որպես Լուսավորչի տեսիլքի հետևանքով՝ այսինքն՝ 4-րդ դարի սկզբում ստեղծված կառույցներ (Պետրոսյան Հ. Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, Փրինթինֆո, 2008, էջ 10-18):

[2] Կաղանկատվացու պատմությունը Եղիշայի գործունեության հիմնական տարածք դիտում Կուրի ձախափնյակը: Սրան համապատասխանում է և հետսագույն ավանդույթը՝ ընդհուպ մինչև 19-րդ դար: Վաչագանը թերևս փորձել է այդ ավանդույթի որոշ դրսևորումներ տեղափոխել աջափնյակ (Եղիշա առաքյալի անունով երկու վանքերի հիմնում Արցախում՝ Ամարասի հարևանությամբ և Մեծ Կվենքում: Վերջին վանքում՝ Եղիշա առաքյալ կամ Ջրվշտիկ վանք, ըստ ավանդության թաղվել է և Վաչագանը. այստեղ պահպանվել են նրա անունով հետսագույն՝ 10-11-րդ դարերի դամբարանը, տապանաքարը և խաչքարը):

Այս տեսակետից ուշագրավ են նաև Եղիշայի նահատակության վայրում Վաչագան Բարեպաշտի կողմից հուշասյան կանգնեցումը[1], սրբի մասունքների տեղափոխումը Արցախի Ջրվշտիկ (հետագայում՝ Եղիշա առաքյալի) վանք (Կաղանկատուացի, էջ 12), Վաչագանին վերագրվող հետսագույն դամբարանի, տապանաքարի և խաչքարի առկայությունը նույն վանքում: Նկատենք, որ նույն աղբյուրի հավաստի տեղեկություններով Գրիգորիսի մատուռը կառուցվել է հենց Վաչագան Բարեպաշտի անմիջական նախաձեռնությամբ և մասնակցությամբ (Կաղնակատուացի, էջ 64-88):

Դառնալով Տիգրանակերտին, նշենք, որ քրիստոնեության առաջին դարերում մեծ դերակատարում ունեցած այս քաղաքը Վաչագանի հետ կապող կարևոր հանգամանքներից մեկն էլ մի յուրօրինակ գտածո է՝ պեղված քաղաքային եկեղեցում 2008 թվականին: Այն կավե փոքրիկ սկավառակ է, որի մի երեսին փորագրված է շրջանի մեջ ներառված հավասարաթև խաչ, մյուս երեսին՝ մորթենու գլխարկ կրող, բեխ-մորուքով տղամարդու դիմապատկեր (նկ. 11): Սկավառակն ունեցել է միջանցիկ երկու անցքեր, որոնց օգնությամբ կապվել է ինչ-որ փաթույթի կամ տուփի և յուրօրինակ «դրոշմակնիքի» դեր է կատարել: Սկավառակի վրա փորագրված են հայերեն արձանագրություններ, որոնցից հիմնականը հայտնում է «ԵՍ/ ՎԱՉ[Է] (կամ ՎԱՉ[ԱԳԱՆ]) / ԾԱՌԱՅ Տ[ԵԱՌ]Ն»:

Սկավառակը գտնելու հանգամանքների, պատկերագրության և հայերեն տառատեսակների քննությունը թույլ է տալիս այն վերագրել 5-7-րդ դարերին: Վաչե և Վաչագան անձնանունները նշյալ ժամանակ կրել են մի քանի անձինք: Նրանց շարքում հատկապես առանձնանում է Վաչագան Բարեպաշտ արքան, որն ըստ նրա մասին ստեղծված զրույցի՝ հրավիրել է Աղվենի եկեղեցական ժողովը և մեծ ժամանակ է հատկացրել սրբերի մասունքների հավաքմանը. հանգամանքներ, որոնք կարող են համահունչ լինել մեր սկավառակի գործառույթի և արձանագրության թեմայի հետ: Այժմ նկատի ունենալով նաև վաղքրիստոնեական դամբարանաի հայտնաբերումը, որտեղ հատուկ նիշաներ են եղել՝ հատկացված սրբերի մասունքներին, կարող ենք հավանական համարել, որ նման «դրոշմակնիքով» կարող էին կնքվել սրբերի մասունքների պահարանները:

Տիգրանակերտի այս գտածոն փաստորեն Արցախի տարածքում հայտնաբերված ամենահին հայերեն արձանագրություններից մեկն է, և լավագույն փաստարկն է Խաչենագետի ներքնահովտի վաղքրիստոնեական-հայկական դիմագծի, որը պատմական մի շարք այլ սկզբնաղբյուրների տվյալներով ուրվագծվում էր և մինչև այս գյուտը:

Հատուկ շեշտելի է նաև քաղաքային եկեղեցու պեղումներից գտնված ապակյա սրվակը (նկ. 12): Ինչպես գիտենք, Գրիգորիսի նշխարների հայտնաբերման պատմությունը հատուկ շեշտում է ապակյա երկու սրվակների գյուտը, որոնցում պահվում էին սուրբ Զաքարիայի և Պանդալեոնի արյունները (Կաղանկատուացի, էջ 81): Մուգ կապույտ ապակուց պատրաստված ամֆորեսկի տեսք ունեցող մեր սրվակը վերաբերում է 5-7-րդ դարերին, և պակաս հավանական չէ, որ նույնպես ծառայել է նման նպատակների:

Ժողովրդական ավանդությունը, որ մեզ է հասել 19-րդ դարի գրառումներով, Վաչագան Բարեպաշտի անվան հետ է կապում և Վանքասարի եկեղեցին. «ժողովրդական աւանդութիւնը… Թառնագիւրտին անուանում է Թառնագիւտ և յարակցում, որ Վաչագան Աղուանից թագաւորը իւր վերջին տարիներում եկաւ Շահբուլաղ: Այնտեղ լերան գագաթին մի վանք շինեց, ուր և ճգնում էր կամ որպէս հաւ՝ թառում էր՝ Թառնագիւրտ» (Հայկունի, Ուղեգնացական ակնարկներ, Երևան, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2010, էջ 39):

Իմ այս քննությունը ես համարում եմ հարցադրում և հիպոթեզ: Դեռևս շատ են լուծում պահանջող խնդիրները: Բայց մի բան ակնհայտ է՝ 5-րդ դարի վերջերից մենք արդեն ունենք արևելյան մուտքով դամբարաններ: Գլոբալ այս փոփոխությունը չէր կարող երևան գալ առանց համապատասխան քաղաքական-վարչական և գաղափարական-ծիսական հիմքերի: Մնում է հուսալ, որ մեղ կհաջողվի հանգամանորեն հետազոտել Վաճառի սուրբ Ստեփանոսի դամբարանը, քայլեր ձեռնարկել Դյուտականի հնագիտական տեղայնացման և Պանդալոնեի մատուռի հայտնաբերման ու հետազոտման ուղղությամբ: Կան նաև այլ հուշարձաններ, որոնք այս տեսակետից հատուկ հետաքրքրություն է ներկայացնում (Հոռեկա վանքի գլխավոր եկեղեցին, Եղիշա կույսի վանքի եկեղեցին, Եղիշա առաքյալի վանքի Վաչագան բարեպաշտին վերագրվող դամբարանը և այլն): Ցավոք հայագիտության այս կարևոր բնագավառը, ինչպես շատ այլ բնագավառներ, գտնվում է բացառապես անհատների ջանքերի և պատասխանատվության, բայց ոչ պետության գիտական քաղաքականության ոլորտում:

[1] Ինչպես նշեցինք, հուշասյան մնացորդներ են հայտնաբերվել նաև Տիգրանակերտում՝ առաջին եկեղեցու հարավային բակում:



Նկ. 1 Տիգրանակերտի վաղքրիստոնեական հրապարակի հատակագիծը, 2014 թ.:



Նկ. 2 Տիգրանակերտի վաղքրիստոնեական հրապարակը, 2016 թ., լուսանկարը՝ Հրայր Բազեի:

Նկ. 3. Տիգրանակերտի առաջին (քաղաքային) եկեղեցին:

Նկ. 4. Տիգրանակերտի երկրորդ եկեղեցին և նրան կից արևելյան տապանաբակը, 2014 թ.:

Նկ. 5 Տիգրանակարետի վաղքրիստոնեական դամբարանը:



Նկ. 6 Տիգրանակերտի վաղքրիստոնեական դամբարանի հատակագիծը:



Նկ. 7 Տիգրանակերտի վաղքրիստոնեական դամբարանի հատակագիծն ու կտրվածքները:

Նկ. 8 Ամարասի Գրիգորիսի մատուռի արևելյան մուտքը:



Նկ. 9. Ամարասի Գրիգորիսի մատուռի հատակագիծը պեղումներից հետո:

Նկ. 10 Սուրբ Ստեփանոսի դամբարանը Վաճառում:

Նկ. 11 Արձանագրակիր կավե սկավառակ, Տիգրանակերտ, 2008 թ. պեղումներ:

Նկ. 12. Ապակյա սրվակի բեկոր, Տիգրանակերտ, 2007 թ. պեղումներ:

УДК 941(479.243) -057.8 *История*

Владимир Пономарёв,
к.и.н., доцент кафедры гуманитарного образования
и иностранных языков.
Юргинский технологический институт (филиал)
Национального исследовательского Томского политехнического университета
E-mail: PWA13@mail.ru

СЛАВНЫЙ БОЕВОЙ ПУТЬ ВЫДАЮЩЕГОСЯ НАРОДНОГО ПОЛКОВОДЦА ИЗ АРЦАХА: ОТ РЯДОВОГО ДО МАРШАЛА

Статья посвящена военной биографии маршала, дважды героя СССР Ивана Баграмяна, в особенности ее досоветского периода. В судьбоносное для армянства время 17-летний Иван пошел на службу в русскую армию, с уверенностью, что с помощью русского оружия можно будет освободить Западную Армению. После расформирования Кавказского фронта он вошел в ряды армянского корпуса и был одним из офицеров Андраника. Участвовал в Сардарапатской битве, в результате которой Армения восстановила независимость. Несколько лет спустя Баграмян вошел в ряды Красной армии, участвовал в гражданской и в Великой Отечественной войнах, был командующим фронта. После войны занимал важные армейские посты. Герой из Арцаха занимает выдающееся место в числе великих военачальников Советского Союза.

Ключевые слова: Арцах, Баграмян, война, полководец, Сардарапат.

Vladimir Ponomarev,
PhD in History, Associate Professor, Department of Humanities and Foreign Languages,
Yurga Institute of Technology, TPU Affiliate

PATH OF GLORY OF ARTSAKH NATIONAL HERO: FROM PRIVATE SOLDIER TO MARSHAL

The article presents the biography of the twice hero of USSR Hovanes Baghramyan, namely its pre-Soviet period. In this fatal period for the Armenians the 17-year-old Ivan joined the Russian army with the conviction to liberate Western Armenian with the Russian help. Following the dissolution of the Caucasian front Baghramyan has joined the Armenian detachments and was one of Andranik's officers. He participated in the Sardarapat battle as a result of which Armenian got independence. Some years after

Baghramyan entered the Red army, took part in the civil war and the Second World War as a Commander of the Front. After war he was assigned to important military posts. The hero from Artsakh is among the prominent commanders of the Soviet Union.

Key Words: Artsakh, Baghramyan, war, military, military commander, Sardarapat

Վլադիմիր Պոնամարյով,
պ.գ.թ., հումանիտար կրթության
եւ օտար լեզուների ամբիոնի դոցենտ:
Յուրգինսկի տեխնոլոգիական ինստիտուտ (մասնաճյուղ)
Տոմսկի Ազգային հետազոտական ճարտարագիտական համալսարան

ԱՐՑԱԽՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՐՈՍԻ ՓԱՌԱՎՈՐ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ. ՇԱՐՔԱՅԻՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՐՇԱԼ

Հոդվածում ներկայացվում է մարշալ, ԽՍՀՄ կրկնակի հերոս Հովհաննես Բաղրամյանի ռազմական կենսագրությունը, հատկապես նրա նախախորհրդային մասը: Հայության համար ճակատագրական ժամանակահատվածում 17-ամյա Հովհաննեսը ծառայության է մտնում ռուսական բանակում, համոզված լինելով, որ ռուսական զենքի օգնությամբ կազատագրվի Արևմտյան Հայաստանը: Կովկասյան ճակատի կազմալուծումից հետո Բաղրամյանը մտել է հայկական կորպուսի շարքերը և եղել է Անդրանիկի սպաներից: Նա մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին, որի արդյունքում վերականգնվել է Հայաստանի անկախությունը: Հետագայում Բաղրամյանը ծառայության է մտել կարմիր բանակում, մասնակցել է քաղաքացիական և հայրենական պատերազմներին, եղել է ճակատի հրամանատար: Պատերազմից հետո բարձր բանակային պաշտոններ է զբաղեցրել: Արցախցի հերոսը ակնառու տեղ է զբաղեցնում խորհրդային մեծ զորահրամանատարների շարքում:

Բանալի բառեր՝ Արցախ, Բաղրամյան, պատերազմ, զորահրամանատար, Սարդարապատ:

В ряду выдающихся военных деятелей – полководцев Великой Отечественной войны 1941-1945 гг. особое место занимает уроженец Арцаха, дважды Герой Советского Союза, Маршал Советского Союза Иван Христофорович (Ованес Хачатурович) Баграмян.

Прославленный полководец родился 20 ноября (2 декабря) 1897 г. в селе Чардахлы (родина двух маршалов, многих генералов и офицеров) Елизаветпольской губернии Российской империи в армянской семье. Его отец, Хачатур Карапетович, работал на железной дороге, самостоятельно получил образование и стал артельным старостой. Мать, Мариам Артёмовна, из семьи сельского кузнеца, целиком посвятила себя воспитанию детей [4. С. 19].

Ованес самостоятельно научился грамоте. С 9-летнего возраста с большим старанием и усердием учился в двухклассном железнодорожном училище, а затем при большом материальном напряжении для родителей – в Тифлисском железнодорожном техническом училище с 1912 по 1915 гг. Оба училища окончил с отличными оценками.

Начавшаяся 1 августа 1914 г. Первая мировая война решительным образом изменила всю международную обстановку и судьбу Ивана Христофоровича. Проработав всего несколько месяцев в 1915 г., Баграмян добровольно вступил в ряды русской армии на фоне развернувшегося геноцида турок по отношению к армянскому населению.

Эта была война между двумя враждующими коалициями держав (Германо-Австрийский блок и Антанта). В ходе её, только в 1915 г. на территории Турции жертвой погромов и депортаций стали около 1,5 миллионов армян. Эти страшные вещи дошли до Тифлиса, Елизаветополя, других армянонаселённых местностей Кавказа.

И. Х. Баграмян впоследствии вспоминал: «Я не мог оставаться в стороне от борьбы против ненавистных врагов моего родного народа. Мне было уже без малого 18 лет, я достаточно ясно понимал суть сложившейся на Кавказском фронте общей военной обстановки и кровавых событий в Турции… При этом отчётливо понимал, что только плечом к плечу с российским солдатом мне будет под силу сражаться против турецких палачей. Побуждаемый этими чувствами и преодолев сопротивление родителей, 9 октября 1915 г. добровольно вступил в русскую армию. Меня направили в 116-й запасной батальон (г. Ахалцих), где в ускоренном порядке нужно было пройти необходимую военную подготовку перед уходом на фронт» [2. С. 18-19].

Баграмян прослужил здесь три месяца, преодолев многочисленные трудности, стремился приобрести всё необходимые знания для предстоящих походов и боёв. Он многому научился в запасном батальоне. Не последнюю роль при этом сыграло то обстоятельство, что за восемь лет учёбы и училище под руководством кадровых армейских офицеров прошёл краткий курс первоначальной военной подготовки, прилежно занимаясь гимнастикой, строевой подготовкой и приёмами рукопашного боя.

В последних числах декабря 1915 г. из запасного батальона был сформирован маршевый батальон, который был направлен на Кавказский фронт для укомплектования второго Кавказского пограничного полка экспедиционного корпуса генерала Баратова, который был дислоцирован на подступах к персидскому городу Казвин. Баграмян был зачислен в 15-ю сотню четвёртого батальона рядовым солдатом. В середине января 1916 г. батальон двинулся на Хамадан. В окрестностях Хамадана Баграмян получил своё первое боевое крещение [2. С. 19].

Иван Христофорович, начав свою военную службу в запасном пехотном батальоне, затем продолжил её во 2-м приграничном пехотном полку и до января 1917 г. служил в Кавказском запасном кавалерийском полку.

Как человек храбрый и образованный, в начале февраля 1917 г. Баграмян был направлен в школу прапорщиков, в которую был зачислен юнкером. После её окончания в июле был назначен младшим офицером в одну из рот запасного пехотного полка, дислоцированного в г. Елизаветполе. В армии нарастало революционное настроение; собрание солдат избрало Баграмяна командиром роты. Командование полка не приняло такой демократии, и его направили служить в 3-й армянский стрелковый полк, дислоцированный в Иране. По прибытии в полк солдаты 3-го батальона избрали его в состав батальонного солдатского комитета.

В ноябре 1917 г. был сформирован Отдельный армянский корпус, командиром которого был назначен генерал-лейтенант Товмас Назарбеков. Этот корпус получил задание оборонять линию фронта от Брайбут до Батума (включая крепости Эрзерум и Карс). Баграмян получил назначение в сформированный в г. Карсе 1-й армянский кавалерийский полк – младшим офицером 1-го эскадрона [2. С. 21].

После того, как Россия объявила о прекращении состояния войны с Германией, Австро-Венгрией, Турцией и Болгарией, полной демобилизации русских войск по всему фронту, последовало наступление германских, австро-венгерских и турецких войск [1. С. 28].

Германо-турецкие войска вторглись в Закавказье в начале февраля 1918 г. – началась иностранная военная интервенция. Их целью было быстрое продвижение к г. Баку с его значительными запасами углеводородов (нефть, мазут, керосин и др.). По пути их следования они планировали подавлять и уничтожать очаги сопротивления на всей подконтрольной территории.

Генерал-майор Г. Г. Корганов (1880-1954 гг.), участник Первой мировой войны на Кавказе, ещё в 1927 г. в своей книге (первое издание на фр. яз. (г. Париж) – *прим. авт.*) отмечал: «…как бы ни эволюционировало человечество, как бы ни широко ни распространялись в мире гуманистические идеи, право народов на независимое существование может быть поддерживаемо только путём вооружённой борьбы» [5. С. 14].

Офицер Иван Баграмян участвовал в отражении германо-турецкой интервенции в Закавказье [3. С. 49]. В феврале-марте 1918 г. 20-летний командир кавалерийского взвода подпоручик Баграмян сражался против турок в рядах Особой добровольческой дивизии генерала Андраника и отличился особыми подвигами (Баграмян всегда с гордостью вспоминал свою встречу с народным героем) [2. С. 21-22].

Наступающие на бакинском направлении турецкие войска истребляли всех попадавшихся на пути армян и ассирийцев.

После падения Александрополя армянам пришлось сражаться сразу на трёх направлениях: северном – Баш-Абаранском, восточном – Караклисском и южном – Сардарапатском [7. С. 358].

На этих участках фронта турецкие войска встретили наиболее упорное сопротивление армянских войск.

Сардарапатская битва (21-28 мая 1918 г.) является знаменательной в истории Армении.

Это сражение между регулярными армянскими воинскими частями и ополченцами, с одной стороны, и вторгнувшимися в Восточную Армению турецкими оккупантами – с другой проходило в районе железнодорожной станции Сардарапат, близ нынешнего города Армавир.

24 мая на Эриванском направлении армянские воины нанесли серьёзное поражение турецким войскам у железнодорожной станции Сардарапат и преследовали их на долгом протяжении вдоль железной дороги [6].

Четырёхдневный бой под Караклисом (25-29 мая), а также победа армянских войск под Сардарапатом, оказали влияние на ход переговоров, в результате которых турки пошли на некоторые территориальные уступки [9. С. 45]. 28 мая 1918 г. Армянский национальный совет объявил о создании независимой Армянской республики.

Подпоручик И. Баграмян, командовавший одним из взводов в 1-м Особом армянском конном полку, внёс свою лепту и в победу в Сардарапатской битве, имеющей судьбоносное значение для армянского народа [10. С. 728]. 26 мая в Армении отмечается памятная дата – День победы в Сардарапатской битве.

В дальнейшем, в декабре 1920 г. Баграмян добровольно вступил в Армянскую Красную Армию в качестве командира эскадрона 1-го Армянского полка, участвовал в Гражданской войне на командных должностях в составе 11-й армии.

В тяжелейшие для страны годы Великой Отечественной войны Иван Христофорович Баграмян прошёл многие штабные и командные должности на разных фронтах. В конце 1943 г. он был назначен командующим войсками 1-го Прибалтийского фронта с присвоением воинского звания «генерал армии».

После окончания Великой Отечественной войны И. Х. Баграмян командовал войсками Прибалтийского военного округа, был Главным инспектором Министерства обороны СССР (с 1954 г.) и заместителем Министра обороны СССР (с 1955 г.).

В 1955 г. ему было присвоено звание Маршала Советского Союза, в 1956 г. его назначили начальником Военной академии Генерального Штаба Вооружённых Сил СССР, а в 1958-1968 гг. он находился на ответственном посту в должности заместителя министра обороны – начальника Тыла Вооружённых Сил СССР.

В 1958 году руководство страны решило, что службы тыла должен возглавить не только хороший интендант, но и полководец, компетентный в вопросах стратегии и обеспечения боевых действий в новых условиях [4. С. 17].

С 1968 г. И. Х. Баграмян работал в Группе генеральных инспекторов Министерства обороны СССР [8. С. 175].

Таким образом, И. Х. Баграмян по праву занимает достойное место среди военачальников и теоретиков военного дела. Участник Первой мировой, Гражданской и Великой Отечественной войн, выпускник двух военных академий, начав свою службу рядовым солдатом, прошёл славный боевой путь и дослужился до Маршала Советского Союза. Неоднократно участвовал в больших и малых сражениях, отдал более 50-ти лет делу защиты Родины.

Родина высоко оценила ратную службу Ивана Христофоровича Баграмяна. Он дважды был удостоен звания Героя Советского Союза, награждён многими орденами и медалями.

Выдающийся полководец из Арцаха, Маршал Советского Союза И. Х. Баграмян скончался в Москве 21 сентября 1982 г. Урна с его прахом захоронена в Кремлёвской стене на Красной площади в Москве.

Его славное имя увековечено в памяти благодарных потомков.

Именем Маршала названы улицы в Москве, Орле, Калининграде, Витебске и других городах. В 2001 г. в г. Ереване ему был установлен памятник (конная статуя), в его честь назван один из центральных проспектов столицы Республики Армения, а также одна из станций ереванского метро.

Литература.

1. Армяне в Первой мировой войне (1914-1918 гг.). – Москва: Редакционно-издательский дом «Российский писатель», 2014. – 768 с.
2. Арутюнян К. А. Маршал Советского Союза, Дважды Герой – И. Х. Баграмян. (Ответ. ред. Мелконян А. А.). – Ер.: Изд-во «Зангак-97», 2007. – 240 с.

3. Гражданская война и военная интервенция в СССР: Энциклопедия / Сардарапатское сражение 1918 /. Гл. ред. С. С. Хромов. – М.: Сов. Энциклопедия, 1983. – 704 с.
4. Карпов В. В. Маршал Баграмян: «Мы много пережили в тиши после войны». – М.: Вече, 2006. – 336 с. – (Полководцы Великой войны).
5. Корганов Г. Г. Участие армян в мировой войне на Кавказском фронте (1914-1918) с 19-ю схемами / Пер. с фр. Пирумяна Ю. Л., Долбакяна Э. Е.; Ред. Долбакян Э. Е., Мелик-Шахназаров А. А. – М.: МАКС Пресс, 2011. – 184 с.
6. Краткое описание действий Армянского отдельного корпуса с 1 декабря 1917 года по 1 августа 1918 года // НАА Ф. 1267. Оп. 2. Д. 97. Л. 1-30.
7. Пирумян Ю. Л. На обрывках лет и дней: жизнь Даниэл-бека Пирумяна. – Москва: Ключ-С, 2013. – 592 с.
8. Саркисян С. Т. Энциклопедия Арцах-Карабаха / 2-е изд., испр. и доп. – СПб.: Издательский дом «Петрополис», 2007. – 626 с.
9. Туманян М. Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг. – Ер.: Национальный архив Армении, 2012. – 473 с.
10. Шамбаров В. Е. За веру, царя и Отечество! – М.: Изд-во Эксмо, 2003. – 768 с.

References
1. Armjane v Pervoj mirovoj vojne (1914-1918 gg.). – Moskva: Redakcionno-izdatel'skij dom «Rossijskij pisatel'», 2014. – 768 s.
2. Arutjunjan K. A. Marshal Sovetskogo Sojuza, Dvazhdy Geroj – I. H. Bagramjan. (Otvet. red. Melkonjan A. A.). – Er.: Izd-vo «Zangak-97», 2007. – 240 s.
3. Grazhdanskaja vojna i voennaja intervencija v SSSR: Jenciklopedija / Sardarapatskoe srazhenie 1918 /. Gl. red. S. S. Hromov. – M.: Sov. Jenciklopedija, 1983. – 704 s.
4. Karpov V. V. Marshal Bagramjan: «My mnogo perezhili v tishi posle vojny». – M.: Veche, 2006. – 336 s. – (Polkovodcy Velikoj vojny).
5. Korganov G. G. Uchastie armjan v mirovoj vojne na Kavkazskom fronte (1914-1918) s 19-ju shemami / Per. s fr. Pirumjana Ju. L., Dolbakjana Je. E.; Red. Dolbakjan Je. E., Melik-Shahnazarov A. A. – M.: MAKS Press, 2011. – 184 s.
6. Kratkoe opisanie dejstvij Armjanskogo otdel'nogo korpusa s 1 dekabrja 1917 goda po 1 avgusta 1918 goda // NAA F. 1267. Op. 2. D. 97. L. 1-30.
7. Pirumjan Ju. L. Na obryvkah let i dnej: zhizn' Danijel-beka Pirumjana. – Moskva: Kljuch-S, 2013. – 592 s.
8. Sarkisjan S. T. Jenciklopedija Arcah-Karabaha / 2-e izd., ispr. i dop. – SPb.: Izdatel'skij dom «Petropolis», 2007. – 626 s.
9. Tumanjan M. Diplomaticheskaja istorija Respubliki Armenija. 1918-1920 gg. – Er.: Nacional'nyj arhiv Armenii, 2012. – 473 s.
10. Shambarov V. E. Za veru, carja i Otechestvo! – M.: Izd-vo Jeksmo, 2003. – 768 s.

ՀՏԴ 904(479.243) Պատմություն

Մհեր Քումունց
Բ.գ.թ., դոցենտ
Գորիսի պետական համալսարան
Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ղեկավար
Էլ. հասցե՝ prof1972@mail.ru,

Զոհրաբ Ըռքոյան
Լ.ՂՀ Քաշաթաղի շրջանի ,Մերանե թերթի գլխավոր խմբագիր
Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող
Էլ. հասցե՝ zoriknew@mail.ru

ՔԱՐԱՎԱԶ (ԽՈՒԴԱՓԵՐԻՆ). ԿԱՄՈՒՐՋԸ և ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ

Սյունիքի պատմական տարածքում է գտնվում Քարավազի կամ Խուդափերինի պատմական կամուրջները: Նրանք երկուսն են՝ հին և նոր: Հին կամուրջը քանդված է, իսկ նոր կամուրջը կանգուն է, բայց չի օգտագործվում: Հայ պատմագրության մեջ Քարավազի պատմական տարածքի մասին առավել հանգամանալից տեղեկություններ է հաղորդում Ս. Օրբելյանը: Խուդափերինի պարսկական մասում հայտնաբերվել են 2-րդ հազարամյակի հնություններ: Այսօր Խուդափերինի կամ Քարավազի կամուրջները գտնվում են Արցախի և Իրանի սահմանագծում և համարվում են երկու ժողովուրդների պատմամշակութային հուշարձաններ:

Առանցքային բառեր. Քարավազի կամ Խուդափերինի կամուրջ, Արցախ, Սյունիք, պատմական տարածք:

Mher Kumunts
Candidate of Natural Sciences, Docent
Goris State University
Director of Armenian Studies Research Center of Synunik
e-mail: prof1972@mail.ru,

Zohrab Rkoyan
General Editor of Newspaper "Meran" of Khashatagh Region of NKR
Researcher at Armenian Studies Research Center of Synunik
e-mail: zoriknew@mail.ru

BRIDGE KARAVAZ (KHUDAVERIN) AND ITS HISTORICAL TERRITORY

The historical bridges of Karavas or Khudaperin are located in the historical territory of Syunik. There are two bridges: old and new. The old bridge is run down, and the new one is steady but not functioning. In the Armenian history writing, the historical territory of Karavaz is described in more details by St. Orbelyan. There have been discovered antiques of the second millennium in the Persian part of Khudaperi. Today, the bridges of Karavas or Khudaperin are situated on the borderline of Artsakh and Iran and are considered historical-cultural monuments of the two nations.

Мгер Кумунц
Доктор филологических наук, доцент
Руководитель арменоведческого исследовательского центра Сюника
Эл. адрес՝ prof1972@mail.ru

Зограб Ркоян
Главный редактор газеты "Меран" Кашатагского р-на НКР
Научный сотрудник арменоведческого исследовательского центра Сюника
Эл. адрес zoriknew@mail.ru

МОСТ И ИСТОРИЧЕСКАЯ ТЕРРИТОРИЯ КАРАВАЗА / ХУДАПЕРИН/

На территории исторического Сюника находятся исторические мосты Караваза или Худапери. Есть старый мост и новый. Старый мост разрушен, а новый, хоть и стойкий, но им не пользуются. В армянской историографии наиболее обоснованные сведения об исторической территории Караваз передает С. Орбелян. На персидской части Худапери найдены древние предметы, относящиеся ко второму тысячелетию. Сегодня мосты Худапери или Караваза находятся на Арцахско-иранской границе и считаются историко-культурными памятниками обоих народов.

Խուդափերինի կամ Քարավազի պատմական կամուրջը

Պատմական Սյունիքի Աղահեճք գավառը,[1] իսկ հետագայում Արցախ աշխարհի Դիզակի մելիքությունը Արաքս գետով հարևան Իրանին կապող կամուրջը դարեր շարունակ եղել է **Խուդափերինը** (պարսկերենից նշանակում է Աստվածաստեղծ) կամ **Քարավազը**,[2] որն ունեցել է 11 թռիչք, 130մ երկարություն, 6մ լայնություն, ջրի մակարդակից բարձր է 12մ:[3] Արաբական և պարսկական աղբյուրներում կամուրջը վկայված է **Հուդաֆերին, Խուդափերին** անուններով: Xudaperin /Խուդապերին (Khodā Āfarīn /خدا آفرین /), Խուդափերին պարսկական և հայկական հնչեղությամբ անուններն են: Ադրբեջանցիները նշում են Xudafərini,[4] որը նույն պարսկական բառն է՝ դրափոխությամբ բաղարկված: Հայկական պատմագրության մեջ մինչև Ղարաբաղի խամսայությունների ձևավորումը կամուրջը կոչվել է Քարավազ, որ բնիկ բառ է՝ կազմված քար+ա+վազ/վազող/ արմատներից՝ «Քարերի վրայով վազող՝ մագլցող՝ ցատկոտող» իմաստներով: Կարծում ենք, տեղանքը Քարավազ է կոչվել մինչև կամուրջների կառուցումը, քանի որ, ինչպես նշվում է, կամուրջների թռիչքները նստած են բնական քարերի վրա. «հիմնարկուած է բնական վէմ քարերի վերայ», այսինքն՝ Քարավազ է կոչվել ոչ թե կամուրջների, այլ գետում եղած վեմ քարերի համար, որոնց վրայով հնարավոր է եղել անցնելը /«վազել»/. այսօր էլ հայերենի բարբառներում քարավազ են կոչվում գետի այն մասերը, որ գետի լայնությամբ առկա քարերով անցնելը հնարավոր է լինում/: Գրաբարը չունի «քարավազ», առկա է «քարավէժ»՝ «վիժեալ հոսէալ ի քարաժայռից կամ ընդ քարաժայռս. գահավէժ հարեալ զքարի»:[5] Կարծում ենք, որ տեղանունն առաջացել է բարբառային իմաստից:[6] Այդպես են կոչվել նաև Արաքսի երկու մասերում գտնվող գյուղերը, որոնցից մեկը այժմ գտնվում է Արցախի Քաշաթաղի շրջանում, Դիռի լեռան ստորոտում և առայժմ անմարդաբնակ է, իսկ մյուսը՝ Իրանի մասում, բնակեցված է:[7]

Այժմ կամրջից ոչ հեռու մեծ ջրամբար է կառուցվել:[8] Մայր Արաքսն այս մասում հոսում է բլրակներով սեղմված կիրճով: «Կամուրջներ չհանդուրժող գետը» այստեղ ևս կարողացել է կործանել[9] դեռևս 5-7-րդ դարում կառուցված 11 թաղերից[10] կազմված սրբատաշ ու կոփածո քարով, կրաշաղախով կերտված կամուրջը:[11] Այն տարբեր ժամանակներում վերակառուցվել է և ծառայել մարդուն: Նշված կամրջից մոտ 800մ ներքև ավելի ուշ՝ 17-րդ դարում, կառուցվել է 15 թաղերից կազմված, մոտ 150մ երկարությամբ և 7մ լայնությամբ մեկ այլ կամուրջ, որի համար որպես շինաքար օգտագործվել է ավելի փոքր չափերի քարեր և թրծված աղյուս: Ծովի մակերևույթից մոտ 250 մ բարձրությամբ տարածքում ձմեռը շատ կարճ է տևում, և այստեղ մայիսի վերջին խոտն ամբողջությամբ չորանում և դեղնում է: Բնական է՝տարածքը հարմար է երթևեկության համար, և այստեղով է եղել հիմնական կապը Արցախի և Իրանի միջև: Տարածքը կոչվել է նաև Դրունք Հայոց: Լեռնանցքը Իրանի այժմյան Ահար բնակավայրից հյուսիս է: XIII դ.պարսիկ աշխարհագիր Զաքարիա Ղազվինին նշում է Դրունք Հայոց:[12] Այստեղով է անցել Պարսկաստանից Արաքսի ձախ ափին

---

[1] Այն մասին, որ Խուդափերինի կամուրջների հյուսիսային ափը ընդգրկվել է պատմական Սյունիքի տարածքի մեջ, հիշատակում է Ս. Օրբելյանը իր պատմության ԾԷ գլխում՝ «Հայոց կաթողիկոս տեր Սարգսի շրջաբերական՝ գրությունը Սյունիքի ամբողջ թեմին» նշելով Սյունիքի սահմանները. «Առանձնացվում է նաև Աղվանքի սահմանը՝ Ռմբաձորը (Ռոմբիձոր), Ծարգավառը, Աղահեճը, որը հատում է Աղավնո գետը, մինչև Քարավազի կամուրջը, և Հաբանդ գավառը, մինչև Երնջակի սահմանի Բստի ձորը՝ գրավված գողթնեցիների կողմից, նաև Վանանդնու Գողթը ամբողջովին, որոնք թեպետ և եպիսկոպոս ունեն, և սահմանափակ տեղերի համար էլ դեռ կար, բայց ենթարկվում էր Սյունիքին» /Տե՛ս Ս. Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986թ., էջ 263/:

[2] Գրականության մեջ առավելապես տարածված է պարսկական անունը:

[3] /Տե՛ս քարտեզը http://mapcarta.com/25784236/Map/:

[4] Այս մասին կարելի է տեսնել T.Həsənov. Azərbaycan ərazilərinin Ermənistan tərəfindən işğalının ağır sosial-iqtisadi nəticələri. Baki, 2002 /այս աշխատանքում ստուգաբանական փորձ կա Խուդափերինի վերաբերյալ/:.

[5] Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1837թ., էջ 966:

[6] Ք. Օհանյանը, նկարագրելով կամրջի՝ քարվածքի վրա կանգնած լինելը, այսպես է բացատրում. «Ղարաբաղում «քարուածք» են ասում մի շարք քարեր, որոնք գետի լայնութեամբ միմեանցից մօտիկ զետեղուած լինելով բնութիւնից, թոյլ են տալիս առանց թրջուելու անցնել գետը»: /Տե՛ս «Մուրճ», թիվ 1, 1903թ., Թիֆլիս, էջ 62/:

[7] Մյուս մասը համապատասխանում է պատմական Հայաստանի Փայտակարան նահանգին: Ռաֆֆին «Խաչագողի հիշատակարան» գրքում նշում է Խուդափերինի աղոսկական կողմի մասին. «Ղարաղաղ պատմական Հայաստանի Փայտակարան նահանգն է. գտնվում է Ղարաբաղի հանրա՝ Երասխ գետի մուտ ափում: Չայաբերանցինների առջամանքից առաջ երկրի աղգաբնակչության մեծամասնությունը կազմել են հայերը, սակայն վերջիններիս դաժան հաղստահաղության հետևանքով տեղաբնիկները գաղթել են Ղարաբաղ և Թավրիզ«: /Տե՛ս նույնանուն գրքի չորրորդ մասում, Ա/:

[8] Դեռևս ջրամբարի կառուցման շրջանում Ադրբեջանի կառավարության օժանդակությամբ կազմակերպվեց «Xudafərini xilas edək» «Փրկենք Խուդափերինը» ֆորումը, որը դիմել էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի պատմական հուշարձանների պահպանման վարչությանը դատապարտելով Իրանին և Հայաստանին Խուդափերինի «ադրբեջանական» մշակութային կոթողը ոչնչացնելու մեղադրանքով: Սակայն այսօր էլ Խուդափերինի երկու կամուրջներն էլ կան, և ջրամբարը որևէ կերպ չի սպառնում նրան:

[9] Կարծիք կա, որ կամուրջը՝կործանել է Իբրահիմ խանը, որպեսզի կանխի պարսկական ներխուժումը դեպի Արաքսի հյուսիսային մասերը՝ Ղարաբաղի խանություն:

[10] Ս.Կարապետյան, «Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում», Ե., 1999թ., էջ 242: Որոշ հեղինակներ նշում են թաղերի տարբեր թվեր՝ 9, 12:

[11] Բնավոր զրույցներ կան, որ կամուրջն ավելի հին է և կառուցվել է Ալ. Մակեդոնացու օրոք: Իհարկե, որևէ տեղեկություն չկա հայկական աղբյուրներում կամուրջի կառուցման ժամանակագրության մասին, բայց որ այն եղել է շատ կարևոր ու՝ այդ տարածքի համար միակը, դրա մասին նշում է նաև Ռաֆֆին. «...այդ կողմից միակ անցքն է Երասխ գետիզ»: /Տե՛ս Ռաֆֆի, Խամսայի Մելիքութիւններեր, Թբիլիսի, 1882թ., էջ 355/:

[12] Դրունք Հայոց-ը Զաքարիա Ղազվինին նույն է «Արմենիայի անցք/դուռ»: «Դրունք»-ը հայերենի «դուռ» բառն է, որի «ղանակի ուղղանկան կազմում է ը-ով, միայն հիմքանազմ ն-ից առաջ ը-ն չի գրվում, դառնում է շեշտաւոր ու»: /Տե՛ս Վ. Առաքելյան, Գրաբարի քերականութիւն, Ե., 201թ., էջ 69/:

գտնվող Սյունիք աշխարհի մյուս՝ Բաղք կամ Քաշունիք գավառի **Նակորզան** քաղաքը[1] տանող առևտրական ճանապարհը:[2]

Հայագիտական ուսումնասիրությունների շրջանակում հնարավորություն եղավ այցելել Խուդափերին, տեսնել կամուրջները, որոշ չափումներ կատարել, նկարահանել և զննել տեղավայրերը:[3] Ուսումնասիրություններն իրականացնելու համար աջակցեցին մեր և Իրանի սահմանապահները: Ոլորապտույտ ճանապարհը երկար չէր: Արդեն կառուցված ջրամբարում պղտոր Արաքսը մաքրվում է, զուլալ ու վճիտ ջուրը թափվում է ցած ու կոհակ-կոհակ շարունակում ճանապարհը՝ անցնելով թաղակապ կամրջի պահպանված 4 կամարների միջով ու հասնում ներքին կամրջին[4], որը կանգուն է և այսօր էլ հնարավոր է անցնել նրանով, բայց մյուս ափն արդեն Իրանինն է:[5]

Հայ մատենագրության մեջ Քարավազին կամ Խուդափերինին առաջինը կարծես անդրադարձել է Ս. Օրբելյանը, բայց կամրջի ամբողջական նկարագրությունը հանդիպում է հետագայում: Այսպես՝ Մակար Բարխուդարյանը, «Արցախ» գրքում անդրադառնալով Խուդափերինին, գրում է. «Ամբողջ հինգ մղոն է Ջաբրայէլից մինչև կամուրջս, որ շինուած է Երասխ գետ ի վերայ: Գետս, որ ընկած է Դիռի երկու սարերի մէջ, հետզհետէ դարերի ընթացքում կտրած է ապառաժ սայլքարերը և խորացրած ու սեղմած իւր յատակը: Երկու կամուրջ կայ այստեղ՝ Վերին և Ներքին: Խիստ հնաշէն և համակ սրբատաշ քարով շինուած է Վերին կամուրջն, որ ունի ինն աչք, որոց ոտքերն հաստատուած են բնութենաստեղծ վէմ քարեր ի վերայ: Աչքերի կամարներից կանգուն են չորսն և քանդուած՝ հինգն: Իսկ վարի կամուրջ հիմնարկուած է նոյնպես բնական վէմ քարերի վերայ, որ ունի տասնեհինգ աչք, որոց ոտքերն շինուած են քարով և թաղերն թրծեալ աղիւսով և կրաշաղախ ցեխով: Վերջին կամրջիս ձախ կողմի դրան կանգնած են Ռուսաց սահմանապահ զինուորականներ, իսկ աջ կողմում՝Պարսից սահմանապահներն, քանզի գետս է երկու տէրությանցս այժմեան սահմանագլուխն: Խուդափիրին կամրջի հիւսիսային հանդէպ է Դիռի սարն, որի վերայ կայ աւերակ գիւղատեղի, հանգստարան և եկեղեցի, որ այժմ ուխտատեղի արած են մահմետականք և կոչում են Մազան-նանէ:[6] Շրջապարիսպ ունեցած է եկեղեցիս, բայց այժմ աւերուած է: Ասում են թէ Հին-Թաղլարի ժողովուրդն տեղափոխուած է աւերակ գիւղիցս:[7] Ղևոնդ Ալիշանը նույնպես անդրադարձել է պատմական այս կամրջին՝ գրելով. «Խյուտաֆերիյնի մոտ (այս գյուղն այժմ ավերակ է),[8] Առանի և Ատրպատականի միջև կա անվանի մի կամուրջ՝ 12 հաստ կառույց կամարներով, որոնցից երեքը քանդել է Ղարաբաղի Իբրահիմ խանը, որոնք հետո նորոգել են ռուսները: Կամուրջի մոտ են գտնվում Առաքելիս հայոց գյուղն ու մաքրատունը: Կամուրջի հզոր կառուցվածքը և նրա վրայով պատվական քարավանների անցնելը կամուրջին շնորհել են պարսից այդ անունը, որը շանակում է Աստվածաստեղծ:[9] Ք. Օհանյանը «Մուրճ»-ում հետաքրքրական մի տեղեկություն է ներկայացնում կամրջի հնության վերաբերյալ. «2500 տարի սրանից առաջ Զրադաշտը մոտակայ սարերից իջնելով՝ մտնում է Պարտաւ քաղաքը և Պարսկաստան գնալու համար անցնում է Երասխ գետից՝ առանց թրջելու իր ոտները...»:[10]

Հայ գրականության և բանահյուսության մեջ նույնպես կան հիշատակումների: Այսպես՝ կամրջի մասին հիշատակվում է նաև «Մխիթար Սպարապետ» վեպում: Հեղինակը պատմում է, որ 1730 թ. Մեղրիից վերադառնալով, որտեղ հերթական հաղթանակ էր տարել թուրքերի դեմ, Մխիթարը կանգ է առնում Խնձորեսկում, Մելիք Բարխուդարի ապարանքում, որտեղ էլ դավադրաբար սպանվում է նույն մելիք Բարխուդարի որդու, Միհրանի և մի քանի դավաճանների կողմից: Գլխատելով Մխիթարի դիակը, դավաճանները սլանում են Թավրիզ, որտեղ այդ ժամանակ գտնվում էր Աբդուլլահ փաշան (գրավել էր գրեթե ամբողջ Պարսկաստանը): Դավաճանների հետևից Թավրիզ է գնում նաև Գոհարը, փրկելու սիրած տղամարդու գլուխը խայտառակությունից (Աբդուլլահը շատ մեծ գլխագին էր նշանակել

---

[1] Նակորզանը Տաթևի հարկացուցակում նշված է 20 միավոր հարկաչափով և եղել է առևտրական ճանապարհի վրա: Ս. Օրբելյանը նրա տեղը նշում է «Աղավնո գետի պտույտներում» /տե՛ս Ս. Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 117/:

[2] Հայկական Սովետական Հանրագիտարան, էջ 457:

[3] Արշավախումբը ղեկավարում էր արցախցի պատմաբան, պ.գ.թ., դոցենտ Լ. Հովհաննիսյանը:

[4] Այն անվանում են նաև Եկատերինայի կամուրջ, քանի որ 18-րդ դարում վերանորոգվել է Եկատերինա 2-րդ կայսրուհու օրոք: Ռուս-պարսկական 2-րդ պատերազմի ժամանակ՝ 1826թ., պարսից թագաժառանգ Աբաս-Միրզայի 60000-անոց բանակը այստեղով է անցել ու հարձակվել Շուշիի վրա:

[5] Ըստ որոշ աղբյուրների՝ 12-13-րդ դարերի կառույց է: 16-րդ դարում հիշատակվում է [օսմանյան պետության] սահմանների մատնանշման առիթով. «Եվ մինչև ի Խուդաֆրին»: 1805 թվականին տեղի ունեցած դեպքերի առնչությամբ 1817 թվականին գերմանացի դիվանագետ Մորից ֆոն Կոցեբուն նշել է. «... գեներալ Ցիցիանովը տասներկու հազար մարդոց հետ և մի քանի թնդանոթներով գնաց Աբբաս Միրզայի դեմ և կատարյալ պարտության մատնեց նրան: Թագավորը՝ Ֆաթ Ալի շահը, որ մի մեծ բանակի գլուխ անցած գտնվում էր Արաքսի այս կողմը, ծայրահեղ շտապանքով նահանջեց գետի մյուս ափը, և նույնիսկ քանդեց Հուդերապինի (Huderapin) գեղեցիկ կամուրջը, որ տակավին ավերակ է»: 1890-ականների սկզբներին նշվել է. «...վարի կամուրջն հիմնարկուած է նոյնպէս բնականին վէմ քարերի վերայ, որ ունի տասնհինգ աչք, որոնց ոտքերն շինուած են քարով և թաղերն՝ թրծեալ աղիւսով և կրաշաղախ ցեխով»: 1975-1977 թվականների ընթացքում իրականացված ուսումնասիրություններից երևում է, որ կամրջի 15 թռիչքներից ամենաերկարն ունեցել է 8,80 մ երկարություն, իսկ ամենակարճը՝ 5,80 մ: Այս մասին տե՛ս Արցախի կամուրջներ, Սամվել Կարապետյան, Ե., 2009:

[6] Այս սրբավայրը համապատասխանում է Ս. Օրբելյանի՝ նշած Գյուտի և Քրիստոսասերի կառուցած սրբավայրին, որին անվանել են «երկրորդ Երուսաղեմ», իսկ բարձունքը՝ «Գողգոթան»: Ահա այսպես է նկարագրում Ս. Օրբելյանը. «Տեղը /սրբավայրի/ փոխում են ժայռից վեր, հարթում քարքարոտ տեղերը, շինում են երեք եկեղեցի՝ սուրբ երրորդության անունով: Եվ սրա համբավը տարածվում է ամբողջ աշխարհում» /Ս. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 116/:

[7] Մ. Բարխուդարյան «Արցախ», Բաքու., 1895թ., վերահրատարակված՝ Ստեփանակերտ, 1995թ. և Երևան, 1996թ., էջ 41:

[8] Հայկական Խուդափերինի ավերումից հետո թյուրքալեզու ատրպատականցիներ են բնակվել մինչև Արցախյան գոյամարտը:

[9] Ղ. Ալիշան, «Արցախ», Ե., 1993թ., էջ 121:

[10] «Մուրճ», թիվ 1, 1903թ., Թիֆլիս, էջ 63:

Մխիթարի գլխի համար): Աբդուլլահը, հարգելով Գոհարի զգացմունքը և քաջությունը, նրան է հանձնում Մխիթարի գլուխը և դավաճաններին: Գոհարը վերադարձի ճանապարհին, Արաքսի Խուդափերին կամրջի մի մի ծանր քար է կապել տալիս դավաճան եղբոր և մյուս դավաճանների վզներից և գցում գետը: Հետաքրքիր է, Հովհ. Շիրազի հետևյալ տողը «Սիամանթո և Խաջեզարե» բանահյուսական հիմք ունեցող պոեմում. «Հասավ-անցավ մայր Արաքսն էլ՝ Խուդափերին կամուրջով…»: Ս. Օրբելյանի նշած Քարավազի՝ Սևսարի շրջակայքում կառուցված և «երկրորդ Երուսաղեմ» կոչված սրբավայրի մասին բանավոր հիշատակություններ գրեթե չեն պահպանվել: Ադրբեջանական բանահյուսության մեջ, սակայն, պահպանվել է մի ասույթ /»Քամար գոշմար»՝ «Վազող կամար»/[1] այստեղի սրբի զորության մասին, որի քարերը տեխափոխելու և Արաքսը նետելու պատճառով սուրբը պատժել է:[2] Ահա Ս. Օրբելյանը նույն պատմության մասին վկայում է. «Ապա Բարգուշատում մեռնում են Վաչագան և Աբկ Աբաս թագավորները: Եվ Վռամշապուհի թուռն այդ լսելով բազմաթիվ զորքով գալիս ու առավոտյան հանկարծակի մտնում է վանքը, կոտորում կրոնավորներին: Ավազագուլներին կապում են, եկեղեցին քանդում, հիմնահատակ կործանում, քարն էլ թափում են գետը»: /Տե՛ս նկարախուրմ 1/[3]

Խուդափերինի կամ Քարավազի կամուրջը ունեցել է առևտրատնտեսական կարևոր նշանակություն: Պատմական Սյունիքի գավառները և Արցախը հարավի հետ հիմնականում կապ են ունեցել այս կամուրջներով:[4]

Խուդափերինի կամ Քարավազի պատմական տարածքը:

Խուդափերինի շուրջ հիմնականում բնակություն են ունեցել հայերը և պարսկալեզու ժողովրդները: Այսպես՝ դեռևս Խամսայի մելիքությունների շրջանում Խուդափերինի հյուսիսային մասում հիմնականում հայեր էին բնակվում, իսկ հարավային մասում՝Արևելյան Ատրպատականի Հասանուի շրջանում, որ Արևմտյան և Արևելյան Դիզմարի շրջանների հետ միասին կազմում էին մերձերասխյան Արասբարան (պրս. Arasbārān) բնապատմական գոտին, որը նախկինում հայտնի էր որպես առանձին վարչատարածքային միավոր՝ Ղարադաղի (թյուրք.–պրս. Qaradāğ) կամ Ղարաջադաղի (թյուրք.–պրս. Qarajadāğ) մահալ,[5] բնակչությունը պատմականորեն բաղկացած էր հայերից և իրանալեզու ատրպատականցիներից: Սկսած 1828թ. Ղարադաղի և Դիզակի հայկական գյուղերի բնակչությունը Թուրքմենչայի պայմանագրով հիմնականում տեղափոխվեց Ռուսական կայսրությանը անցած այսրկովկասյան տարածքներ, իսկ 1950–ականներից՝ նաև Թեհրան և Թավրիզ, ինչի հետևանքով արդեն Խորհրդային միության օրոք մշտական հայկական բնակչություն չկար: Այս տարածք թյուրքալեզու ցեղային միավորները սկսել են մուտք գործել դեռևս 15–16–րդ դարերից:[6] Տեղանքի՝ օսմանցիներից գրավված հայկական տարածք լինելու մասին նշում է նաև Դավրիժեցին՝ «…մինչև Խադաֆրին ենթարկել էին իրենց իշխանությանը»:[7] Ստ. Օրբելյանը բավականին տեղ է հատկացնում այս տարածքի նկարագրությանը իր «Պատմության» ԻԱ գլխում: Հստակորեն նշում է, որ Սևսարի այդ հատվածը, կամ Քարավազ վայրը ընդգրկվել է պատմական Սյունիքի մեջ. «Աբլ Աբասն ու Վաչագանը, Սյունիքի իշխանին խնդրելով, վանքի համար սահմաններ առանձնացրին: Տվեցին հինգ՝ այսպիսի սահմաններով՝ սկսած Սևասարից մինչև Բոթերոթեր, դեպի վար, որտեղ թզենու գետն է, մինչև ուրկանոցի այգիները, այնտեղից մինչև Աղավնո գետի պտույտները, Նակորզանի եկեղեցու դիմաց, մինչև աստծո տունը»:[8] Գյուտը՝ Վասակը, աշխարհից մեկուսանալով, բնակություն էր հաստատել Երասխի եզրին՝ «Քարավազ կոչված տեղում»:[9] Նա այստեղ խաչով կնքում է պարսից թագավորի եղբորորդուն՝ Աբլ Աբասին, որին փեսա դարձրեց Աղվանքի արքա Վաչագանին. «Գետի ափին բերդ կառուցեցին, որ նա այնտեղ բնակվելով պաշտպանի կրոնավորներին: Ապա Աբլ Աբասն ու Վաչագանը, Սյունիքի իշխանին խնդրելով, վանքի համար սահմաններ առանձնացրին»:[10] Պարզ է դառնում, որ տարածքը գտնվել է Սյունիքի իշխանության ներքո: Խուդափերինի շրջակայքի մասին բազմաթիվ տեղեկություններից բացի Ս. Օրբելյանը նշում է

---

[1] «Վազող կամար»
Մեկ էլ Գումլախի ու Խուդաֆերինի արանքում մի սուրբ(ավայր) կար, Քյամար Գոշմար // էին ասում: Հետո էնտեղ Խուդաֆերինում էլ մի մարդ կար: Այդ սրբավայրի բակի քարակույտը այդ մարդուն տեղափոխել տալով՝ Արաքսն էր նետել: Սահմանն ացնկացնելիս սահմանին էր ընկել: Մի քիչ էլ գժի նման Գարաշ անունով մի մարդու նետել տվեցին Արաքսը»:
«KƏMƏR QOŞMAR»
Исследуя многообразные данные всех наук, философия дает определенное истолкование и осмысление. Вопрос о природе (сущности) человека, его происхождении и назначении, месте человека в мире – одна из основных проблем в истории философской мысли. Необходимость философского, мировоззренческого осмысления проблемы человека несомненна так же, как несомненно, что такое осмысление невозможно в рамках конкретных обществоведческих и общественно-научных дисциплин, раскрывающих лишь те или иные стороны того сложного единства, каким является существование и деятельность человека. Философия задает наиболее методологические ориентиры исследования человека в его развитии, равно важные как для его целостного осмысления, так и для анализа его конкретных аспектов. Спорен вопрос о том, насколько же философия способна стать той единой интегрирующей наукой о человеке, необходимость которой все острее ощущается в наши дни. Сомнения в этой ее способности порождаются неизбежными

гносеологическими изъянами того обобщенного образа человека, “человека вообще”, которым и часто оперирует философия.

У философии же есть своя собственная область “человековедения”, к которой относятся, в частности, процессы познания, мораль и этика, проблемы смысла бытия и самовыявления человеческой сущности. Философия с древнейших времен ставила перед человеком задачу: “познай самого себя”, и предметом размышлений был прежде всего человек – его психология, характер, поведение, в различных жизненных обстоятельствах. Философия всегда была близка художественной литературе, она начиналась в Греции с поэм Парменида и Эмпедокла, диалогов Платона, писем Эпикура и Сенеки. Эти связи не прерывались и в дальнейшем: Августин, Данте, Эразм, Вольтер, Лихтенберг, романтики и т.д. вплоть до произведений Соловьева и Ницше. Французский экзистенциализм является наследником этой традиции – все наиболее известные философы-экзистенциалисты были одновременно крупными писателями, психологами, драматургами, публицистами.

Экзистенциализм, или философия существования (existentia— существование), иррационалистическое направление современной философии, возникшее накануне 1-ой мировой войны в России (Л. Шестов, Н. Бердяев), в Германии после первой мировой войны (М. Хайдеггер, К. Ясперс, Г. Марсель, М. Бубер) и в период второй мировой войны во Франции (Ж. П. Сартр, Мерло-Понти, А.Камю, де Бовуар). Экзистенциализм получил распространение и в других европейских странах.

Экзистенциализм не является академической доктриной, его основная тема – человеческое существование, судьба личности в современном мире, вера и неверие, утрата и обретение смысла жизни, близкая любому духовному художнику, писателю, поэтому, с одной стороны, делает это направление популярным среди художественной интеллигенции, а с другой – побуждает самих экзистенциалистов обращаться к языку искусства (Сартр, Камю, Марсель).

Экзистенциализм как философское направление носит неоднородный характер. Различают экзистенциализм религиозный (Ясперс, Марсель, Бердяев, Шестов, Бубер) и атеистический (Сартр, Камю, Мерло – Понти, Хайдеггер). Однако определение “атеистический” по отношению к экзистенциализму несколько условно, т.е. признание того, что Бог умер, сопровождается невозможностью и абсурдности жизни без Бога. Как справедливо заметил А. Камю, “вопреки мнению ее христианских критиков, Ницше не вынашивал планов убийства Бога, он нашел Его мертвым в душе своей эпохи”[1].

Своими предшественниками экзистенциалисты считают Паскаля, Кьеркегора, Унамуно, Достоевского и Ницше. На экзистенциализм оказали большое влияние философия жизни и феноменология Гуссерля. Экзистенциализм пытается возродить антологию, в противоположность методологизму и гносеологизму, распространенным и в философии начала XX века. Как и философия жизни экзистенциализм хочет понять бытие нечто непосредственное и преодолеть интеллектуализм как традиционный рационалистической философии, так и науки. Бытие, согласно экзистенциализму, не есть ни эмпирическая реальность, данная нам во внешнем восприятии, ни рациональная конструкция, предполагаемая научным мышлением, ни “умопостигаемая сущность” идеалистической философии. Бытие должно быть постигнуто интуитивно, как отмечал Хайдеггер: “бытие нельзя видеть, ему можно только внимать”[2]. Но в отличие от философии жизни, выделившей в качестве исходной реальности переживание, экзистенциализм стремится преодолеть психологизм и раскрыть онтологический смысл переживания, который выступает как направленность на нечто трансцендентное самому переживанию. Главное определение бытия, как оно открыто нам, т.е. нашего собственного бытия, именуемого экзистенцией, есть таким образом, его незамкнутость, открытость трансценденции. Онтологической предпосылкой трансцендирования является конечность экзистенции, ее смертность. В силу своей конечности, экзистенция является временной, и ее временность существования отличается от объективного времени как чистого количества, безразличного по отношению к заполняющему ему содержанию. Экзистенциализм отличает подлинную, т.е. экзистенциальную временность (она же историчность) от физического времени, которое произведено от первой. [3] Экзистенциалисты подчеркивают в феномене времени определяющее значение будущего и рассматривают его в связи с такими экзистенциями, как “решимость”, “проект”, “надежда”, отмечая тем самым личностно-исторический(а не безлично-космический характер) времени и утверждая его связь с человеческой деятельностью, исканием, напряжением, ожиданием. Историчность человеческого существования, согласно экзистенциализму, в том, что оно всегда находит себя в определенной ситуации, в которую оно “заброшено” и с которой вынуждено считаться. Принадлежность к определенному народу, сословию, наличие у индивида тех или иных биологических, психологических и других качеств, все это эмпирическое выражение изначально ситуационного характера экзистенции; - того, что она есть “бытие в мире”. Временность, историчность и “ситуационность” экзистенции – модусы ее конечности.

Другим важнейшим определением экзистенции является трансцендирование, т.е. выход за свои пределы. Трасцендентное и сам акт трансцендирования понимается различными представителями экзистенциализма неодинаково. С точки зрения религиозного экзистенциализма, трасцендентное – это Бог. Согласно Сартру и Камю, трансценденция есть ничто, выступающее как глубочайшая тайна экзистенции. Если у Ясперса, Марселя, и позднего Хайдеггера, признающих реальность трансцендентного, преобладает момент символический, и даже мифо-поэтический (у Хайдеггера), поскольку трансцендентое невозможно рационально познать, а можно лишь намекнуть на него, то учение Сартра и Камю, ставящих своей задачей раскрыть иллюзорность трансцедентного, носит критический и даже нигилистический характер.

Социальный смысл учения об экзистенции и трансценденции раскрывается в экзистенциалистических (позициях) концепциях личности и свободы[3].

Личность, согласно экзистенциализму, есть самоцель, коллектив, средство, обеспечивающее возможность материального существования составляющих его индивидов.

Общество призвано, согласно экзистенциализму, обеспечивать возможность свободного духовного развития каждой личности, гарантируя ей правовой порядок, ограждающий личность от посягательств на ее свободу. Но роль общества при этом остается в сущности отрицательной: свобода, которую она может предоставить индивиду – это “свобода от” – свобода экономическая, политическая и т.п.. Подлинная же свобода, “свобода для” начинается по ту сторону социальной

[1] Камю. А. Бунтующий человек, М.:Политиздат, 1990, с.15
[2] Хайдеггер М. «Слова Ницше «Бог мертв»», Вопросы философии 1990 № 7, с.19
[3] Марсель Г./К.Ясперс. Переписка (1920-1963) , М.:2001, с. 19

сферы, в мире духовной жизни личности, где индивиды сталкиваются как экзистенции. Экзистенциализм различает в человеке как бы несколько слоев: природный (биолого-физический и психологический); социальный; духовный и экзистенциальный (который не поддается научному познанию) и может быть лишь освещен или "прояснен" философией: в сущности, так отмечал Ясперс. У Ясперса, во французском и русском экзистенциализме стоит проблема человеческой свободы. Экзистенциализм отвергает как рационалистически-просветительскую традицию, сводящую свободу к познанию необходимости, так и гуманистически-натуралистическую, для которой свобода состоит в раскрытии природных задатков человека, раскрепощении его сущностных сил. Свобода, согласно экзистенциализму, должна быть понята исходя из экзистенции. Поскольку же структура экзистенции выражается в "направленности на" в трансцендировании, то понимание свободы различными представителями экзистенциализма определяется их трактовкой трансценденции. Согласно Марселю и Ясперсу, свободу можно обрести лишь в Боге. Согласно Сартру, у которого трансценденция – ничто, понятое нигилистически, свобода есть отрицательность по отношению к бытию, которое как эмпирически сущее.

Человек свободен в том смысле, что он сам "проектирует", создает сам себя, выбирает себя, не определяясь ничем, кроме собственной субъективности, сущности которой – в полной независимости от чего-то бы ни было[1]. Человек одинок и лишен всякого онтологического "основания". Учение Сартра о свободе служит выражением позиции крайнего индивидуализма. Свобода предстает перед экзистенциализмом как тяжелое бремя, которое должен нести человек, поскольку он личность. Он может отказаться от своей свободы, перестать быть самим собой, стать "как все", но только ценой отказа от себя как личности. Быть свободным – значит для экзистенциалистов не поступать и не думать так, как поступают и думают все. Поскольку, согласно экзистенциализму, быть свободным, быть экзистенцией, значит быть самим собой, поскольку по Сартру, человек "обречен быть свободным"[2]. Мир, в который при этом погружается человек, носит у Хайдеггера название"[3] "Это безличный мир, в котором все анонимно, в котором нет субъекта действия, в котором все – "другие", и человек, даже по отношению к самому себе является "другим": это мир, в котором никто ничего не решает, а потому и не несет ни за что ответственности[4]. У Бердяева этот мир носит название "мира объективации", признаки которого поглощение индивидуального, личного общим, безличным, господство необходимости. А.Л.Андреев осуждает Бердяева за отказ от марксистского понимания человека и переход к христианскому экзистенциализму и упрекает его в том, что он хотя и провозглашает конкретную индивидуальность центром философии, но на деле рассматривает личность как метафизическую конструкцию, вне обыденных для человека, его повседневных нужд и забот[5] . Философия Бердяева, как и всякая философия обращена на идеальный смысл сущего и не занимается эмпирическим человеком. По мнению Бердяева, "как раз обыденный человек, с его повседневными нуждами, обладает наибольшей абстрактностью и безличностью. Человек, включенный в какие-либо условия (в социальное бытие и т.д.), наименее свободен. Свобода человека в творчестве, в духе, а не в повседневных нуждах"[6] . В конечном счете смысл всякого индивидуального существования, если оно претендует на статус конкретной личности, не в выяснении "обстоятельств времени и места, а именно установлении "моего предназначения в университете""[7] Общение индивидов, осуществляемое в сфере объективности, не является подлинным, оно лишь подчеркивает одиночество каждого. Согласно Камю перед лицом "ничто, которое делает человеческую жизнь бессмысленной, прорыв одного индивида к другому, подлинное общение между ними невозможно"[8]

И Сартр, и Камю видят фальш и ханжество во всех формах общения индивидов, освещенных традиционной религией и нравственностью: в любви, в дружбе и проч. Характерное для Сартра стремление разоблачения искаженных, превращенных форм сознания ("дурной веры") оборачивается требованием принять реальность сознания, разобщенного с другими и с самим собой.

Таким образом единственный способ подлинного общения, который принимает Камю,--это единение индивидов в бунте против "абсурдного мира", против конечности, смутности, несовершенства, бессмысленности человеческого бытия.

Источники

1. Камю. А. Бунтующий человек
2. Хайдеггер М. "О сущности истины", progvek.com>classic>Heidegger
3. Хайдеггер М. Слова Ницше "Бог мертв", Вопросы философии 1990 N7
4. Марсель Г./К.Ясперс. Переписка (1920-1963)
5. Кузнецов В.Н. "Ж.П. Сартр и экзистенциализм", М., 1970, стр. 51
6. Сартр Ж.П. "Бытие и ничто. Опыт феноменологической антологии"
7. Хайдеггер М. "Ницше и христианство", chaikaphil.narod.ru/seminars/quest13.doc
8. Вопр. Философии N9 (1990)
9. Бердяев Н.А. "Самопознание"
10. Там же
11. Там же
12. Камю А. "Бунтующий человек"

[1] Кузнецов В.Н. "Ж.П. Сартр и экзистенциализм", с.13
[2] Сартр Ж.П. «Бытие и ничто. Опыт феноменологической онтологии», М.: 2000, с.21
[3] Хайдеггер М. «Ницше и христианство», М 1994
[4] Вопр. Философии №9 (1990), с.15
[5] Бердяев Н.А. «Самопознание», М.: 1990, с.33
[6] Бердяев Н.А. «Самопознание», М.: 1990, с.14.
[7] Там же
[8] Камю А. "Бунтующий человек", М. 1990 , с.17

ՀՏԴ 371.31:809.198.1 Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա

Արմինե Արզումանյան,
Արցախի պետական համալսարան, բանասիրական ֆակուլտետ
E-mail: armivarzumanyan@gmail.com

ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Հոդվածում դիտարկվում են տարրական դասարաններում խոսքի զարգացման գործընթացի որոշակի առանձնահատկություններ: Երեխաների խոսքի զարգացումը ուսուցչի հիմնական աշխատանքն է, մասնավորապես լեզվի կանոնների յուրացումը, որի շնորհիվ նրանք կկարողանան բանավոր և գրավոր ձևով արտահայտել իրենց մտքերը՝ օգտագործելով համապատասխան լեզվական միջոցներ ըստ խոսքային հաղորդակցման նպատակի, բովանդակության և պայմանների:

Այբբենարանն իր բովանդակությամբ լուծում է մայրենիի առաջին դասարանի ծրագրով նախատեսվող կրթադաստիարակչական խնդիրները:

Բանալի բառեր. գրաճանաչություն, բառապաշար, խոսքի զարգացման խնդիրներ, խոսքին ներկայացվող պահանջներ, իմացական հմտություններ, խոսքի ճշգրտություն, տառուսուցում, գրուսուցում, լեզվի ուսուցում, վերլուծական-համադրական մեթոդաբանություն:

Armine Arzumanyan,
Artsakh State University, Faculty of Philology

PROBLEMS OF SPEECH DEVELOPMENT ON THE BASIS OF RESEARCH OF THE PRIMER BOOK

The article reviews certain peculiarities of speech development in primary school. The speech development in primary school is the principle task of the teacher, which consists in mastering linguistic rules which would enable the learners to express their thoughts both orally and in writing by using appropriate language means depending on purpose, content and conditions of speech communication. The content of the primer book of the native language gives a solution to educational and pedagogical problems required by the program of the first grade of primary school.

Key-words: literacy, lexicon, speech development problems, requirements for speech standard, cognitive skills, speech accuracy, teaching writing, teaching the alphabet, language teaching, analytic-synthetic methodology.

Армине Арзуманян
Арцахский государственный университет, Филологический факультет

ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ РЕЧИ НА ОСНОВЕ ИЗУЧЕНИИ БУКВАРЯ

В статье рассматриваются некоторые особенности процесса развития речи в начальной школе. Развитие речи учащихся основная задача учителя, которая, в частности, заключается в усвоении языковых правил, с помощью которого они могут выражать свои мысли в устном и письменном виде. При этом наблюдается вариативность языковых средств в зависимости от цели, содержания и условий речевой коммуникации. В самом содержании букваря родного языка заключено решение воспитательно-образовательных вопросов, обозначенных программой первого класса начальной школы.

Ключевые слова: грамотность, словарный запас, проблемы развития речи, норма речи, когнитивные навыки, правильность речи, обучение письму, обучение алфавиту, обучение языку, аналитико-синтетическая методология.

Տարրական դպրոցի առաջնակարգ խնդիրներից մեկը աշակերտների ճիշտ խոսքի ձևավորումն է: Երեխայի խոսքի զարգացումը ամբողջական և տարաբնույթ գործընթաց է, որը ներառում է մի շարք հոգեբանական գործընթացներ և իր հերթին ազդեցություն է ունենում մտածողության ու ճանաչողական գործընթացների (հիշողություն, ուշադրություն, զգայական ընկալում) և իմացության վրա ընդհանրապես:[1] Խոսքի զարգացումը խոսքային կարողությունների ձևավորումն է՝ խոսքային իրադրությունում իրազեկվածությունը, որով պարզվում է, թե ում է ուղղված, ինչ համար է և ինչի մասին է գրավոր կամ բանավոր խոսքը, արտահայտությունների ծրագրավորումը, որով գիտակցվում է, թե ինչպես պետք է խոսել (համառոտ կամ մանրամասն, զգացմունքային կամ գործնական), ինչ սկզբունքով մեկնաբանություններ կատարել:

Ուսուցման և կրթության որակը մեծապես կախված է խոսքի զարգացման խնդիրների հաջող իրականացումից: Ըստ այդմ՝ կան աշակերտի խոսքին ներկայացվող մի շարք պահանջներ: Դրանցից առաջինը խոսքի հարուստ բովանդակությունն է: Աշակերտը կարող է խոսել կամ գրել միայն այն մասին, ինչը ինքը գիտի: Սակայն նրա խոսքը հագեցած, հետաքրքիր և օգտակար կարող է լինել իր և ուրիշների համար այն դեպքում, երբ այն կառուցված է փաստերի իմացության, դիտարկումների միջոցով, հաղորդում է գիտակցված մտքեր և անկեղծ զգացմունքներ:

Զրույցների, պատմությունների, շարադրությունների բովանդակությունը տրվում է գրքերից, նկարներից, էքսկուրսիաներից, հատուկ զննումներից, սեփական փորձից, այսինքն՝ աշակերտների շրջակա միջավայրից: Ուսուցիչը օգնում է նրանց թեմային համապատասխան նյութեր ընտրել: Ուսուցչի համար շատ կարևոր խնդիր է նաև աշակերտներին սովորեցնել իմաստալից խոսք կառուցել:

Աշակերտի խոսքին ներկայացվող երկրորդ պահանջը հետևողականությունն է, խոսքի ձևավորման հաջորդականությունն ու հստակությունը: Եթե աշակերտը լավ է տիրապետում նյութին, ապա բացթողումներ կամ կրկնություններ չի անում, պահպանում է տրամաբանական անցումները: Ճիշտ կառուցված խոսքը ենթադրում է եզրակացությունների հիմնավորում, ինչպես նաև ասելիքը ոչ միայն սկսելու, այլև ամբողջացնելու և ամփոփելու կարողություն:

Նշված երկու պահանջները հարաբերվում են խոսքի բովանդակությանն ու կառուցվածքին: Հաջորդը վերաբերում է խոսքի բանավոր և գրավոր ձևերի գրանցմանը:

[1] Տե՛ս Goswami, U. and Bryant, P., Children's Cognitive Development and Learning (Primary Review Research Survey 2/1a) Cambridge: University of Cambridge Faculty of Education, 2007, p13.

Խոսքի ճշգրտությունը պահպանվում է խոսողի կամ գրողի կողմից՝ իրականությանը համապատասխանող փաստերի, դիտումների, զգացմունքների ճիշտ հաղորդմամբ, ինչպես նաև դրանք ներկայացնելու համար անհրաժեշտ բառերի, բառակապակցությունների, դարձվածքների, նախադասությունների դիպուկ ընտրությամբ:[1] Խոսքի ճշգրտությունը պահանջում է լեզվական միջոցների հարստություն և բազմազանություն, բառերի, հոմանիշների ճիշտ ընտրություն, որով առավել իրական է դառնում նյութի բովանդակությունը:

Խոսքն ընթերցողի կամ ունկնդրի վրա անհրաժեշտ ազդեցություն է ունենում, երբ այն արտահայտիչ է: Խոսքի արտահայտչականությունը մտքերը հստակորեն և համոզիչ կերպով հաղորդելու, հնչերանգի միջոցով ազդեցություն գործելու, փաստերի, ինչպես նաև բառերի ու արտահայտչամիջոցների ընտրություն կատարելու, հաղորդվող նյութի տրամադրությունը ստեղծելու կարողությունն է:

Խոսքի հստակությունը նրա մատչելիությունն է այն մարդկանց համար, ում ուղղված է: Խոսքը միշտ ունի նշանակման կետ: Խոսողը կամ գրողը պետք է հաշվի առնի ունկնդրի կամ ընթերցողի ինտելեկտուալ ու հոգևոր կարողությունները: Անհիմն բարդացումը, տերմիններով ծանրաբեռնելը խանգարում են խոսքի ընկալմանը: Լեզվական միջոցների ընտրությունը կախված է խոսքային իրադրությունից ու հանգամանքներից, ինչպես, օրինակ, աշակերտների ընկերական զրույցը զգալիորեն տարբերվում է նրանց գրավոր խոսքից:

Խոսքի չափազանց կարևոր հատկանիշներից են պարզորոշ արտասանությունը, հնչյունների հստակ արտաբերումը, ուղղախոսության հատուկ կանոնների հետ համապատասխանությունը, արտահայտիչ խոսելու (նաև կարդալու) կարողությունը, առոգանությանը, դադարներին, տրամաբանական շեշտերին տիրապետելը և այլն: Խոսքային արգելքները, հատկապես որոշ հնչյունների սխալ արտասանությունը տարրական դասարանների երեխաների մոտ հաճախ են նկատվում: Ուստի խոսքի զարգացման տեխնիկան թերությունների ուղղման արտասանական հմտությունների միջոցով սերտորեն կապված է խոսքի թերապիային:

Խոսքի արտահայտչականությունն ու հստակությունը ենթադրում են նաև նրա անաղարտությունը, այսինքն՝ ավելորդաբանություններից, խոսակցական բառերից ու գրենիկաբանություններից, անհարկի օտարաբանություններից խուսափելը:

Հատուկ կարևորություն ունի դպրոցում խոսքի ճշգրտությունը, այսինքն՝ համապատասխանությունը գրական նորմերին՝ քերականական առանձնահատկությունների տարբերակում (նախադասության կառուցվածք, ձևաբանական կառույցներ), ուղղագրության և կետադրության կանոնների պահպանում՝ գրավոր խոսքի դեպքում, ուղղախոսության և առոգանության կանոնների պահպանում՝ բանավոր խոսքի դեպքում: Բոլոր այս պահանջներն առաջադրվում են տարրական դասարանների երեխաների խոսքի զարգացմանը:

Երեխաների ճիշտ խոսքը կարելի է կառուցել նշված պահանջների այս ամբողջական շարքի կատարմամբ: Զարգացնել երեխաների խոսքը՝ նշանակում է նրանց մեջ պատվաստել մի շարք հմտություններ: Անդրադառնանք աշակերտների խոսքի զարգացմանը վերաբերող հմտություններին:

Առաջինը թեման հասկանալու և մեկնաբանելու կարողությունն է, նրա ընտրությունն ու նախապատրաստումը, լեզվական միջոցների կիրառումը, թեմայի վերաբերյալ եզրահանգումներ կատարելը առանց նրա շրջանակներից դուրս գալու և նրա պատշաճ բացահայտումը՝ միևնույն ժամանակ սեփական կարծիքն արտահայտելով:

Երկրորդը նյութը ընտրելու, թեմային առնչվող կարևոր հասկացությունները երկրորդականից տարբերելու կարողությունն է: Նյութի հավաքագրումն ու ընտրությունը երբեմն երկար է տևում և հետևողական աշխատանք է պահանջում: Նյութի ընտրությունը կատարվում է ոչ միայն աշխատանքի նախապատրաստական մասում, այլ նաև ընդհանուր նկարագիր պատրաստելիս: Այս դեպքում կարևոր է առանձնացնել հիմնական գաղափարը, ընտրել ներկայացվող նյութի բաժինները և ճիշտ հաջորդականությամբ հաղորդել բովանդակությունը:

Երրորդը աշխատանքը ծրագրելու կարողությունն է՝ նախ՝ ընդհանուր գծերով (մտքում կամ բարձրաձայն), այնուհետև՝ գրի առնելով: Անհրաժեշտ է ծրագրին համապատասխանեցնել ընտրված նյութը, կազմել ինքնուրույն հաղորդում և անել մեկնաբանություններ:

Չորրորդը լեզվական միջոցներից նոր, դժվար արտասանությամբ բառերի, դարձվածքների, նախադասությունների ու տեքստերի առանձնացումն է:

Հինգերորդը ամբողջական տեքստ կազմելու կարողությունն է, որը հնարավորություն կտա ճիշտ օգտագործելով հատկացված ժամանակը, առանց էական բացթողումների, աստիճանաբար և հետևողականորեն զարգացնելու ինքնուրույն նախադասություններ կազմելու և կապակցելու հմտությունը, հետևելու արտասանությանն ու կետադրությանը, գրության մեջ պահապանելու լուսանցքներն ու կարմիր տողը, գեղագրության պահանջները:

Վեցերորդը գրավոր խոսքը զարգացնելու, սխալները ուղղելու, լրացումներ կատարելու, կրկնություններից և ավելորդ բառերից խուսափելու կարողությունն է: Այս պահանջը ներկայացվում է միայն գրավոր խոսքին, իսկ բանավոր խոսքում ուղղումներ կատարում են ուսուցիչներն ու աշակերտները:

Կապակցված տեքստի հետ կատարվող յուրաքանչյուր վարժություն ներառում է բոլոր այս հմտությունների ամբողջությունը: Հետևաբար յուրաքանչյուր դաս, որի ընթացքում աշակերտները կապակցված խոսք են կազմում, մեկնաբանություններ կատարում, վերապատմում կամ ամփոփում ընթերցածը, պետք է ունենա ուսուցման հստակ խնդիրներ:

Մայրենիի առաջին դասարանի ծրագրում ներառված են հարցեր, որոնք վերաբերում են գրաճանաչության նախապայբենական, այբբենական և հետայբբենական շրջաններում աշխատանքի ձևերին, երեխաների մեջ հնչյունային լսողության զարգացմանը, հնչյունային վերլուծություններ և համադրություններ կատարելու կարողության մշակմանը, կարդալու և գրելու, լեզվական գիտելիքների և աշխարհաճանաչողական տեղեկությունների հաղորդմանը, գրաճանաչության ուսուցման մեթոդին ու նրա գործադրման ձևերին:

Դասագրքի արդիականությունն առաջին հերթին ենթադրում է նրա բովանդակության համապատասխանությունը աշակերտների մտավոր ու ֆիզիկական զարգացման պահանջներին, հաղորդվող գիտելիքների հաջորդականության, համակարգվածության ու մատչելիության սկզբունքներին:[2]

Հանրակրթական դպրոցի առաջին դասարանի դասագիրքը Վ. Սարգսյանի հեղինակած Այբբենարանն է, որի երեք բաժինները՝ նախապայբբենական շրջան, այբբենական շրջան և հետայբբենական շրջան, կազմված են գրաճանաչության սկզբունքների՝ մատչելիության, գենականության, հաջորդայնության, անհատականության, ինչպես նաև սովորողների լեզվաբնակալունակության հաշվառմամբ:

[1] Տե՛ս Ջ. Հ. Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015, էջ 277:
[2] Տե՛ս Ա. Ե. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, էջ 25:

Նախասայբբենական շրջանն սկսում են թեմատիկ նկարների շուրջ հյուսված պատմությունների պատկերմամբ, որոնց վերաբերյալ աշակերտները կազմում են մտքով իրար հետ կապված նախադասություններ, վերարտադրում ուսուցչից լսածը: Այս բաժնի առաջադրանքներն ունեն համադրականից վերլուծական ուղղվածություն:

Խոսքի զարգացման նպատակով պահանջվում է առաջ քաշել երեխայի՝ ինքնուրույն մտքեր արտահայտելու, գործողությունը ամբողջական խոսքով արտահայտելու, միմյանց հետ կապված մի քանի նախադասությունների միջոցով միտքը շարունակելու կարողությունը:

Հաջորդաբար թեմատիկ նկարներ են, որոնք պատմվում են խոսքի ավելի փոքր մասերով: Աշակերտներից պահանջվում է արտահայտել մեկ միտք՝ այդպիսով կապակցված խոսքից առանձնացնելով նախադասությունները: Արտահայտված ամեն մի միտքը համարելով մեկ նախադասություն՝ ձևավորվում է նախադասության մասին հասկացությունը:

Զուգահեռաբար տրվում են առարկաների պատկերներ, որի նպատակն է սովորողների մոտ ձևավորել նախադասությունը առանձին մասերի բաժանելու և բառի մասին հասկացությունը ընկալելու ունակությունը:

Բառի մասին ուսուցանվում է գծապատկերի միջոցով՝ պատկերների հետ միասին: Նախադասություններից բառն առանձնացնելու համար օգտագործվում են նախադասությունների, ապա առանձին բառերի գծապատկերները:

Ընտրված բառերն արդեն ներկայացվում են կորագծերով կամ սլաքներով՝ ուրվագծելով վանկը որպես խոսքի միավոր: Սկզբում ունենք միավանկ և երկվանկ բառեր, այնուհետև նաև եռավանկ:

Այս ընթացքում բառերի հետ տարվող աշխատանքները տարաբնույթ են, և դասագրքում տրված պատկերներն ու գծապատկերները ամրապնդում են բառի մասին գիտելիքները:

Հնչյունային վերլուծությունը կատարվում է՝ վանկում այլ գույնով նշելով ձայնավոր հնչյունի վանդակը:

Նախայբբենական շրջանի վերջում պատկերագրված է ամբողջական հեքիաթ՝ Հովհ. Թումանյանի «Ծիտը»: Նկարաշարի վերլուծությունը պատմելու կարողության ձևավորման սկզբնական փուլն է: Այս ստեղծագործությանն անդրադառնում են նաև հետայբբենական շրջանի վերջում:

Դասագրքի նախասայբբենական շրջանի բաժնում առաջադրանքների կատարումն ուղղված է՝

- խոսքի և երևակայության զարգացմանը՝ բնագրի նկարների բովանդակությունը պատմելու միջոցով,
- մատների նոր շարժումների զարգացմանը՝ ներկելու, գծելու միջոցով,
- համմատություններ կատարելու ունակության զարգացմանը՝ մեծ ու փոքր, վերև ու ներքև, աջ ու ձախ, կարճ ու երկար, հաստ ու բարակ, հեռու և մոտիկ, ծանր ու թեթև հասկացությունների մասին գիտելիքների յուրացմամբ,
- վերլուծություն կատարելու ունակության զարգացմանը՝ ընդհանուր օրինաչափությունից դուրս պատկերները տարբերելու, նկարներում թաքնված տարբերությունները զանազանելու, բառերը (նկարները) առանձին խմբերի բաժանելու առաջադրանքների միջոցով,
- ընդհանրություններ անելու ունակության զարգացմանը (առարկաների խմբերին մեկ անվանում տալ, բառերի (նկարների) իմաստային կապը գտնել, պարզել օրինաչափությունները և շարունակել, բացահայտել ընդհանուրը) և այլն:

Այսպիսով՝ նախայբբենական շրջանի վերջում, ըստ ուսումնական առաջադրանքների, աշակերտները գաղափար ունեն պատմության, նախադասության, բառի, վանկի, հնչյունի մասին և դրանք կարողանում են ներկայացնել գծապատկերների միջոցով, ունեն որոշակի բառապաշար և մտքերն ինքնուրույն արտահայտելու կարողություն, ներկելու, գծելու, տառերի պարզագույն մասնիկներ գրելու հմտություններ: Մանկական թեմաներով նկարների շուրջ մտքով իրար հետ կապված փոքրածավալ նախադասություններ են կազմում, կարողանում են պատմել ըստ նկարների, ունկնդրածի և ըստ հիշողության:

Այբբենական շրջանի առանցքը տառուսուցումն է, որի ընթացքում կարևոր է հնչյունի ընկալումը:

Ըստ այբբենարանի՝ յուրաքանչյուր տառի ուսուցման ժամանակ նախ պատմություն է հյուսվում այդ տառի համար նախատեսված թեմատիկ նկարի շուրջ: Տրվում են ուսուցանվող տառի մեծատառն ու փոքրատառը, ապա՝ մեկնաբառերը: Մեկնաբառը ներկայացնող առարկայի պատկերի ներքևում կազմված է նրա գծապատկերը: Սկզբում այնպիսի բառեր են, որոնցում նոր ուսուցանվող տառը սկզբնատառն է: Հնչյունների առանձնահատկություններից ելնելով՝ բառամիջում կամ բառավերջում դրանց օգտագործման տարբեր հնարներ են կիրառվում: Այսպես՝ ա ձայնավորի ուսուցման ժամանակ ա հնչյունը հանդես է գալիս որպես տարբեր բառերն իրար կապող միջոց, ս հնչյունի բնաձայնային երանգն արտահայտվում է այդ տառի կրկնությամբ:

Առաջին բաղաձայն հնչյուն-տառի ուսուցումից սկսած՝ ունենք ձայնավոր+բաղաձայն և բաղաձայն+ձայնավոր տառակապակցություններ, որոնց յուրացումը հեշտացնում է ընթերցանությունը:

Բառի վանկատմանը օժանդակում են առարկայական նկարները: Պատկերված առարկաների անվանումներից առանձնացնում են նախ՝ ծանոթ, ապա՝ անծանոթ հնչյունները՝ այդպիսով կատարելով հնչյունային վերլուծություն:

Այսպիսով՝ ուսուցման ընթացքում պահպանվում է պատմության-նախադասություն-բառ-վանկ-հնչյուն մեթոդական շղթան:

Ա, ս, ր, կ, ի, ն հնչյունների յուրացումով՝ սովորողներն արդեն կարողանում են կազմել բաղաձայն+ձայնավոր, ձայնավոր+բաղաձայն կազմությամբ վանկեր, մինչև եռավանկ բառեր, բառակապակցություններ ու պարզ նախադասություններ և վերջինիներից կապակցված համառոտ պատմություններ:

Հնչյուն-տառի ուսուցումն այբբենարանում կատարվում է վերլուծական և համադրական մեթոդներով: Վերլուծությամբ պատմությունից անջատվում են նախադասությունները, նախադասություններից՝ բառերը, որոնցից առաձնացվում են մեկնաբառերը, սրանք իրենց հերթին գծապատկերների միջոցով բաժանվում են վանկերի, վանկերից էլ առանձնացվում են հնչյունները (որոշվում է հնչյունի տեսակը, դիրքը, պատկերումը տառի միջոցով):

Համադրությամբ նոր տառերով կազմվում են վանկեր, բառեր, բառերով՝ բառակապակցություններ, այնուհետև՝ նախադասություններ և կապակցված բնագիր:

Վերլուծական-համադրական մեթոդաբանությունը երևում է նաև գրուսուցման ընթացքում, վերլուծությամբ՝ տառի առանձին մասնիկների անջատում, դրանց գրելաձևի, մասնիկների միացման ձևի մեկնաբանում, տողի վրա տառի տեղադրման ձևի ըմբռնում, համադրությամբ՝ տառի մասնիկների համադրում և ամբողջական տառի պատկերում:

Ը ձայնավորն առանձնացվում է որպես սկզբնատառ, վանկատման ժամանակ՝ որպես գաղտնավանկ հնչյուն, ինչպես նաև բառամիջում և բառավերջում:

Է հնչյունը գրվում է որպես սկզբնատառ և որպես օժանդակ բայ կամ բառ, որն արտասանվում է նախորդ բառի հետ համաձույլ:

Ե հնչյունը յ և է հնչյունների հանրագումարն է: Հնչյունին հատկացված էջում պատկերվում է ե-ի արտասանական տարբերությունը բառասկզբում և բառամիջում, նրա դերը կրկնարմատ բառերի կազմության մեջ (պատեպատ, սարենսար):

Օ ձայնավորը միայն բառասկզբի օրինակներով է բացատրվում:

Ռ-ն վ և օ հնչյունների կապակցությունն է՝ բառասկզբում, բառամիջում և բառավերջում՝ արտասանական տարբերություններով:

Համապատասխան օրինակներով բերվում են *և* հնչյունի կազմության ու արտասանության տարբերությունները գրությունից (ձայնավորից հետո՝ յ+է+վ, բաղաձայնից հետո՝ է+վ):

Դասագրքի այբբենական շրջանի առաջադրանքներն ուղղված են բառակազմական գիտելիքների բացահայտմանն ու զարգացմանը: Այսպես՝

- *Փոխակերպում* առաջադրանքի յուրաքանչյուր քայլում տրված բառի մեջ փոխում են մեկ տառ և կազմում նոր բառ:
- *Խառնագիր* առաջադրանքում վերականգնում են տառերի հերթագայությունը բառերի մեջ:
- *Դարձգիրը* երկու կողմից նույն կերպ կարդացվող կամ երկու կողմից նույն արտասանության ձև ունեցող բառային առաջադրանքն է:
- *Վանկախառում* իրար են միացնում խառը տրված վանկերը և բառ կազմում:
- *Աջուձախ* առաջադրանքում բառի սկզբում կամ վերջում տրված տառը դնելով՝ ստանում են նոր բառ:
- Սովորում են հանելուկներ, շուտասելուկներ, առած-ասացվածքներ:

Այբբենական շրջանի ավարտին, ըստ Այբբենարանի առջադրանքների, սովորողները գիտեն հայերեն բոլոր հնչյունները, կարողանում են որոշել բառի հնչյունային կազմը, հնչյունների հաջորդականությունը, տարբերել ձայնավոր և բաղաձայն հնչյունները, կարդալ փոքրածավալ բնագրեր՝ պահպանելով հայերենի ուղղախոսական կանոնները, շեշտը, առոգանությունն ու տրամաբանական դադարները, կատարել արտագրություն, թելադրություն գրել, կազմել բառակապակցություններ, նախադասություններ և կապակցված խոսք:

Գրաճանաչության հետայբբենական շրջանը ձեռք բերված գիտելիքների զարգացումն ապահովող կարևոր փուլն է: Այբբենարանի այս հատվածում փոքրածավալ ստեղծագործություններ են՝ սակավաթիվ հերոսներով, պարզ բովանդակությամբ (Մ. Մաշտոցի, հայոց տառերի, հայոց լեզվի և այբբենարանի մասին): Այբուբենը բերվում է տպագիր, ձեռագիր գրությամբ և մեսրոպյան անվանումներով: Օգտագործելով ողջ յուրացրածը՝ աշակերտները կարողանում են կարդալ ամբողջական հեքիաթը՝ Հ. Թումանյանի «Ծիտը», որին ծանոթ են նախաայբբենական շրջանից:

Այբբենարանի բովանդակության յուրացումը լուծում է կրթադաստիարակչական հետևյալ խնդիրները, որոնք բերված են նաև մայրենիի 1-ին դասարանի ծրագրում.[1]

- կարդալու տարրական կարողությունների ձևավորում,
- գրելու կարողության զարգացում,
- բառապաշարի հարստացում, խոսքի զարգացում,
- լեզվական գիտելիքների և կարողությունների ձեռքբերում, համակարգում,
- բարոյակամային որակների ձևավորում և ամրակայում, արժեհամակարգի հարստացում, աշխարհայացքի ձևավորում և ընդլայնում,
- բացատրական ընթերցանության նախապատրաստում:

Այբբենարանի ուսումնասիրության օրինակով խոսքի զարգացման աշխատանքի արդյունավետությունը կախված է հետևյալից.

- նկարների, ապա նաև պատրաստի տեքստի վերլուծության միջոցով խոսք կազմելու փորձի ձեռքբերում,
- տեսական գիտելիքների ձևավորման և ամրապնդման նպատակով գրավոր և բանավոր խոսքային արտահայտությունների ստեղծում,
- վերապատմում կամ ամփոփում, մեկնաբանություններ ու եզրահանգումներ կատարելու հմտությունների զարգացում,
- ստեղծագործական աշխատանքների ինքնուրույն կատարում:

Այսպիսով՝ տարրական դասարաններում աշակերտների խոսքի զարգացումը համարվում է ուսուցչի հիմնական աշխատանքը՝ կապված հատկապես աշակերտների ընդունակությունների, սեփական մտքերը գրավոր և բանավոր շարադրելու հմտության ձևավորման: Սրա ընթացքում պետք է օգտագործվեն լեզվի հնարավորությունները խոսքի կառուցման նպատակին, բովանդակությանը և խոսքային իրավիճակներին համահունչ:

Աշակերտների ինքնուրույնությունը զարգացնելու նպատակով նրանց պետք է ներգրավել ուսուցման գործընթացի մեջ, հնարավորություն տալ տիրապետելու ուսուցանվող լեզուն և այն դարձնելու մտքերի արտահայտման ձև:

Օգտագործված գրականություն

1. Այբբենարան, (Հանրակրթական դպրոցի առաջին դասարանի համար, Վ. Ա. Սարգսյան, Երևան, 2015
2. Հայոց լեզու, գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Ե., Անտարես, 2006
3. Goswami, U. and Bryant, P., Children's Cognitive Development and Learning (Primary Review Research Survey 2/1a) Cambridge: University of Cambridge Faculty of Education, 2007.
4. Ջ. Հ. Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015
5. Ա. Ե. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980

[1] Տե՛ս Հայոց լեզու, գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Ե., Անտարես, 2006, էջ 59-63:

ՀՏԴ 809.198.1 Հայոց լեզու

Նելլի Աթանեսյան
ԼՂՀ, Մարտակերտի շրջան, Առաջաձորի միջն. դպրոցի տնօրեն,
հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ԽԱՉԵՆԻ ԽՈՍՎԱԾՔՈՒՄ

Լեռնային Ղարաբաղի բարբառում կան նորաբանություններ և հնաբանություններ, փոխառյալ բառեր և պատճենումներ: Նրանց շարքում հատուկ տեղ են զբաղեցնում մականունները, որոնք ունեն առանձին նշանակություն և հարստացնում են ժողովրդի խոսքը տարբեր ոճական երանգներով:

Այս մականունները ներթափանցել են Ղարաբաղի բարբառի Խաչենի խոսվածքի բառաշերտը, քանի որ փոխանցվում են սերնդից սերունդ, կամ էլ կազմավորվել են ժողովրդական բանահյուսության արդյունքում: Որոշ մականուններ ձևավորվել են Արցախյան պատերազմի արդյունքում:

Բանալի բառեր՝ մականուն, Խաչեն, Ղարաբաղ, բարբառ, բառապաշար, բառակազմություն, հատկանուն, բարդություն, փոխաբերություն, անձնանուն, հաղորդակցում:

Нелли Атанесян,
директор школы села Араджадзор Мартакертского района НКР
учитель армянского языка и литературы

ПСЕВДОНИМЫ НА ХАЧЕНСКОМ ГОВОРЕ КАРАБАХСКОГО ДИАЛЕКТА

В лексике Карабахского диалекта встречаются также неологизмы и архаизмы, заимствованные слова и слова, образованные путем копирования из других языков. Среди этих слов особое место занимают псевдонимы, которые имеют лексическое значение и обогащают живую народную речь различными стилистическими вариациями.

Эти псевдоними входят в общепонятную лексическую пласть Хаченского говора Карабахского диалекта, поскольку они либо передавались из поколения в поколение, либо образовались путем народного фольклора. Некоторые псевдонимы были образованы во время Арцахской войны.

Ключевые слова: псевдоним, Хачен, Карабах, диалект, происхождение, словосочетание, копирование, общеупотребляемые, словообразование, архаизм, неологизм.

Nellie Atanesyan,
teacher of Armenin Language and Literature and
director of the school of Arajadzor of Martakert region of NKR

NICKNAMES IN KHACHEN ACCENT OF THE KARABAKHIAN DIALECT

There are some neoligisms, archaic words, borrowings, word-copies, a number of meaningful words used as nicknames applied parallely with various layers introducing the vocabulary of Karabakhian dialect. These words are included into coohandled word layers and are available to the wide public areas. They come from different regions (we have also some nicknames formed during the Artsakhian movement). For different cases they are simple or compound due to their structures.

Key words: vocabulary, Khachen, dialect, Karabakh, word-building, proper name, nickname, complication, metaphor, name, communication.

Ղարաբաղի բարբառի բառապաշարը ներկայացնող մի շարք շերտերի համընթաց գործում են նաև նորաբանություններ, հնաբանություններ,փոխառյալ բառեր ու բառապատճենումներ:

Ղարաբաղի բարբառի բառապաշարում մշտապես կենդանի ու գործուն վիճակում են որպես մականուններ հանդես եկող մի շարք իմաստակիր բառեր: Դրանք մտնում են համագործածական բառապաշարի մեջ և հասկանալի են հանրության լայն շրջաններին: Դրանք տարբեր շրջաններում տարբեր առիթներով ստեղծված մականուններ են /անգամ արցախյան շարժման ընթացքում/, որոնք կազմությամբ պարզ են, բաղադրյալ և ներկայացնում են լրացում-լրացյալ, գերադաս-ստորադաս քերականական հարաբերություն:

Մականունների մասին լեզվաբանական համալիր ուսումնասիրություններ, ցավոք, չկան: Մեզ համար դժվար է հստակել՝ դրանք ոճակա՞ն, իրադրական բառեր են, թե՞ բառապաշարի առանձին շերտ, որը ձեւավորվել է որոշակի սոցիալ-պատմական եւ քաղաքական իրավիճակում՝ որպես լեզվական ինքնուրույն միավոր: Չհավակնելով տեսական եզրահանգումների, մենք ուզում ենք դիտել տալ, որ մականունների համար Ղարաբաղի բարբառն ունի ընդհանրական՝ <<փոթ>>անվանումը, ինչից ենթադրում ենք, որ բարբառային մականունները ոչ այնքան իրադրային բառեր են, որքան՝ոճական բնութագրումներ:

Մականունները կամ փոթանունները հիմնականում ունեն հաղորդակցական գործառույթ եւ ըստ նպատակի կարող են արտահայտել հեգնանք, ծաղր, հիացմունք, անձի մասին հավելյալ մակդիրային տեղեկություն եւ այլն: Այս եզրահանգման հիմք ենք ընդունում, որ <<փոթ>> /<<մականուն>>բառը Ղարաբաղի բարբառում ունի հիմնական՝ <<ծալք>>եւ երկրորդական՝ <<արատ>>, <<թերություն>> իմաստները: (Օրինակ՝ <<կէցէ շօրը փոթ-փոթոտ (ծալքերով) ա>>:<<Նրա ըրած կօրծ էն փոթ չի տինվիլ>>):

Այս տեսակետից Ղարաբաղի բարբառի Առաջաձորի խոսվածքում գործածական են մականուններ, որոնք մտնում են համագործածական բառապաշարի մեջ եւ իրենց իմաստով հասկանալի են բոլորին: Այս խմբին են դասվում մականունները, որոնք ստեղծվել են Արցախյան շարժման ընթացքում: Օրինակ՝ Ասկօլկա, Քառասունչօրս, Թիվ, Խալաստոյ, Դուշման, Քյոխա, Պրափեսը, Կամանդոս եւ այլն:

Այս շերտից բացի, սակայն, մականունների մեծամասնությունը պատկանում է Առաջաձորի խոսվածքի բառապաշարին եւ հասկանալի է միայն հաղորդակցության տվյալ լոկալ միջավայրում:

Մենք հիմք ենք ընդունում Առաջաձորի խոսվածքի լոկալ լեզվա-հաղորդակցական միջավայրի մականունները եւ խնդիր դնում ներկայացնել դրանց ծագումը, բառակազմության ընդհանուր բնութագիրը, ոճական իմաստները:

Այս դիտանկյունից մենք առանձնացնում ենք գոյական իմաստ պարունակող մականունները եւ դրանք բաժանում հետեւյալ գործածական խմբերի:

1. Միակազմ կամ պարզ մականուններ, որոնք առօրյա խոսակցական լեզվում փոխարինում են անձնանուններին՝ Զախմուր, Հապէտ, Դօդո եւ այլն:
2. Բաղադրյալ անվանումների մաս կազմող մականուններ՝ բաննահ Սէրգի, պէլ Մարքարիդ, ուղութարար Շուշի եւ այլն:

Միակազմ մականուններն իրենց հերթին կարելի է տարբերակել ըստ ծագման եւ գործածության:

Միակազմ մականունների մի խումբն, ըստ ամենայնի, առաջացել է կամ անձնանունների հնչյունափոխության կամ աղավաղման հետեւանքով՝ Ալվինա-Ավի, Լարիսա-Լալի, Հովհաննես- Հօսան, Ասծատուր-Տատոս, Ռուբեն-Ուբի/ Ուբա/ Օբա/ Օբիկ, Սամվել- Սամի/ Մէսօ, Նիկոլայ- Կակալ, Նինա-Տօպա, Լավրենտի- Ալյա, Էդվարդ- Հաթամ, Աստղիկ- Աթի, Հայրապետ-Հաբի/ Հօբուդ/ Աշրաֆ, Ռոբերտ-Օբեթ, Գուրգեն- Գօրգի/ Գօգի, Արմեն- Արմենչօ/ Զամօ՝

Կարեւորում ենք այն միակազմ մականունները, որոնց ծագումը պայմանավորված է որոշակի անձի արտաքին հատկանիշներով, որոնք երբեմն նաեւ բնութագրում են նրա բնավորությունը: Այս կարգի մականունները մեծամասամբ ածականական են, թեեւ հանդիպում ենք նաեւ գոյական-մականունների:

Առանձնացնում ենք ածականակերտված մականուններ՝ Զախմուր (խաժակն), Կուռուզ (գանգրահեր), Զանանա (բծախնդիր/չմահավան), Ջիջի (գծուծ, ժլատ), Տախի (անկիրթ), Խարտի (հեգնող, ծակող), Ցանի (երկարահասակ), Զօբան (անքաղաքավարի, անգրագետ) եւ այլն:

Նշում ենք նաեւ գոյականակերտված հետեւյալ մականունները՝ Բուբուլ (կլորիկ, դդմանման, գեր), Դօվ (դեւ, հսկա/ուժեղ/ գերմարդ), Ճիճի (ծորիդի պես շատախոս), Սընըհաար (նիհար, երկարահասակ):

Ղարաբաղի բարբառի Առաջաձորի խոսվածքում քիչ չեն մականունները, որոնք կազմված են փոխառյալ բառերից: Մի հիմնական մասով դրանք ռուսերենից են, մասամբ էլ՝ թուրքերենից: Ընդ որում, մականվան համար հիմք են հանդիսացել տվյալ անձի արտաքին հատկանիշները, բնավորությունը կամ մասնագիտական զբաղմունքը:

Օրինակ, ռուսերենից են փոխառնվել հետեւյալ մականունները՝ Տիխի (խաղաղ՝ հանգիստ), Վըսօկի (բարձրահասակ), Կօնյուխ (ձիապան), Տրօյկա (գեր/մարմնեղ)՝ ռուսական եռաձի կառքի ձիու նմանությամբ), Տրօյկա (ստալինյան ժամանակների եռյակի անդամ), Բօնդուր (տակառագործ), Մօղրօվ (ցարական պաշտոնյա/գավառապետի օգնական/ մովրով), Ջիկօվ (ռուս ինժեներ, որ կառուցել է գյուղի անվավավոր ջրաղացը), Մագազինչիկ (խանութպան) եւ այլն:

Նույն բառափոխառության կաղապարով կարող ենք նշել թուրքերենի ազդեցությունը: Օրինակ՝ Դարզի (դերձակ), Դալլաք/սափրիչ/վարսավիր), Դամուրչի (դարբին/երկաթագործ), Ղլէչի (կլայեկող/պղնձագործ) եւ այլն:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մի շարք մականուն-բառերն առաջացել են հանպատրաստից՝ երկխոսության ընթացքում, այնուհետեւ միայն ստացել տարածում եւ դարձել գյուղական համայնքի խոսակցական բառապաշարի մաս: Այս կարգի մականունները չունեն կոնկրետ բառիմաստ:

Այս խմբի մականունների մեջ հանդիպում են ինչպես բնիկ, այնպես էլ փոխառյալ բառեր: Օրինակ, Օդապարիկ, Ջէկա, Ջագա, Գէնէրալ, Ելօլիկ, Յանը, Դովչ, Շտիռլից, Պանօ, Ծիպա, Պըլթան, Շափաղաթ, Կյանդազ, Պասկա, Բուլիկ, Հեյլար, Ճուտիկ, Ազիստէմ, Լուսարար, Կօնգո, Հայլուր եւ այլ մականուններ առաջացել են կոնկրետ խոսակցական իրավիճակում մի անձի կողմից մյուսին՝ ըստ նրա վարքի կամ բնավորության, տրված բնորոշման ճանապարհով, հետագայում դարձել համագյուղական խոսակցական լեզվում այդ մարդուն բնութագրող մակդիր:

Կապված սոցիալ-պատմական զարգացման հետ՝ այդ մակդիրային բնոութագրումները ենթարկվում են փոփոխությունների: Օրինակ, խորհրդային ժամանակաշրջանում շատ քինախնդիր մի կնոջ Առաջաձորի հասարակությունը տվել է <<էնկէվէդէ Հեղինա>>անվանումը, բայց նույն անվամբ մի բարեկենցաղ կին էլ անվանվել է <<ճիքնավէր Հեղինա>>:

Մեկին անվանել են <<պազա Շիրին>>, քանի որ նա կակազող է եղել եւ ամեն բառից առաջ գործածել է <<պազա>> անիմաստ արտահայտությունը, մյուսին՝ <<Տրօյկա Շիրին>>, քանի որ վերջինս 1930-ական թվականներին խորհրդային պատժիչ մարմիններին է մատնել ազգային-ազատագրական պայքարի գործիչներին:

Առաջաձորի խոսվածքում որոշակի տարածում ունեն մականուններ, որ պայմանավորված են տվյալ անձի պետական, հասարակական եւ քաղաքական գործունեությամբ: Օրինակ՝ Ստալին Ներսես, Փիրմա Լուսիկ, Քարտուղար Աշօտ, Կուրյեր Հարությակ, Միլիցյա Կարապէտ, Փօշտալյոն Գալյօ, Բաշմակչի Կօլյա:

Այդ մականուններից որոշները հետագայում դարձել են տոհմանուն եւ առայսօր պահպանվում են: Ինչպես օրինակ՝ Բաշմակչունց, Քատուղարանց, Դիլլաքանց, Քրիհանանց, Քուրդանց եւ այլն:

Առանձնակի ուշադրության են արժանի այն մականունները, որ բաղադրյալ հատուկ անունների կազմում գործածվում են բացառապես փոխաբերական իմաստով: Օրինակ՝ Հայ (միամիտ/ հավատավոր) Ուհաննէս, Ջհուդ (դաժան/ժլատ) Զառի, Աղվէս (խորամանկ, փորձառու) Ռուբեն, Թասակ (գլխին միշտ գդակ ունեցող) Էդիկ, Մրթասէդ կէսանող (չափազանց հաշվենկատ) Սուղի, Տախի (անհասկացող) Սուրեն, Իշակյուլ (անվախ, աներկյուղ) Վարթի, Դօդոօշ (անփույթ) Ռափիկ, Ուսանող (մշտապես ուսանողին մանգյուղ եկող-գնացող) Արամ, Սասնա (կատակասեր/առակախոս) Շուշի եւ այլն:

Հետաքրքիր ոճական դրսեւորում է, երբ մականունը դառնում է բաղադրյալ հատուկ անվան մակդիր-բաղադրիչ եւ հատկանշում տվյալ անձնավորության սոցիալական կարգավիճակը, նրա աշխատանքային գործունեությունը: Օրինակ՝ Մաքունց Սուքիաս անվանումն Առաջաձորի խոսվածքում նշում է արդարամտություն, անհաշտվողականություն, կռվարարություն, Ընդրյազանց Ծատօրը՝ առակախոսություն, Բուշանց Պէտրուսը՝ առակաբանություն, Խաչունց Մռավը՝ կնաբարո տղամարդու վարք, Ալունց Խօրէնը՝ հարբեցողություն, Տօնունց Գօրգին՝ ուրիշի հաշվին ապրող տղամարդ,

Զավունց Պէտրուսը՝ պորտաբուծություն, Յուզբաշի Արտէմը՝ իշխանավորություն, Մէլունց Թէսին՝ վախկոտություն, Զումունց Մուսան՝ հարբեցողություն/գինեմոլություն եւ այլն:

Կարծում ենք, որ Առաջաձորի խոսվածքի՝ նշված եւ մյուս մականունները բնութագրական են ոչ միայն տվյալ գյուղական համայնքի լեզվա-ոճական ինքնությանը, այլ եւ իրենց համարժեքներն ունեն Ղարաբաղի բարբառում: Տվյալ նյութի ուսումնասիրությունը եւ գիտական, եւ, մանավանդ, կրթա-դաստիարակչական նշանակություն ունի:

Կապված իրողության հետ, որ <<Լեզվի մասին>> ԼՂՀ օրենքը խրախուսում է բարբառի պահպանումը եւ զարգացումը, գտնում ենք, որ խոսակցական լեզվի բառապաշարի այս շերտը պետք է ուսումնասիրվի եւ ներկայացվի դպրոցականներին՝ որպես նրանց լեզվամտածողության զարգացման միջոց: Մեր հնարավորությունների սահմաններում մենք Առաջաձորի միջնակարգ դպրոցում հայոց լեզվի եւ գրականության, ինչպես նաեւ արտադասարանական պարապմունքների ժամերին վերոշարադրյալ ոճական առանձնահատկությունները ներկայացնում ենք սովորողներին:

Օգտագործված գրականություն

1. Մարգարյան Ա.Ս.,Ժամանակակից հայոց լեզու ,Երևան 1993թ.
2. Գ.Բ.Ջահուկյան, Էդ. Աղայան , Վ.Առաքելյան ,Վ.Քոսյան, Հայոց լեզու,1-ին մաս,Ա պրակ,Երևան 1980թ.

ՀՏԴ 809.198.1 Հայոց լեզու

Կարինե Ավանեսյան
բ.գ.թ., ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ
E-mail: avanesyan-karine @ rambler.ru

ԳՐԱԲԱՐԻ Ի(Յ) ՆԱԽԴՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՂԻՇԵԻ «ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Վասն Վարդանայ...» աշխատության մեջ ի(յ) նախդրի գործածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն, կապակցվելով տրական, հայցական, բացառական հոլովների հետ, աչքի է ընկնում խնդրային ու պարագայական ամենատարբեր քերականական իմաստներ ձևավորելու օժտվածությամբ: Քննարկվող նախդիրը համեմատաբար հաճախ հանդես է գալիս տրական հոլովի հետ՝ ձևավորելով բացառական հոլովի և հոգնակի ներգոյականի իմաստ: «Վասն Վարդանայ...» աշխատության մեջ ի(յ) նախդրի ձևավորած քերականական իմաստները համապատասխանում են ժամանակակից հայերենի ***համար,դեպի, նպատակով, նկատմամբ, տակ, ժամանակ, հանդեպ, հետ, մեջ, որպես, միջոցով, ընթացքում, մասին, միջև, պատճառով*** *և այլ կապերի ու կապական բառերի իմաստներին:*

Բանալի բառեր. ի(յ) նախդիր, նախադրություն, տրական, հայցական, բացառական, գործիական հոլովներ, ներգոյական հոլովի իմաստ, քերականական իմաստներ,նպատակի, պատճառի,ժամանակի պարագաներ,ուղիղ խնդիր,կապեր, կապական բառեր:

К.А.Аванесян,
к.ф. н., доцент кафедры армянского языка им. ак. С. Абраамяна
E-mail: avanesyan-karine @ rambler.ru

ПРЕДЛОГ ի(յ) В ПРОИЗВЕДЕНИИ ЕГИШЭ «Վասն Վարդանայ...»

Изучение предлога ի(յ) грабара в првизведении «Վասն Վարդանայ...» Егишэ показывает, что ему свойственно в сочетании с дательным, винительным и предложным падежами выражать разнообразные грамматические значения дополнения и обстоятельства. Чаще всего предлог ի(յ) выступает в сочетании с дательным падежом. Некоторые грамматические значения предлога ի(յ) выражаются в сочетании с предлогами грабара ***ար*** *и* ***մինչև*** *. В произведении «Վասն Վարդանայ...» предлог ի(յ) по своему значению соответствует следующим предлогам и союзным связкам современного армянсого языка:* ***для, к, с, про, под, с целью, во времени, в, как, до, по причине*** *и т. д.*

Ключевые слова: предлог ի(յ), предлоги, союзные связки, дательный, винительний, предложный, творительный падежи, грамматические значения, прямое дополнение, значения цели, причины, времени.

H.K. Avanesyan, PhD, Assistant professor
Chair of Armenian Language after the name of the Academician S. Abrahamyan

THE USE OF PREPOSITION I(J) IN EGHISHE'S " VASN VARDANAJ...."

The study of the preposition i(j) in Eghishe's "Vasn Vardanaj...." has shown that the preposition combines with the Dative, Accusative and Ablative cases to shape grammatical meanings of object and adverbial modifier. The preposition under discussion very often combines with the Dative case, forming Ablative Case and Plural meaning of the Locative Case. The grammatical meanings of preposition i(j) in " Vasn Vardanaj...." correspond to the meanings of Modern Armenian prepositions and prepositional phrases to, for the purpose, towards, under, during, between, becaus, etc..

Գրաբարի նախդիրները և նախադրությունները, չնայած հայ քերականական մտքի ձևավորման սկզբից դիտվել են որպես առանձին խոսքի մաս, նախադասության մեջ ինքնուրույն կիրառություն չեն ունեցել: Դրանք սպասարկու բառեր են հոլովման համակարգում: Գրաբարի վեց հոլովաձևերով հնարավոր չէ արտահայտել առարկաների, առարկաների ու գործողությունների միջև եղած բազմազան ու բազմաթիվ հարաբերությունները: Պակասը լրացվում է նախդիրների ու նախադրությունների միջոցով, որոնք, հանդես գալով տարբեր հոլովաձևերի հետ, կամ քերականական նոր իմաստ են հաղորդում, կամ առավել հստակեցնում, պատկերավոր են դարձնում տվյալ հոլովի արտահայտած իմաստը:

Գրաբարի ի(յ) նախդիրը հոլովման համակարգը սպասարկում է երկու դերով՝ հոլովակերտմաբ (նրա միջոցով ձևավորվում է բացառական հոլովը, դրսևորվում է ներգոյական հոլովի արտահայտած իմաստը) և հոլովառությամբ: Ահա թե ինչու այն գործածության մեծ հաճախականություն ունի գրաբարյան տեքստերում:

Ըստ Հր. Աճառյանի՝ ի(յ) նախդիրը բնիկ հայերեն բառ է՝ ծագած նախահիմք լեզվի in կամ en ձևից, վերջաձայն n-ի անկումով[1]: Պարզ է, որ այն որպես նախդիր կորցրել է իր բառական անկախությունը, իմաստավորվում է միայն, երբ գործածվում է տարբեր հոլովաձևերի հետ:

Ինչպես հայտնի է, ի(յ) նախդիրը հանդես է գալիս տրական, հայցական և բացառական հոլովների հետ: Տրական հոլովի հետ գործածվում է միայն եզակի թվում: Հոգնակի տրականի հետ ձևավորում է բացառական հոլով: Այս դեպքում այն ունի բացառական հոլովի իմաստ, ինչպես՝ ... որպէս եւ ասացին իսկ ոմանք ***ի*** քաջ ***պատմագրացն*** (պատմագիրներից, էջ 8): Զմի ոմն ***ի*** հաւատարիմ ***ծառայից*** իւրոց ի գործ առաքէր յերկիրն Հայոց՝ որում անունն էր Դենշապուհ (ծառաներից) ...

Ի(յ) նախդիրը տրական հոլովի հետ ունի գործածության մեծ հաճախականություն, քանի որ ***ի(յ) նախդիր + եզակի տրական*** կառույցով արտահայտվում է եզակի ներգոյականի իմաստ: Օրինակ՝ ... այլ դու, ո՛վ մեծդ ***ի գիտութեանն*** (գիտության մեջ), առ ի՞նչ արդեւք հրամայեսցես, քան եթէ հրամայիցիս լաւագունացն (էջ 8): Եւ առք պարսիկք, որք փախուցեալ էին վասն քրիստոնեութեան եւ էին ***ի քաղաքի*** (քաղաքում) կայսեր, կալաւ եւ ետ ձեռս նորա (էջ 14): Քազի էին իսկ այնպիսինք բնակեալ ի կեանս իւրեանց իբրեւ ***ի*** թանձրամած ***խաւարի*** (խավարում), եւ ոգիքն արգելեալք ***ի մարմնի*** (մարմնի մեջ) իբրեւ զկենդանի ***ի գերեզմանի*** (գերեզմանում)... (էջ 16):

Բացառական հոլով, ներգոյականի իմաստ ձևավորելուց բացի ի(յ) նախդիրը տրական հոլովի հետ արտահայտում է նաև շարահյուսական տարբեր իմաստներ, որոնք լայն կիրառություն են գտել Եղիշեի աշխատության մեջ: Դրանք են՝

ա/***վրա*** իմաստը, ինչպես՝ ... ապա եթէ բան թագաւորին նկարի ***ի նմա*** (նրա վրա) ... (էջ 62): Եթէ սովին հաւատովք թողուս, ոչ ***յերկրի*** (երկրի վրա), այլ տէր փոխանակեմք ընդ քեզ ... (էջ 80): ... այլ զտեղի առեալ անդրէն ***ի բարձրութեանն*** (բարձրության վրա) հաստատեսցուք (էջ 222): Եւ քանզի կասկած ունէր տակաւին ի նոցուն ***ի դահիճացն*** (դահիճների վրա) ... (էջ 364): ... եւ այնու կամի զամենայն չարութիւն իւր ***ի մեզ*** (մեզ վրա) հեղուլ (էջ 176):

բ/***ժամանակի*** իմաստ, ինչպես՝ ... Եւս կանայք փշտիպանացն ***յառուր կիւրակէի*** (կիրակի օրը) անցուցանել զճրագունս եկեղեցւոյն եւ պատառել զհանդերձս հաւատաւոր կանանցն (էջ 130): ... որ ***ի տղայութեան*** (մանկության ժամանակ) փախուցեալ ի հայրասպան մարդախողխող հօրեղբարցն իւրոց ... (էջ 144): ... որպէս ***ի տերունական մեծի սուրբ զատկին*** (ինչպես տերունական մեծ սուրբ զատկին, էջ 230): ... ծածուկ կոչէր ***ի գիշերի*** (գիշերը, էջ 308): Ոչ ինչ եթող չարիս՝ զոր ոչ գործեաց ի կեանս իւր, եւ ոչ ինչ մնաց ի մեծամեծ չարեաց՝ որ ոչ անձին ընդ նա ***ի մահուան*** (մահվան ժամանակ) նորա (էջ 282):

գ/***նպատակի*** իմաստ, ինչպես՝ ... զի ***ի ձմերոց*** (ձմեռելու համար) ի Հայս եկեսցեն (էջ 126): Իսկ որք եկեալ էին ***յաւարի առնուլ*** (կողոպտելու համար) զսուրբ զանձս եկեղեցւոյն (էջ 134): Կափուցէք զաչս յընթերցուածոց (չկարդալու համար), եւ խցէք զականջս ***ի լսելոյ*** (չլսելու համար) ... (էջ 108):

դ/ ***պատճառի*** իմաստ, ինչպես՝ Զեռք մեր փապարեալ են ***ի կացնի*** (կացին գործածելով), եւ ողունք մեր տեռեալ են ***ի փայտակրի*** (փայտ կրելուց, էջ 354) ...:

ե/«Վասն Վարդանայ ...»-ում հազվադեպ կիրառություն ունի նաև ***ի + տրական*** կառույցի ***փոխարեն*** իմաստը, ինչպես՝ ... որպէս զի բազում մարդիկ իսկ չոգան ***ի տուժի*** (տուժի փոխարեն) (էջ 208):

Այսպիսով՝ Եղիշեի աշխատության մեջ ***ի (յ) + տրական հոլով*** կառույցում ի նախդիրն արտահայտում է ժամանակակից հայերենի ***մեջ, վրա, փոխարեն, համար, ժամանակ, պատճառով*** կապերի իմաստները:

Հայցական հոլովի հետ ի(յ) նախդիրն առավել շատ է գործածվում՝ դրսևորելով բազմազան նշանակություններ.

1/ Բոլոր հոլովվող բառերի հոգնակի թվի հետ արտահայտում է ներգոյական հոլովի իմաստ: Օրինակ՝ ... յոյժ հարեալ խոցեցան ***ի խորհուրդս*** (մտքերում) իւրեանց (էջ 22): ... եւ անարգս եւ վատթարս ***յաչս*** (աչքերում) ամենեցուն զնոսա ցուցանէին (էջ 42): ... որ բնակեալ էին ***ի վանորայս*** (վանքերում, էջ 44): Այդի եւ ***ի մարդիկ*** (մարդկանց մեջ) երեւի (էջ 62):

Հատուկ անունների, ***ա*** և ***ո*** վերջադրական հոլովումների պատկանող բառերի եզակի ներգոյականի իմաստը ևս արտահայտվում է ***ի(յ)*** նախդրի և հայցական հոլովի միջոցով: Օրինակ՝ Անուանք եպիսկոպոսացն, որք ժողովեցան ***յԱյրարատեան գաւառն*** (Արարատյան գավառում) եւ արարին նամակին պատասխանի (էջ 54): ... միահամուռ ժողովեալք ի թագաւորանիստ տեղին ***յԱրտաշատ*** (Արտաշատում, էջ 56): ... մկրտեցաւ ի Յովհաննէ ի յամլորդոյն ***ի Յորդանան գետ*** (Յորդանան գետում, էջ 80): ... եւ զմեռեալս ***ի հող*** (հողում) թաղելով զերկիր ապականէք (էջ 92):

2/ ***Ի(յ)*** նախդրով հայցականը ցույց է տալիս այն տեղը, առարկան, դեպի ուր կամ դեպի որն ուղղված է գործողությունը, և ձևավորում է ուղևորման հայցականը, ինչպես՝ ... ընդէ՞ր յուղարկեցայք ընդ նոսա ***ի նոյն խաւար*** (դեպի նույն խավարը, էջ 110): ... ազատեալք ի ծառայութենէ՝ չարաչար մտէք ***յանազատելի ծառայութիւնն*** (Ծառայությունից ազատված էիք, չարաչար կերպով մտաք անազատելի ծառայության տակ, էջ 112): ... եւ անկան առանց հարցանելոյ ***ի վանս սպարապետին*** (սպարապետի կայանը, էջ 130): Կրկնէր եւ երեքկրնէր զանսուտ երդումն առաջի բազմութեանն ***ի սուրբ աւետարանն*** (ավետարանի վրա, էջ 132): ... քան յանձն իւր՝ առաւել ***ի նա*** (նրա վրա) էր յուսացեալ (էջ 194): ... եւ անդէն ***յամուրսն արկանէին*** (զցեցին ամրոցները, էջ 256): Դարձեալ եւ որք էին ի լերինս Խաղտեաց, իբրեւ տեսին եթէ յանդգնաբար զօրքն Պարսից կաց յաներկեւղս իջանեն ***յամուրս աշխարհին Հայոց*** (Հայոց աշխարհի ամրոցների վրա), յարձակեցան եւ նոքա մեծաւ զօրութեամբ ***ի ձորագաւառն Տայոց*** (Տայքի ձորագավառի վրա, էջ 256): ***... ի նա*** (նրա վրա) ձգիցին կարծիք (էջ 356):

3/ ***Ի(յ) + հայցական հոլով*** կառույցով արտահայտվում է նպատակի իմաստ, ինչպես՝ ... իսկ արդ դուք պարարիցէք զմարմինս ձեր նմա ***ի կերակուր*** (կերակրելու համար, էջ 110): Քանզի վասն միոյ կորուսելոյ ոչխարին

[1] Աճառյան Հր.,Հայերեն արմատական բառարան, հ. Բ Ե-Կ,Եր.,1973թ., էջ 256:

եկն ***ի խնդիր*** (փնտրելու, էն 312): ... եւ սուրբ խնդրուածովք իջուցին զհրեշտակս ***ի փրկութիւն*** (փրկության համար, էջ 406):

4/ Ժամանակի իմաստ, ինչպես՝ «***Ի կռիւն*** (պատերազմի ժամանակ) ընդէ՞ր ոչ եկիք պատրաստութեամբ» (էջ 258): ... քան զմեղուս վաթարազոյն եւս են ***ի զայրանալն*** (զայրացած ժամանակ) իւրեանց (էջ 278): ... ***ի կատարել*** աղօթիցն (աղոթքն վերջացնելուց հետո) զուարթագին գոհանալով՝ սակաւիկ մի հանգչէին ի գետնախշտի յանկողինս (էջ 290): ... ***ի ծագել լուսոյն*** (լույսը բացվելու ժամանակ) իբրեւ զբազմօրեայ հիւանդ յարուցեալ երթայր ի վասն իւր ...(էջ 294): ... ***ահա ի սուրբ մահն իւրեանց*** (իրենց սուրբ մահվան ժամանակ) կամին՝ զի եւ ես մասն ընկալայց ընդ երանելիսն (էջ 312):

5/ Ուղիղ խնդրի իմաստ, ինչպես՝... կեանք իւրանց ***ի մահ համարեալ*** էին (իրենց կյանքը մահ էին համարում, էջ 136): ... եւ զարարչական զօրութիւնն շարժեցաք ի վերայ մեր ***ի ցասումն*** բարկութեան (և գրգռեցինք արարչական զորության բարկությունը մեզ վրա, էջ 214): ... եւ հաղորդեցան ամենեքեան ***ի կերակուրն*** զուարթութեամբ (բոլորը ուրախ-զվարթ ճաշակեցին կերակուրը, էջ 308):

6/ Սակավ դեպքերում՝ ***վերաբերմամբ, նկատմամբ*** իմաստ, ինչպես՝ Եւ են նոքա դարանք սատանայի, զի նոքօք իսկ կատարէ զդառնութիւն կամացն իւրոց. որպէս երեւի իսկ ***ի դոյն յայդ Վասակ*** (Նրանք սատանայի դարաններ են, որովհետև հենց նրանց միջոցով է կատարում իր դաժան կամքը, ինչպես որ երևում է հենց այդ վասակի վերաբերմամբ, էջ 272):

7/Որոշ դեպքերում ***ի(յ)*** նախդիրը հայացական հոլովի հետ արտահայտում է առարկայի՝ ինչ-որ մի բանի փոխարկվելը: Օրինակ՝ Եւ ի բազմութենէ դիականցն անկելոց՝ յստակ ջուրք գետոյն ***յարիւն դառնային*** (Եվ ընկած դիակների բազմությունից գետի հստակ ջրերը արյուն դարձան, էջ 154): Խոնարհեցաւ ի բարձր հպարտութենէն, եւ զվայրենացեալ սիրտն դարձոյց ***ի մարդկային բնութիւն*** (մարդկային բնության փոխարկեց, էջ 164): ... եւ զէն Աստուած, որ ***ի մարդ կերպարանացաւ,*** չպաշտեն (և չեն պաշտում Է Աստծուն, որ մարդու կերպարանք առավ, էջ 226):

8/Շարունակականություն՝ ժամանակի և տարածության առումով, ինչպես՝ ... որ ***յամենայն ժամ եւ յամենայն օր*** գեր ի վերոյ ծագեալ երեւի ամենեցուն (որ ամեն ժամ և ամեն օր շատ ավելի պայծառ ծագելով՝ երևում է բոլորին, էջ 222): ... որ կանգնեալ էր
յերկրէ ի յերկինս (որ դրված էր երկրից մինչև երկինք, էջ 302):

9/ ***Ի(յ) + հայցական հոլով*** կառույցով արտահայտվում է նաև տարբեր հոլովների իմաստներ.

ա/ տրական. օրինակ՝ ... գրել եւ ցուցանել ***յարքունիս*** (արքունիքին) զմիաբանութիւն բռնութեանս ...(էջ 122): ... եւ խառնէին ***ի զօրս*** (զորքին) նոցա... (էջ 156): ... եւ դոքօք զստամբակսն ածցես ***ի հաւանութիւն*** (հավանության կբերես, էջ 168): ... գրեաց եւ եցոյց վասն նոցա ***յարքունիս*** (արքունիքին, էջ 192): ... դարձան ***ի հրաման*** թագաւորին (հնազանդվեվին թագավորի հրամանին, էջ, 212): ... անձամբ տուեալ զանձինս ***ի փորձութիւն*** (անձամբ իրենց անձը փորձության էին տվել, էջ 274): ... ***ի ճաշատեղս*** նոցա հայեցան (նրանց ճաշատեղերին նայեցին, էջ 408):

բ/ գործիական. օրինակ՝ ... ընկալաւ զչարչարանս մերոյ մեղաց ***ի յիւր մարմինն*** (իր մարմնով կրեց մեր մեղքերի չարչարանքը, էջ 174): ... որ ***յոգի եւ ի մարմին*** առ հասարակ դիակնանայ (հոգով և մարմնով, էջ 180): Կարգէր կազմէր զզօրսն ամենայն, եւ տարածանէր երկայնէր զճակատն ***յերկայնութիւն դաշտին*** մեծի (մեծ դաշտի երկարութեամբ, էջ 232): ***Ի լուր համբաւոյ նորա*** իմաստնացան տգէտք (Նրա համբավը լսելով, էջ 386):

Այսպիսով՝ ***ի(յ) + հայցական հոլով*** կառույցում նախդիրն արտահայտում է ժամանակակից հայերենի ***մեջ, դեպի, տակ, ներքո, վրա, համար, հետ, վերաբերմամբ, նկատմամբ, մինչև*** և այլ կապերի իմաստները:

Հայցական հոլովի հետ ***ի(յ)*** նախդիրը հանդես է գալիս նաև ***մինչև*** նախադրության և ***առ*** նախդրի հետ միասին: Դրանցից յուրաքանչյուրը յուրովի է սպասարկում հայցական հոլովին: ***Մինչև + ի(յ) + հայցական հոլով*** կառույցում ***մինչև*** նախադրության միջոցով ընդգծվում է հոլովված բառի արտահայտած ժամանակի կամ տարածության իմաստին չհասած նշանակետը, իսկ ***ի(յ)*** նախդրի միջոցով ցույց է տրվում այն առարկան, դեպի ուր կամ որին ուղղված է ենթակայի գործողությունը: Օրինակ՝ Որ իբրեւ զհանդերձ կարծէր ունել մեզ զքրիստոնէութիւնն, արդ իբրեւ զգոյն ի մարմնոյ չկարէ շրջել, թերեւս եւ ոչ այլ կարսցէ ***մինչեւ ի կատարած*** (մինչև վերջը, էն 208): Արդ ***մինչեւ ի գալուստն*** երկրորդ (մինչև երկրորդ գալուստը)՝ նոյն նահատակութիւն կատարի չարչարանօք (էջ 228): ... եւ շրջան առեալ կոտորեր ***մինչեւ ի նոյն տեղի*** (մինչև նույն տեղը, էջ 236): Եւ այնպէս յերկարեցաւ ***մինչեւ յերկոտասաներորդ ամն*** (մինչև տասներկուերորդ տարին, էջ 378):

Առ + ի(յ) + հայցական հոլով կառույցում երկու նախդիրների միջոցով ընդգծվում, կոնկրետացվում է միևնույն քերականական հարաբերությունը: Օրինակ՝ Ապաքէն նոյն Տէր ի սկզբանէ եւ մինչեւ ցայսօր եւ ***առ յապա*** (հետո էլ), եւ յաւիտենից յաւիտենաս, եւ անդր քան զամենայն յաւիտեանս (էջ220): ... եւ երեւցուցանէր զթողութիւն ապստամբութեանն ***առ ի շինութիւն եկեղեցւոյ*** (եկեղեցիները շինելու) շնորհել անդրէն ... (էջ 244): Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա, ***առ ի կշտամբումն*** (կշտամբելու համար) յանդիմանութեան մեղաց նորա ... (էջ282):

Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, «Վասն Վարդանայ...» աշխատության մեջ ***ի(յ)*** նախդրի միջոցով արտահայտվում է ժամանակակից հայերենի ***համար, հանուն, դեպի, նպատակով, վերաբերմամբ, նկատմամբ, տակ, ներքո, ժամանակ, հաղեպ, հետ, մեջ, որպես, իբրև, միջոցով, ընթացքում, մասին, կողմը, մինչև, պատճառով*** և այլ կապերի ու կապական բառերի իմաստներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երկեր, Զ հ., Եր., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1974., 848 էջ:

2.Աբրահամյան Ա. Ա., Գրաբարի ձեռնարկ, Չորրորդ հրատ.,«Լույս» հրատարակչ., Եր., 1976., 560 էջ:
3. Աճառյան Հր.,Հայերեն արմատական բառարան, հ. Բ Ե-Կ,Եր.,1973., 688 էջ:
4. Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Եր. համալս. հրատ., 1989.,448էջ:
5.Խաչատրյան Լ. Մ.,Թոսունյան Գ. Բ., Գրաբարի դասագիրք, Եր., 2004., 380 էջ:
6.Մանուկյան Գ.Մ.,Գրաբարի նախդիրները և նրանց գործածությունը հայ պատմագրական երկերում (V-XI դարեր), Եր., 2002., 166 էջ:
7.Նոր բառգիրք հայկազեան լեզուի,Հատոր առաջին Ա- Կ, Եր., 1979., 1142էջ:

ՀՏԴ 809.198.1 Հայոց լեզու

Օֆելյա Բաբայան
բ.գ.թ.,պրոֆեսոր,ակ.Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
էլ. հասցե՝ o.e.babayan@mail.ru

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ. ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

Պատմական ամեն մի ժամանակաշրջան առաջ է քաշում նոր խնդիրներ, նոր մոտեցումներ նրանց տեսական ու գործնական լուծման համար: Արդի հայերենի երկու տարբերակների փոխհարաբերությունների, նրանց փոխազդեցությունների հարցերը դարձել են համազգային նշանակություն ունեցող հարցեր թե՛ քաղաքական, թե՛ լեզվական առումով: Կարևորվում է արևելահայերենի ու արևմտահայերենի լեզվական որոշ հարցերի համադրական ուսուցումը հանրակրթական դպրոցում: Յուրաքանչյուր գրագետ հայ պարտավոր է իմանալ արևելահայերենն ու արևմտահայերենը:

Բանալի բառեր՝ նոր գրական հայերեն, արևմտահայերեն, արևելահայերեն, լեզվի տարբերակների մերձեցում, խոսակցական լեզու, գերիշխող լեզու, վտանգված լեզու, սփյուռք, համազգային, համադրական ուսուցում:

Офелия Бабаян,
к.ф.н., профессор, кафедра армянского языка им. академика С. Абрамяна

ЗАПАДНОАРМЯНСКИЙ: СТАРЫЕ И НОВЫЕ ПРОБЛЕМЫ

Каждая историческая эпоха выдвигает новые проблемы, новые подходы для их теоретического и практического решения. Вопросы взаимоотношения двух вариантов армянского языка, их взаимодействие стали вопросом общенационального значения как в политическом, так и в языковом плане. Становится важным сопоставительное изучение некоторых вопросов восточноармянского и западноармянского в общеобразовательной школе. Каждый образованный армянин должен владеть двумя вариантами современного армянского языка.

Ключевые слова: *новоармянский, западноармянский, восточноармянской, сближение вариантов языка, разговорный язык, язык доминант, язык подвергнутый опасности, диаспора, общенациональный, сопоставительное обучение.*

Ofelya Babayan,
Ph.D., Professor, Chair of Armenian Language after Academician S. Abrahamyan

WESTERN ARMENIAN: OLD AND NEW PROBLEMS

Each historical era puts forward new challenges, new approaches to their theoretical and practical solutions. The question of the relation between the two variants of the Armenian language and their interaction have become a matter of nationwide importance both politically and linguistically. It becomes essential to make a comparative study of some issues of Eastern Armenian and Western Armenian in the comprehensive school. Every educated Armenian must maser two variants of modern Armenian language.

Key words: New Armenian, Western Armenian, Eastern Armenian, convergence of language variants, colloquial language, dominant language, endangered language, diaspora, nationwide, comparative study.

Հայոց լեզվի զարգացման պատմությունն անխզելիորեն կապված է հայ ժողովրդի պատմության հետ: Պատմական ամեն մի ժամանակաշրջան առաջ է քաշում նոր խնդիրներ, հարցեր, նաև նոր մոտեցումներ նրանց տեսական ու գործնական լուծման համար:

Հայտնի է, որ նոր գրական հայերենը՝ աշխարհաբարը, չի կարողանում հանդես գալ որոշակի միասնությամբ, այլ գոյություն ունի արևելահայ ու արևմտահայ տարբերակներով: Ինչպես նշում է ակադեմիկոս Գ. Ջահուկյանը այդ տարբերակներն անվանող եզրույթների մասին, լեզվի պատմական, գրական, անհատական և այլ տարատեսակների համար հատուկ տերմինների բացակայության հետևանքով աշխարհաբարի գրական արտահայտության այդ երկու տարբերակները կոչվում են <<արևմտահայ և արևելահայ լեզուներ>>: Ըստ նրա՝ այս անվանումներն անհաջող են երկու նկատառումով. ա) չի շեշտվում նրանց գրական լեզուներ լինելը, որ հիմք է տալիս այն սխալ եզրակացության համար, թե հայությունն ունի երկու լեզու, ուստի և ներկայացնում է երկու տարբեր ազգերի ամբողջություն, բ) նկատի չի առնվում <<լեզու>> բառի գործածության պայմանական բնույթը տվյալ դեպքում, որովհետև դրանք հայության երկու հատվածների համար էլ հասկանալի են, հայության տարբեր խավերը չունեն դրանց առանձին լեզու լինելու ըմբռնումը և դրանք հավասարապես կոչում են աշխարհաբար: Նա նպատակահարմար է համարում դրանք կոչել արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ կամ նոր գրական լեզվի (գրական աշխարհաբարի) արևելահայ և արևմտահայ տարբերակներ:[1]

[1] Տե՛ս Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացման փուլերը, 1964, էջ 63-64:

Իհարկե, ցանկալի չէր, նույնիսկ ողբերգություն կարելի է համարել մի փոքր ժողովրդի համար ազգային լեզվի երկու տարբերակներ ունենալը: Դա մտահոգում էր ժամանակակիցներին, մտահոգում է շատերին նաև այսօր: Գրապայքարի շրջանից սկսած՝ փորձեր են արվում փոխզիջումային ճանապարհով հասնելու մեր ազգային լեզվի երկու տարբերակների մերձեցմանն ու միավորմանը:Մի շարք մտավորականներ առաջարկում էին բոլոր բարբառների խառնուրդով նոր միասնական գրական լեզու կազմել հայության երկու հատվածների համար:

Այդպիսի քերականություն ստեղծելու փորձեր են կատարում Ն. Ռուսինյանը, Մ.Չերազը, Ե. Տեմիրճիբաշյանը:Քանի որ առանց ընդհանուր լեզվի <<ունայն երազ է հասարակաց ազգի առաջ գնալը>>,Մ. Նալբանդյանը նույնպես կարևորում է Պոլսի և Արարատյան բարբառների մերձեցման հարցը:Ըստ Նալբանդյանի՝ կարելի է երկու տարբերակների կապերը աստիճանաբար ամրապնդել,ազգի առաջավոր մասի մեջ փոփոխել լեզուն,որն էլ կազդի մյուս մասի լեզվի վրա:Մ.Նալբանդյանը,ինչպես և բոլոր առաջադեմ մտածողները լեզվի բնական զարգացման կողմնակից էր,բայց անհրաժեշտ էր համարում մերձեցման փորձերը:

Միասնական գրական լեզվի անհրաժեշտությունը տեսականորեն ընդունում է նաև Մ.Աբեղյանը:Նա երկու գրական լեզուների ստեղծումը համարում է <<հատկապես արևելահայոց անցյալ գրագետների անհեռատեսության>> արդյունք : Նա զիջումներ է պահանջում հիմնականում արևմտահայերենից:[1]

Բայց, ինչպես տեսնում ենք, այդ փորձերը որոշակի արդյունք չեն ունենում,որովհետև հնարավոր չէ միջամտել լեզվի պատմական զարգացման բնականոն ընթացքին:

Հր. Աճառյանը հայերենի երկփեղկվածության սկիզբը համարում է Բագրատունյաց Հայաստանի վերացումը 11-րդ դարում. <<ԺԱ դարի կեսին Բագրատունյաց թագավորության կործանումով ջնջվեց հայ պետականությունը մեր երկրից: Այնուհետև ընդհանուր հայության միարար կապը եթե կար, վերացավ, և գաղթականության պատճառով էլ լեզվական անջատականությունը ծայրագույն աստիճանի հասավ: Այն բոլոր լեզվական միությունները, ընդհանուր միօրինակությունները, որ նկատում ենք հայերենի բարբառներում թե՛ երկրի ներսում, թե՛ մանավանդ դրսում, չէին կարող գաղթականությունից հետո առաջացած լինել՝ միարար կապի բացակայության պատճառով… Սրանից հետևում է, որ այն բոլոր երևույթները, որոնք միօրինակ և ընդհանուր են այսօր մեր լեզվի բոլոր բարբառներում, բխում են հայերենի նախավոր միությունից և ապացույց են հայերենի համատարած միության Հայաստանում ԺԱ դարից առաջ>>:[2]

Արևելահայերը երկար ժամանակ օգտվում էին արևմտահայերի գրականությունից, գործածում էին Պոլսում, Զմյուռնիայում, Վենետիկում հրատարակված թերթերն ու գրքերը և <<Արևելահայ գրական գործիչները կարող էին ընդունել արևմտահայ գրական լեզուն, որ արդեն պատրաստ էր, և հարմարեցնել արևելահայերի լեզվական պահանջներին: Բայց նրանք ստեղծեցին մի ուրիշ գրական լեզու, որի հիմքը Երևանի բարբառն է: Քերականությունը վերցվեց բարբառից, օտար բառերը վտարվեցին, և հայերեն բառերը վերածվեցին իրենց գրաբար ձևին>>:[3]

Արևմտահայ աշխարհաբարի գիտական քննության առաջին հեղինակ Ա. Այտընյանը (1825, Պոլիս-1902, Վիեննա) աշխարհաբարի հետքերը տանում է մինչև 4-րդ դար (387թ), երբ Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, որի արդյունքում Հայաստանի արևելյան ու արևմտյան հատվածները տնտեսական-քաղաքական ու մշակութային կյանքով առանձնացան, իսկ աշխարհաբարի կամ արդի հայերեն լեզվի ձևավորման սկիզբը հասցնում է միջնադար՝ 13-14-րդ դարեր: [4]

Աշխարհաբարը մշակվել է հայ ժողովրդի տարբեր հատվածների խոսակցական լեզվի համընդհանուր տարրերի, գրաբարի և միջին հայերենի հասկանալի իրողությունների համադրությամբ:

Հայոց լեզվի արևմտահայ և արևելահայ տարբերակները յուրովի են կապվում մեր լեզվի նախորդ փուլերին: Արևելահայերենը հնչյունական համակարգով, քերականական մի շարք հատկանիշներով կապվում է գրաբարի, իսկ արևմտահայերենը՝ միջին հայերենի հետ: Իսկ միջին հայերենի հիմքում ընկած են առաջին հերթին Կիլիկիայի բարբառային-խոսակցական նորմերը, որը բացատրվում է նախորդ շրջանի վերջում Բագրատունիների թագավորության անկմամբ և Կիլիկիայի հայկական պետականության հաստատմամբ: Փաստորեն, հին շրջանից միջինին անցնելիս տեղի է ունեցել գրական լեզվի հիմքի տեղաշարժ, որը ևս նպաստել է մեր լեզվի երկու տարբերակների առաջացմանը: Կիլիկիայի հայկական պետականության պաշտոնական լեզուն չի կարողացել հասնել ընդհանուր գրական լեզվի աստիճանին: Նրան զուգահեռ շարունակել է գործել գրաբարը, գրավոր արտահայտություն են ստացել բարբառային մի շարք տարբերակներ, որոնց մեջ աստիճանաբար գերիշխող դիրք են գրավել Արարատյան բարբառը, որն ուներ արևելահայ –ում բարբառաճյուղի հատկանիշները, և Պոլսի կը ճյուղի բարբառը, որը արևմտահայ բարբառախմբի մեջ է մտնում և ներկայացնում է Կիլիկիայի ու նրան մերձավոր բարբառների հետագա զարգացումը: Այս երկու բարբառների հիմքի վրա էլ ձևավորվել է մեր երկճյուղ նոր գրական լեզուն:

Արդի արևելահայերենը ՀՀ և ԼՂՀ պետական լեզուն է: Եթե խորհրդային շրջանում մեր հոգու և մտքի վրա իր դրոշմն էր դրել ռուսերենը, ռուս լեզվաբանությունը, աշխարհի հետ կապվել ենք ու աշխարհը ճանաչել ռուսերենի միջոցով, ապա այսօր մեր քաղաքական անկախությունը նոր հարաբերությունների հիմք է դարձել և՛ մեր պետության, և մեր պետական լեզվի՝ արևելահայերենի գործառության բնագավառներում:

Արևելահայերենը մեր անկախության տարիներին կարողացել է ստեղծել ու գործածում է շուրջ 10-15 հազար բառային օտարաբանությունների հայերեն համարժեքները:[5]

[1] Տե՛ս Մկրտչյան Է.,Խաչատրյան Լ.,Հայոց լեզվի պատմության դասընթաց,2016,էջ 301-304:
[2] Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, մաս II, 1951, էջ 435:
[3] Ն.տ., էջ 497:
[4] Տե՛ս Շահբազյան Տ., Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը, 1963, էջ 51-91:
[5] Տե՛ս Եզեկյան Լ., Հայոց լեզու, 2005, էջ 128:

Արևմտահայերենը դարձել է սփյուռքահայության լեզուն, գործածվում է հայկական գաղթօջախներում, նաև ենթարկվում է գաղթօջախների գերակշիռ լեզուների ազդեցությանը:

<<Արևմտահայ հարուստ ու սքանչելի լեզուն, որ 1915-ից այս կողմ որբ է մնացել, չվայելելով պետական ոչ մի օգնություն, և որ ճարահատ բռնել է լինելության <<քարացած>> պահպանութեան տարերային ճանապարհը, ներկայումս ուսուցման գետնի վրայ երկփեղկուելու վտանգի առաջ է կանգնած>>[1]: Դժբախտաբար, վերջին տասնամյակներին Սփյուռքում նահանջել է հայերենի ուսուցման մակարդակը, որը մտահոգություն է պատճառում մտավորական և պետական շրջանակներին: Այսօր արևմտահայերենը աշխարհի վտանգված լեզուների շարքում է և մեր օգնության կարիքն ունի: Այդ մասին ահազանգում են շատ մտավորականներ: Հատկապես Սփյուռքի մտավորականները խոր ցավով են ներկայացնում արևմտահայերենի այսօրվա վիճակը, ուղիներ փնտրում արևմտահայերենը փրկելու <<մահամերձի>> վիճակից: Չպետք է մոռանանք , որ արևմտահայերենը սփյուռքահայերի հիմնական մասի աշխատանքային լեզուն չէ: Շատ սփյուռքահայեր արևմտահայերենը սովորում են երբեմն թոշակի անցնելուց հետո, նշելով `<<Հոգուս պարտքը կու տամ>>, <<Ծնողներուս պարտքը կու տամ>>: Արևելահայերենը մեր մանկության, աշխատանքի, ողջ կյանքի, նաև արևմտահայ ու սփյուռքահայ գրողների լեզուն է :Այսօր Մերձավոր Արևելքից ու աշխարհի այլ մասերից հայրենիք վերադարձող մեր հայրենակիցների արևմտահայերենը նաև մեր լեզուն է, հայերենի մի տարբերակը:

Հայագետ Լևոն Զեքիյանը (Իտալիա, Վենետիկ) իր մոտեցումներն է արտահայտում արևելահայերենի և արևմտահայերենի, Սփյուռքի և Հայրենիքի միության վերաբերյալ: <<Բազմաթիվ են հարակցություններն ու փոխառնչությունները լեզվի և ազգության (էթնոս) միջև: Անշուշտ, ինչպես միևնույն լեզուն կրնա հասարակաց ըլլալ մեկէ ավելի ազգություններու, այսպես գոյություն ունին նաև բազմալեզու ազգություններ: Կասկած չկա, սակայն, որ շատ հաճախ ազգային միություն և լեզվական միություն սերտ համեմատություն մը կպահեն իրարու նկատմամբ:… Մեկնելով հայ ժողովրդի առկա գոյավիճակեն, մեկ կողմե պետական հայրենիքի հողերուն վրա, մյուս կողմե անոնցմե դուրս բնակող իր զանգվածները իրենց այլևայլ հատվածներով ու խմբավորումներով, և իբր հիմնական սկզբունք ընդունելով հայ ժողովուրդին ազգային-բարոյական միությունը, … անհրաժեշտ է ուրվագծել թե լեզվական ինչ ձևի և ինչ աստիճանի միություն մը պետք է իբրև անհրաժեշտ հասարակաց հայտարարք ընդունիլ, պատմական ներկա շրջադարձին մեջ, հայ ժողովուրդի միության>>:[2]

Սփյուռքի հետ կապերի ամրապնդման առումով որոշակի քայլեր են արվում հատկապես անկախացումից հետո:

Փարիզի <<Մաշտոց>> հայ լեզվի պաշտպանության միությունը (տնօրեն՝ դոկտ. Հիլդա Գալֆայան-Փանոսյան) և Երևանի Խ. Աբովյանի անվ. մանկավարժական համալսարանի <<Սփյուռք>> գիտաուսումնական կենտրոնը (տնօրեն՝ Ս. Դանիելյան) 2002-2003 ուստարվանից սկսած՝ կազմակերպում են արևմտահայերենի ուսուցման դասընթացներ (ՀՀ Կրթության և գիտության նախարարության արտոնությամբ՝ Հայաստանի և Արցախի հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար):

2008թ. (հունիսի 23-ից հուլիսի 19-ը) հայերենի ուսուցիչների 9-րդ վերապատրաստության դասընթացները կազմակերպվել են Ստեփանակերտում: Մասնակիցները քննություն են հանձնում և վաստակում լրացուցիչ վարձատրությամբ 8-րդ, 9-րդ դասարաններում արևմտահայ լեզվի ու գրականության նախասիրական պարապմունքներ անցկացնելու իրավունք: 2006թ. օգոստոսին Ծաղկաձորում գումարվել է կրթական համահայկական երկրորդ համաժողովը, որտեղ նշվել է, որ հանրակրթական դպրոցներում կազմակերպվելու է արևմտահայերենի ուսուցումը, Երևանի պետհամալսարանում 2008-2009 ուստարվանից հիմնարար մոտեցումներով դասավանդվելու է արևմտահայերենը:

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում արևմտահայերենի բաժին է բացվել, որն ունի նաև սփյուռքի խումբ: Սփյուռքի նախարարությունը համաժողով է կազմակերպել <<Արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցում>> թեմայով, կազմակերպվում են նաև հուշամրցույթներ, միջոցառումներ:

Սփյուռքի ուսուցիչները նույնպես մասնակցում են հայրենիքում կազմակերպվող դասընթացների, տարաբնույթ միջոցառումների: Ոմանք հատուկ կրթաթոշակով բարձրագույն կրթություն են ստանում ՀՀ բուհերի բանասիրական ֆակուլտետում:

Այսօր արդի հայերենի երկու տարբերակների փոխհարաբերությունների, նրանց փոխազդեցությունների հարցերը դարձել են համազգային նշանակություն ունեցող հարցեր թե՛ քաղաքական, թե՛ լեզվական առումով:

Կարծում ենք՝ կարևորվում է նաև արևելահայերենի ու արևմտահայերենի լեզվական որոշ հարցերի համադրական ուսուցումը հանրակրթական դպրոցում:

Հայոց լեզվի երկու տարբերակները մեր ազգային հարստությունն են, որոնց տիրապետելը նշանակում է լինել հայ ժողովրդի երկու հատվածների ստեղծած հոգևոր-մշակութային ժառանգության լիարժեք իրավատերը: Յուրաքանչյուր գրագետ հայ ուղղակի պարտավոր է իմանալ իր մայրենի լեզուն՝ արևելահայերենն ու արևմտահայերենը:

Օգտագործված գրականություն

1.Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, մաս II, 1951:
2.Դոկտ. Հիլդա Գալֆայեան-Փանոսեան, Արեւմտահայ գրական լեզուի ուսուցման ձեռնարի, Փարիզ, 2008:
3.Եզեկյան Լ., Հայոց լեզու, 2005:
4.Լեզվական հարցեր և ազգային միություն, Հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողովի զեկուցումների դրույթներ, ՀՍՍՀ ԳԱ, Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Երևան, 1987
5.Մկրտչյան Է.,Խաչատրյան Լ.,Հայոց լեզվի պատմության դասընթաց,2016

[1] Դոկտ. Հիլդա Գալֆայեան-Փանոսեան, Արեւմտահայ գրական լեզուի ուսուցման ձեռնարի, Փարիզ, 2008, էջ 4:
[2] Լեզվական հարցեր և ազգային միություն, Հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողովի զեկուցումների դրույթներ, ՀՍՍՀ ԳԱ, Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Երևան, 1987, էջ 63:

6.Շահբազյան Տ., Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը, 1963,:
7.Լեզվական հարցեր և ազգային միություն, Հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողովի զեկուցումների դրույթներ, ՀՍՍՀ ԳԱ, Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Երևան, 1987:
8.Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացման փուլերը, 1964:

ՀՏԴ 809.198.1 Հայոց լեզու

Միլվա Մինասյան,
բ.գ.թ.,դոցենտ,ակ.Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
ԷԼ-ՓՈՍՏ՝ silvaminasyan50@mail.ru

ԱՐՑԱԽ//ՂԱՐԱԲԱՂ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎՀ. ՇԻՐԱԶԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

Արցախը վարչատարածքային, իսկ Ղարաբաղն էթնիկական բնիկ հայկական ծագման վաղնջահայերենի բառեր են: Հին ժամանակներից առ այսօր համանիշ են, երբեմն էլ՝ նույնանիշ: Ղարաբաղ-ի հիմնամասերը՝ կ/ղարա և բալ/ղ, ծագում են հայկականից (կ/ղարայի ցեղ): Կապ չունեն մոնղոլական մեծ, հետո՝ թուրքերենով տարածված մութ, սև՝ Սև այգի, սխալ անվան հետ անվնա:

Հովհ. Շիրազի չափածոյում Արցախ// Ղարաբաղ տեղանունները գործածվել եմ, որպես գեղագիտական խոսքի բաղադրիչներ, պատկերային միջոցներից գործածվել են մակդիրի, արտահայտչական ձևերից՝ կրկնաբերությունը, կոչի ձևով՝ արտահայտելով հուզախառն ապրումների նրբերանգներ:

Բանալի բառեր-Վարչատարածքային անուն, էթնիկական բառ, կ/ղարայի ցեղ, ուրարտական սեպագիր, պատկերային միջոց, մակդիր, արտահայտչական միջոց, կրկնաբերություն, կոչ:

Сильва Минасян,
к.ф.н., доцент, кафедра армянского языка им. академика С. Абрамяна

ЭТИМОЛОГИЯ СЛОВ АРЦАХ, КАРАБАХ И ИХ СТИЛИСТИЧЕСКОЕ ПРИМЕНЕНИЕ В ПОЭЗИИ ОВАНЕСА ШИРАЗА

Административное название Арцах и этническое название Карабах являются армянскими словами дописьменного периода. Они состоят в синонимическом отношении. Словообразующие основы кара-бал/х с этимологической точки зрения армянские (род карая) и не имеют отношения к монгольскому слову кара (большой), который в турецком языке имел семантическое развитие: черный, темный (черный сад).

В поэзии Ов. Шираза слова Арцах и Карабах употреблены как стилистические средства (эпитет, реторическое обращение).

Ключевые слова-*Административное название, этническое слово, кара род (ցեղ), урартическая клинопись, выразительное средство, эпитет, риторическое обращение.*

Silva Minasyan ,
Ph.D., Associate Professor, Chair of Armenian Language after Academician S. Abrahamyan

THE ETYMOLOGY OF WORDS ARTSAKH, KARABAKH AND THEIR USAGE IN THE POETRY OF H. SHIRAZ

The administrative name of Artsakh and ethnic name of Karabakh are Armenian words of preliterate period. The names are used as synonymous terms. Derivational bases Kara-bal/gh from an etymological point of view of Armenian and have no relationship with Mongol word kara (large), which in the Turkish language had a semantic development: black, dark (black garden).

In the poetry of H. Shiraz the words Karabakh and Artsakh are used as stylistic means (as a reduplication, rhetorical , trope).

Key words- administrative antique authors, Artsakh// Karabakh, x/kara ցեղ, distinctive, epithet, ethnical word, etymology, expressiv means, reduplication, rhetorical , synonym, trope, Urartaean cuneiform.

…Փոխել հայոց անունդ՝ Արցախ, օտար Ղարա բաղ ես դառել….
…Շիրազն ասաց, աշխարհ անցի՛ր, հայ գալիք ես, հա՛յ Ղարաբաղ… («Ողբ Ղարաբաղի»)

Արցախ բառը գիտակցվել ու գիտակցվում է հայերեն: Հանրահռչակ մանկագիր Գ. Գաբրիելյանը կրտսեր դպրոցի երեխաների համար այդ հանրամատչելի պատմվածքում ժողովրդական ստուգաբանությամբ է երեխաներին մատուցել *Արցախ* տեղանունը՝ Արայի *ցախ*՝ անտառ. «Արցախ» փոքրածավալ այդ պատմվածքում տատը այդպես է բացատրում Արցախիկ թոռանը[1]: Հայկական հանրագիտարանում ընդգրկված Արցախ բառույթի անվանման՝ վաղնջահայերենից առ այսօր տարբերակներն են՝ Արցախ// Արձախ// Արդախ// Ուրդեխե// Ատախունի[2], իսկ Ղարաբաղ բառի մասին հրատարակածը հոմանիշներով են և դրանք են[3]՝Ուտիք ու Արցախ //Առանի Ղարաբաղ//ԼՂԻՀ : Այս անվանումների հոմանիշների և նույն անվան տարբերակների ձևեր են նաև Հայաստանի տեղանունների բառարանում[4] տեղադրվածները՝ Առան// Արցախ// Արդախ// Արձախ// Արձախա աշխարհ// Արցախամար աշխարհ// Գարգար// Խաչեն// Խաչենք// Օրխիստինե// Ղարաբաղ): Ղարաբաղը[5]՝ Գարապաղ// Գարեպաղ// Խարաբաղ// Ղարահա, Սև այգի է ստուգաբանվել (արաբական ստուգաբանությամբ ու կիրառությամբ, 1319 թ.), իսկ Թովմա Մեծոփեցին այդ նույնը գործածել է 15-րդ դարում և իր իմացությամբ մեկնաբանել նույն Սև այգին, 16-րդ դարում Հովհաննեսիկ Ծարեցին ևս

[1]. Տե՛ս Ջ. Գյուլամիրյան, Կ. Թորոսյան, Մայրենի, II դաս., Ե., 2002 թ., էջ 73:
[2]. Տե՛ս ՀՍՀ, հ. 2, 1976, էջ 720, էջ150:
[3] Տե՛ս Ն.տ., հ. 7, Եր., 1981, էջ 26:
[4] Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.1, 1986, 506 էջ, էջ 992:
[5] Տե՛ս Ն.տ., հ. 3, 1991, էջեր 520-521:

հոմանիշ Սև այգի և Ղարաբաղ է գործածել // ԼՂԻՄ): Արցախյան գիտնականների կողմից Արցախ տեղանունը ճիշտ բխեցվել է ուրարտական սեպագրերից ՝ Ուրտեխե// Ուրտեխինի, իսկ հույն անտիկ հեղինակների մոտ՝ Օրխիստենա[1]: Այս տեղանքը կոչել են նաև Ցավդեկ, Խաչեն տեղանուններով (ն. տ.), իսկ ոմանց համար ընդունված Սև այգի// Ղարաբաղ անվանումը, ինչպես նշեցինք, 14–րդ դարից է՝ վրացական, պարսկական գիտական աղբյուրներում (ն. տ., պարսիկ պատմիչ Համդալլահ Կազվինիի մոտ՝ Բաղ-ի սաֆիդ՝ Սպիտակ այգի, իսկ լեռնային մասը՝ Բաղ-ի սիախ, որը թրքալեզվում վերափոխվել է Կարա-բաղ-ի՝ Սև այգի): Հայ բանաստեղծական աշխարհում, իր ստացած կրթության համապատասխան իմացության, գեղագիտորեն մեկնաբանել է նաև բանաստեղծուհի Մետաքսեն[2] : Ահա Մետաքսեի մեկնությունը՝ բաղք՝ ցեղը, կար՝ տեղ, ԿԱՐԱԲԱՂՔ// ՂԱՐԱԲԱՂ, բաղք ցեղը մնալու տեղը: Ահա Մետաքսեի «Ղարաբաղ» բանաստեղծության ամբողջական օրինակը :

Ղարաբաղ

Իմ աչքերից սկիզբ առնող գետերը քո
Ողողում են ձմեռները տառապանքիդ,
Ու կարոտիս արտասվող ձյան շերտեր ու շիթ
Հեղեղվելով գարունների լույսի ներքո
Հորձանքով են ճեղքում բախտի ցավ ու վթար,
Եվ գետերիդ կոպերից դուրս կաթիլ-կաթիլ
Հույս են շաղում համբերատար…
Իմ թևերով հավատամքիդ գետերը հորդ
Գրկում են սար, լեռ ու հովիտ,
Եվ կենսատու ոգորումիդ տալով հազար
Շունչ ու գորով,
Հավերժն ուսած հոսում են ծով…
Ո՛վ իմ Արցախ,
Դու հողեղեն բոլորումիս անբողջացման
Ու մարմնավոր լրումներիս գոյատևման
Ողնաշարն ես ամենազոր…
Պատմիչները հելլենական
Գրառել են, թե դարերում այն հեռավոր,
Երբ չէր ծնվել
Աստծո Որդին,
Վաղնջական այս հողերում
Ապրում էին նախնիները քո հայրենի,
Որ բաղք էին կոչվում հնում,
Ու անվանում երկիրն իրենց
Մեծ Կարաբաղք….
Բազմահմուտ քերականում հայերենի
ԿԱՐ մասնիկը տեղ իմաստն է պարունակում,
Ու հաստատում,
Որ դարերով ոսոխներդ կիսավայրի,
Ասպատակել, ավերել են հողերդ սուրբ
Եվ հայազարմ այդ անունից մեծավայել,
Օտարների հորջորջումով
Մեզ Ղարաբաղ տեղանունն է արդ մնացել….
Ո՛վ Կարաբաղք,
Լեռնապարիսպ հայ աշխարհի,
Դու գոյության զարկերակի տրոփներով,
Բյուր նյարդերով
Թրթռում ես մեր շնչավոր երազներում
Եվ կեցության տեսակարար կշիռներում
Ներումներիդ, բարությանդ գետերդ հորդ
Սկիզբ առած մեր հողեղեն տվայտանքից,
Վշտից զարկում ճակատները ժեռ քարերին,
Խառնվում են արցունքներիս,
Ու դառնալով Խաչենագետ,
Կրքոտ Թարթառ,
Վարար Կարկառ,
Հոսում են դեռ, հոսում անվերջ
Եվ հոգևոր իմաստնությամբ,
Բիբլիական նվիրումով
Փարվում են քեզ,
Որ կաարոտիդ տխրությունը բաժանեն մեզ
Որպես նշխարք,
Ո՛վ ոգեղեն կարոտ ու երգ
Մեր Կարաբաղք…. (էջ 250-252)

Բակուր Կարապետյանը[3] «Արցախը և նրա շուրջ» փաստավավերագրական արձակ գործում, ըստ իր ընկալումների, հետևյալ խոսակցական զրույցն է ներկայացրել՝ -Արցախն ու Ղարաբաղը մեկ չե՞ն,-հարցրեց Կոլյան: -Ղարաբաղը Արցախի մի հատվածն է: Երևի մեկ տասներորդ մասը,-ասաց Հովիկը,-Հին Արցախն ընդգրկում էր Քուռ-Արաքսի հովիտը, մյուս ծայրում մինչև Սևան, Վայոց ձոր էր հասնում: -Իսկ Արցախն ի՞նչ է նշանակում: Ոչ-ոք ոչինչ չի գրել այդ մասին: -Այո՛, բացառությամբ որպես հայոց արքաների համար ցախ կամ փայտ հատելու վայր բացատրության: -Փորձենք վերլուծել բառը,-ասացի ես,-Ար և ցախ: Հին Հայաստանում տեղանունների մեծ մասը, թեկուզ հենց Արմենիան, Արարատը, Արագածը, Արան նույնիսկ արևը Ար-ով են սկսվում: Դա, ըստ երևույթին, հայկական մի ցեղի անունն է: -Իսկ Ցախ-ը: -Այսօր էլ Ղարաբաղի որոշ ենթաբարբառներում մնացել է Ցեղ-ի ցաղ կամ ցախ ձևը: -Ուրեմն՝ ԱՐՑԵ՞Ղ: -Այո՞՝ Արերի՝ արեաց ցեղ կամ արմենների ցեղ,-հաստատեցի ես: -Հետաքրքիր է,-ասաց Կոլյան,-իսկ Ղարաբա՞ղը: -Ղարաբաղը անունը 14-րդ դարի կեսերին օտարներն են կնքել,-ասաց Հովիկը,-նշանակում է սև այգի, սև-ը փոխաբերական իմաստ ունի (էջ 68-69):

Արթուր Նավասարդյանը (ք. Երևան) համեմատաբար, առավել համոզիչ, ծավալուն ու գիտական է ներկայացրել տեղանվան ստուգաբանությունը «Ղարաբաղ տեղանվան շուրջ» հոդվածում[4] : Այստեղ բալայի// բալայ// բաղայ (նույնից՝ Բալա// Բաղա անձնանուն, տեղանուն հայերենում հնամենի ժամանակներից տարածված բառեր՝ Բաղեշ, Բալահովիտ, Բալայան ևն. Բաղք// Բաղաց աշխարհ// Ղարաբաղ, բայց ոչ ծառաստան) հազարամյակների պատմություն ունեցող բառեր են և ցեղի անուն է, իսկ կարա// ղարա նշանակել է ցեղ, ուրեմն՝ բալայի//բաղայի ցեղ, ժողովուրդ (7-րդ դարում, երբ դեռ թուրքի անունն էլ չկար, Անանիա Շիրակացին այս տեղանքը Բաղք էր կոչել՝ բալերի՝ բաղերի տեղանքը, Մովսես Խորենացին՝ նույնը, իսկ II դարի հունահռոմեական Կլավդիոս Պտղեմեոսը իր «Աշխարհագրության» հինգերորդ գրքում իրենց տառադարձությամբ Կարաբալլա էր կոչել ևն): Հանրահռչակ լեզվաբան Հր. Աճառյանը[5], միջնադարյան թուրքական տարածված անձնանունն էր ստուգաբանել. Բալա՝ թրք. Ձագուկի՝ Բալի՝թրք., ձագի մեղր, բալասան, նաև՝ արաբ., ծաղկից մեռոնի բաղադրիչ ևն : Ս. Մինասյանը[6] հավելել է մոնղոլ//մոդոլականը՝ կարա՝ մեծ (կարա-կորում՝ մեծ հավաք, ժողով, համագումար), ուրեմն՝ ղարաբաղ՝ մեծ ծառաստան// անտառ (նրանց համար արցախյան անտառներն այդպես էին), որից հետո գործածվել է մութ, սև հասկացությունները (արևելքից եկած օղուզները հետագայում չինական անվամբ հանրահայտ թուրք կոչվեցին, և նրանց տարատեսակ ցեղախմբերի միջոցով վերջին հասկացությունը տարածվեց ժողովուրդների մեջ):

[1] Տեսՙ Թովմասյան Վ.Հ., Աթաջանյան Վ. Ա., Ներսիսյան Յու. Բ., Ղարաբաղյան հարց, Ստեփ., 1991, էջ 15:
[2] Տեսՙ Մետաքսե, Արցունքները չեն ծերանում, Եր., 1989, էջ 450:
[3] Տեսՙ Կարապետյան Բ., Արցախը և նրա շուրջ, Գ. 1, Եր., 1990, էջեր 68-69:
[4] Տեսՙ Նավասարդյան Ա., «Ղարաբաղ տեղանվան շուրջ», «Լուսարար», Ստեփ., N 22-23, 2004:
[5] Տեսՙ Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. 1, 1942, էջեր 362-364:
[6] Տեսՙ Մինասյան Ս., Հնչյունաբանության և բառագիտության ուսուցումը բուհում, Ստեփ., 2007, էջ 68:

Հովի. Շիրազի գեղագիտական չափածոյի՝ XX դ. 80-ականներից առ այսօր հրատարակված յոթ հատորում[1] («Հայոց դանթեականը» XX դ. վերջին տասնամյակում երկու անգամ է հրատարակվել) Արցախ// Ղարաբաղ բառույթները սակավ կիրառություններ ունեն (Ղարաբաղ բառը միայն «Ողբ Ղարաբաղի» բանաստեղծությունում է հաճախակի հնչել՝ 10-ից ավելի կիրառություն): Իմացական, ճանաչողական կողմերով հայ և միջազգային իրականությունում արժևորված Արցախ// Ղարաբաղ հատուկ տեղանունները, որպես գեղագիտական խոսքի բաղադրիչներ, Հովի. Շիրազի չափածոյում հիմնականում արտահայտչական կիրառությամբ են գործադրված (պատկերայինը սակավ է), իսկ պետականորեն չհրատարակված, բայց սփյուռքի միջոցով նախորդ դարի կեսից ժողովրդի սեփականությունը դարձած «Ողբ Ղարաբաղի»//«Ղարաբաղի ողբը» պոեմանման հուզառատ բանաստեղծությունում Ղարաբաղ բառի կիրառությունն արտահայտչականության գագաթնակետ է: Ահա Արցախ բառույթի12՝ 1, 164: 2, 188: 5, 33: 7, 91 և Ղարաբաղ բառույթի տպագրական կիրառությունների գեղագիտական աղբյուրները12՝ 1, 224: 3, 170: 5, 33, 222:

Մեծատաղանդ ստեղծագործող Հովի. Շիրազի չափածոյում Արցախ// Ղարաբաղ բառույթների արտահայտչական ու սակավ պատկերային գեղագիտական ոճական արժևորումները հետևյալն են:

Պատկերային միջոց: Մակդիր-«Հայաստանի տղաները» բանաստեղծությունում բառակապակցությամբ արտահայտված Ղարաբաղիս կակաչներ (տղաները) արտասովոր գեղագիտական կառույցում Ղարաբաղիս մակդիրը շեշտում է արական սեռի կենսալից լինելը: Պայծառ հավատով լցված՝ մեծ ստեղծագործողն ամենայն մարգարեական խոսքերով Հայկա թոռների քաջագործությունն էր կանխատեսում (Արցախյան գոյապայքար): Ժողովրդական Ղարաբաղ բառով, կակաչի հանրահայտ տեսակն ընդգծելով (կակաչ ծաղկի մեջը հազվագյուտ է առանց սևի լինում)՝ հայ տղաների աննկուն ոգին է շեշտում՝ խորիմաստ լավատեսությամբ կանխազգալով հայոց քաջազունների արդի խիզախումները:

Ինչ էլ անենք՝ հայ են մնում Հայկա թոռներն Հայաստանի,
Բայց նայելով դեռ Մասիսին՝ ամոթի սև ունեն սրտում,
Կակաչներն են Ղարաբաղիս՝ կարմիր, բայց սև ունեն սրտում,
Սևը կանցնի, շուտով կասեմ՝ հայոց արև ունեն սրտում,
Կակաչի էլ սևն են ցրում հայ կտրիճները Հայաստանի:[2]

՛«Գովք հայուհիներին» հուզաթաթավ բանաստեղծությունում, գեղահրաշ հայ աղջիկների բարեմասնությունները բնութագրելիս, տեղայնացնում է մեծ մասին, նաև արցախուհուն՝ ընդգծելով նրա թովչանքը՝ իր ժամանակի հանրամատչելի օտար Ղարաբաղ անվամբ: Մակդիրն այստեղ բառակապակցությամբ է արտահայտված, որը ստանում է Նազենիկ մակդրյալը: Այստեղ ընդգծվում է օրիորդի բարեմասնությունը, հատկապես վարսերի ձևը՝ կապված ծննդավայրի հետ:

Ղարաբաղի քաջագանգուր
Նազենիկին իմ վշտի քույր…[3]

Արտահայտչական միջոց

Կրկնաբերություն-Ղարաբաղ բառը, ինչպես նշել ենք, 10 անգամ կրկնաբերվում է «Ողբ Ղարաբաղի» բանաստեղծությունում: Իրար կից՝ տողասկզբում՝ Ղարաբաղը մորս կանչն է, ինձ կանչում է հույսով տրտում,

Ղարաբաղն իմ կակաչն է՝ կարմիր, բայց սև ունի սրտում...

Տողավերջի հուզառատ ու շեշտված կրկնաբերություններ՝ գործածված տարբեր տների վերջում, սակավ՝ միևնույն տան տողավերջում:

Դու էլ դառած կռվածաղիկ, իմ բալիկն ես, ա՛յ Ղարաբաղ,
Մեղրդ օտար մեղվին տվող իմ ծաղիկն ես, ա՛յ Ղարաբաղ…

Դու իմ Ղարսի, իմ Սևանի, իմ Մասիսի թա՛յ Ղարաբաղ….
Տարտարոս է Տարոնը դեռ, ո՞ւր ես Ավարայր-Ղարաբա՛ղ...
Նորից ազգի ավազանում հայ մկրտվես, Հա՛յ ՂԱՐԱԲԱՂ:
Շիրազն ասաց՝ աշխարհն անցի՛ր, հայ գալիք ես, հա՛յ Ղարաբաղ… նն:

Թվարկման մաս-«Թոնդրակեցիները» պոեմում, արքա Սմբատ Հովաննես Բագրատունու խուլ հառաչանք ցավը հայոց կորսված տարածքների վերաբերյալ, ուր թվարկվում են երեսունից ավել հատուկ անուններ՝ գավառ, քաղաք, սար, գետ և այլ տեղանուններ՝ ուղղված պայքարի ելած թոնդրակեցիներին, որոնք հայրենիքի օրհասական վիճակը մոռացած, անգիտացորեն օժանդակում են թշնամուն: Եվ ահա այդ ցավ թվարկման մասն է կազմում նաև Արցախը՝

Իմ ձեռքում չէ իմ Արցախն էլ,
Տայք ու Դվին, իմ Ճաղախն էլ…[4]

Բողոք ցավ-կոչ-պահանջ-հիշեցում-«Տիգրան մեծի վիշտը և հավերժությունը» պոեմում մեծատառով պայլ կոչված, պարսկական գերությունից յոթանասուն հովիտ տարածքով փոխանակված արքայազն Տիգրանի բողոք ցավ դիմումումն է հայոց նախարարներին՝ գերված հողերը ազատելու պայման-խդրանք- պահանջով: Այդտեղ ահասարսուռ ցավով թվարկվում է այդ տարածքների մի մասը, նաև Արցախը, որը այն ժամանակ օտարամուտ Ղարաբաղ անունը չուներ՝ Զկա՛ն Արցախ, Արշարունիք[5]: «Հայոց Դանթեականը» պոեմում գործադրված Հայաստանի տարածք Ղարաբաղի (նաև Նախիջևան) դաժան ճակատագրի հիշեցումը Կովկասյան ժողովուրդներին՝ գլուխ XVII-ում: …և դուք՝ մյուսներդ, հիշեցնք Ղարաբաղն ու Նախիջևանը և վախեցնք էլ չեղած Աստծուց[6] :

Մասիսապաշտ ու մասիսավեհ Հովի. Շիրազը, որը մի զարմանալի ու աննախադեպ երևույթ էր համաշխարհային քնարեր•ության մեջ, իր արվեստի բազմազան ձևերով միահյուսվել էր հայոց Արցախին, ականջալուր եղել նրա ցանկացած սոսափին: Նա իր գեղագիտական սակավ խոսքում (չտպագրված գործեր շատ ունի, որոնց ծանոթ չենք) կարողացել էր մոգական ուժով ներկայացնել ոգու աչքերով տեսած Արցախը:

Մեծատաղանդ բանաստեղծ Հովի. Շիրազի ցավոտ ցավի՝ տասնապատիկ չափերով կորուսված ՀԱՅՐԵՆԻՔԻ մի մաս Արցախը (Ղարաբաղ) իր յուրօրինակ տեղն ունի մեծ «մասիսախսնի ու հայրենախսնի» (Ավ. Իսահակյան) հոգում ու բանարվեստում.

[1] Շիրազ, Երկեր, հ. 1, 1981, հ. 2, 1982, հ. 3, 1984, հ.4, 1986, հ.5, 1990, հ.6, 2014:
[2] Շիրազ, Երկեր, հ.1, էջ 224:
[3] Շիրազ, Երկեր, հ. 3, էջ 170:
[4] Շիրազ, Թոնդրակեցիները, էջ 91:
[5] Շիրազ, Երկեր, հ.2, էջ 188:
[6] Շիրազ, Երկեր, հ.5, էջ 222:

Քեզ Մասիս եմ կտակում, որ դու պահես հավիտյան…

Պահիր որպես մեր լեզուն, որպես սյունը քո հոր տան...

Ղարաբաղ ու Նախիջևան՝ որպես մասունք հայության…(«Կտակ»)

Դիմում խնդրանք-Տառապյալ բանաստեղծի «Վերջին իղձս» հուզաթաթավ բանաստեղծությունում գեղագիտական երազանք էր իր աճյունի մոխիրները հնամենի հայկական հողերում ցրելը, ու հեքիաթային յոթ բուռ մոխիրներից ամենասուրբը՝ երրորդը, նվիրել է Արցախին: Որպեսզի հագեցնի անբավ կարոտը, մի բուռ մոխիրը խնդրել է բարձրադիր տեղ՝ լեռներին ցանել, որպեսզի քամու օգնությամբ մեծ տարածքներ ընդգրկի, բանաստեղծական լայն սրտին մասնակի հովացում բերի:

Երրորդ բուռը տարե՛ք, ցրե՛ք իմ Արցախիս լեռներին,

Որ մուրազի ծաղկունք դառնամ երազ հողիս ձեռներին[1]:

Նույնանիշների գործադրում-«Հայոց Դանթեականը» պոեմում, Հայոց երկրի պատմական մեծ տարածքները թվարկելիս, մասնակից է դարձվում նաև Արցախը՝ գործադրելով նաև նույնանիշ Ղարաբաղը՝ կարծես մեղմելու հոգու տառապանքը:

Տարոնից մինչև դաշտերը Տայոց,

Մինչև Ղարաբաղը՝ Արցախը հայոց…[2]

Շիրազյան Ղարաբաղ բառի կրկնաբերական կիրառությամբ հասարակական լայն հնչողություն ստացած «Ողբ Ղարաբաղի» պոեմանման բանաստեղծությունը, որը հայ քնարերգության անմահ քերթվածներից մեկն է, իր խորքային անհունությամբ վեր է հանել մեծ Շիրազ բանաստեղծի բացառիկ երևույթ լինելը, արգելված ճշմարտությունը հանդգնելու գեղագիտական լեզվով տարփողելու, հայկական ոչ գործուն բառերը (կ/ղարայի ցեղ) դիտմամբ՝ ընկալելի օտարազգի սխալ մեկնությամբ՝ սև այգի՝ …օտար Ղարա բաղ ես դառել:

Արցախակարոտ բանաստեղծի «Ղարաբաղի ողբը», որը 60-ական թվականներից շուրթեշուրթ պտտված գեղագիտական սքանչելիք էր, հայ ժողովրդի խտացված ու ամենաբնորոշ բողոք-խոսքն էր, ցավ-աղոթքը, ճիչ-ողբը: Այն դարձել էր սուրբ մասունք, հավատի ՆԱՐԵԿ... ներշնչանքի աղբյուր: Այդ բանաստեղծությամբ արցախցու ունկերում հնչել էր բանաստեղծի ձայնը և այժմ էլ մենք ենք արժևորում նրա հնչեղ արտահայտչականությունը:

Այսպիսով՝ Արցախը վարչատարածքային, իսկ Ղարաբաղն էթնիկական բնիկ հայկական ծագման բառեր են և հին ժամանակներից առ այսօր համանիշ են, երբեմն էլ՝ նույնանիշ և սերվում են Արձախ// Արդախ// Ուրդեխե// Ատախունի// Արձախա աշխարհ// Արցախամար աշխարհ,, Օրխիստենա// Օրխիստինե հնդեվրոպականից: Առանի Ղարաբաղ// ԼՂԻՄ//ԼՂԻՀ, Գարապաղ// Գարեպաղ// Խարաբաղ// Ղարաիա նույնանիշների Ղարաբաղ-ի հիմնամասեր՝ կ/ղարա և բալ/ղ, ծագում են հայկականից (կ/ղարայի ցեղ) և կապ չունեն 14-րդ դարից հնչող մոնղոլական մեծ, հետո՝ թուրքերենի միջնորդությամբ իբր համաշխարհային ճանաչում ստացած մութ, սև՝ Սև այգի սխալ տեղանուն հասկացության հետ (փոխանակ մեծ այգի՝ ծառաստան): Սա պատահական զուգադիպություն է:

[1] Շիրազ, Երկեր, հ. 1, էջ 164 :
[2] Շիրազ, Երկեր, հ. 5, էջ 33:

ՀՏԴ 809.198.1 Հայոց լեզու

Շողեր Մինասյան,
ԱրՊՀ ակ. Ս. Աբրահամյանի անվ. հայոց լեզվի ամբիոն, բ.գ.թ., դոցենտ
էլ.հասցե՝ shogher .minasyan@ mail.ru

ԼԵԶՎԱԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ԴԱՐՁՎԱԾՆԵՐՈՒՄ

Լեզվաարտահայտչական միջոցների դրսևորումը Ղարաբաղի բարբառի դարձվածներում

Դարձվածների ծագումը կապված է լեզվամտածողության զարգացման բարձր մակարդակի հետ, երբ լեզուն վերացարկումներ կատարելու ունակություններ է ձեռք բերում: Լեզվաարտահայտչական միջոցները, դրսևորվելով Ղարաբաղի բարբառի դարձվածներում, խոսքին տալիս են այն պատկերավորությունն ու ներգործության ուժը, որով իրենք են օժտված: Ղարաբաղի բարբառի դարձվածներում հանդիպում են ոճական այնպիսի հնարներ, ինչպիսիք են փոխաբերությունը, փոխանունությունը, համեմատությունը, չափազանցությունը, շրջասույթը, հեգնանքը և այլն: Հոդվածում դիտարկվում է այդ ոճական կառույցների արտահայտվածությունը Ղարաբաղի բարբառի դարձվածներում:

Բանալի բառեր. *դարձված, պատկերավորություն, ոճական արտահայտչամիջոց, փոխաբերություն, փոխանունություն, համեմատություն, խորհրդանշան, շրջասույթ, հեգնանք, չափազանցություն, անշաղկապություն, անձնավորում*:

Шогер Минасян,
к.ф.н., доцент,
кафедра армянского языка им. академика С. Абрамяна

ВЫРАЖЕНИЕ ЭКСПРЕССИВНЫХ ЯЗЫКОВЫХ СРЕДСТВ ВО ФРАЗЕОЛОГИЗМАХ КАРАБАХСКОГО ДИАЛЕКТА

Фразеологизм восходит к высшим уровням развития речемыслительной деятельности - к лингвистической абстракции. Языковые средства экспрессии, реализуясь во фразеологизмах Карабахского диалекта, передают ему ту экспрессивность и воздействующую силу, которой они сами обладают. Во фразеологизмах Карабахского диалекта встречаются следующие виды стилистических фигур: метафора, метонимия, сравнение, гипербола, перифраз, эллипсис, ирония и другие. В статье обсуждается выраженность этих стилистических фигур во фразеологизмах Карабахского диалекта.

Ключевые слова: *фразеологизм, экспрессия, стилистическая фигура, метафора, метонимия, сравнение, символ, перифраз, ирония, гипербола, эллипсис союзов, персонификация.*

Shogher Minasyan,
Ph.D., Associate Professor,
Chair of Armenian Language after Academician S. Abrahamyan

OCCURRENCE OF LINGUISTIC EXPRESSIVE MEANS IN THE IDIOMS OF THE KARABAGH DIALECT

The origin of phraseologism is connected with the higher order of linguistic thinking - with the development of ability for linguistic abstractions. Linguistic expressive means, produced in the phraseologisms of the Karabagh dialect, impart to it by their expressiveness and persuasive power. The stylistic devices occurring in the idioms of the dialect are metaphor, metonymy, comparison, hyperbola, periphrasis, ellipsis, irony, etc. The article reviews the realization of these stylistic devices in the phraseologisms of the Karabagh dialect.

Keywords: *idiom, linguistic expressiveness, stylistic means, metaphor, metonymy, comparison, symbol, periphrasis, irony, hyperbola, ellipsis of conjunction, personification.*

Ինչքան էլ որ դարձվածները իրենց ծագմամբ կապված են լեզվի զարգացման նախնական շրջանի հետ, այնուամենայնիվ դրանք չեն առաջացել բառերի ծագման հետ միասին: Քանի որ դարձվածը լեզվական ավելի բարդ երևույթ է, այն անպայման կապված է լեզվամտածողության զարգացման ավելի բարձր մակարդակի հետ, երբ լեզուն վերացարկումներ կատարելու ունակություններ է ձեռք բերում: Մարդու մտածողության և կենսափորձի զարգացման ավելի բարձր մակարդակում, երբ մարդն ի վիճակի է եղել վերացարկում կատարելու, բառերին արդեն նոր իմաստներ է տվել և կարիք առաջանալու դեպքում իր մտքերն ավելի արտահայտիչ, դիպուկ ու տպավորիչ դարձնելու համար, հատկանիշը վերագրելով առարկային, կազմել է նաև այնպիսի բառազոդրդումներ, որտեղ երբեմն էլ կապակցության բաղադրիչները հանդես են եկել իրենց ոչ իսկական, այլ փոխաբերական իմաստներով: Դրա հետևանքով էլ փոխվել է ամբողջ կապակցության իմաստը. այն ձեռք է բերել բոլորովին նոր իմաստ, որը շատ հաճախ չի բխել առանձին բաղադրիչների իմաստների գումարից:

Որպես բառերի կամ բառակապակցությունների փոխաբերական գործածության հետևանքով առաջացած լեզվական միավորների՝ դարձվածների ձևավորման հիմքում ընկած են նաև տարբեր լեզվաոճական հնարներ:

Ոճական արտահայտամիջոցները մտքերն արտահայտելու հատուկ, ոչ սովորական միջոցներ ու եղանակներ են, որոնք ծառայում են միտքն ու գաղափարը ուժեղացնելու, դրանք գեղեցիկ, զարդարուն, առավել պատշաճ, դիպուկ ու նպատակասլաց արտահայտելու խնդրին և կամ ասվածին հուզականություն, զգացմունքայնություն տալու, նրա մեջ կիրք ու կամք դնելու և ունկնդրի կամքի ու զգացության վրա ներգործելու նպատակին:

Իրենց զանազան տեսակներով դրսևորվելով դարձվածներում՝ լեզվական արտահայտամիջոցները նրանց են հաղորդում արտահայտության այն պատկերավորությունն ու ներգործության ուժը, որով օժտված են իրենք:

Բարբառի դարձվածներում հանդիպում ենք ոճական այնպիսի հնարների, ինչպիսիք են փոխաբերությունը, փոխանունությունը, համեմատությունը, չափազանցությունը, շրջասությունը, զեղչումը և այլն:

Մտածողությունը կարող է արտահայտվել լեզվական այնպիսի միջոցներով, որոնք կամ առարկայնորեն են արտահայտում իրերն ու երևույթները և նրանց հարաբերությունները և կամ օբյեկտիվ իրականության իրերն ու երևույթները արտացոլում են պատկերների միջոցով, խոսքի ոչ բնական եղանակով և հագեցված են լինում հույզերով ու զգացմունքներով: Համապատասխան մտածողության այս երկու եղանակի՝ բառերը, բառակապակցությունները և նախադասությունները կարող են գործածվել երկու կերպ՝ իրենց բուն նշանակություններով և փոխաբերաբար: Փոխաբերությունը (նաև ոճական մի շարք այլ հնարներ) հենվում է բառերի փոխաբերական գործածության վրա: Այն դարձվածներում հանդիպող ոճական հնարներից ամենագործունն է, և հենց իրենք՝ դարձվածները, համարվում են լեզվական փոխաբերություններ[1]:

Փոխաբերության հիման վրա ստեղծված դարձվածների մի մասում փոխաբերաբար առնված է անդամներից մեկը՝ ***մ³գ'ը ծ՝ը / ճ՝ոը տրէնալ*** *(մեկի ջանքերը, վաստակը, երախտիքը իգուր անցնել)*, ***նամուսը տափը / ցրէխը կոխէլ*** *(անարգել, պատվազրկել)*, մյուս՝ քանակային անհամեմատ մեծ կազմ ունեցող դարձվածներում փոխաբերական նշանակություն ունեն բոլոր անդամները՝ ***խակը վէր անէլ*** *(1. չափն անցնել, 2. ծանձրացնել)*, ***փորը հացուտ անէլ*** *(մի քիչ սնվելով՝ քաղցը մեղմել)*, ***ղէյնը մրսան տ՝ոս օնէլ*** *(մեծ ցավ պատճառել)*, ***բ'ա³հ³ տէրման քամուն տալ*** *(անցածը բրբրել)*:

Փոխաբերությամբ դարձվածներ են կազմվել ժողովրդի բազմադարյան կյանքի դիտումների ու կենսափորձի հիման վրա, որոնք և իրենց արտահայտությունն են գտել ինչպես առակներում ու առածներում, այնպես էլ դարձվածներում: Այսպես, ***անգու

կախ անէլ*** դարձվածն ունի *ուշադիր լսել, ականջ դնել* նշանակությունը. ժողովուրդը նկատել է, որ էշը լուռ կանգնած <<լսելու>> ժամանակ ականջները կախում է: Էշն ու ձին ականջները կախում են, երբ հիվանդ են լինում. դրա հիման վրա էլ առաջացել է ***ընգուճնէն վէր թօղնէլ*** *(հիվանդանալ)* դարձվածը:

Ծագման նույնպիսի հիմունք ունեն նաև ***վրրցակու կանչ*** *(անտեղի ասված խոսք)*, ***շանը ըռըխան պատառ խրլիլ*** *(մեծ դժվարությամբ որևէ բան ձեռք բերել)*, ***կրրակէն (յրրա) յէ՛ղ ածէլ*** *(կրքերը բորբոքել, գրգռել)*, ***ճ՝որ՝ոճ՝ը ըռըխա / կրտարա կէնալ*** *(իրար հետ վիճել)* և այլ դարձվածներ:

Ավելի հաճախ փոխաբերությամբ կազմված դարձվածների ուղղակի իմաստը նրանց դարձվածային նշանակության արտաքին նշանն է՝ ***ունքամաչը փօթ քրցիլ*** *(շատ մռայլ՝ տխուր լինել)*, ***կրլօխը ք՝ա³ռէլ*** *(1. շվարել, ինչ անելը չիմանալ 2. քաղցր խոսքերով խաբել՝ հմայել)*, ***պիրանէն ճիրէրը ք'հնիլ*** *(շատ սոված լինել)*, ***լ՝ա՝ճ՝ոն տ՝ոս օնէլ*** *(1. մեկին ծաղրել, 2. խնդրել, աղաչել)*:

Բազմաթիվ փոխաբերությունների առաջացման համար հիմք են ծառայել պատրաստի գործածություն ունեցող կայուն համեմատությունները: Մշտական կրկնությունների պատճառով նրանք կրճատվել են և կորցնելով ***նրման*** կամ ***մրնչանք*** կապական բաղադրիչը՝ վերածվել փոխաբերությունների՝ ***կօտրրած քրթա³լ*** (ունենք նաև ***կօտրրած քրթա³լ՝ա՝ նրման մաչը ըռնէլ***), ***ջանը կրրակ ընգած*** *(ջանը կրրակ ընգածու նրման տէս ու տէն ըռնէլ)*, ***շան հ³չա³ց*** *(շան նման հ³չիլ)*, ***օրտու աշկ*** (***օրտու աշկու մրնչանք կուճի, մին թա³գ (մին թա³գ՝ա՝ մրնչանք***):

Երբեմն նման կարգի դարձվածների առաջացման համար հիմք է ծառայում ներքին՝ լեզվական միջոցներով չարտահայտված համեմատությունը՝ ***փ³դի կ՝ա՝ոշը կրլէկէլ*** *(անկարելին անել՝ կատարել)*, ***տէրտակ ըրուրուրց ըրօրէլ*** *(1.աննպատակ գործ բռնել, 2. պարապ լինել)*, ***կարճ կ³ղի հրնձիլ*** *(1. հոգնեցնող՝ դժվար գործ կատարել, 2. անհաջողության մեջ ընկնել)*, ***մանանա պրտատան շինիլ*** *(մշտական խոսակցության՝ կշտամբանքի առարկա դարձնել)*:

Փոխաբերության առաջացման ամենատարածված միջոցներից է նմանությունը, որի հիման վրա ձևավորված դարձվածները բարբառում մեծ թիվ են կազմում՝ ***առու յրրա ք'հնիլ*** *(1. բնազդով գնալ, 2. արագ գնալ)*, ***սաջու մաչի լօր տալիս պէկլ³*** *(տարարյուն, անհանգիստ, չարաճճի մարդ)*, ***լ³գ'ու ղօնաղ*** *(ամոթխած, անհամարձակ, ամաչկոտ անձ)*, ***հրրսրնքում տրրած հարթենը*** *(խայտառակված անձ)*, ***Ապէլա կ՝առնը*** *(հեզ, հնազանդ, խեղճ մարդ)*, ***օխծանչու թօրբա*** *(կենտոտ շոր՝ զգեստ)*:

Ժողովրդական լեզվի մեջ տարածված երևույթ է կրկնափոխաբերությունը. այս դեպքում փոխաբերաբար առնված գաղափարն նորից է առնվում փոխաբերաբար, այսինքն՝ կապակցությունը հանդես է գալիս կրկնակի փոխաբերությամբ: Ոճական այս հնարը դրսևորվել է նաև դարձվածներում: Օրինակ, ***փորը վէց-վէց անէլ*** *(շատ քաղցած լինել)* դարձվածում ***վէց-վէց անէլ***-ը *ատիրվելը* գաղափարի փոխաբերությունն է, իսկ գալարվելը՝ քաղցած լինելու: Նույն ձևով էլ՝ ***խօտ չրնք ըրածում*** *(անասունի նման հիմար՝ ապուշ չենք)*:

Փոխաբերության հիման վրա ստեղծված դարձվածների մի մասը եթե առաջին հայացքից իսկ հասկանալի է, ապա մի այլ մասը կարիք ունի իմաստաբանական վերլուծության: Այս տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում դարաբաղյան մի շարք դարձվածների քննությունը. ***հազգար մառա հաց կէրած/ հ³՝ր՝ոճ՝ր փարչավ ճ՝ոճ՝ր խրման*** *(փորձառու)*. փորձառու է նա, ով լինում է տարբեր տեղերում, շփվում է բազմապիսի մարդկանց հետ, ***սիպտակ կրէք' նրհաշ տալ*** *(մեկին շփանալու՝ քմահաճ դառնալու առիթ տալ)* - նկատի է առնվում այն հանգամանքը, որ երես են առնում ծիծաղադեմ մարդկանց վերաբերմունքից, ***աշան անէլ*** *(գրել, ցաքուցրիվ անել)*. այս կապակցության ուղղակի իմաստն է՝ *խուրձը կալում գրել՝ կալսելու համար*, որի փոխաբերական գործածության հետևանքով էլ առաջացել է հիշյալ դարձվածը, ***ըրտամակ ըռնէլ*** *(մարդամեջ ընկնել, հեղինակություն ձեռք բերել)*. ***ըրտամակ*** բառը առաջացել է ***երտամակ*** բառից, ***կ'ըրկ'ամօտ անէլ*** *(լողանալ)*. հայկական սովորությամբ լողանալու, մաքրվելու և լվացքի օրը շաբաթ օրն է՝ ***կ'ըրկ'ամօտը***:

Բարբառում մեծ է փոխանունության հիման վրա առաջացած դարձվածների թիվը. ընդ որում, դարձվածներում հանդիպում ենք փոխանունության բազմապիսի դեպքերի: Փոխանունությունը հատկապես տարածված է մարմնի անդամների անուններով կազմված դարձվածներում: Ինչպես գրական հայերենում, բարբառում ևս տարածված երևույթ է զգայությունների անվան փոխարեն զգայարանների անունների գործածությունը, որից էլ առաջ է գալիս փոխանունությունը: Այսպիսի կիրառությամբ հանդես են գալիս մարմնի ոչ թե բոլոր անդամները, այլ նրանց մի մասը միայն՝ ***անգուճ, աշկ, պէրան, լ՝ա՝ոզ՝ա՝ոճ, կրլ՝ա՝խ, իրէ՛ս, լրղէ, փօր, ծրէ՛ղր, վրէ՛նը*** և այլն: Այսպես, լսողություն ասելու փոխարեն ժողովուրդը նախընտրում է ***անգուճ*** բառը: Սա նպատակահարմար է նրանով, որ զգայությունն ավելի է

[1]Պողոսյան Պ., ***Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ***, II մաս, Երևան, 1991:

շեշտվում, խոսքը դառնում է ավելի պատկերավոր և միաժամանակ՝ պարզ ու մատչելի, ուրեմն՝ ժողովրդի կողմից ավելի գործածական: Այդ ձևով կազմված ունենք ***անգուծը ծանդը***(*լսողությունը թույլ*), ***ընգուծնէն սրէլ / չՈՒրք՛ անէլ***(*լսողությունը լարել*),***ընգուծնէն կապէլ*** (*լսել չցանկանալ, դիտմամբ չլսել*) և այլ դարձվածներ: Նույն ձևով ***աշկը*** փոխարինում է տեսողությանն ու հայացքին և կազմում է բազմաթիվ դարձվածներ. ***աշկավրն ընէլ***(*նկատվել*),***աշկավ չափէլ*** (*հայացքով գնել*), ***աշկան քրցիլ***(*անուշադրության մատնել*): ***Պէրանը (բերէխ)*** և ***լáõզáõն*** փոխարինում են խոսքին. ***պէրանը / լáõզáõն áõրՇն պահէլ***(*լռել, խոսելիս չափն իմանալ*),***պիրանավը հավք փրռնէլ***(*չափազանց ճարտար լեզու ունենալ*), ***լáõզáõն ծրրավը տանէլ***(*շիտակ խոսել*), ***լáõզáõն կրա անէլ / պրտրպատ քրցիլ*** (1. *շողոքորթել, քծնել*, 2. *ասելիքը դիտմամբ ձգձգել*),***բերէխը / պէրանը շաղ տալ***(*վայրահաչել*): Մի շարք դարձվածներում ***պէրանը*** (***բերէխը***) փոխարինում է ստամոքսին՝ ***բերէխը / պէրանը շօր ածէլ***(*ուտելու համար այս ու այն կողմ ընկնել*), ***ծրէրքը պիրանէն հրացրնէլ***(*կարողանալ ապրուստը հոգալ*), ***բերխէն / պիրանեն յէշիլ*** (*կերակրել*): ***ԿրլՈՒխը*** փոխարինում է խելքին ու դատողությանը. ***կրլՈՒխը կուրցրնէլ***(*շփոթվել, մոլորվել*), ***կրլՈՒխ ընէլ***(*հասկանալ*), ***կրլՈՒխը վարէլ***(*խաբել*), ***կրլխումը շընէր ցրլնօտէլ***(*վատ՝ չար մտադրություն առաջանալ*):

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ մարմնի հիշյալ մասերի անուններով կազմված ոչ բոլոր դարձվածներում է առկա զգայող օրգանը զգայության փոխարեն փոխանունության տեսակը: Օրինակ, ***ընգուծնէն թակած***(*տխմար, ապուշ*), ***աշկը հանէլ*** (1. *պատժել*, 2.*խիստ վնասել*, 3. *մեկի նախանձը շարժել, ի հեճուկս մեկի՝ մի բան անել*), ***աշկէրը շրլՈՒր քաղէլ***(*նիրհել*), ***լáõզáõ նրհաշ տալ***(*ծաղրել*),***կրլխէն արկանք աղալ***(1. *սաստիկ տանջել՝ չարչարել*, 2. *խիստ նախատել՝ պատժել*),***կրլխէն քար քրցիլ***(*անխնա վատնել՝ ծախսել*):

Հնում ժողովուրդը չէր սահմանազատում կրծքավանդակն ու փորը: Կարծում էին, թե սիրտը գտնվում է փորում: Վերջինիս սահմանները շատ ավելի լայն էին պատկերացնում: Մյուս կողմից, լավ ծանոթ չլինելով ստամոքս օրգանին, նրա գործառությունները վերագրում էին սրտին: Սրտի և ստամոքսի շփոթությունից էլ ծագեց սրտի ու փորի շփոթությունը, որի հետևանքով փորին վերագրվեցին սրտի հատկանիշներ (մարդու ներքինը, ներքին դիտավորությունը, նկատառումը), և ընդհակառակը: Որպես այս երևույթի լեզվական ապացույցներ՝ ունենք ***փօրը դաժավ լիգ՛ը***(*նախանձ, չարակամ, խարդախ*),***փօրը յէր՛ը չօնէլ***(*նախանձել*), ***սրէրտը թարփէլ/յէ՛տ տալ***(*փսխել*), ***սրէրտը ք՛ինիլ***(*նվաղել*) և այլ դարձվածներ:

Մարդկային զգացմունքների ու զգացումների արտահայտության համար գործածվում են***սրէրտ, իրրէ՛ս, ³՛բáõն, ծրէրք, լրրէ*** և այլ բառեր: Սիրտը միակ օրգանն է, որով ժողովուրդը այնքան հարուստ կերպով ներկայացնում է մարդու հոգեկան աշխարհը: Ներքին դիտավորություն-նկատառում են նշանակում ***սրէրտը պէնալ*** (1. *գաղտնիքները՝ մտատանջությունները մեկին պատմել*, 2. *զվարթացնել, ուրախացնել*), ***թ³՛մáõզ սրրտավ***(*անկեղծորեն, առանց հետին մտքի*), ***սրրտան ճáõր խրմէլ***(*ուրախություն պատճառել*) և այլ դարձվածներ: Բացի մարդու ներքինից և ներքին դիտավորությունից՝ սիրտն արտահայտում է նաև այլ հատկանիշներ. *զգայունություն՝* ***սրրտան պէրակ, սրրտէն նի կ³՛լ, սրէրտը քամէ տարած, սրէրտը կուտուր տրէռնալ,*** *վախ՝* ***սրէրտը ճáõր կրտրրէլ, սրէրտը մրռսէլ, սրէրտը փօրը ընէլ,*** *տխրություն՝* ***սրրտավը ադու ք՛ինիլ, սրրտան ³՛բáõն կաթէլ, սրէրտը կօչ / հօփ կ³՛լ,*** *ուրախություն՝* ***սրէրտը լինանալ, սրէրտը յէ՛տ ք՛ինիլ, սրէրտը կ՛իրմիրցրնէլ, սրրտէն մին պáõլ յէ՛ր քրսէլ,*** *նվիրական ու ներքին այլ զգացմունքներ՝* ***սրէրտը լիգ՛ը, սրէրտը տáõրáõր կ³՛լ, սրէրտը լէն / հ³՛րգ³՛կ / պէց, սրէրտը տրկրտիյէ՛ր անէլ, սրէրտը քար:***

Սակավ դարձվածներում վախի զգացողություն են արտահայտում ***լրրէ*** բառով կազմված կապակցությունները՝ ***լրրէն ճաքէլ, լրրէն ճáõր կրտրրէլ, լրրէն չուրանալ, լրրէն ցրմաքէլ, լրրէն պրտառվէլ.*** սա գալիս է ժողովրդի այն դիտումից, թե ուժեղ վախից լեղին պատռվում է:

Երեսը մարդու հոգին կարդալու հնարավորություն է ստեղծում և խորհրդանշում է մարդու վարքագծի հետ կապված հատկանիշներ: ***Իրրէ՛ս*** բառով կազմված դարձվածներն արտահայտում են *ներքին համարձակություն և անհամարձակություն՝* ***իրրէ՛ս անէլ, իրրս-իրրէ՛ս անէլ / ինիլ, իրրէ՛սը պարզ՛, իրրէ՛սը պէց, իրրէ՛սը սրէ՛վ, իրրէ՛սը պրտատած,*** *բնավորության մեղմություն և կոպտություն՝* ***իրրէ՛սը կակօղ, իրրէ՛սը ցօրտ, իրրէ՛սը պրրթրճիր³՛վ լրվացած,*** *արտաքին գեղեցկություն՝* ***իրրէ՛սէն փրլավ / փրրթáõշ կօտվէ, Իրրէ՛սէն յրրրծáõ անիս՝ կօտվէ:Երես*** բառը ինչպես գրական հայերենում, բարբառում ևս ունի ***ամոթ*** բառի նշանակությունը (***անիրրէ՛ս՝*** *անամոթ*). ***իրրէ՛սը կ՛ումաշու կաշի, իրրէ՛սան պէնը, շան իրրէ՛ս ինիլ***: ***Ամոթ*** բառի նշանակությամբ հանդես են գալիս նաև ***իրրէ՛սէն ճáõրը,իրրէ՛սէն մէռունը, իրրէ՛սէն փ³՛որ³՛ն*** կապակցությունները՝ ***իրրէ՛սէն ճáõրը վէր կ³՛լ / ք՛ինիլ, իրրէ՛սէն մէռուն չինիլ, իրրէ՛սէն փ³՛որ³՛ն ճրրվէլ***:

²՛բáõն բառով կազմված դարձվածները ևս արտահայտում են մարդկային բնավորության տարբեր գծեր ու տարբեր հոգեվիճակներ, ³՛բáõնը պրրտՈՒղ(*ննենգ, խարդախ*), ³՛բáõնը տաք(1. *տաքարյուն*, 2. *եռանդով լեցուն*), ³՛բáõնը հրէ՛ռ կ³՛լ(1. *բորբոքվել*, 2. *մեծ եռանդ ունենալ*), ³՛բáõնը չուրանալ/ ցրմաքէլ(1. *նիհարել*, 2. *ծուլանալ*), ***արուներատէլ*** (1. *վախենալ*, 2. *կենդանությունը՝ առույգությունը կորցնել*):

Մարդու կյանքում ու աշխատանքում ձեռքը մեծ գործառույթ ունի. այն ուժի, ղեկավարության, զորեղության, կարող լինելու խորհրդանիշ է: Նման նշանակություններով է հանդես գալիս ***ծրէրք*** բառը հետևյալ դարձվածներում՝ ***ծրէրքէն տակէ***(*մեկի ենթակայության տակ*), ***ծրէրքը հրմաքէլ*** (*իր ղեկավարության տակ առնել*), áõբáõշáõ ***ծրէրքու յէշիլ*** (*ուրիշից օգնություն ակնկալել*),***ծրէրքէն պէն ինիլ***(*հնարավորություն ունենալ*),***ծրէրքը կարճ***(*անզոր*), ***ծրէրքը էրկան***(*զորեղ*),***ծրէրքը քարու տակէ ինիլ***(*անկարող լինել*):

Բարբառի դարձվածներում տարածված է նաև փոխանունության այն տեսակը, երբ մասը փոխարինում է ամբողջին: Ամբողջի ու մասի հարաբերությունն այստեղ արտահայտվում է նրանով, որ մարմնի մի անդամի անունը փոխարինում է մարդ բառին: Մարմնի անդամների անուններից նման դերով հանդես են գալիս ***գլուխ, երես, սիրտ, կաշի, քիթ*** բառերը: Սրանցից ամենատարածվածը և թերևս ամենալիարժեքը ***գլուխ*** բառն է: Մարդու փոխարեն ***գլուխ*** բառի գործածությունը առանձնապես հատուկ է արևելքի ժողովուրդներին: ***ԿրլՈՒխ*** բառով մարդուն խորհրդանշող դարձվածներից են՝ ***կրլՈՒխը պահէլ, կրլխու մրնալ, կրլՈՒխը տինիլ կրծանումը, կրլխան ծրէրք յէ՛ր օնէլ, կրլՈՒխը օտէլ, կրլխանը յէ՛րը վրէ՛ննը կէնալ, կրլՈՒխը փօխէլ***:

Իրրէ՛ս բառը ևս կարող է փոխարինել մարդուն՝ ***իրրէ՛սէն ասէլ, իրրէ՛սը թրրրմօր / խօսկ կ³՛լ, իրրէ՛սրն ի յէ՛ր խօսէլ, իրրէ՛սը պուք տալ:***

Կաշի բառով կազմված քննարկվող կարգի դարձվածները քիչ են՝ ***կաշին ըզարէլ, կաշվան տáõս կ³՛լ, կաշին զ՛արգ՛ու / թ³՛ռ տալ, կաշին մաշկէլ***:

Սրբոտ բառը մարդ բառի փոխարեն հանդես է գալիս հետևյալ դարձվածներում՝ ***սրբոտը օտել, սրբոտը յորա տաք – տաք ինիլ, սրբոտը քանդիլ / տրկրտիյբ անել, սրբոտը կրտրել***:

Քրքթ բառովկազմվածմիշարք դարձվածներում ունենք մասի և ամբողջի հարաբերության արտահայտություն՝ ***քրքթը ցեց, քրքթը յորձ'ինք'ումը, քրքթը դաղել, քրքէն թրխել, քրքթը կօխել, քրքթը հրդաղել***, որտեղ ***քրքթ*** բառի տակ ակնկալվում է մարդը:

Փոխանունության մյուս տեսակների դրսևորումներով դարձվածները այնքան էլ մեծ թիվ չեն կազմում: Բավարարվենք պարզապես յուրաքանչյուրից մի քանի օրինակ բերելով. ***մինը էրկու / հազգար տրէռնալ, օթը բէշ անել, Էրկուսը իրրէ՛ք տրէռնա*** *(թիվը նույն չափովառարկաների փոխարեն)*, ***առու ուտրցրնել, սրէվ կ'լրնալ, սրէվէն սիպտակ ասել, սիպտակէն՝ սրէվ***(*հատկանիշի անվանումը առարկայի փոխարեն*), ***Պուդուս-Պէտրոս չինիլ / տձ՝ն չրկ՝ն՝ լ, ծիպլի Ծատօր, Պուդուսէն էծը*** *(հատուկ անունը հասարակի փոխարեն)*, ***էն աշխարքը / դունյան ք'ինիլ, Յերուսաղէմք'ինիլ*** *(տեղի անունը այդ տեղում գտնվող ու գործող մարդկանց կամ երևույթների փոխարեն)* և այլն:

Ոճական հնարներից փոխանունության հետ սերտորեն կապված է խորհրդանշանը: Ինչպես փոխանունությունը, խորհրդանշանը ևս մի առարկայի փոխարեն մյուսի գործածությունն է, որը լեզվում հաճախակի գործածության հետևանքով կայունացել է: Խորհրդանշանի համար խոսքային իրադրությունն ու միջավայրը նույն դերը չունեն, ինչ որ փոխանունության: Ասվածից կարելի է եզրակացնել, որ միևնույն առարկայի կամ երևույթի հաճախակի փոխանվանաբար կիրառությունը դարձվածներում կարող է հանգեցնել արտահայտչական մի այլ միջոցի՝ խորհրդանշանի առաջացման:

Սպանություն, կոտորած բառերի փոխարեն ***արյուն*** բառի հաճախակի գործածության հետևանքով առաջացել է պատերազմի, սպանության խորհրդանշանը՝ ***արյունը***. Նույն ձևով էլ ***աղնուհացը*** բարեկամության, ընկերության, հյուրասիրության խորհրդանիշն են, ***հացը*** ապրուստի, ***խաչը*** բախտի, ***ծուխը*** խորհրդանշում է շեն լինելը, գոյատևելը:

Խորհրդանշան-բաղադրիչ ունեցող դարձվածները բարբառում բավական շատ են. ***ՠրձՈՒանել/ քրցիլ*** *(սպանություն կատարել)*, ***ՠրձՈՒը կապել***(*հաշտեցնել*), ***աղուհաց կրտրրել*** *(մեկի հետ ընկերություն՝ բարեկամություն անել)*,***աղուհացը մրնանա քրցիլ***(*ապերախտ լինել*),***հացը ծրքրան խրլիլ*** *(ապրուստի միջոցներից զրկել)*, ***մին փօր հաց***(*նվազագույն վարձատրություն*),***խաչը կրլխան խրռավել*** *(փորձանքի հանդիպել)*, ***ՠՈՒ՝ն խաչը քաշիլ***(*իր բախտի տերը լինել*), ***ծօխը կրտրրցրնել***(1. *օջախը քանդել*, 2. *սերունդը ոչնչացնել*), ***տանը ծօխը յրբ հանել***(*հայրական տունը շենացնել*), ***ուջաղէն ծօխը կրտրրվել***(*հայրական տունը քանդվել*) և այլն:

Իբրև ոճական միջոց՝ համեմատությունը կոչված է երկու և ավելի առարկաներ կամ երևույթներ բաղդատելու միջոցով ասվածին կարևորություն տալու: Համեմատության առաջացման հիմքը երկու կամ ավելի առարկաների նմանությունն է: Արդեն ձևավորված համեմատության վերաիմաստավորումը նախապայման է դարձվածի առաջացման համար, որը վերջնականորեն ձևավորվում է հանրության կողմից տվյալ իմաստով հաճախակի գործածության հետևանքով: Դարձվածներում համեմատության դրսևորման առանձնահատկությունն այն է, որ համեմատվող եզրերից մեկը բացակայում է՝ ***հէնգ' մանանա նրման գ'իդ՝ ՠ՝ լ, գ'ՠՈՒլՠՈՒ նրման պահէլ, ճրդպօրու նրման չրխկչրխկալ***: Եթե ***էշու նրման, հ՝ՠ՝ՠ՝ ծ յրէրու նրման, ճիրՠՈՒ նրման, ծրտու նրման*** և այլ դարձվածներում համեմատությունը ունի լեզվական դրսևորում, ապա բավական մեծ է այն դարձվածների թիվը, որոնցում առկա է ներքին բովանդակային համեմատությունը՝ ***շան թակ տալ, շան բախտ ինիլ, շան իրրէ՛ս ինիլ, շանը քրթան ճՈՒՠ խրմէլ***: Նման կարգի դարձվածների առաջացման ոճական հիմքը փոխաբերությունն է:

Բարբառում համեմատաբար շատ են ընտանի կենդանիների անուններով համեմատության հիման վրա առաջացած դարձվածները՝***շան նրման հ՝ՠ՝ չիլ, էշու նրման պինրցրնել, կատվու նրման մաշկէն չրրնել, հավու նրման թ՝ՠ՝ ռ ինիլ***:

Շրջասությունը առաջանում է միևնույն բովանդակությունը ավելի ծավալուն, ընդարձակ լեզվական միջոցներով, երբեմն էլ նկարագրորեն արտահայտելու հետևանքով, որն արվում է ասածն ավելի հետաքրքրական, կարևոր, պատշաճ դարձնելու և կամ հեգնելու համար:

Շրջասությունները լինում են երկու տիպի՝ ***նկարագրական և այլաբանական***: Նկարագրական շրջասությունները հասկացության պարզ անվանումներն են՝ այլ բառերի միջոցով: Սրանք քանակապես ավելի շատ են: Համարժեքության չափը այստեղ ավելի մեծ է, քան այլաբանականներում: Այլաբանական շրջասությունը հասկացությունն անուղղակի անվանելու հետ մեկտեղ ունենում է նաև փոխաբերական իմաստ արտահայտող բառեր: Դարձվածները առաջանում են այլաբանական շրջասությունների հիման վրա, ինչը ինքնին հասկանալի է, քանի որ դարձվածներում փոխաբերական իմաստ ունեցող բառի (կամ բառերի) առկայությունը պարտադիր է:

Հայտնի է, որ երբեմն երևույթների անուղղակի անվանումը շատ ավելի ներգործուն տպավորություն է ունենում, քան ճիշտ ձևերը, ուստի և նրանք ավելի լայնորեն են կիրառվում լեզվում: Շրջասություններն ընդհանրապես այս կամ այն հասկացությունն արտահայտում են իմաստավոր պատկերավորությամբ: Այսպես, մեկի պատճառով անհետանալու, կորչելու երևույթն անվանում ենք ***մինին խաչավը թառվել***, ջահել լինելը՝ ***բիդի լՈՒսը ք'ինիլ***, ծերանալը՝ ***բիդի մրթէնը ք'ինիլ*** դարձվածներով: Շրջասություններն օգտագործվում են տպավորությունը մեղմացնելու, բառի թողնելիք ազդեցությունը թուլացնելու համար: Այսպիսի բնույթ ունեն մահանալու բովանդակություն արտահայտող շրջասություն-դարձվածները՝ ***ասթրխը ծրլլալ / հ՝ՠ՝ նգ'իլ / վէր ըրնէլ, հօրօց-հանգուցէլօց տրէռնալ, հՈՒՠ'ին Ըստուծէն պահ տալ, ճիր՝ՠ՝ՠՈՒ նրման հ՝ՠ՝ նգ'իլ, մին հափուռ վրէղէն արժան ինիլ / տրէռնալ***: Մահանալու իմաստ ունեցող մի շարք շրջասություն-դարձվածներ էլ արտահայտում են խոսողի բացասական վերաբերմունքը՝ ***կրլխրվէր ք'ինիլ, գ'օռբագ'օռ տրէռնալ, կ'իրՈՒղէն ծօցը ք'ինիլ, սառանէն ճիտը ք'ինիլ, վրէնէրը մրտակէլ***:

Մարդիկ շրջասությունների են դիմում նաև այն դեպքում, երբ խուսափում են ոչ գեղեցիկ բառեր գործածելուց՝ ծածկելով այդպիսի երևույթի ուղղակի անվանումը՝***ճՈՒՠ թօղ անել/ թափել / վէր ածել*** *(միզել)*,***կրլՈՒխը նրիրէտը մին անել/ մին պէրցու տինիլ*** *(մեկի հետ սեռական հարաբերություն ունենալ)*, ***սառանէն վրէնը կօտրրել***(*բնական պահանջմունքները բավարարել՝ չնայած անպատեհ պահին*):

Բարբառում դարձվածային համանիշներով հարուստ է ***մեռնել*** բառը. մահվան վերաբերյալ շրջասություն-դարձվածները մեծ թիվ են կազմում: Շատ են նաև խաբելու բովանդակություն արտահայտող շրջասություն-դարձվածները՝ ***գօգօ'ը թափ տալ, կրլՈՒխը վարել, կուտամանը թափ տալ, աշկէն թՈՒգ / մօխէր փրչիլ, կրլՈՒխը թիմ՝ՠ՝ ռիլ / ժէժտիլ*** և այլն:

Չափազանցությունը և նվազասույթը ընդհանրապես չեն շփոթում ոճական մյուս հնարների հետ, ստուգաբանական տեսակետից ևս խիստ պարզ են և բացատրության կարիք չեն զգում:

Բարբառում չափազանցումը դարձվածներ կազմելու տարածված միջոցներից է:

Չափազանցություն բովանդակող դարձվածներում երևում է ժողովրդի վառ երևակայությունը՝ ***թէփուռնէն ծáõշինի***(*շատ ձու ածել*), áõր³ն շուխկան խրդթնէլ/ վախէլ (1. *խիստ երկչոտ լինել*, 2. *խիստ կասկածամիտ լինել*), ***Առանց փրչիլ վէր կրդնէ*** (1. *նիհար է*, 2. *թույլ՝ ուժասպառ է*),***մանդը մանդնէն չրտալ*** (*բոլորովին չաշխատել*):

Չափազանցումը գործադրվում է որևէ երևույթ շեշտելու նպատակով, այդ պատճառով չափազանցության հիման վրա ձևավորված դարձվածներում առկա է հատկանիշի կամ երևույթի չափազանցում, մեծացում, սաստկացում: Օրինակ, ***թոշան ³բáõն կաթէլ***(*առողջ լինել, կարմիր թշեր ունենալ*), ***մորթան տáõս կ³լ*** (*մեծ ջանք գործադրել*),***ուրէկանը տրրէկան տրէռնալ***(*շատ արագ մեծանալ*),***մազը մաչան կէս անէլ*** (1. *դիպուկ կրակել*, 2. *մեծ ճշգրտությամբ որոշել*):

Առավել պատկերավորությամբ ու արտահայտչականության ուժգնությամբ աչքի են ընկնում նախադասության կառուցվածք ունեցող չափազանցություն-դարձվածները՝ ***Հրդուստէն վրէրցակրն էլ ա թօխս կ³մ, ճօտէր անում, Տէնակթրխիս՝ ³բáõնչիկաթէլ, Ըմբանրվա քարրն էլ ա ծրմրէռնը կրկրրում, Քարը հօփ տա՝ ճáõր կրկաթէ, Սրրտէն կա՛ կրթակվէ / պէրթ կրշինվի / տրէռ վէր կրդրցվի***:

Համեմատաբար քիչ դարձվածներում գործածվում է նվազասույթը: Սա ևս չափազանցություն է՝ միայն հակառակ իմաստով . կատարվում է նվազեցում, փոքրացում՝ ***ծրտու կէր անէլ***(*շատ քիչ ուտել*), ***մազը / կրտրրած ղէյնը չ³ժիլ***(*մեկի՝ մի բանի համեմատությամբ արժեք չունենալ*), ***մազ մրնալ***(*քիչ մնալ*), ***մազա պրրծրնէլ***(*փորձանքից հազիվհազ պրծնել*):

Լեզվաարտահայտչական մյուս միջոցները ավելի քիչ են արտահայտություն գտել դարձվածներում և դրսևորումների բազմազանություն չեն ներկայացնում :

Հեգնանքը ժողովրդական խոսքի անբաժանելի երանգներից է: Հեգնանքով ասվածը սովորաբար ընկալվում է հակառակ իմաստով: Այսպես, ***խրէլքու տօպրրակ*** դարձվածային արտահայտությունը գործածվում է հիմար, տխմար մարդկանց հասցեին, ***խրէլքան ճáõր խրմէլ*** դարձվածը ասվում է չկշռադատված խոսքի, արարքի տիրոջ հասցեին: Հեգնական-ծաղրական երանգ ունեն նաև հետևյալ դարձվածները՝***Քաշէրը սրէվ ըն կ'ընական, Պարավ ըս յրէկալ, Խրէլքէտ վազ տամ, Ըշտ³հիտ քացախ, սրէրտը պուղէրէն քրցիլ*** և այլն:

Խոսքն ավելի ներգործուն ու պատկերավոր է դառնում, երբ համատեղվում են երկու ոչ համատեղելի (բայց ոչ հակադիր) հասկացություններ: Անլծակցությունը՝ որպես ոճական հնարանք, հաճախակի է դրսևորվում դարձվածներում:Անհամատեղելի հասկացությունների համատեղում ունենք հետևյալ դարձվածներում՝ ***անթաղ մրէռալ, քօռ տիանակավ մօրթէլ, ճáõր թակէլ / ղրանձիլ, անգուճը ծրնէլ, վրէնէրը գ'áõլբա կ'օրծէլ, ճիր³ն չվր տáõս կ³լ, մարթու չիր, էշ մատաղ անէլ, էշու հրրիշտրրակ***:

Բազմաշաղկապությունը և անշաղկապությունը՝ որպես լեզվական, արտահայտամիջոցներ, դրսևորվել են մի շարք դարձվածներում:

Իրար հակադրվող երկու մասերից կազմված դարձվածների շաղկապները կրկնվում են նախադաս դիրքում՝ ***հա՛մ հավէն փրչիլ, հա՛մ կած'ին, հա՛մնալէնթրխէլ, հա՛մ մէխին, հա՛մ յրէ՛ր ինիլ, հա՛մ վէր, Յա՛ադրնապակաս, յա՛մադը, Յա՛ էշը կրստակէ, յա՛ իշատարը,յա՛ասած, յա՛ ըսէլու***:

Անշաղկապությունը ավելի շատ հատուկ է բանավոր խոսքին և նպաստում է խոսքի հակիրճությանն ու դիպուկությանը: Անշաղկապ կապակցված բարդ կառուցվածք ունեցող նախադասություն-դարձվածները բարբառում բավական շատ են՝ ***Կրրակէն քրցիս / օնիս՝ խրնձրրնավրէ՛տ չի կ³լ, Թրքիս՝տատիրչիլրնէլ, Իրրէ՛սէն յրդրծáõ անիս՝ կօտվէ, Լáõգáõն չինի՝ քաշ-քրչէդակ յրրա կրտան տանին***:

Դիմառնությունը ժողովրդական խոսքին հատուկ ոճական հնարք է: Ժողովուրդը անշունչ առարկաները շնչավորում, նրանց վերագրում է կենդանուն կամ մարդուն հատուկ հատկանիշներ, անշունչ առարկաներին ու կենդանիներին՝ բանականություն և խոսելու շնորհ՝ դրանով իսկ խոսքը դարձնելով ավելի հուզական ու պատկերավոր: Բարբառի դարձվածներում ավելի հաճախ դրսևորվում է դիմառնության այն տեսակը, երբ կենդանիներին վերագրվում է խոսելու շնորհ, մարդկային բանականություն՝ ***օխծու խրէ՛լը, օխծու լáõգáõ թափէլ, էշան կ'արունք հրրցրնէլ; Էշին ըսէ՛ցէն՝ աշկրտ լáõս, քօռակ ա իլ³լ, ասից՝ ըտրրանավ պէռնրս թիթրվանում չի***:

Դիմառնությանը հակառակ է այն երևույթը, երբ կենդանիներին բնորոշ հատկանիշները վերագրվում են մարդկանց՝ ***խօտ ըրածէլ,կրտօցը սրրէլ, հ³ք'ի խրդրցրնէլ / թակէլ / թրխէլ, հ³ք'ին խօր թաղէլ,*** áõր³ն թիք'ին յրրա հ³չիլ:

Միտքըհնարավորինս հակիրճ արտահայտելու հատկանիշը լեզվի կատարելության պայմաններից է, դրան է ձգտում լեզուն իր զարգացման ճանապարհին: Այդ պատճառով զեղչումը՝ որպես լեզվի համառոտության միջոց, կիրառվում է թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքում, գործառական բոլոր ոճերում: Այլ կերպ ասած՝ զեղչումը ընդհանուր լեզվական երևույթ է: Այն ժողովրդական խոսքի սիրած ճարտասանական ձևերից է և իր արտահայտությունն է գտել նաև Ղարաբաղի բարբառի դարձվածներում՝ ***Անիս-անիս, կ'ըէ՛տէն նրստիս, ³լլէր մառիս, Հայում՝ տրվարած, թօրքում՝ տրվարած, Սառանէն անգուճը խուլ', Վրէ՛ղը նրմանը ծրնալ չի, Տիյրէ՛ր՝ Աստուծ, տիվէր՝ տու*** և այլն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բաղիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, 1986:
2. Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973:
3. Գևորգյան Ե., Եղանակավորող դարձվածներ, ՊԲՀ, 1966, հ. 1:
4. Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 1984:
5. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, 2-րդ մաս, Երևան, 1991:
6. Ջահուկյան Գ., Խլղաթյան Ֆ., Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 1988:
7. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975:

ՀՏԴ 809.198.1 *Հայոց լեզու*

Ժենյա Պողոսյան,
ԱրՊՀ, ակ.Ս. Աբրահամյանի անվ. հայոց լեզվի ամբիոնի ավագ դասախոս
էլ. հասցե՝ jenyapogosyan@yandex.com

ՄԻ ՇԱՐՔ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԱՉԵՆԻ ԽՈՍՎԱԾՔՈՒՄ

Փոխառությունները լինելով ժողովուրդների տնտեսական, քաղաքական, մշակութային կապերի բնական արդյունք, լինում են անմիջական, միջնորդավորված, անհրաժեշտ և անհարկի:

Քանի որ մեր ասելիքի նյութը խոսակցական շերտում շրջանառվող փոխառություններն են, որոնք խոսակցական շերտում ունեն իրենց համարժեք բառերը, ուստի դրանք անվանում ենք անհարկի փոխառություններ:

Դրանք Խաչենի խոսվածքում ունեն միայն ոճական կիրառություն և գրական լեզու կարող են մուտք գործել ծայրահեղ անհրաժեշտ դեպքում՝ գեղարվեստական խոսքում ինչ-որ կերպար ավելի բնական ներկայացնելու անհրաժեշտության դեպքում: Սույն դրույթը հիմնավորվել է ոճական փաստացի օրինակներով:

Բանալի բառեր՝ բառապաշար, բարբառ, խոսվածքի դրսևորում, Խաչեն, ոճական կիրառություն, վերաբերմունք, քամահրանք, փոխառություն:

Женя Погосян
Ст.преподаватель кафедры армянского языка им. Ак.С.Абрамяна, АрГУ
E-mail: ***jenyapogosyan@yandex.com***

СТИЛИСТИЧЕСКОЕ ПРИМИНЕНИЕ НЕКОТОРЫХ ЗАИМСТВОВАНИЙ НА ХАЧЕНСКОМ ГОВОРЕ

Заимствованные слова являются результатом экономических, политических и культурных связей между народами и бывают прямымим и, опосредствеными, необходимыми,либо случайными.

Посколкьку предметом нашего исследования являются заимствования в основном функционирующими в разговорной речи Хаченского говора, мы называем такие заимствования случайными.

В Хаченском говоре они имеют сугубо стилистическое значение и могут попасть в литературный текст лишь при крайней необходимости, в целях более колоритного обозначения характерных черт того, или другого героя. Данный тезис обоснован конкретными стилистическими примерами.

Ключевые слова: лексика, диалект, говор, стилистическое приминение, Хачен, заимствование, принебрежение, разговорный, аналог.

Zhenya Poghosyan,
Chair of Armenian language after Sergey Abrahamyan
E-mail: ***jenyapogosyan@yandex.com***

STYLISTIC USAGE OF SOME BORROWINGS IN KHACHEN DIALECT

Borrowings are the natural result of different people's economical, political, cultural contacts. According to this borrowings can be direct, indirect, necessary and irrelevant.

The main subject of our article is borrowings in Khachen dialect which, having their equivalents in mother tongue, become irrelevant. Such borrowings in Khachen dialect have only stylistic usage and can be met in literary language only in case of extreme necessity to present any character more natural. This thesis is proved in our article by many virtual stylistic examples.

Key words: vocabulary, dialect, Khachen, accent, usage, stylistic, attitude, borrowings, neglecting style.

Իր՝ <<Լեզվաբանության ներածություն>> աշխատության մեջ Ռեֆորմատսկին ասել է՝ <<Աշխարհում չկա որևէ լեզու,որի բառային կազմը սահմանափակվեր միայն իր բուն բառերով>>[1]: Հայերենը բացառություն չէ, և մեր բառապաշարում ակտիվ գործառույթներ ունեն նաև փոխառությունները:

Փոխառությունները համարվում են ժողովուրդների տնտեսական, քաղաքական, մշակութային կապերի բնական արդյունք: Շփման հետևանքով լեզու են մուտք գործում մարդկանց և աշխարհագրական, գիտատեխնիկական, ինչպես նաև հասարակական-քաղաքական տերմիններ, կենցաղային, տնային գործածության առարկաների, կենդանիների անվանումներ:

Փոխառությունները կարող են լինել անմիջական, միջնորդավորված, անհրաժեշտ, անհարկի:

Դրանք կատարվում են գրավոր և բանավոր ձևով:

Անհարկի են այն փոխառությունները, որոնց համարժեք կամ համանշան բառերը կան, առկա են փոխառու լեզվում և դրանց պահանջը չի զգացվում առօրյա,սովորական հաղորդակցման ժամանակ: Այդ կարգի փոխառությունները լեզվում եղած համարժեք բառերի հետ հոմանիշային շարքեր չեն ստեղծում և չեն հարստացնում փոխառու լեզուն, սակայն կարող են ունենալ ոճական կիրառություն: Դրանք հիմնականում բանավոր փոխառություններ են, որ կատարվում են անմիջական շփման, այսինքն՝ խոսակցական հարաբերությունների միջոցով: Փոխատու լեզվից հիմնականում վերցնում են խոսակցական բառապաշարի բառեր, որոնք համապատասխանեցնում են սեփական լեզվի հնչյունական, քերականական և իմաստաբանական համակարգին կամ էլ ենթարկվում են աղավաղման: Հնչյունական

[1] Реформатский А. А., Введение и язиковедение, стр. 135.

փոխառությունների դեպքում փոխառյալ բառի հնչյունական պատկերը հարմարեցվում է տվյալ լեզվի հնչյունական նորմերին, քերականական փոխառության դեպքում բառը ներառվում է լեզվի քերականական համակարգ, իսկ բառային փոխառության դեպքում փոխառյալ բառը ձեռք է բերում իմաստային ու ոճական տարաբնույթ կիրառություններ[1]:

Եթե լեզուն որեւէ լեզվից բառ է փոխառել, ուրեմն փոխառու լեզվում կա դրա անհրաժեշտությունը:

Ժամանակին Հովհ.Թումանյանը <<Լեզվական փոխառությունները>> վերնագիրը կրող հոդվածով պատասխանել է Ա. Մեղրյանի՝ փոխառությունների հանդեպ ունեցած ժխտողական տեսակետին[2], ասելով, որ չի կարելի <<ոչ>> ասել փոխառություններին: <<Թե ժողովրդական, թե գրական լեզվի մեջ լեզվական փոխառությունները եղել են միշտ և շատ գեղեցիկ է, որ էդպես է, միայն թե պետք է իմանա շնորհքով, խելացի գրի առնել և տեղը գործածել, ահա խնդիրը>>[3]:

Լեզուն բաց և զարգացող համակարգ է, ուստի փոխառությունները նրա զարգացման ճանապարհի մշտական ուղեկիցներն են: Հայոց լեզվի բառապաշարարի մի զգալի մաս են կազմում փոխառությունները: Բայց միայն մասնագետ լեզվաբանը կարող է ասել, որ, օրինակ, հայերեն <<նամակ>> բառը պարսկերենից փոխառություն է, իսկ <<կաթողիկոսը>>՝ հունարենից: Դրանք շատ վաղուց համարվում են հայերեն բառեր, արմատավորված են գրական հայերենում:

Այլ է խնդիրը, երբ գործ ունենք խոսակցական լեզվի փոխառությունների հետ: Դրանք կարող են ունենալ ինչպես ընդհանուր, այնպես էլ միայն իրադրային կիրառություն, ուստի հարկ է նույնիսկ բարբառի դեպքում փոխառություններին մոտենալ զգուշորեն: Օրինակ, մինչեւ վերջերս մեր լեզվում տարածված էր <<կոֆե>> փոխառյալ բառը: Այսօր խոսակցական լեզվում տարածում է գտնում հայերեն <<սուրճը>>, իսկ ավելի վաղ շրջանում ունեցել ենք <<ղափա>> ձևը, որից Ղարաբաղի բարբառում հայտնի է՝ ղափադան/ սրճաման բառը: Այս կարգի փոխառությունները, որպես կանոն, գրական լեզու չեն մտնում, լրացնում են բարբառի կամ նրա առանձին խոսվածքի կենցաղային բառապաշարը եւ գրական լեզվում կարող են տեղ գտնել միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ գեղարվեստական կերպարն ավելի բնութագրական ներկայացնելու համար:

Քանի որ մեր ասելիքի նյութը խոսակցական շերտում շրջանառվող փոխառություններն է, ուստիև առանց մյուսներին անդրադառնալու՝ փորձենք որոշել այս կարգի փոխառությունների տեսակն ու բնույթը: Ղարաբաղի բարբառում որոշակի տեղ ունեն փոխառություններ, որոնք առօրյայում ընկալվում են որպես թուրքական:

Թուրքերենից արված փոխառությունների հարցը, հայ լեզվաբանության մեջ, առաջին անգամ քննել է Հր.Աճառյանը՝ կատարելով մի շատ ուշագրավ բացահայտում. չնայած ժողովրդա-խոսակցական լեզվում ավելի քան չորս հազար թուրքական փոխառությունների առկայությանը՝ դրացից գրական հայերենին են անցել ընդամենը երեք տասնյակի հասնող բառեր[4]:

Աճառյանը <<Թուրքերենէ փոխառյալ բառեր հայերէնին մէջ>> ուսումնասիրության մեջ դա բացատրում է նրանով, որ թուրքերը շատ աղքատիկ գրականություն են ունեցել, և նրանց լեզուն չէր կարող փոխատու դառնալ գրական հայերենի համար, քանի որ, մինչև թուրքական ցեղախմբերի տիրապետության տակ հայտնվելը, հայերենը գրավոր զարգացման շուրջ հազարամյա ճանապարհ ուներ անցած: Նույն տեղում Հր. Աճառյանը թվարկում է թուրքերենից գրական հայերենին անցած բառերը, որոնց մեծ մասը գրավոր լեզվին է անցել ոչ թե թուրքերենից, այլ ժողովրդա-խոսակցական լեզվից, ինչպես օրինակ՝ արխ/առու, աղոթ/հակինթ, թոզ/փոշի և այլն: Թուրքերենի նմանատիպ ազդեցությունը բացատրվում է Օսմանյան Թուրքիայի դարավոր բռնակալության պայմաններով: Սկսած սելջուկյան առաջին արշավանքներից՝ Հայաստանը ենթարկվել է բռնությունների, ժողովուրդը հալածվել է, նրա որոշ հատվածներ երբեմն ստիպված են եղել կրոնափոխ լինել, ինչի հետևանքով ժամանակի ընթացքում նրանք կորցրել են նաև լեզուն: Այդ փոփոխություններն ավելի են խորացել սկսած 17-րդ դարից, երբ Օսմանյան Թուրքիան հաստատվել է ողջ Հայկական աշխարհում, Պարսկաստանի հյուսիսային գավառներում, Ղրիմում, Վալախիայում, Հունաստանում և գրեթե ամբողջ Բալկանյան թերակղզում:

Հր. Աճառյանը թուրքերենի մասին հայ պատմագրության մեջ առաջին հիշատակումը վերագրում է Կիրակոս Գանձակեցուն, որի <<Պատմության>> մեջ բերված են մի շարք թաթար-մոնղոլական բառեր և արտահայտություններ: Աճառյանը միաժամանակ արդարացիորեն նկատում է, որ պատմիչն այդ բառերը գործածել է ոչ թե որպես փոխառություններ, այլ նպատակ է ունեցել դրանց միջոցով պատկերացում տալու՝ Հայաստանը նվաճած ազգի խոսակցական լեզվի մասին՝ զուգահեռաբար նշելով յուրաքանչյուր բառի հայերեն բացատրությունը: Դա ավելի շատ բառարանագրական աշխատանք է: Հր. Աճառյանի ուսումնասիրությունները նրան բերել են այն համոզման, որ թուրքերեն փոխառությունները հայերենի բարբառների միջոցով են տարածվել:

Ղարաբաղի բարբառը ևս կրել է այդ ազդեցությունը, բայց ոչ պատմագիտական, ոչ լեզվաբանական ուսումնասիրություններով հնարավոր չէ ստույգ պարզել, թե որ դարից սկսած են կատարվել այդ փոխառությունները: Հատկանշական է, որ Աճառյանը հայ բարբառների ծագումը վերագրում է 12-րդ դարին: Իբրև այդ տեսակետի հիմնավորում, լեզվաբանն ընդունում է այն փաստ, որ հայերենի մի շարք ձայնեղ բաղաձայներ /բ, գ, դ, ձ, ջ/ Ղարաբաղի բարբառում խլացել են, և այդ գործընթացը կատարվել է ոչ միայն բնիկ հայերեն բառերի, այլև փոխառյալ ասորերեն, պարսկերեն և հունարեն բառերում: Քանի որ հայերեն ձայնեղների խլացման գործընթացը տեղի է ունեցել մինչեւ 12-րդ դարը, իսկ թուրքերը Հայաստան են ներխուժել դրանից հետո, բնականաբար ենթադրելի է, որ թուրքական փոխառություններին դիմադրել է ոչ միայն գրական հայերենը, այլև ժողովրդախոսակցական լեզուն: Այդ փոխառությունները գործածվել են միայն ժողովրդա-խոսակցական լեզվում՝ ոճական տարբեր դրսևորումներով:

Հր. Աճառյանն, ի տարբերություն, օրինակ, Պոլսի հայկական խոսվածքի, Ղարաբաղի բարբառի բոլոր խոսվածքներում նշում է ավելի քան թուրքերենից 800 փոխառյալ բառ և արտահայտություն[5]:

Լեզվաբանական գրականությունը սահմանում է, որ բարբառը լեզվական ենթահամակարգ է և բնութագրվում է իր տարածքային, գործառնական սահմանափակվածությամբ, զարգացման նվազ հնարավորություններով և ընդհանուր լեզվի նկատմամբ ստորադաս վիճակով: Բարբառների առաջացման պատճառները տարբեր են, բայց հայերենի դեպքում, ըստ ընդհանուր լեզվաբանական մոտեցման, միասնական լեզվի տրոհման պատճառ են հանդիսացել առաջին

[1] www. hy.wikipedia.org/wik
[2] Ա. Մեղրյան, Մեր մանկական գրականությունը և հայոց լեզուն, Նոր Նախիջևան, «Լույս», շաբաթաթերթ, 1910թ., հ. 10:
[3] Հովհ. Թումանյան, Լեզվական փոխառությունները, 1910թ., մայիսի 14, հ. 103:
[4] Տես՛ Հր. Աճառյան, Թուրքերենէ փոխառյալ բառերը հայերենին մեջ, Մոսկուա, 1902թ.:
[5] Տես՛ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1951թ.:

հերթին քաղաքական պատճառները, որոնք արտահայտվել են ժողովրդագրական տեղաշարժերով, վարչական բաժանումներով, երբեմն՝ դավանափոխությամբ և այլն: Հայերենի բարբառի ենթախոսակցական շերտերը, որ երբեմն անվանվում են ենթաբարբառ կամ խոսվածք, շատ հաճախ պահպանել են բառապաշարի շերտեր և քերականական ձևեր, որոնք հատկանշում են խոսվածքի կենսական կապը հին հայերենի հետ:

Այս տեսակետից մեր ուսումնասիրությունը խնդիր ունի հիմնավորելու, որ Ղարաբաղի բարբառի Խաչենի խոսվածքում տեղ գտած թուրքերեն փոխառությունները ոչ միայն չեն մթագնել ազգային լեզվամտածողությունը, այլև, ընդհակառակը, ուղղակի ցույց են տալիս, որ դրանք կատարվել են միմիայն ոճական առանձնահատկություններ և իրադրային լեզվահաղորդակցություն ապահովելու նպատակով:

Նշվելիք բոլոր փոխառությունները վերցված են Ղարաբաղի բարբառի Խաչենի խոսվածքից: Ինչպես, օրինակ՝ ղըյամաթ, յուխում, խասյաթ, համբալ, սըփաթ, օլի, օղուզ, քավթառ, քյօփագ, աղրի, ղուզի, ղուլդուր, բայղուշ, բյաբագ և այլն:

Հիշյալ խոսվածքում դրանք հիմնականում ունեն ոճական օգտագործման յուրահատկություն: Այսպես, օրինակ՝ <<սառնամանիք>> նշելու դեպքում Ղարաբաղի բարբառի Խաչենի խոսվածքում օգտագործվում է <<սըռընգյա>> բառը, որի փոխարեն, սակայն, ոճական առանձին դեպքում խոսողն օգտագործում է փոխառյալ <<Ղըյամաթ>> բառը, որը տվյալ իրավիճակում ունի միայն և միայն ցրտի, սառնամանիքի սաստկական բնութագիր նշելու իմաստ: Նույն ոճական կաղապարի դեպքում Խաչենի խոսվածքը <<շատակեր>> իմաստի դիմաց գործածում է <<օղուզ>> փոխառյալ բառը: Ընդհանուր առմամաբ <<օղուզ>> կոչվել է թուրքական ցեղախմբերից մեկը: Ժամանակի ընթացքում, սակայն, այդ ցեղախմբի անվանումը Ղարաբաղի բարբառի Խաչենի խոսվածքում հատկանշում է շատակեր և հիմնականում ցոփ ու անքաղաքավարի, անկուշտ մարդու: Ինչպես օրինակ՝. <<Հէնցա լյիա օղուզ ինի>>նշանակում է ոչ կարգապահ, ընչաքաղց մարդ:

Այդ և մնացած մյուս փոխառությունները Խաչենի խոսվածքում շատ հաճախ ունեն իրենց հայերեն համարժեքները և հիմնականում գործածվում են այն դեպքերում, երբ խոսողը ցանկանում է արտահայտել հեգնական կամ քամահրական վերաբերմունք: Այս երևույթն, ի դեպ, հայերենի այլ բարբառներում բավարար ոճական տարածում չունի: Դա բացատրելի է նրանով, որ չնայած Արցախը պատմականորեն գտնվել է թուրք-թաթարական ծագման իշխանության ազդեցության տակ, այնուամենայնիվ ղարաբաղցիների կենցաղում ավելի գերադասելի է մնացել մարդու կամ երևույթի հայերեն բնութագրումը, քան՝ օտարամուտը: Ավելին, բազմաթիվ իրավիճակներում հանդիպում ենք այնպիսի ոճական դրսևորումների, երբ նույն անձը,առարկան կամ երևույթը հայերեն ,բուն բարբառային բառով բնութագրելիս հասկացվում է դրական իմաստով, իսկ երբ գործածվում է թուրքերեն փոխառյալը, ապա գնահատականը փոխվում է բացասականի: Այսպես, Ղարաբաղի բարբառի Խաչենի խոսվածքում <<շուրթ>> բառի փոխարեն գործածվում է <<պռոշ>, որը թեև համարվում է վրացերենից փախառյալ, բայց իմաստով չի ընկալվում և արդեն գիտակցվում է որպես հայերեն բառ: Այդ նույն իմաստը որոշակի ոճական տարբերությամբ գործածելու դեպքում Խաչենի խոսվածքում հիշվում է փոխառյալ <<լյաբ>> ձևը: Այս դեպքում, սակայն, նույն բառը գործածվում է քամահրական իմաստով, ինչպես օրինակ՝ <<Հինչըս լյաբտ կախ ըրալ>>,-որը նշանակում է. <<Պետք չէ անիմաստ տեղը վիրավորվել>>:

ԵՂՈՒՆԳ գրական բառի համարժեքը խոսվածքում ՂԵՅՆԸ բառն է: Ոչ մաքուր, չխնամված,կեղտոտ եղունգներ նշելիս՝ գործածվում է փոխառյալ ԴՌՆԱՂ բառը, որը թուրքերենում նշանակում է և եղունգ,և անասունի սմբակ:

ԿՐՈՒՆԿ բառը Խաչենի բարբառում հնչում է ԿՐՕՅՆԸ, որը գործածվում է և՛ առանձին բուն նշանակությամբ, և՛ բառաբարդմամբ՝ ԿԸՐԸՆԳԸՀԱՆ,իսկ ահա երբ հարկ է լինում նշել բոբիկ ոտքի մաս, գործածվում է փոխառյալ Դաբան ձևը: Ինչպես՝ դըբանան նի կէնալ, դըբընանէն կօխ տալ,դըբընանէն աղէլ,դըբանէն փի կապէլ, դըբընբասմա յէտ տառնալ և այլն:

ԱՉՔ բառն ունի ԱՇԿ համարժեքը և նշում է մարդու տեսողական օրգան:Խաչենի խոսվածքում և ընդհանրապես Ղարաբաղի բարբառում կույր վիճակը բնորոշվում է ՔՕՌ բառով:Ինչպես՝ քօռ աշկ, քօռ բախտ, քօռ քըշաթօխպ, քօռ կապէկ, քօռ բախտ և այլն: Բայց անուշադիր, չկողմնորոշվող մարդուն բարբառում հեգնանքով ասում են ԳՅՕՋԼՅՈՒ, որը բառացի նշանակում է ԱՉՔԻՑ ՁՈՒՐԿ, աչք չունեցող:

ԱՏԱՄ բառի բարբառային համարժեքը ԿԷՌԷՔ բառն է, որը գործածվում է նաև հոգնակի ձևով՝ ԿԸՐՔԸՆԷ: Առօրյա խոսակցական ոճում գործածվում է ՁԻՆ-ը և ԴԻՇ փոխառյալ ձևը՝ ատամների տգեղությունն ընդգծելու, անհարկի ծիծաղող մարդուն հանդիմանելու նպատակով: Օրինակ՝ հի՞նչըս դիշէրըտ պաց ըրալ, դիշէրը ծըխրծօռ մարթա, հէնցա դավադիշ ինի և այլն:

ԿԱՂ բառի համարժեքը Ղարաբաղի բարբառում ԿԱՂԼԷԳ բառն է, բայց երբ որևէ մեկը իր համար անտանելի մարդու այդ արատն ուզում է նշել ծաղրական տոնով ասում է՝ էն չօլալս շօնը էլիա զահլա յա տանում: Նույն ոճական առանձնահատկությունն է դրսևորվում նաև ԾԵՐՈՒՆԻ բառի համարժեք ՊԱՌԱՎ բառը:Ինչպես՝ նա պառավ մարթ ա, մէր պառավը, էն պառավը: Բայց վիրավորելու, զայրույթը արտահայտելու, մեծի՝ իր տարիքին անհարիր արարքը շեշտելու համար խոսողն անպայման օգտագործում է ՔՅՕՓԱԳ փոխառյալ բառը: Ինչպես՝ էն քյօփագը ուրան անա տյուս ա կյամ կամ քյօփագ շօնը վէչ համանչ օնէ, վէչ՝ հարգանք:

ԿՈԿՈՐԴ բառն ունի ՊՕԿ համարժեքը և գործածվում է հիմնականում վերջին ձևով՝ պօկըս ցավում ա, պըկէս ա մնացալ, բայց վիրավորելու դեպքում ասվում է՝բօղազըտ նի յա կացալ: Բօղազը թուրքերենից փոխառություն է:

Մարմնի մասեր նշող նմանատիպ բառերից են նաև ականջ/անջուկ/ ղուլաղ- թրք. Փոխառություն, դեմք/երես/իրէս/պատկէր/սփաթ-արաբ. Փոխառություն,գլուխ /կլօխ/կօնդ / քյալլա-պրս. Փոխառություն,ոտք / վէնը/ փաչա-պրսկ. և բալդուր-թրք.փոխառություն և այլն;

Կենդանիներ անվանող մի շարք բառեր ևս ունեն նմանատիպ կիրառություն: Ինչպես՝

ԵՋ բառը բարբառում գործածվում է ՅԷՋՆԸ ձևով, բայց որևէ մեկի հանդեպ արհամարհական, ծաղրական վերաբերմունք արտահայտելու համար օգտագործում են ՕՔՅՈՒՋ /ՁԸԲԸԽ փոխառված ձևերը:Ինչպես՝օքյուզու նման սաղ օրը լափում ա, վէր ինգյած տէղան էլ յէր չի կէնում:

ՇՈՒՆ բառն ունի ՇՕՆ ձևը, որն օգտագործվում է ոճական տարբեր կիրառություններում, բայց բարբառում օգտագործվող ՂԱՆՋԸՂ թրք.փոխառությունը, որը նշանակում է կատաղի էգ շուն, հիմնականում օգտագործվում է կատաղի, անզգամ, անբարո կնոջը հիշելիս:Ինչպես՝ էտ դանջըղը պիրալա, պիրալ չի, էտ տանը մին լավ օր չի լուսացալ:

ԲՈՒ բառը բարբառում ունի յրփլաղ համարժեքը: Գրշերները չքնող, անհանգիստ մարդկանց անվանում են յրփրլաղ, իսկ նույն վիճակի ու նաև չար, հոռետես ու չարախոս մարդկանց՝ բայղուշ: Ինչպես՝ սաղ քըշէրը բայղուշ կըտրած լուզին պուն չի տեսնում:

Գայլ բառը բարբառում ԿՅՈՒԼ համարժեքն ունի, բայց գործածվում է նաև ՋԱՆԱՎԱՐ փոխառությունը, ուղտ /օղտ/ նյառ, կապիկ / մեյմուն,հովատակ/ վըրցածի/ այղըռ և այլն:

Ղարաբաղի բարբառում շատ հետաքրքիր ոճական կիրառություն ունի ԱՎԱՋԱԿ բառը, որը սովորաբար գործածվում է ոչ այն իմաստով, ինչ պարունակում է գրական բառը: Այն ավելի շատ ունի մեղմ, հանդիմանական ոճային իմաստ, որի դեպքում խոսողը մատնանշում է դիմացինի բնավորության արկածախնդրությունը կամ խորամանկությունը: Ինչպես՝ այ ավազակ, տու գյուդու՞մըս հունցնըս..., իսկ երբ խոսքը վերաբերվում է ավարառուին, կողոպտչին և մարդասպանին, պարտադիր գործածվում է Ղուլդուր փոխառյալ բառը:

Կնոջը բացասական իմաստով բնութագրող, նրա տգեղությունը նշող բարբառային բառեր են կիշիկիրօղը, սըվըկարիճը, բայց ԿԱՃԻ-քրդ., ԳԱՌԻ և ՂԱՆՋՐՂ թրք. Փոխառությունները գործածվում են անչափ տգեղ ու սարսափելի կանանց բնութագրելու համար: Ինչպես՝էտ ղանջրղը էն մարթին կըլօխը կանուխ- յէտէ կօտէ, գառու նման ճընթըռըմչըղէ յա կէնում, կաճի մեռնում ա. Հափուռը թակէս, կօրէկ չի վէր ինգյիլ և այլն:

Նմանատիպ են նաև՝ցուրտ / սըռընգյա /ղրյամաթ, բնավորություն / խասյաթ, ապտակ /չըմփալախ-պրսկ. /սիլլա-թրք.,ցավ/ յաման, անճարակ/ անչար/ հընըրսըզ, հաց/ քյութ,մեռյալ / մէռալ / օլի, շատակեր / օղուզ, վերջ / յուխում, միամիտ / հարիփ, բեռնակիր / համբալ, սև / քյուսնաթ, ապտակ / չըմփալախ, գիժ / պըիրիէյդար, անբան / դիքճա,գրբաց / բըլստըլէշի / փալաբախան, մուռ / մօղ / աղրի, հաց / քյութ և այլն:

Նշված փոխառությունները, որ մեծմասամբ թուրքական ծագում ունեն, չեն գործածվում Խաչենի խոսվածքի ակտիվ շերտում, չեն կարող մուտք ունենալ գրավոր խոսք և օգտագործվում են միայն իրար նկատմամբ ծայրահեղ լարված , կատաղի, արհամարհական վերաբերմունք ունեցող մարդկաց կողմից՝ իրար քամահրելու նպատակով: Նմանատիպ փոխառությունները չեն կարող գոյատևել՝ կապված ժողովրդի լեզվամտածողության ու բարոյական ավելի բարձր արժեքներով կենցաղ վարելու նրա ցանկության ու դավանանքի հետ:

Օգտագործված գրականություն

1. Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1951:
2.Հր. Աճառյան, Թուրքերենէ փոխառյալ բառերը հայերենին մեջ, Մոսկուա, 1902:
3..Реформатский А. А., Введение и язиковедение,
4..www. hy.wikipedia.org/wik
5.Ա. Մեղրյան, Մեր մանկական գրականությունը և հայոց լեզուն, Նոր Նախիջևան, »Լույս«, շաբաթաթերթ, 1910թ., h. 10:
6. Հովհ. Թումանյան, Լեզվական փոխառությունները, 1910թ., մայիսի 14, h. 103:

ՀՏԴ 809.198.1 Հայոց լեզու

Արմեն Սարգսյան,
բ.գ.թ., դոցենտ, ԼՂՀ ԿԳՄՆ
Էլ. հասցե armen.sarkisyan.68@ mail.ru

ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հոդվածում տրվում է Արցախի ազգագրության ուսումնասիրության՝ անկախության տարիների պատմությունը: Հեղինակը անդրադարձել է այն տպագիր աշխատություններին, գիտական հոդվածներին, զեկուցումներին, տարաբնույթ ժողովածուներին, որոնք լիովին կամ մասնակիորեն առնչվում են խնդրո առարկա հարցին: Առավել ուշադրություն է դարձվում այն աշխատանքներին, որտեղ ներկայացվում է Արցախի ազգագրության կամ նրա որևէ բնագավառի ամբողջական ուսումնասիրությունը:

Բանալի բառեր - ազգագրություն, ազգագրագետ, աշխատություն, հոդված, զեկուցում, ժողովածու, երկրագործություն, տնայնագործություն, արհեստ, բնակչություն, կենցաղ, ծես:

Armen Sargsyan
Ph.D. in Philology, NKR MESS
E-mail: armen.sarkisyan.68@ mail.ru

THE STUDY OF ARTSAKH ETHNOGRAPHY DURING THE YEARS OF INDEPENDENCE

The article is on the history of the study of Artsakh ethnography in the years of independence.The author touches upon those print works, scientific articles, reports, various digests which fully or partially concern the given issue. More attention is paid to those works where the total study of Artsakh ethnography or its any aspect is presented.

Key words – ethnography, ethnographer, research, article, report, digest, soil study, knitting, craftsmanship, population, way of living, ritual.

Армен Саркисян
к.ф.н., доцент, МОНС НКР
E-mail: armen.sarkisyan.68@ mail.ru

ИССЛЕДОВАНИЕ ЭТНОГРАФИИ АРЦАХА В ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ

В данной статьи представлена история исследования этнографии Арцаха в годы независимости. Автор представляет те опубликованные научные работы, статьи, доклады, разные сборники, которые в целом или в частности касаются данного вопроса. Больше внимания обращено тем работам, в которых представлено полное исследование Арцахской этнографии или ее отдельной части.

Ключевые слова – этнография, этнограф, научная работа, статья, доклад, сборник, земледеление, домапроизводство, ремесло, население, быт, обряд.

Հայ ազգագրության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Արցախը, որի արմատները թաղված են հազարամյակների խորքում: Դժբախտաբար հարուստ այդ պատմության բուն ուսումնասիրությանը սկիզբ դրվեց ընդամենը 19-րդ դարի կեսերից: Ընդհանուր առմամբ Արցախի ազգագրության ուսումնասիրության պատմությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք շրջանի՝ նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային: Առաջին շրջանը ամենից առաջ կապվում է 1822թ. Ղարաբաղի խանության վերացման և Ղարաբաղի պրովինցիայի ձևավորման հետ, որը 1840թ. մտնում է Կասպիական մարզի, իսկ 1868-1917թթ.՝ ներառվում Ելիզավետպոլի նահանգի կազմում: Ռուսական կայսրության կազմում հայտնվելուց անմիջապես հետո ուսումնասիրության նյութ են դառնում տարածաշրջանի բնակչության էթնոժողովրդագրական հիմնախնդիրները՝ կապված Անդրկովկասում Ռուսաստանի վարած քաղաքականության հետ: 1866թ. Թիֆլիսում հրատարակվում է «Описание Карабахской провинции, составленное в 1823г. действительным статским советником Могилевским и полковником Ермоловым 2-ым» աշխատությունը, որն էլ դառնում է այս բնագավառում կատարվող ուսումնասիրությունների նախադեպը: Հետագա տարիներին հատուկ ծրագրով տարբեր գիտնականների, հասարակական գործիչների, Շուշի քաղաքի ու որոշ գյուղերի ուսումնական հաստատությունների ուսուցիչների և տեսուչների կողմից Թիֆլիսում հրատարակվող «Материалы для изучения экономического быта государственных крестьян закавказского края», «Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», «Сборник для описания местностей и племен Кавказа», «Кавказский календарь» բազմահատորյակներում, ինչպես նաև Թիֆլիսում, Վաղարշապատում, Շուշիում և այլուր լույս տեսնող պարբերականներում տպագրվում են Արցախի ազգագրությանը վերաբերող տարաբնույթ ուսումնասիրություններ և նյութեր:

Անուրանալի է Ե. Լալայանի և նրա՝ 1896թ. Շուշի քաղաքում հիմնադրած «Ազգագրական հանդեսի» դերը հայ ու մասնավորապես Արցախի ազգագրության գրառման, ուսումնասիրության և հրատարակման գործում: Նշանավոր ազգագրագետի ընդհանուր խմբագրությամբ հանդեսի գրքերում տպագրվում են «Վարանդա. Նյութեր ապագայ

ուսումնասիրութեան համար» և «Վարանդա. Նշանաւոր տօներ» ուսումնասիրությունները[1]՝ կատարված անձամբ իր և իր հանձնարարությամբ ուրիշ ժողովրդագետների կողմից:

Արցախի ազգագրության ուսումնասիրությունը լայն թափ ստացավ խորհրդային տարիներին: 1920-ական թվականներին Ս.Լիսիցյանի գլխավորած արշավախումբը Լեռնային Ղարաբաղի տասնյակ գյուղերից հավաքում է ազգագրական հարուստ նյութ, որի արդյունքում հետագայում տպագրվում է մեծ ազգագրագետի «Լեռնային Ղարաբաղի հայերը» աշխատությունը[2]: Ս.Լիսիցյանը հայտի է նաև Արցախին վերաբերող և առնչվող այլ ուսումնասիրություններով:

Այս շրջանում իրենց ժողովրդագիտական լայն գործունեությունն են շարունակում Խ.Դաղյանը, Կ.Մելիք-Շահնազարյանը, Ս.Իսրայելյանը և ուրիշներ[3]:

Բաքվում 1930թ. հրատարակվում է Ի.Պետրուշևսկու «О дохристянских верованиях крестьян Нагорного Карабаха», 1940թ.՝ Վ.Պետրովի «Этноботаника Нагорного Карабаха» աշխատանքները:

Խորհրդային շրջանում հայ ազգագրության տարբեր բնագավառների և հարցերի նվիրված իրենց ուսումնասիրություններում Արցախին լուրջ ուշադրություն են դարձրել ազգագրագետներ Վ.Բդոյանը[4], Ն.Ավագյանը[5], Վ.Թեմուրճյանը[6], Ա.Պատրիկը[7], Լ.Պետրոսյանը[8], Յու.Մկրտումյանը[9], Ա.Մարությանը[10] և ուրիշներ:

Կարևոր նշանակություն ունեն նաև 1960-70-ական թվականներին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրական արշավախմբի (ղեկավար՝ Դ.Վարդումյան) ու 1970-80-ական թվականներին ՍՍՀՄ ԳԱ ազգագրության ինստիտուտի հայկական խմբի (ղեկավար՝ Ա.Տեր-Սարգսյանց) կողմից Արցախի տասնյակ բնակավայրերից գրառված ժողովրդագիտական հարուստ նյութերը:

1988թ. սկիզբ առած Արցախյան ազգային-ազատագրական շարժումը, խորհրդային կարգերի փլուզումը և 1991թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը նոր դարաշրջան բացեցին երկրամասում հասարակական գիտությունների և մասնավորապես՝ ժողովրդագիտության ուսումնասիրության համար, որը կարելի է անվանել հետխորհրդային կամ անկախության շրջան: Չնայած տնտեսական ծանր պայմաններին ու պարտադրված պատերազմին տասնամյակների կապանքներից և բռնատիրությունից ազատագրված Արցախում օրեցօր նոր թափ է ստանում ազգային կրթության, մշակույթի, գիտության զարգացումը: Արցախի, մայր Հայաստանի և արտերկրի տասնյակ գիտնականներ իրենց ուշադրությունն են սևեռում ազատագրված հայրենիքի ժողովրդագիտական նյութերի գրառման և ուսումնասիրության վրա:

1989թ. հրատարակվում է Ա.Մարությանի, Գ.Սարգսյանի, Զ.Խառատյանի «К этнокультурной характеристике Арцаха»[11] ծավալուն հոդվածը, որտեղ հեղինակները արխիվային, դաշտային և տպագիր նյութերի ուսումնասիրությամբ ներկայացնում են արցախահայության 19-20-րդ դարերի ընդհանուր էթնոմշակութային բնութագիրը՝ անդրադառնալով էթնիկ կազմին և բնակչության թվին, երկրագործությանն ու անասնապահությանը, գյուղատնտեսական մթերքների մշակմանը, տարբեր արհեստներին, ժողովրդական փոխադրամիջոցներին, բնակավայրերի, կացարանների, գյուղական համայնքների, ընտանիքների կառուցվածքին, հարսանեկան ու թաղման ծեսերին և այլ երևույթների, ինչպես նաև՝ բանահյուսությանն ու բարբառին:

Լեռնային Ղարաբաղի հայերի 19-րդ դարի երկրորդ կեսի-20-րդ դարի սկզբների հասարակական կենցաղին է նվիրված ԼՂՀ Ազգային ժողովի առաջին նախագահ Ա.Մկրտչյանի թեկնածուական ատենախոսությունը (1988թ.), որը հետմահու առանձին գրքով հրատարակվեց 2010 թվականին[12]: Աշխատության առաջին գլխում հեղինակը ներկայացրել է 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Լեռնային Ղարաբաղի էթնիկական և սոցիալ-տնտեսական կենցաղի ընդհանուր բնութագիրը՝ հանգամանորեն անդրադառնալով ազգաբնակչության էթնիկական կազմին, տարաբնակեցման խնդիրներին ու պատճառներին, տնտեսության հիմնական բնագավառներին և միջէթնիկական հարաբերություններին: Երկրորդ գլուխը նվիրված է համայնքի կազմին և կառավարման մարմիններին, փոքր և մեծ ընտանիքներին, ընտանեկան-ազգակցական խմբերի կարևորությանը

---

[1] Լալայեան Ե., ***Վարանդա. նյութեր ապագայ ուսումնասիրութեան համար***, «Ազգագրական հանդես», գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 5-244, Լալայեան Ե., ***Վարանդա. Նշանաւոր տօներ***, «Ազգագրական հանդես», գիրք Գ., Թիֆլիս, 1898, էջ 338-349:

[2] Լիսիցյան Ստ., ***Լեռնային Ղարաբաղի հայերը (Ազգագրական ակնարկ)***, «Հայ ազգագրություն եւ բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», Երեւան, 1981, հ.12, էջ 9-84, *Лисициан С. Д.* ***Армяне Нагорного Карабаха. Этнографический очерк***, Ереван, 1992:

[3] Խեմչյան Է., ***Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչեւ XX դարի 60-ական թվականները),*** «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան» գիտաժողովի նյութեր, Երեւան, 2007, էջ 335-351:

[4] Բդոյան Վ., ***Երկրագործական մշակույթը Հայաստանում***, Երևան, 1972, Բդոյան Վ., ***Հայ ժողովրդական խաղեր***, հհ. 1-3, Երևան, 1963-1983:

[5] Ավագյան Ն., ***Հայկական ժողովրդական տարազը (XIX-XX դդ. սկիզբ)***, Երևան, 1983:

[6] Թեմուրճյան Վ., ***Գորգագործությունը Հայաստանում***, Երևան, 1955:

[7] ***Հայկական տարազ. Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը*** (Ուսումնասիրությունը և նկարները Ա.Պատրիկի), Երևան, 1983:

[8] Պետրոսյան Լ., ***Հայ ժողովրդական փոխադրամիջոցներ***, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», հ. 6, Երևան, 1974, էջ 93-159:

[9] Мкртумян Ю., ***Формы скотоводства в Восточной Армении (вторая половина XIX- начало XX в.)*** «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», հ. 6, Երևան, 1974, էջ 5-90:

[10] Марутян А., ***Интерьер армянского народного жилища (вторая половина XIX- начало XX в.). Материалы к <<Кавказскому историко-этнографическому атласу>>***, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», հ. 17, Երևան, 1989, էջ 63-142:

[11] Марутян А., Саркисян Г., Харатян З., ***К этнокультурной характеристике Арцаха***, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 6, Երևան, 1989, էջ 3-18:

[12] Мкртчян А., ***Общественный быт армян Нагорного Карабаха (вторая половина XIX- начало XX в.), Ереван, 2010.***

հասարակական կենցաղի համակարգում, ընտանեկան-դրացիական հարաբերություններին: Երրորդ գլխում քննության են առնվում բնակեցման սահմանները, բնակեցման ձևավորման որոշ առանձնահատկություններ, պաշտամունքային վայրերն ու կառույցները: Չորրորդ գլխում ուսումնասիրության են ենթարկվում սովորույթներն ու բարքերը, օրացուցային տոները, հյուրասիրությունը, միջէթնիկական հարաբերությունները: Արժեքավոր այս աշխատությունը, ինչպես նշում է Ս.Վարդանյանը, «առաջին լուրջ փորձերից է՝ առանձին տարածաշրջանի հասարակական կենցաղի յուրահատկությունները գիտագործնական և գիտատեսական հիմնավորումներով լուսաբանելու առումով»[1]:

Անհնար է պատկերացնել Արցախի ազգագրության ուսումնասիրության անկախության շրջանի պատմությունն առանց Ալլա Տեր-Սարգսյանցի ուսումնասիրությունների: Դեռևս 1968թ. ՀՀԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կազմում առաջին անգամ լինելով Արցախում՝ ծագումով շուշեցի նշանավոր ազգագրագետը մեկընդմիշտ կապվեց հարազատ երկրամասին՝ դրանից հետո բազմիցս շրջելով տասնյակ բնակավայրերով, որի արդյունքում գրառված հարուստ նյութը հիմք դարձավ ավելի քան երկու տասնյակ գիտական հոդվածների և զեկուցումների[2], որոնք հիմնականում նվիրված են էթնոմշակութային գործընթացներին, մասնավորապես՝ արցախահայ ժամանակակից ընտանիքի բազմակողմանի ուսումնասիրությանը: 2015 թվականին Մոսկվայում լույս է տեսնում երախտավոր գիտնականի «Армяне Нагорного Карабаха. История. Культура. Традиции» ստվարածավալ աշխատությունը, որի 6-րդ և 7-րդ գլուխները (էջ 561-824) նվիրված են ազգագրությանը: Աշխատության վեցերորդ գլխում հեղինակը առանձին բաժիններով հանգամանորեն ներկայացնում է 19-րդ դարի–20-րդ դարի սկզբի Արցախի բնակչության էթնիկ կազմի դինամիկան, հողային և դասային հարաբերությունները, տնտեսական զբաղմունքը, ժողովրդական փոխադրամիջոցները, բնակեցումը և կացարանը, հագուստը, ուտեստը, ընտանիքը, ամուսնությունը և հարսանեկան ծեսերը, մանկածնության հետ կապված ծեսերը, թաղման ծեսերը, օրացուցային տոները և ծեսերը: Յոթերորդ գլուխը նվիրված է արցախահայության 20-րդ դարի երկրորդ կեսի–21-րդ դարի սկզբի էթնոմշակութային զարգացումներին: Այստեղ առանձին բաժիններով քննվում են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում էթնիկական, սոցիալ-ժողովրդագրական և մշակութային իրավիճակը 20-րդ դարի 2-րդ կեսին, էթնոմշակութային փոփոխությունները նյութական բնագավառում, ընտանիքում, ամուսնական, ընտանեկան սովորություններում և ծեսերում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական, մշակութային, էթնոմշակութային և ժողովրդագրական իրավիճակը 21-րդ դարի սկզբին: Աշխատության առաջաբանում ներկայացվում է Արցախի պատմության և ազգագրության համառոտ պատմությունը: Առանձին կարևորություն ունի մենագրությանը կցված մատենագիտական ընդարձակ ցանկը: Ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ Ե.Լալայանի և Ս.Լիսիցյանի ուսումնասիրություններից հետո սույն աշխատանքը Արցախի ազգագրությանը նվիրված առաջին ամբողջական աշխատությունն է, որը էական ազդեցություն կունենա հետագա ուսումնասիրությունների համար:

Արցախի ազգագրության ուսումնասիրության գործում լուրջ խթան հանդիսացան հետխորհրդային շրջանում կազմակերպված մի շարք միջազգային և հանրապետական գիտաժողովներ: Հիշատակության արժանի են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Անցյալը, ներկան և ապագան» խորագրով 2006թ. հունիսի 21-24-ը Ստեփանակերտում կազմակերպված միջազգային գիտաժողովում ներկայացված Ա.Բաղդասարյանի[3], Ա.Թադևոսյանի[4], Ս.Մկրտչյանի[5], Ս.Պողոսյանի և Ա.Ստեփանյանի[6], Լ.Վարդանյանի[7], Ա.Տեր- Սարգսյանցի[8], Հ.Սարգսյանի[9], 2007թ. Շուշիում կայացած «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան» գիտաժողովում Ա.Բազեյանի[10], Մ.Գաբրիելյանի[11], Ա.Դաբաղյանի[12], Է.Խեմչյանի[13], ինչպես նաև տարաբնույթ այլ գիտաժողովներում տարբեր ժողովրդագետների կողմից ներկայացված՝ Արցախի ազգագրությանն առնչվող զեկուցումները[14]:

---

[1] Վարդանյան Ս., ***Артур Мкртчян. Общественный быт армян Нагорного Карабаха (вторая половина XIX-начало XX вв.). Ереван, издательство «Гитутюн» НАН РА, 2010, с.168,*** «Պատմաբանասիրական հանդես», N 2, Երևան, 2010, էջ 266:

[2] Մատենագիտական ցանկը տե՛ս Тер- Саркисянц А., ***Армяне Нагорного Карабаха. История. Культура. Традиции***, Москва, 2015, էջ 871-873:

[3] Բաղդասարյան Ա., ***Արցախի ժողովրդական նվագարանային երաժշտության հարցեր***, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Անցյալը, ներկան և ապագան. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, հունիսի 21-24, 2006թ.», Երևան, 2007, էջ 282-294:

[4] Թադևոսյան Ա., ***Դարբնի ծիսական կերպարի իմաստաբանությունը արցախցիների հավատալիքների համատեքստում (XIX-XX դդ.)***, նույն տեղը, էջ 321-325:

[5] Մկրտչյան Ս., ***Տոները դարաբաղցիների ավանդական կենցաղում***, նույն տեղը, էջ 395-402:

[6] Պողոսյան Ս., Ստեփանյան Ա., ***Սյունիք-Արցախի ավանդական տարազախումբը հայոց տարազի համակարգում***, նույն տեղը, էջ 417-425:

[7] Варданян Л., ***Из истории этнографического изучения Нагорного Карабаха (конец XIX- начало XX вв.)***, նույն տեղը, էջ 488-496:

[8] Тер-Саркисянц А., ***Тенденции развития сельской семьи у армян Нагорного Карабаха в постсоветский период***, նույն տեղը, էջ 465-474:

[9] Սարգսյան Հ., ***Լեռնային Ղարաբաղի բնակչության թվի և էթնիկ կազմի շարժընթացը XIX դարում***, նույն տեղը, էջ 455-464:

[10] Բազեյան Կ., ***Շուշիի ասեղնագործական դպրոցը***, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երևան, 2007, էջ 244-251:

[11] Գաբրիելյան Մ., ***Վերաբնակությունը որպես հասարակական-մշակութային գործընթաց. Շուշի քաղաքի օրինակով***, նույն տեղը, էջ 360-367:

[12] Դաբաղյան Ա., ***Շուշիի հասարակական կյանքը***, նույն տեղը, էջ 330-335:

[13] Խեմչյան Է., ***Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի 60-ական թվականները)***, նույն տեղը, էջ 335-351:

[14] Պողոսյան Ա., ***Արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթների տարածման արեալների մասին***, «Միջազգային գիտաժողովի նյութեր», պրակ 1, Ստեփանակերտ, 2009, էջ 256-259, Тер-Саркисянц А.,

Արցախի ազգագրության տարբեր բնագավառների վերաբերող և առնչվող գիտական հոդվածներ են տպագրվել նաև «Պատմաբանասիրական հանդես»[1], «Լրաբեր հասարակական գիտությունների»[2], «ԱրՊՀ գիտական տեղեկագիր»[3], «ԱրՊՀ հայագիտական հանդես»[4], «Կրթությունը և գիտությունը Արցախում»[5], «Հանդէս Ամսօրեայ[6]» և այլ հանդեսներում[7], ինչպես նաև գիտական հոդվածների ժողովածուներում[8]:

2009թ. լույս տեսավ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլասը»[9], որի շուրջ յոթ տասնյակ քարտեզները, ինչպես նաև տեքստերն ու գծապատկերները ներկայացնում են կարևոր տեղեկություններ նորանկախ հանրապետության կազմավորման, աշխարհագրական դիրքի, բնական պայմանների ու պաշարների, կենդանական ու բուսական աշխարհի, բնակչության, տնտեսության, մշակույթի մասին: Խնդրո առարկա հարցի տեսակետից առանձին արժեք ունեն ժողովածուի՝ Լ.Հովհաննիսյանի կազմած N 82 (Երկրագործական և անասնապահական մշակույթ), N 83 (Ուտեստներ և ըմպելիքներ), N 84 (Տարազ), N 85 (Տնայնագործական և արհեստագործական մշակույթ), Ա.Պողոսյանի կազմած N 86 (Գորգագործական մշակույթ) գունավոր քարտեզները, որոնք ներկայացնում են 19-20-րդ դարերի վիճակը:

Արցախի գորգագործական մշակույթի ուսումնասիրությունն է տրված Ա.Պողոսյանի մի շարք գիտական զեկուցումներում ու հոդվածներում և հատկապես գերմաներենով հրատարակված հիմնարար աշխատության մեջ[10], որտեղ հեղինակը առանձին գլուխներով ներկայացրել է Արցախի գորգագործական մշակույթի պատմությունը, արցախյան գորգագործական ավանդույթների տարածման արեալները (Հյուսիս-արևելյան Անդրկովկաս, Հյուսիս-արևմտյան Իրան, Փոքր Ասիա), արցախյան գորգերի խմբերն ու տիպերը (պատկերային, բուսածաղկային, խաչազարդ հորինվածքով, բազմանիստ խոշոր հորինվածքով, աստղազարդ հորինվածքով, խորանավոր, շերտավոր, շեղանկյունազարդով, վիշապագորգեր, «Զրաբերդ») և դրանց տարածման արեալները, որոնք ուղեկցվում են բազմաթիվ բարձրարժեք լուսանկարներով:

Թեմայի շրջանակներում է հրատարակվել նաև Վ.Թաթիկյանի «Արցախի տոհմագորգերը» ժողովածուն[11], որի առաջաբանում ներկայացվում է գորգագործության և գորգերի նախշազարդերի, զարդանկարների, խորհրդանշանների ծագումնաբանությունը, իսկ բուն ժողովածուում Արցախում և հայ ազգագրական այլ շրջաններում գործված հարյուրավոր գորգերի և մի քանի կարպետների լուսանկարներ անհրաժեշտ մեկնաբանություններով:

Արցախի պատմաերկրագիտական թանգարանի գորգերի, կարպետների, անկողնակալների, խուրջինների հավաքածուն՝ լուսանկարներով ու տեղի, ժամանակի, չափերի մասին հայերեն, ռուսերեն, անգլերեն տեղեկություններով, ներկայացված է Մ.Բալայանի «Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի գործվածքի հավաքածուն» ժողովածուի մեջ[12]:

2004թ. Երևանում լույս է տեսել Ս.Մարկոսյանի «Արցախի ժողովրդական երաժիշտներ» գիրքը, որտեղ հեղինակը գիտահանրամատչելի և գեղարվեստական լեզվով ներկայացել է երկրամասի՝ 19-20-րդ դարերի ժողովրդական շուրջ վեց տասնյակ երաժիշտների կյանքն ու գործունեությունը, ժամանակի երաժշտական

Этнокультурное развитие карабахских армян в постсоветский период, «Лавровский сборник. Материалы XXXIII Среднеазиатско-Кавказских чтений», Санкт-Петербург, 2009, с. 407-408 և այլն:

[1] Վարդանյան Ս., ***Պաշտամունքային տարրերը «Ալելույայի» արցախյան տարբերակներում***, N 2, Երևան, 2002:

[2] Այվազյան Ա., ***Ժողովրդագրական իրավիճակը Ղարաբաղում 1710-1920-ական թվականներին***, N1-2, Երևան, 2010, էջ 59-67, Սարգսյան Ս., ***Կաչաղակաբերդ***, N 1, Երևան, 1990, էջ 41-48:

[3] Բալայան Վ., ***Մետաբսագործությունը Լեռնային Ղարաբաղում 19-րդ դարի 2-րդ կեսից մինչև մեր օրերը***, N 1, Ստեփանակերտ, 2000, էջ 88-92, Նանագուլյան Ս., Ավագյան Ք., Պետրոսյան Զ., ***Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում լայնորեն տարածված ուտելի բույսերն ու սնկերը,*** N 2, Ստեփանակերտ, 2005, էջ 53-59:

[4] Բալայան Վ., ***Մոցիալ-տնտեսական իրավիճակը Արցախում 19-րդ դարում,*** Ստեփանակերտ, 2011, էջ 94-103, Հովհաննիսյան Լ., ***Արցախի բնակչությունն ըստ 1887 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալների***, Ստեփանակերտ, 2010, էջ 60-63, Հովհաննիսյան Լ., ***Բռնի մահմեդականացված հայության բեկորները Ղարաբաղում***, Ստեփանակերտ, 2011, էջ 187-192:

[5] Մանասյան Մ., Սուջյան Ս., ***Բնական գործոնների ազդեցությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարաբնակեցման վրա***, N 1-2, Երևան, 2011, էջ 109-116, Фарамазян Л., ***Об особенностях очерка Мариетты Шагинян «Нагорный Карабах»***, N 1-2, Երևան, 2014, էջ 151-154, Հայրապետյան Թ., Ծիսաառասպելական տոները Ղարաբաղում կենցաղավարող հրաշապատում հեքիաթներում, N 3-4, Երևան, 2008, էջ 31-39:

[6] Հայրապետյան Թ., ***Կոնստանդին Մելիք Շահնազարյանի (Տմբլաչի Խաչան) ժողովրդագիտական-բանահավաքչական գործունեությունը***, N 1-12, Վիեննա, 1999, Ղազիյան Ա., ***Խաչիկ ծ վարդապետ Դաղյանի ժողովրդագիտական-բանահավաքչական գործունեությունը***, N 1-12, Վիեննա, 1999, էջ 387-402:

[7] Գաբրիելյան Մ., Դաբաղյան Ա., Սարգսյան Հ., ***Շուշիում վերարնակված ընտանիքների կառուցվածքը 1996 - 2000թթ.***, «Հայ ժողովրդական մշակույթ», N 12, Երևան, 2004, էջ 25-31, Պողոսյան Ա., ***Շուշին գորգագործական մշակույթի կենտրոն (ԺԹ դարի վերջ-Ի դարի առաջին քառորդ)***, «Էջմիածին», Բ, 2014, էջ 42-50, Պողոսյան Ա., ***Արցախյան գորգագործական ավանդույթների արեալային տարածման ու Կովկասի հարավ-արևելյան գորգագործական կենտրոնների փոխառնչությունների մասին***, «Բանբեր հայագիտության», թիվ 2-3, Երևան, 2015, էջ 78-104:

[8] Պողոսյան Ա., ***Արցախի գորգագործական ավանդույթները հյուսիս-արևելյան Այսրկովկասի գորգագործական կենտրոններում***, «Գիտական հոդվածների ժողովածու. Գավառի պետական համալսարան», Երևան, 2011, էջ 240-250, Հարությունյան Հ., ***Ոսկերչությունն ու ակնագործությունը Շուշիում 18-19-րդ դարերում՝ ըստ նորահայտ վիմագրերի***, «Պատմագիտական ուսումնասիրություններ. Հոդվածների ժողովածու», մաս 2-րդ, Ստեփանակերտ, 2006, էջ 55-57:

[9] ***Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս (գլխավոր խմբագիր՝ Վարդանյան Մանուկ)*** Երևան, 2009:

[10] Pogosyan A., Rug weaving Culture of Artsakh, Historico-Ethnographic illustrated study, «Scholars Press», Saarbrucken, Germany, 2015.

[11] Թաթիկյան Վ., ***Արցախի տոհմագորգերը***, Երևան, 2004:

[12] Բալայան Մ., ***Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի գործվածքի հավաքածուն***, Երևան, 2012:

արվեստի ավանդույթներն ու սովորույթները: Ս.Մարկոսյանը գրառել ու նոտագրել է նաև ժողովրդական նվագարանային երաժշտության ավելի քան 150 նմուշ:

«Արցախի խոհանոց» խորագիրն է կրում Ժ.Բաբայանի ժողովածուն[1], չնայած պետք է նշել, որ գրքում ներկայացված է ընդհանուր հայկական խոհանոցը, և վեր չեն հանված արցախյան ուտեստի առանձնահատկությունները:

Արցախի ազգագրության տարբեր բնագավառներ և երևույթներ լուրջ հետազոտության նյութ են դարձել հայ ազգագրությանը նվիրված մի շարք համահավաք ուսումնասիրություններում: Ուշագրավ են Հ.Խառատյան-Առաքելյանի,[2] Գ.Շագոյանի[3], Ս.Հոբոսյանի[4], Մ.Գալստյանի[5], Ֆ.Գրիգորյանի[6], Ա.Թադևոսյանի[7], Ս.Մկրտչյանի[8] աշխատությունները, ինչպես նաև բազմաթիվ գիտական հոդվածներ[9]:

Անկախության տարիներին ԼՂՀ տասնյակ բնակավայրերի մասին տպագրվել են տասնյակ ժողովածուներ և աշխատություններ, որոնցից յուրաքանչյուրում այս կամ այն կերպ հեղինակներն անդրադառնում են նաև ազգագրությանը: Դրանցից որոշները առավել կարևոր են խնդրո առարկա հարցի ուսումնասիրության համար:

Կ.Ղահրամանյանի ուսումնասիրությունը[10] հիմնականում նվիրված է Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի պատմությանը, պատմաերկրագիտական հուշարձաններին ու վիմագրական նյութերին, որոնց զուգընթաց մեծ տեղ է հատկացված նաև ժողովրդական բժշկության, կերակրատեսակների, խաղատեսակների, տարբեր սովորությունների ու ծեսերի նկարագրությանը:

Ե.Աբրահամյանի՝ Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղին նվիրված գրքում[11] կարևոր տեղեկություններ են տրվում բնակավայրի ուխտատեղիների, բուսական և կենդանական աշխարհի, տարբեր արհեստների, հողագործության, այգեգործության, անասնաբուծության մասին:

Ծավալուն աշխատանք է Մ.Աղաջանյանի՝ Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղին նվիրված աշխատությունը[12], որտեղ հեղինակը առանձին բաժիններով ներկայացրել է գյուղի բնակչության նիստն ու կացը, ամուսնության, ծննդի, ընտանիքի հետ կապված զանազան սովորություններ ու ծեսեր, մահվան հետ կապված արարողություններ, հավատալիքներ, ինչպես նաև բանահյուսական տարբեր ժանրերի նյութեր:

Ս.Ղուլյանը «Բանաձոր» գրքում[13] անդրադարձել է նաև Հադրութի շրջանի համանուն գյուղի սրբավայրերին, արհեստներին, տարազին, խաղատեսակներին, գույներ ստանալու եղանակներին, հեքիմությանը, շերամապահությանը, խաղողագործությանը:

Ազգագրական տարբեր նյութեր են ընդգրկված Արցախին վերաբերող մի շարք տարաբնույթ ժողովածուներում, գրքերում, ալբոմներում[14]:

Անկախության տարիներին արդյունավետ աշխատանք է տարվել նաև Արցախի բանահյուսության և բարբառի գրառման, ուսումնասիրության և հրատարակման ուղղությամբ[15]: Դրանցից որոշները նույնպես պարունակում են ազգագրական նյութեր:

---

[1] Բաբայան Ժ.,*Արցախի խոհանոց*, Երևան, 2007:
[2] Խառատյան-Առաքելյան Հ., *Հայ ժողովրդական տոները*, Երևան, 2005:
[3] Շագոյան Գ.,*«Յոթ օր, յոթ գիշեր» հայոց հարսանիքի համայնապատկեր*, Երևան, 2011:
[4] Հոբոսյան Ս., *Հայոց ձիթհանության մշակույթը (XIX-XX դ. կես)*. *Պատմաազգագրական ուսումնասիրություն*, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», հ.23, Երևան, 2007, էջ 7-98:
[5] Գալստյան Մ.,*Արտագնացությունը Հայաստանում (XIXդարի երկրորդ կես-XX դարի 80-ական թթ.)*, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», հ.26, Երևան, 2009, էջ 7-88:
[6] Գրիգորյան Ֆ., *Հայկական ազգային տարազ,* Երևան, 2011:
[7] Թադևոսյան Ա.,*Դարբինը հայոց ծիսակարգում*, *Պատմաազգագրական հետազոտություն*, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», հ.23, Երևան, 2007, էջ 101-183:
[8] Մկրտչյան Ս., *Տոները հայոց արդի կենցաղում (էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություն)*, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», հ.26, Երևան, 2009, էջ 7-88, հ. 22, Երևան, 2007, էջ 131-237:
[9] Հայրապետյան Թ., *Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի երկիակաղիր ընկալումների շուրջ*, «Պատմաբանասիրական հանդես», N 3, Երևան, 2004, էջ 217-227, Առաքելյան Գ., *Խաղողագործությունն ու ոգելից խմիչքների արտադրությունը Ելիսավետպոլի նահանգում (XIXդ.)*, «Պատմաբանասիրական հանդես», N 3, Երևան, 2006, էջ 126-134, Առաքելյան Գ., *Բամբակագործությունը Ելիսավետպոլի նահանգում (XIXդ. երկրորդ կես)*, «Պատմաբանասիրական հանդես», N 3, Երևան, 2007, էջ 181-185, Առաքելյան Գ., *Շերամապահությունն ու մետաքսագործությունը Ելիսավետպոլի նահանգում (XIXդ.)*, «Հայոց պատմության հարցեր. Գիտական հոդվածների ժողովածու», թիվ 8, Երևան, 2007, էջ 171-188, Պետրոսյան Ա., *Արջի պաշտամունքը հայ ժողովրդական հավատալիքներում*, «Բանբեր Երևանի համալսարանի», N 3, Երևան, 1995, էջ 163-170, Ասոյան Լ. *Ելիզավետպոլի նահանգի հայ բնակչությունը XIXդ. վերջին (ըստ 1897թ. մարդահամարի տվյալների)*, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1, Երևան, 2008, էջ 241-246, Ասոյան Լ. *Հայերի տեղաբաշխումը և աճը Անդրկովկասում ըստ 1897թ. մարդահամարի տվյալների*, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 3, Երևան, 2003, էջ 99-105, Պողոսյան Ա., *Վիշապագորգերի ծագումնաբանության և տարածման արեալների հարցիշուրջ*, «Հանդէս ամսօրեայ», թիվ 1-12, Վիեննա- Երևան, 2004, էջ 367-415 և այլն:
[10] Ղահրամանյան Կ.,*Օջախիզիրք. Նշխարներ*, Երևան, 2002:
[11] Աբրահամյան Ե., *Մեծ Թաղեր*, Ստեփանակերտ, 2009:
[12] Աղաջանյան Մ., *Հաթերք*, Ստեփանակերտ, 2012:
[13] Ղուլյան (Ղուլունց) Ս., *Բանաձոր,* Երևան, 2013:
[14] Կարապետյան Ս., *Հյուսիսային Արցախ* , Երևան, 2004, Կարապետյան Ս., *Արցախի կամուրջները*, Երևան, 2010, Մկրտչյան Շ.,*Արցախի զանձերը*, Երևան, 2000, Мкртчян Ш., Давтян Щ., *Шуши.Город трагической судьбы*, Ереван, 1997, Баратов Б., *Ангел Арцаха*, Москва, 1992, Баратов Б., *Разоренный рай: Путешествие в Карабах*, Москва, 1998, Бахши К., *Духовные сокровища Арцаха*, Москва 2012 և այլն:
[15]Հարությունյան Լ., *Նշխարներ Արցախի բանահյուսության*, 2-5- րդ մաս, Երևան, 1991, Ստեփանակերտ, 2004-2011, Սարգսյան Ա., *Արցախյան ավանդություններ* , Ստեփանակերտ, 2007, Սարգսյան Ա., *Արցախի բանահյուսությունը*, Երևան, 2015, Սարգսյան Ա., *Ղարաբաղի բարբառի բառարան* , Երևան, 2013, Մինասյան Շ.,

ՀՏԴ 809.198.1 Հայոց լեզու

Շուշանիկ Սաղյան,
բ.գ.թ., դոցենտ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն,
E-mail: shushaniksagyan@mail.ru

«ԱՐՑԱԽ» ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀԻՄՔՈՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ

Արցախ բառակազմական հիմքով բաղադրությունների համակարգն էապես ընդլայնվել է XXդ.՝ կապված մեր երկրի՝ աշխարհաքաղաքական զարգացումների նոր ոլորտ ընդգրկվելու հետ:

Ածանցավոր կազմությունները ժամանակագրորեն սկզբնային են: Դրանց հարաբերականորեն փակ համակարգ լինելը հնարավորություն է ընձեռում ներկայացնելու հարացուցային շարքը՝-ական, -ային, -անալ, -յան, -ուտ, -վարի, -վել, -ցի, -ուհի ձևույթներով:

Բարդությունների բաց համակարգի՝ մեր կողմից ուսումնասիրված բաղադրությունները հիմնականում երկբաղադրիչ հոդակապով կազմություններ են: Վարչական ոլորտում գործում են նաև հապավված կազմություններ:

Բանալի բառեր՝ ածանցյալ, բաղադրող հիմք, բաղադրություն, բառակազմական կաղապար, բառակազմական հարացույց, բառակազմական հիմք, բարդություն, նախածանց, վերջածանց, տեղանուն

Шушаник Сагиян,
к.ф.н., доцент, кафедра армянского языка имени ак. С. Абраамяна,
E-mail: shushaniksagyan@mail.ru

СОСТАВНЫЕ СЛОВА ИЗ СЛОВООБРАЗУЮЩЕЙ ОСНОВЫ «АРЦАХ» В ЛИТЕРАТУРНОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Система составных единиц из словообразующей основы «Арцах» существенно расширилась в XX веке в связи с новыми геополитическими развитиями.

Парадигма производных слов, несколько единиц которой более ранние образования, включает суффиксы -ական, -ային, -անալ, -յան, -ուտ, -վարի, -վել, -ցի, -ուհի :

Парадигма составных слов, которая является открытой системой, закономерно пополняется новыми единицами. В них главным образом сочетаются две словообразующие основы с соединительной гласной. Административным являются несколько аббревиатурных единиц.

Ключевые слова- префикс, производные слова, словообразующая основа, словообразовательная парадигма, соединительная гласная, составные слова, суффикс, топонимическое имя

Shushanik Saghyan,
doctor of philology, chair of armenian language,
E-mail: shushaniksagyan@mail.ru

COMPOUND WORDS WITH STEM OF DERIVATION «ARTSAKH» IN THE LITERARY ARMENIAN

The article deals with compound words with derivational stem «Artsakh» in the literary Armenian. The system of these words has extended in the XX century.

The paradigm of derivation includes prefixes -ական, -ային, -անալ, -յան, -ուտ, -վարի, -վել, -ցի, -ուհի . Some of them are ancient derivatives.

The paradigm of compound words is the open system and has regularly been extended mostly by words with two stems. There are mixed abbreviations too.

Key words- compound word, connecting-vowel, derivative, paradigm of derivation, place-name, postfix, prefix, stem of derivation.

Արցախ բառակազմական հիմքով բաղադրությունները հատուկ են գրային հայերենի բոլոր փուլերին: Նշված հիմքին առնչվող բառակազմական հարացույցը գրական տարբերակում էականորեն ընդլայնվել է XXդ-ից՝ կապված Արցախի՝ աշխարհաքաղաքական զարգացումների նոր ոլորտ ընդգրկվելու հետ:

Ժամանակագրորեն սկզբնային են ածանցավոր կազմությունները: Հարացույցը (ըստ Գ. Ջահուկյանի՝ բառակազմական նեղ հարացույց[1]) նախ և առաջ ընդգրկում է վերաբերական իմաստով *–ական, -ային, -յան* հոմանիշ ձևույթները: *Արցախական, արցախային* կազմությունները մատենագրական վկայություններ են: Առաջինով է հարադրվում *Արցախ* տեղանվան պատմական տարբերակը՝ *Արցախական աշխարհ*: Ածանցյալը, նաև տեղանունն արդի հայերենում իբրև հին հորինվածք բարձր, նույնիսկ պաթետիկ ոճի արտահայտություններ են, քիչ գործածական , օրինակ՝ Իսկ հայերը, հայությունը, հին Արցախական աշխարհի տերերն ու մեծ զրկյալները ոտքի էին ելել[2]: Կան՝ *արցախական հերոս, արցախական բարբառ* (Ղարիբյանն էլ իր հերթին մի ընդարձակ քարտեզ էր գծել արցախական բարբառի տիրապետության սահմանները ցույց տալու համար[3]) , *արցախական գրականություն* (Ահա այս բանահյուսությունն է, որ արցախական գրականության համար տակավին մնում է որպես «ինքնին իր»[4]), *արցախական ոգի* (Պարգև սրբազանը երկինք էր առաքում արցախական ոգու հաղթության աղոթքը[5]), *արցախական մուսա*

Ղարաբաղի բարբառի դարձվածները, Ստեփանակերտ, 2007, Մարգարյան Լ., ***Արցախի բանահյուսության լեզուն*** , Ստեփանակերտ, 2011 և այլն:

[1] **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 161:

[2] **Ուլուբաբյան Բ.,** Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Եր., 1994, էջ 19:

[3] Ն.տ., էջ 274:

[4] **Սարինյան Ս.**, Բանաստեղծի հայտնությունը, Ստեփ., 1998, էջ 2:

[5] Ն.տ., էջ 17:

(Ժամանակի հոգեբանական բեկումները երևի այլ խոսք էին հուշում արցախական մուսաներին[1]) և այլ արտահայտություններ:

Արցախային կազմության վկայություն կա Ստեփանոս Սյունեցու պատմագրության մեջ՝ իբրև բարբառի անուն:

Նշված երկու ձևույթներին նույնիմաստ *–յան* ածանցը, *Արցախ* հիմքին օրինաչափորեն համադրվելով, զուգորդվածության լայն սահմաններ ունեցող ընդհանուր գրական միավոր է ստեղծել՝ համալրելով աշխարհագրական անուններից բաղադրված միավորների բաց համակարգը: Արդի շրջանում ածանցյալն ընդլայնված իմաստային դաշտ է ձեռք բերել՝ ստացականության, վերաբերության, ծագման և այլ նշանակություններով՝ *արցախյան պատերազմ/ գոյապայքար/ հակամարտություն* և այլն, *Արցախյան լեռնաստան* (Մտածել են, որ այստեղ, Արցախյան լեռնաստանում է լուծվում թուրք-թաթարական մեծ երազի ամենակարևոր օղակի հարցը[2]), *արցախյան նվագարան*[3] (բանաստեղծությունների ժողովածու՝ նվիրված Արցախին) և այլն: Քննվող բառը մի շարք կապակցություններում համարժեք է հատկանվան տրական հոլովաձևին կամ *-ցի*-ով բաղադրությանը՝ *արցախյան բարբառ-Արցախի բարբառ, արցախյան հանդիսատես-Արցախի/արցախցի հանդիսատես* :

Ընդլայնված գործառում ունի *–ցի* տեղանիշ ձևույթով կանոնական *արցախցի* ածանցյալը: Նրա տարբերակը՝ *արցախեցի*-ն, անհատական խոսքային համակարգում է գոյակցում: Չափածոյում դա կարող է առնչվել վանկաքանակության պահպանման խնդրին. օրինակ՝ Է. Գրիգորյանի հետևյալ տողերում՝ *Արար աշխարհ գիտի հիմա Արցախեցու կամքը անառ*[4]: Իսկ Հր. Բեգլարյանի բանաստեղծություններից մեկում հանգավորումն ապահովվել է *-եցի* վերջույթով (-Ճիվաղներ,-ասաց մեծ արցախեցին, Հերիք է ինչքան մեզ ծանակեցիք[5]): Հ. Խաչատրյանի լեզվում *արցախցի-արցախեցի* զուգաձևությունն ի դեպ որոշակի օրինաչափությամբ չի իրացվել, գեղարվեստական որևէ հնարք չի ստեղծվել:

Արցախուհի կանոնական կազմությունն այն հայկական եզակի բաղադրություններից է, որտեղ նախատիպի ցույց տված տեղը երկրամաս է: Լեզվաբանների արձանագրած *տեղանուն+սեռանիշ ածանց* կաղապարով բառերի համակարգում[6] կան միայն *աշխարհամասի, երկրի, քաղաքի անվանում* սերող հիմքով կազմություններ՝ գերակշիռ մասով օտար՝ *եվրոպուհի, ամերիկուհի, ավստրուհի, վանուհի* և այլն: Տեսականորեն ածանցելի են բոլոր տեղանունները, սակայն խոսքային համակարգում գործառում են նկարագրական կառույցները. օր.՝ *Սյունիքի/սյունեցի, Գեղարքունիքի կին, աղջիկ* և այլն: Նշված ածանցյալը լայն կիրառություն ունի հրապարակախոսության մեջ և գեղարվեստում:

Արցախի աշխարհաքաղաքական զարգացումները՝ պատերազմի ելքով՝ նպաստել են հատկանվան իմաստային դաշտի զարգացմանը՝ փոխանվանական, փոխաբերական նշանակություններով: Դրա հիմքի վրա ևս ստեղծվել են բաղադրություններ, օրինակ՝ *արցախոտ* կազմությունը, որը համալրում է *տեղանուն +-ոտ* արտակաղապարային սակավ կազմությունների շարքը: Ենթադրելի է *Արցախը հիշեցնող* իմաստը: Այն համատեքստային կիրառության մեջ ձեռք է բերել *Արցախի հակամարտությունը, հերոսական պայքարը հիշեցնող* նշանակությունը՝ Խավարի դեմ անխավար… Եռաբլուր արցունքոտ, Եռաբլուր արցախոտ[7] :

Հատկանունների բայացման նորագույն գործընթացում բայակերտ ձևույթների զուգահեռ ձևերով գոյակցող սակավաթիվ բառերի համակարգում[8] են նաև *արցախանալ-արցախվել* կազմությունները ՝ Ես Ապրում եմ Ղարաբաղում, Եվ չեմ ապրի մեկ այլ հողում…Եվ կմեռնեմ պապերիս պես Արցախացած նրա կողում[9] : Համատեքստային միասնական կիրառություն կա Ս. Խանյանի չափածոյում՝ *Ազերական մահերի դեմ Բռունցքվել է արևաբաղձ, Արցախվել է Արցախի պես, Մարտնչում է Արցախացած*[10] :

Այսպիսով՝ ածանցյալների համակարգը գերազանցապես վերջածանցավոր միավորներ է ներառում: Նախածանցավոր սկզբնատիպ կառույցներ չեն գործառում, որն առնչվում է նաև հիմքի բնույթին, քանի որ հատկանունների հետ ածանցների զուգորդելիության սահմանափակվածություն կա: Ենթադրելի է *ան-* ժխտականի գոյությունը հարացույցում՝ իբրև այն օրինաչափության արտահայտություն՝ ըստ որի՝ «Տեսականորեն հայերենի բոլոր գոյականները կարող են ստանալ *ան-* ժխտական նախածանցը»[11] : Այսպիսով՝ *Արցախ* հիմքը կարող է ածանցվել *ան-* ժխտականով՝ *Արցախի գոյության բացառում* իմաստով:

Բարդման եղանակով կազմությունները, ի տարբերություն ածանցյալների, բաց համակարգ են, ստեղծվում է ընդլայնված հարացույց (ըստ Գ. Ջահուկյանի՝ բառակազմական լայն հարացույց[12]): Ըստ մեր ուսումնասիրությունների՝օրինաչափորեն գերակշռում են հոդակապով կազմությունները: Անհոդակապ են *Միջնարցախ, Արցախամոր* բարդությունները: Սրանք պատմական անվանումներ են: Առաջինն այն եզակի կազմություններից է, որտեղ *Արցախ*-ը բաղադրող հիմք է: Երկրորդը գոյություն ունի *աշխարհ* բառի հարադրությամբ : Մատենագրական վկայություններում նախնական են նկարագրական կապակցությունները՝*ամուր գաւառն Արծախայ, գնաց յամուրն Արցախայ*[13]:

Արցախ սերող հիմքին բաղադրվել են տարբեր հիմքեր: Այս ամենն առաջացրել է բառակազմական զանազան իմաստներ. *Արցախ*-ը ստացել է վերաբերության, հանգման, սերման իմաստները : Հարացույցն ընդգրկում է *–անուն, –բույր, -գետ, -գիրք, -դավ, -դարձ, -թույր, -ծին, -կաց, -ձույլ, -մարտ, -մետ, -մերժ, -պաշտպան, –սեր,-տիպ, -ցույց, -փրկիչ, -որդի*[14] և այլ բարդող հիմքեր : Ստեղծված բաղադրությունների մի մասում գործում է *Արցախ-պատերազմ-կորուստ* զուգորդումների հիմքի վրա զարգացած իմաստը:

Մեկ հոդվածի սահմաններում նշված համակարգը մանրամասնելու անհնարինության պատճառով անդրադառնում ենք միայն որոշ կազմությունների:

Արցախահայ կազմությունը բաղադրող հիմքի երկգործառույթ հատկանիշը պահպանել է՝ գոյականական իմաստի գերակշռությամբ՝ *Արցախահայերը* մեծ զոհերի գնով հաղթեցին այդ ահեղ գոտեմարտում : Կա նաև *n* հոլովիչով հնատիպ քերականական ձև (Գանձակում բնավորված Նուրի փաշան ու նրա տեղական գործակալներն ուշի ուշով հետևում էին

[1] Ն.տ., էջ 17:
[2] **Ուլուբաբյան Բ.**, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 20:
[3] **Գաբրիելյան Գ.**, Արցախյան նվագարան, Եր., 2002 :
[4] **Գրիգորյան Է.**, Անդարձ կարոտ, Ստեփ., 2000, էջ 27 :
[5] **Բեգլարյան Հր.**, Լեգենդար բանակը, «Հույսի ճանապարհ», N3, 2007 :
[6] **Գալստյան Ս.**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր.,1978, էջ 177 :
[7] Ըստ Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարան»-ի, Եր., 2002, էջ 75 :
[8] Տես՝ Մինասյան Ս., Հատուկ անուններից կերտված բայեր, Ստեփ., 2004, էջ59 :
[9] **Գաբրիելյան Գ.**, Արցախյան նվագարան, էջ 103:
[10] **Խանյան Ս.**, Իմ ծիածան, Ստեփ., 2001, էջ189 :
[11] **Գալստյան Ս.**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, էջ 194:
[12] **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, էջ 161:
[13] Տես **Ուլուբաբյան Բ.**, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 16 :
[14] Մեծ մասն ըստ Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարան»-ի, Եր., 2002:

արցախահայոց համագումարին.... [1]): Ի դեպ, գրավոր խոսքը մինչ XX դ. ունի *Ղարաբաղի/ Արցախի հայ բնակիչ/բնակչություն* կապակցությունները: Ածականական կիրառության օրինակներից են՝ Բաղամյանը հրապարակում էր ցուցակներն արցախահայ նահատակների[2]:

Վարչական խոսքում տեղ են գտել հապավման եղանակով համադրված *Արցախբանկ, Արցախէներգո, Արցախհէկ, Արցախգազ, Արցախկապ, Արցախփոստ* և այլ կազմություններ: XX դ. գրական տարբերակն ունի նաև *Արցախ* հատվածական հիմքով *Արցախ-ղարաբաղյան* իմաստաբանորեն չտարորոշված կազմությունը. օրինակ՝ *արցախ-ղարաբաղյան բարբառ* (ըստ Բ. Ուլուբաբյանի), կամ Ս. Սարինյանի խոսքում. «Ինչպես էլ գնահատելու լինենք, այնուամենայնիվ, փաստ է, որ մինչև վերջին ժամանակներս *Արցախ-ղարաբաղյան* գրականության աշխարհայացքը ներփակ էր, որոշ իմաստով տեղային ու ինքնաբավ»[3] :

Արցախ հիմքով ստեղծվող լեզվամիավորները կարող են պարզապես բառատարբերակների առաջացման հիմք դառնալ, օրինակ՝ *արցախածնունդ* (Զմոռանանք, որ հեթանոսական շրջանի ամենալավ ավանդավեպերից մեկը ևս արցախածնունդ է [4]) բառի գոյությունը, եթե հաշվի առնենք, որ լեզվահամակարգն արդեն ունի *արցախյան* բառը, կամ խոսքային համակարգն ունի լեզվախնայողությամբ ստեղծված *արցախածին* կազմությունը:

Արցախ հիմքով կազմությունները նաև ձևաիմաստային հարաբերակցությամբ են կապակցված: Հոմանշային զույգեր են՝ *արցախցի-արցախածին, արցախամերժ-արցախադավ* : Վերջիններիս հակադրվում է *արցախապաշտպան-արցախամետ* զույգը: Մասի-ամբողջի հարաբերությամբ են ներկայանում՝ *արցախցի-արցախորդի, արցախուհի* կազմությունները: Կան միավորներ, որոնք, տարբեր ստեղծագործողների լեզվահամակարգում լայն շրջանառվելով, իմաստի ընդլայնման են ենթարկվել, օրինակ՝ *արցախաբույր* կազմությունը, որն ուղիղ իմաստով նշանակում է *Արցախ տեղանքին հատուկ բույր՝ Մորս ձայնը զանգակում է լեռների մեջ, փարվում հողիս արցախաբույր*[5], *....ծառեր՝ ծանրաբեռնված արցախաբույր մրգերով*[6]*:* Այլաբերական իմաստավորում է առաջանում ոչ առարկայական իմաստ ունեցող բառերին զուգորդվելու դեպքում՝ *Արցախուհին....արցախաբույր իր այդ պարով...* [7]: *Դա իմ երգն է արցախաբույր*[8]*:*

Նույնահունչ միավորներից են՝ *Արցախաշեն* հատկանունը, որը Հ. Խաչատրյանի կողմից նշվել է իբրև *Դաշբուլաղ* – ի (Ասկերանի շրջան) հայկական տարբերակ[9] և *Արցախը շենացնող* նշանակությամբ ածականը՝ Ինձ թվում է, թե ենթադրում ենք Հողվորի պես արցախաշեն[10] : *Արցախամայր* տարողունակ կազմությունը համատեքստային տարբերակված իմաստներով է գործառում տարբեր հեղինակների մոտ: Ժ. Բաղդասարյանն այն գործածել է *արցախցի մայր* իմաստով՝ *Արցախամոր աղոթքները Երկինք հասցնող Մի երգարան, Արցախյան գարուն, կներես դու ինձ՝ արցախամորս* [11] (հեղինակը ժողովածուում կապակցական տարբերակն ավելի շատ է կիրառել՝ Լալիս է Արցախի մայրը, Այս ի՞նչ հիվանդություն է հոգեմաշ է անում Արցախի մորը): Ս. Խանյանը նշված բարդությունը կիրառել է *մայր Արցախ* իմաստով՝ Երազներով միաձույլ, երկրի հանդեպ մի ոգի, Արցախամոր գրկի մեջ՝ մի ծաղկեփունջ, մի հոգի[12] :

Արցախ հիմքով բաղադրությունները գործառական զանազան երանգներ ունեն, խոսակցական՝ *արցախավարի*, գեղարվեստական՝ *արցախաբույր, արցախաթույր*, վարչական, գիտական : Համակարգում զգալի են հեղինակային կազմությունները: Այսինքն՝ ստացված բաղադրությունները թե բնօրրանի գեղագիտական ընկալման, թե քաղաքական մտածելակերպի լեզվարտահայտություններ են և ժամանակագրորեն տարբեր են: Բավականին դիպուկ է արտահայտվել Ս. Սարինյանը. «Ղարաբաղը ավելի շատ դիտվում էր դրսից, քան բացահայտվում ներսից, և ղարաբաղյան մոտիվը գերազանցապես հնչում էր որպես էկզոտիկա, հայրենի եզերքի ռոմանտիկական նոստալգիա: Այժմ բոլորովին այլ է իրողությունը: Վերջին տարիների իրադարձությունները Արցախը դուրս բերեցին աշխարհագրական ու էթնիկական իր ներփակ կացությունից և խաչաբեկեցին քաղաքականության միջազգային կոորդինատների վրա»[13] :

Այսպիսով՝ *Արցախ* բառակազմական հիմքով ստեղծված տասնյակ միավորները ներկայանում են բառակազմական տարբեր եղանակներով, իմաստներով: Ստեղծված եզակի կաղապարները նորից վկայում են մեր լեզվի ճկունությունը:

Արցախ հիմքով կազմությունների երկրորդային բաղադրումները քիչ են՝ *ամենաարցախցի* [14],*արցախահայություն, արցախաշենցի*[15] *, հակաարցախյան* (Սրանք բոլորը հակահայկական էին, հակաարցախյան[16]) , *արցախասիրական* (Բայց որովհետև ղեկավար Արկադի Վոլսկին էր նրա ոգին, ամենավճռական դեմքը, որն իր գործնական ու գաղափարական , մանավանդ պարզապես արցախասիրական հատկանիշներով որոշում էր կոմիտեի գործունեության որակը....[17]):

Ի հակակշիռ *Արցախ* հիմքի՝ *Ղարաբաղ*-ը բառակազմական գործընթացի մեջ սակավ է ներառվում: Հայկական գիտակցության մեջ *Արցախ-Ղարաբաղ* անունների ծագումնաբանական տարբերակումը հայկական-օտար հիմունքով, նպաստում է *Արցախ*-ով հարացույցի ընդլայնված լինելուն: Դրան հավելվում է նաև այն, որ *Արցախ* բառը բարեհունչ է, համեմատենք՝ *արցախյան-ղարաբաղյան* (մամուլում գործառում է նաև *լեռնայինղարաբաղյան* կազմությունը՝ *լեռնայինղարաբաղյան հակամարտություն/ կարգավորում* և այլն [18]), *հակաարցախյան- հակաղարաբաղյան, հակաղարաբաղացում, արցախահայ-ղարաբաղահայ, արցախվել-ղարաբաղվել* (այստեղ ակնհայտ է նաև իմաստային տարբերակվածությունը)՝ Ես որպես հին Հայաստան, Ղարաբաղված մի փունջ եմ [19] և այլն:

Նկատելի է նաև այն, որ *Արցախ* հիմքով կազմություններն արցախյան գրականության մեջ շատ չեն, սա նաև վկայում է գերազանցապես հայկական էթնոգիտակցման տարրը արցախցիներիս մտածելակերպում:

---

[1] **Ուլուբաբյան Բ.**, Արցախյան գոյապայքարը, Եր., 1994, էջ26 :
[2] Ն.տ., էջ 167 :
[3] **Սարինյան Ս.,** Բանաստեղծի հայտնությունը, էջ 1:
[4] Ն.տ., էջ 39:
[5] **Հակոբյան Վ.,** Արցախա ծուխ, Եր., 1989 էջ181:
[6] **Դիզակ Գ.,** Արցախցիներ, Եր., 1990, էջ 48:
[7] **Հակոբյան Վ.,** Արցախա ծուխ, էջ 58:
[8] **Գաբրիելյան Գ.**, Արցախյան նվագարան, էջ28:
[9] **Խաչատրյան Հ.,** Հայաստան երկիր ուխտավայր, Ս. Էջ., 1998, էջ 103:
[10] **Խանյան Ս.,** Արցախի սիրտը, Ստեփ., 2015, էջ 179 :
[11] **Բաղդասարյան Ժ.**, Սիրտս ճաք տվեց, Ստեփ., 1999, էջեր 4, 39 :
[12] **Խանյան Ս.**, Արցախի սիրտը, էջ 181:
[13] **Սարինյան Ս.**, Բանաստեղծի հայտնությունը, էջ 2:
[14] Հակոբյան Վ., Կ. Հակոբյանի «Նվիրում» ժողովածուի ներածական :
[15] **Խաչատրյան Հ.**, Հայաստան երկիր ուխտավայր, էջ 103:
[16] **Ուլուբաբյան Բ.**, Արցախյան գոյապայքարը, էջ 167 :
[17] **Ուլուբաբյան Բ.**, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 297:
[18] Տես Ստանիսլավ Տարասով, «Լեռնային Ղարաբաղ. ո՞վ է շրջանառության մեջ դնում «Պուտին» օպերացիան», «Ազատ Արցախ», 2016, N100 :
[19] **Քոչարյան Ա.**, Աստվածամոր աչքերը, Եր., 1991, էջ 49 :

ՀՏԴ 809.198.1 *Լեզվաբանություն*

Նունե Խաչատրյան,
բ.գ.թ.,դոցենտ,ակ.Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
Էլ. հասցե՝ Khachatryan-15@mail.ru

ԵՐԳԻԾԱՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԴՐՍԼՈՐՈՒՄՆԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐ» ՊՈԵՄՈՒՄ

Հ.Շիրազը «Թոնդրակեցիները» պոեմում սատիրայի հարվածներն ուղղում է թոնդրակեցիների ապազգային գործունեության,այդ քայքայիչ շարժման, գաղափարների դեմ, որ պառակտեց ազգային միասնականությունը, խարխլեց հայ եկեղեցու, պետականության հիմքերը: Երգիծական ռճական հնարներից գործածել է խոսքի վերամբարձությունը, անտրամաբանությունը, կծու սրամտությունները, տարրմբռնումը: Սատիրայի միջոց է դառնում կերպարների սկզբունքների վեր հանումը՝ դրանով իսկ նրանց ցուցադրումը: Երկխոսությունների միջոցով,որոնք դրսևորվում են ճարտասանական հարցերով, դիմումներով, բացահայտվում են հերոսների էության ու մտածողության առանձնահատկությունները:

Բանալի բառեր. երգիծանք, սատիրա, հնար, սրամտություն, խոսքի վերամբարձություն, երկխոսություն, ճարտասանական հարց, դիմում, ծաղր, ռճական նշանակություն:

Нунэ Хачатрян,
к.ф.н., доцент,
кафедра армянского языка им. академика С. Абрамяна

НЕКОТОРЫЕ ПРОЯВЛЕНИЯ САТИРЫ В ПОЭМЕ О. ШИРАЗА "ТОНДРАКИЙЦЫ"

В поэме О . Шираза "Тондракийцы" автор сатирически рисует антинациональную деятельность тондракийцев, их движение и идеи, разрушающие и разъединяющие национальное единство, подрывающие основы армянской церкви и государственности.

Наряду с сатирическими стилистическими приемами использованы высокый стиль речи, иррациональность, остроумные выражения. Сатирическим приемом становятся и выявления принципов персонажей и тем самым их демонстрация. С помощью диалогов, заключающих риторические вопросы и обращения, раскрываются особенности сущности и мышления персонажей.

Ключевые слова: юмор, сатира, прием, остроумие, высокопарность речи, диалог, риторический вопрос, обращение, иронический, стилистическое значение.

Nune Khachatryan,
Ph.D., Associate Professor,
Chair of Armenian Language after Academician S. Abrahamyan

SOME FORMS OF SATIRE IN H. SHIRAZ'S POEM "TONDRAKIANS"

In "Todrakians" H. Shiraz criticises the anti-national activities of the tondrakians, destructive movement and ideas which break the national unity and undermin the foundations of the Armenian church and state.

The author used various satirical stylistic techniques such as high-flown speech, irrationality, witty expressions. The identification and demonstration of characters' principles turn to satirical means. Dialogues, which contain rhetorical questions and addresses disclose the peculiarities of the nature and thinking of characters.

Key-words: humor, satire, method, ingenuity, high-flown speech, dialogue, rhetorical question, appeal, ironic, stylistic meaning.

Հովհաննես Շիրազը «Թոնդրակեցիները» պոեմում երգիծանքը գործածում է որպես զենք արատավորի, անբարոյականի, բացասականի, վնասակարի դեմ մղած պայքարում: Կախված այն վերաբերմունքից, որ ունի հեղինակը տվյալ անձի, երևույթի, հատկանիշի նկատմամբ, փոխվում են և՝ երգիծանքի աստիճանը, և՝ ռճական հնարները:

Հեղինակը սատիրայի թունոտ հարվածներն ուղղում է թոնդրակեցիների ապազգային գործունեության,այդ քայքայիչ շարժման, գաղափարների դեմ, որ պառակտեց ազգային միասնականությունը, խարխլեցին հայ եկեղեցու, պետականության հիմքերը:

Պոեմում հանդես են գալիս տարբեր կերպարներ: Հումորը գործածում է մասնավորապես ռամիկներին, շինականներին նկարագրելիս,որոնք անմեղ զոհ են դաժան իրականության, անբարո բարքերի: Սատիրան գործադրում է ազգային, քաղաքական թեմաների դեպքում: <<Եվ սատիրայի, և հումորի դեպքում հեղինակի վերաբերմունքը իրականության հանդեպ միանման է,ծաղրական,չնայած այդ ծաղրի մեջ եղած տարբերություններին:Հումորական ծաղրը և սատիրական ծաղրը միմյանցից տարբերվում են իրենց ընդգրկած բովանդակությամբ և իրենց բնույթով>>:/1, 140/

Բանավեճերի միջոցով, որոնք դրսևորվում են երկխոսություններով, արտահայտում է իր ժխտողական վերաբերմունքը թոնդրակեցիների կործանարար ազդեցության հետևանքների նկատմամբ, ոչնչացնող ծաղրի

ենթարկում նրանց անհանդուրժելի արատները: Պոեմում երկխոսություններ են ծավալվում պետական-քաղաքական, հոգևոր գործիչների՝Հովհաննես Սմբատ արքայի, Վահրամ Պահլավունի սպարապետի, կաթողիկոս Գր. Մագիստրոսի և գաղափարական հակադիր մյուս կողմի՝հավատուրաց, ազգադավ թոնդրակեցիների պարագլուխ Սմբատ Զարեհավանցու ու մյուս թոնդրակեցիների՝Թորակի, Վրվեռի, Հակոբոսի, Արքայիկի և Հրանույշ, Ախնի, Կամարա թոնդրակուհիների միջև:

Երգիծանքի դրսևորման միջոցները բազմազան են և հնարավոր չէ խոսել պոեմի պատկերավորման համակարգի մասին ամբողջության,միասնության մեջ: Հեղինակը սատիրական վերաբերմունք արտահայտելու համար ավելի հաճախ դիմել է հակադրությունների, փոխաբերությունների ,համեմատությունների: Այս հոդվածում մենք կխոսենք մասնավորապես երգիծանքի դրսևորման մի քանի հնարների մասին:

Հովհաննես Շիրազը այս պոեմում երգիծական ոճական հնարներից գործածել է խոսքի վերամբարձությունը, խոսքի անտրամաբանությունը, կծու սրամտությունները, տարբմբռնումը::

Սատիրայի միջոց է դառնում կերպարների սկզբունքների վեր հանումը՝ դրանով իսկ նրանց ցուցադրումը: Անձը, շարադրելով իր ընդհանուր դատողությունները, սկզբունքները, դրսևորում է ինքն իրեն: Երևում է կերպարը իր հոգեբանությամբ, բնավորությամբ, վարքով: Շիրազը անողոք վերաբերմունք է ունեցել թոնդրակեցիների պարագլուխ Սմբատ Զարեհավանցու նկատմամբ: Նրան պատկերել է գորշ ու սև գույներով: Ներկայացրել է որպես ազգի մեծագույն չարիք և ցուցաբերել իր ժխտողական վերաբերմունքը այս գործչի նկատմամբ: Ահա մի հատված Զարեհավանցու դատողություններից, որում ծաղրվում է նրա և իր համախոհների հակաեկեղեցական գործունեությունը.

-Հիսուսն էլ ծնունդ չէ Աստվածային,
Մարդ է եղել ,մարդ և հույժ իմաստուն,
Աստվածային է հռչակել իրեն, որ անսան իրեն որպես Աստծո…
Ի՞նչ եք մարդածին աճյունից կառչել,-
Բավ ծնկաչոքենք մեռյալի առջև: (76)

Բերենք հատված Զարեհավանցու որդու՝ Թորակի խոսքերից.

Աստրծուն մարդոց վիշտն է ստեղծել,
Ոչ թե աստված է ինքն իրեն... գոցել:
Թե կա՝ է՞ր չի գա,ումի՞ց է վախում
Ո՛չ սատանան կա, ոչ աստված ինքը՝ կենաց փարախում,"
Թե չհայտնվի,էլ ի՞նչն է աստված ամենաստեղծ
Էլ նրա ի՞նչն է ամենակարող և ամենամեծ: (143)

Թոնդրակեցիները անաստվածության հետ միասին քարոզում են կանանց համայնացում, որն էլ սատիրայով խարազանվում է հեղինակի կողմից: Օր. Թոնդրակի խոսքերից.

Ում հետ որ ցանկա կինը՝ կքնի,
Այս է աղանդը մեր առաքինի,-
Կինը գրկողին
Հողը հերկողին...
Քանի դեռ վերջն է հողե անկողին: (133)

Թոնդրակեցիների պաշտպանած հետևյալ սկզբունքներից՝ Քրիստոսին, հոգևորականներին ժխտելու, Աստվածածնին անարգելու, կանանց համայնացնելու, ակնհայտ է դառնում նրանց ունեցած ազգակործան դերը սեփական ժողովրդի կյանքում. << Կինն ամենքինն է, քոնն իմն է, ի նչ կին>>, << Կինն ում ցանկանա նրան կգնա՝ թե վանքը լքե՝ թող թոնդրականա>>, << Կինը գրկողին, հողը հերկողին >> , << Ողջ համայնքինն է հողը, հացն ու գույքը, Իմ սեփականն է միայն իմ մույկը>>:(108)

Հեղինակը հեգնական վերաբերմունք արտահայտելու համար դիմում է դիպուկ սրատմությունների:Ինչպես գիտենք, սրատմությունը տարբեր առարկաների ակնակնկալ և արագ մերձեցումն է,առարկաներ, որոնք ըստ էության պատկանում են հասկացողությունների տարբեր ոլորտների և նման են միայն որևէ առանձհատուկ գծով:

Սրամտությունները դրսևորվում են երկխոսությունների միջոցով: Երկխոսություններով արտահայտված պատկերների մեջ հանդես են բերված հերոսներն իրենց տիպական գծերով: Նրանք անհատականացվում են իրենց ոճով: Ակնառու է դառնում հեղինակի ծաղրական վերաբերմունքը նրանց նկատմամբ: Հ. Շիրազը ստեղծում է իրերի և երևույթների առնչության վրա հենվող սրամտություններ: օր.

Հառաչեց վեհն էլ ամենայն հայոց,
Եվ ապա դարձավ խոլ թոնդրակեցոց
-Վանքը վեղարն է անմարմին Աստծո,
Գինին արյունն է աստվածառդու:
-Իրա՞վ… խաղողից աստվա՞ծ են քամում,-
-Ծաղրեց Թորակը,
Ավաղ, Աստծո արյունն ենք խմում,-
Տաք- սառնորակը, -
Այդ ի՞նչ Աստված է ամենակարող,
Որ իր արյունն են խմում մարդ ու հող:
Իր ստեղծածն են,բայց թե խիղճ չունի՞ն... (292)

Սրամտությունը առաջանում է երկու իրար հետ կապված երևույթների անակնկալ մերձեցումից: Օրինակ.
Աղավնունի՝ - Վանքերն իմ կուսական…
Աղոթքներն էլ հերոսական…
-Հա՜, հա՜,աղոթքն հերոսածի՞ն...
Թոնդրակեցիք ծիծաղեցին: (66)

Հերոսների խոսքը հագեցած է կծու սրամտություններով՝ արտահայտված հարցական նախադասություններով:
Պատկերների պատահական կամ թվացյալ զուգակցումից առաջ է գալիս կծու սրամտություն: Կաթողիկոսի այն խոսքերից հետո, որ հողը դարձել է վանքապատկան՝հրամանով արքայի, «հրամանը արքաս գրել՝կնիքն Աստված ինքն է դրել»,թոնդրակեցիները սկսում են ծաղրել.
-Հա, հա, վա՞նք է իջել աստված,-
-Չտեսնվածն է տեսնված...
-Ով հայտնություն աստվածային:
-Ոտներդ,անշուշտ, ամպո՞տ էին…
-Տեր իմ,իրա՞վ տեսար նրան,
-Մարդակե՞րպ էր քո տեսածը՝
-Կերա՞վ նա քո նշխար-հացը: (62)

Զարեհավանցու խոսքերից.
- Բայց որտե՞ղ է երկնաձիրը,
Աստծո կնիք ձեռագիրը
Հրովարտակն... աստվածատուր,
Ցույց տուր գոնե այս ամբոխին,
Որ դարձի գա՝խղճով մաքուր,
Որ քեզ թողնե ողջ երկիրը,
Տեր չկանգնե էլ յուր հողին: (63)

Երկխոսության միջոցով անմիջապես ցուցադրում է կերպարներին, շոշափելի և ակնհայտ դարձնում նրանց էությունը:
Բառը կամ արտահայտությունը , որ գործածված է փոխաբերական իմաստով,խոսակցի կողմից նպատակաուղղված վեր է լուծվում ուղղակի իմաստով:Հեղինակը հատուկ միտումով ստեղծում է բառիմաստների շփոթում,որն էլ առաջ է բերում խոսքի կոմիզմ:
Բերենք Հուսիկ Աղավնունու և Թորակի երկխոսությունից մի հատված.
Մոմերն աստծո աչքերն են, ասի,
Նշխարն՝ անվախճան մարմինն Հիսուսի....
Աստված՝ խիղճը՝ կա թե որ լավ նայես խղճիդ աչքերին:
Աստված բաժանեց քո էլ հողերը
Լացող աչքերն են հալվող մոմերը...
- Աչքերը վարը, բայց ինքը վե՞րը
Ասել է շի՞լ են աստրծո աչքերը:
Աստված երկնքում,
Աչքերը վանքո՞ւմ: (176)

Բերենք օրինակ շինականների երկխոսությունից.
-Բոլորին էլ բանտը կտանեն…
Զարեհավանցու աչքը կհանեն:
-Թող կապույտն հանեն, որ ապրի սևը… (173)

Այստեղ << աչքը կհանեն >> դարձվածի իմաստը առարկայացվում է, որով էլ ձաղկում է թոնդրակեցուն:
Երգիծանքի դրսևորման միջոց է դառնում կերպարների խոսքի վերամբարձությունը, ճոռոմաբանությունը:Հ. Շիրազը թոնդրակյան կանանցից մեկին՝ Ախնիին, խոսեցնելով վերամբարձ ոճով, շողոքորթ լեզվով՝ իր ծաղրն է ուղղել նրա անբարոյականության, քծնանքի, խորամանկության դեմ: Բերենք մի օրինակ, որում նա, շողոքորթելով արքային, փորձում է նրա գութը շարժել և շղթաներից ազատվել.
-Միթե՞ կնոջից կվախի արքան,
Աստծո ստվերը կվախի՞ այնքան,
Անխոցելի է ստվերը երբ որ,-
Մենք ի՞նչ, ո՛վ արծիվ, դու արծիվ, մենք՝լոր,
Մենք փետուր, դու թուր....
Մեզ մահի մի տուր: (195)

Կատակերգական է նրա վերամբարձ ոճը, գործադրած բոլոր ջանքերը, միայն թե շղթաներից ազատվի:
Բազրատունյաց գահին, ո՞վ գանձ
Չի վայելի, ո՞վ իմաստուն,
Շղթայի մեջ պահել կանա՞նց…

Կինն ի՞նչ ահ է արքա մարդուն
Որի ահից Բեշիրն անգամ,
Քաշվել է որջն իր արնաքամ: (193)

Հաճախ կերպարների խոսքը դառնում է ինքնաբնութագրման միջոց, որը ծիծաղելի է, հաճախ ցավալի: Հեղինակը ծաղրում ,միաժամանակ ցավակցում է նրանց: Այսպես՝ թոնդրակյան կանացից մեկի խոսքը դրսևորվում է ճարտասանական հարցումով, դիմումով, որը, դառնալով միջոց, բացահայտում է նրա անառակությունը:

Կույսն իր կամքինն է,
Ոչ թե վանքինն է…
Քանի ջահել եմ՝
Պիտի վայելեմ...
Ես ում ցանկանամ՝նրան կգնամ,
Ծաղկանց մեջ ինչո՞ւ լոկ վարդին մնամ…
Ինչո՞ւ շղթայվեմ ողջ կյանքում մեկին
Ինչի՞ս է պսակը եկեղեցական,
Ում սիրեմ՝կերթամ՝ թեկուզ ամենքին: (198)

Ծաղրում է թոնդրակուհիների ցոփ ու շվայտ կյանքը:Բացասական կերպարի՝ Կամարայի անբարոյականությունը բացահայտվում է նրա հետևյալ ճոռոմաբանությունից, որով լպիրշությամբ ձգտում է արդարացնել իրեն, ապացուցել իր անմեղությունը:

Իմ մեջ ի՞նչ պիղծ կա,
Լավ է մեկի հետ մինչև մահ տանջվե՞նք,
Թե՞ ում ուզենանք՝ մեր գիրկը կանչենք
Շղթան է պիղծը, ոչ թե մեր իղձը: (200)

Երկխոսություններով արտահայտված պատկերների մեջ հանդես են բերված հերոսներն իրենց տիպական գծերով:Նրանք անհատականացվում են իրենց ոճով: Ակնառու է դառնում հեղինակի մերժողական վերաբերմունքը նրանց նկատմամբ:

Նշենք նաև մի հանգամանք.հեղինակը կերպարները կերտելիս հաճախ չի դիմել այլաբանությունների, այլ առանց «եզոպոսյան լեզվի» նշել ու նկարագրել է այս կամ այն գործողությունը, երևույթը, հատկանիշը: Արքան սարկազմով ծաղրում է Սմբատ Զարեհավանցուն,նրան համարում ազգադավ և նրա թշնամությունը ժողովրդի նկատմամբ պատկերում է հետևյալ հատվածում.

Որ հայտնվեցիր այսքան ազգընդդեմ,
Ոչ Աստված ունես քո աղանդի մեջ, ոչ էլ Հայաստան,
Որ չես հավատում վաղն էլ Հիսուսի ոչ մի գալստյան: (151)

Աղավնունին այսպես է բնորոշել անբարոյական թոնդրակուհիներին.

Սիրատենչիկ ու բոջախոհ՝
Մահճաց մեջն էլ մարմնատենչիկ
Կույս չեն մնում՝
Չեն էլ ծնում ,-
Վայելում են, բայց ամլանում: (69)

Վեհի խոսքերից.

Ի՞նչ կուզեիք, ցնորալուր, մեկտեղ հերկել,մեկտեղ երգել, մեկտեղ քնել
Ո՞ւր կուզեիք ազգը տանել խառնակյացով ձեր ընդոծին: (74)

Երգիծելու նպատակով հեղինակը հաճախ է դիմում բացասական, ծաղրական իմաստ արտահայտող բառերի: Սրանք բնութագրում են թոնդրակեցիներին,բնորոշում նրանց մարդկային վարքագծի,գործունեության դատապարտելի կողմերը:

Օրինակ.նրանց անվանում է այսպես. **մարմնագարներ, ազգաեղծ, թուրք-հայեր, խաչագող,աղքատուսյալ, թոնդրագլխիկ ,մարմնագռեհ,, դրածո, բրածո, պղծախոհ ,չիղջ, մարմնապաշտիկ**. կանանց անվանում է հետևյալ բառերով. **պղծաբերան, պերճաղիճ, մարմնապղծյալ, մարմնասանձ, դիվակամար,մարմնադարբնոց** և այլն:

Բառերի մեծ մասը նորակազմ է և ունի ոճական արժեք:<<Եվ որքան մեծ է նորակազմ բառի շեղումը լեզվի ընդունված հնչյունական և բառակազմական օրինաչափություններից , այնքան մեծ է վերջինիս ոճական արդյունավետությունը>>:/2,198/ Այսպես. **որձուհիք, հավուղեղ, մերկուղեղ, բթուղեղ, գանգաքարայր, բորոտախրխինջ, չարամանկ** և այլն:Այս բառերը դառնում են հեղինակի տրամադրությունների արտահայտման միջոց:

Տարբեր հնարներ գործածելով՝ Հ.Շիրազը բացահայտում է թոնդրակեցիների էության,մտածողության այս կամ այն գիծը:Սատիրական միջոցներով ծաղրում ու ոչնչացնում է նրանց բացասական դերը սեփական ժողովրդի կյանքում,մերկացնում նրանց արատավոր գործունեությունը:

Այսպիսով՝ բազմազան են երգիծանքի դրսևորման ոճական հնարները,որոնցից օգտվել է Հ.Շիրազը՝ ստեղծելով իր անկրկնելի երկը՝ «Թոնդրակեցիները»:

Օգտագործված գրականություն

1.Ա.Մ.Մակարյան,Երգիծական ստեղծագործություն,Եր.,1957թ.:
2.Ս.Էլոյան,Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն,Եր.,1989թ.:
3.Էդ. Ջրբաշյան,Գրականության տեսություն,Եր.,1980թ.:
4.Հովի. Շիրազ, «Թոնդրակեցիները», Եր.,2015թ.:

ՀՏԴ 809.198.1

Հայոց լեզու
Հասմիկ Ղազարյան,
բ.գ.թ., դոցենտ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
E-mail: Hasmik.ghazaryan@mail.ru

ԳՈՅԱԿԱՆԻ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Սույն հոդվածի սահմաններում, զուգադրելով գոյականի թվի քերականական կարգը հնդեվրոպական լեզվաընտանիքի պատմական ճյուղավորում հանդիսացող ժամանակակից հայերենում, ռուսերենում և անգլերենում, փորձել ենք նշված քերականական կարգը ներկայացնել ըստ արտահայտության և բովանդակության դիտվածքներում ունեցած ընդհանրությունների և տարբերությունների: Երեք լեզուների ժամանակակից շրջանների զուգադրական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդ լեզուներում գոյականի թվակարգը կարող է արտահայտվել մասնիկավորմամբ /հայերենում, ռուսերենում, անգլերենում/, ներքին թեքմամբ /ռուսերենում, անգլերենում/, շեշտի տեղափոխությամբ և տարարմատությամբ /ռուսերենում/:

Բանալի բառեր՝ եզակի թիվ, հոգնակի թիվ, մենիմաստ մասնիկ, բազմիմաստ մասնիկ, զուգադրական մեթոդ, տիպաբանություն, գոյական, թիվ, քերականական կարգեր, քերականական ձև, մասնիկավորում:

Асмик Газарян,
к.ф.н., доцент,
кафедра армянского языка им. академика С. Абрамяна

СОПОСТАВИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ КАТЕГОРИИ ЧИСЛА СУЩЕСТВИТЕЛЬНОГО В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

В рамках данной статьи автор проводит сопоставительный анализ категории числа существительного в современном армянском, русском и английском языках, являющихся историческим ответвлением индоевропейской семьи, пытается представить сходство и различие указанных грамматических категорий в плане выразительности и смысла. Сопоставительный анализ современных трех языков показал, что грамматическая категория числа существительного может быть выражена аффиксацией /в русском, английском, армянском /, внутренней флексией /в русском, английском/, перемещением ударения и суплетивной формой /в русском/.

Ключевые слова – единственное число, множественное число, однозначный аффикс, многозначный аффикс, сопоставительный метод, типология, существительное, число, грамматические категории, грамматическая форма, аффиксация.

Hasmik Ghazaryan,
Ph.D., Associate Professor,
Chair of Armenian Language after Academician S. Abrahamyan

COMPARATIVE STUDY OF THE CATEGORY OF NUMBER OF THE NOUN IN MODERN ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH

The article compares the category of number in related Indo-European languages- Modern Armenian, Russian and English. This is an attempt to present similarities and differences of the grammatical category focusing on their expressiveness and meaning. Comparative study of the modern period of the three languages shows that the category of number of the noun may be expressed through particalization/in Armenian, Russian, English/, internal flection/Russian and English/, shift of stress and suppletivism/in Russian/.

Keywords- singular, monosemantic, research, article, report, digest, soil study, knitting, craftsmanship, population, way of living, ritual.

Լեզուների զուգադրական-տիպաբանական ուսումնասիրությունը լեզվաբանական ուսումնասիրության կարևոր ուղղություններից է: Այն բավականին հետաքրքիր է թե՛ ձևաիմաստային և թե՛ գործառական տեսանկյուններից, քանի որ հնարավորություն է տալիս առավել խորությամբ ուսումնասիրելու տարբեր լեզուների ընդհանրություններն ու տարբերությունները և կատարելու ընդհանուր եզրահանգումներ զուգադրված լեզուների կառուցվածքների վերաբերյալ:

Սույն հոդվածի սահմաններում, իբրև զուգադրման հիմունք ընտրել ենք թվի քերականական կարգը: Զուգադրելով թվակարգի հակադրության երկու եզրերի արտահայտության միջոցները ժամանակակից հայերենում, ռուսերենում և անգլերենում՝ փորձել ենք նշված քերականական կարգը ներկայացնել ըստ արտահայտության և բովանդակության դիտվածքներում ունեցած տարբերությունների և ընդհանրությունների, ըստ տիպաբանական առանձնահատկությունների:

<<Չկա մի լեզու, որը քերականական որևէ միջոց չունենա թվի քերականական կարգն արտահայտելու համար: Դա բացատրվում է նրանով, որ առարկաների քանակային հարաբերության հայեցակետը անհրաժեշտ տարր է իրականության ընկալման և դատողության ձևավորման մեջ: Հասկացական ամեն մի կարգ քերականական արտահայտության կարիք չունի.: Սակայն թվի իմացական կարգը քերականական արտահայտություն ունի թեկուզ և օժանդակ բառերի գործածությամբ: Ահա թե ինչու թվակարգը լեզուներում համեմատաբար մեծ տարածում գտած կարգերից է>>:[1] Ընդհանրապես, քերականական թվի առաջացումը կապված է հաշվելու կարողության զարգացման հետ: Այն ենթադրում է միատեսակ առարկաների տարբերակում՝ ըստ քանակական հատկանիշի, որն էլ տարբեր լեզուներում արտահայտվում է հակադրության տարբեր եզրերով: Այսպես՝ ժամանակակից լեզուների մեծ մասում թվի քերականական կարգը արտահայտվում է երկեզր հակադրությամբ՝ եզակի-հոգնակի: Բայց և կան լեզուներ /հին հունարենը, հին հնդկերենը, արաբերենը/, որոնցում թվակարգն արտահայտվում է եռեզր հակադրությամբ՝ եզակի-երկակի-հոգնակի: Կան լեզուներ էլ, որոնք ներկայանում են եզակի-երկակի-եռակի-քառակի-հոգնակի հակադրությամբ: Այդպես են, օրինակ, միկրոնեզյան լեզուները:[2]

Թվի քերականական կարգը, իր արտահայտած իմաստով ընդհանուր լինելով գրեթե բոլոր լեզուներում, տարբեր է իր դրսևորումներով: Օրինակ՝ որոշ լեզուներում քերականական թիվն արտահայտվում է քանակ ցույց տվող բառերով՝առանց գոյական անվան փոփոխության / օր.՝ դասական տիբեթերենում/, որոշ լեզուներում արտահայտվում է ներքին թեքմամբ /օր.՝արաբերենում/, ուրիշ լեզուներում՝ օժանդակ բառերով /օր.՝չինարենում/, բառի կամ նրա մի մասի կրկնությամբ /օր.՝ճապոներենում/ և կամ քանակային հարաբերություն ցույց տվող վերջավորություններով /օր.՝հայերենում/: Բոլոր այդ միջոցներն էլ ծառայում են մի նպատակի՝ արտահայտել առարկաների քանակային հատկանիշ:[3]

Զուգադրվող երեք լեզուներն էլ, ունենալով հնդեվրոպական ծագում և պահպանելով նախալեզվին բնորոշ որոշ տարրեր, իրենց պատմական զարգացման ընթացքում ենթարկվել են համակարգային փոփոխությունների, որոնք էլ ազդել են նաև կառուցատիպի փոփոխության վրա: <<Հնդեվրոպական լեզուն ունեցել է որոշակի թեքական-համադրական կառուցվածք. մեկ վերջավորությունն ի վիճակի է եղել արտահայտելու մեկից ավելի քերակարգային իմաստներ, եզակին, երկակին և հոգնակին միևնույն իմաստների արտահայտության համար ունեցել են տարբեր վերջավորություններ, հաճախակի տեղի է ունեցել հիմքի և վերջավորության սահմանային տարրերի ձուլում /ֆուզիա /: Սակայն քերականական զանազան մասնիկների գործածությունը առաջացրել է կցականության և վերլուծականության տարրեր, որոնք հետագայում զգալի զարգացում են ապրել առանձին հնդեվրոպական լեզուներում>>:[4]

Եզակի, երկակի և հոգնակի հակադրության երեք եզրերի իմաստները նախալեզվում արտահայտվել են 8 հոլովական ձևերով, որոնք ունեցել են տարբեր վերջավորություններ անբուն և բնավոր հիմքերի համար:

Անբուն հիմքեր

	Եզակի	Երկակի	Հոգնակի
ՈՒղղ.	*-s,-	*-e, *-l/I	*-es
Կոչ.	-	*-e, *-l/I	*-es
Հայց.	*-m/m̥	*-e, *-l/I	*-n̥s
Սեռ.	*-es/os/s	*-ous?, *-o¯s?	*-om/o¯m
Բաց.	*-es/os/s, *-ed/od	*bhio¯, *-mo¯	*-bh/i/os, *-mos
Տր.	*-ei	*bhio¯, *-mo¯	*-bh/i/os, *-mos
Գործ.	*-e/o, *-bhi/mi	*bhio¯, *-mo¯	*-bhis/mis, *-o¯is
Ներգ.	*-I	*-ou	*-su

Բնավոր հիմքեր

	Եզակի	Երկակի	Հոգնակի
ՈՒղղ.	*-os, /արական/ *-om/չ./	*-e, *-l/I	*-es
Կոչ.	- e /արական/,*-om /չ./	*-o, *-oi	*-os/արական/,*-a/չ./
Հայց.	*-om	*-o, *-oi	*-o¯ns/արական/, *-a/չ./
Սեռ.	*-es/os/s	*-ous?, *-o¯s?	*-om/o¯m
Բաց.	*-o¯d	*-bhio¯/m/, *-mo	*-bh/i/os, *-mos
Տր.	*-o¯i	*bhio¯/m/, *-mo¯	*-bh/i/os, *-mos
Գործ.	* -e/o¯,	*bio¯m/, *-mo¯	*-o¯is
Ներգ.	*-ei/oi	*-ou	*-oisu

[1]Հ. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Եր., 1972, էջ 3:
[2]Տե՛ս Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987 ,էջ 490:
[3]Տե՛ս Էդ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 489:
[4]Գ.Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Ե., 1987, էջ 40:

Զուգադրվող լեզուները չեն պահպանել նախալեզվի՝ թվակարգին բնորոշ եզակի-երկակի-հոգնակի հակադրության եզրերը, նրանք բնորոշվում են եզակի-հոգնակի հակադրությամբ: Եզակի թիվը ցույց է տալիս մեկի և մեկից ավելի քանակության հարաբերության մեջ առաջին եզրը, այսինքն՝ այն, որ խոսքի առարկան մեկն է: Հոգնակին ցույց է տալիս նույն հարաբերության երկրորդ եզրը, այսինքն՝ այն, որ խոսքի առարկան մեկից ավելին է:

Ժամանակակից հայերենում եզակի թիվը որևէ կաղապարում չունի, հոգնակիին հակադրվում է հոգնակերտ մասնիկների բացակայությամբ, հետևապես թվակազմությունը էապես հոգնակիակազմություն է:[1] Հոգնակին կազմվում է **եր, ներ** համակարգային և **իկ, այք** ոչ համակարգային մասնիկներով, որոնք կցվում են անհնչյունափոխ՝ մաքուր /քաղաք-քաղաքներ/ և հնչյունափոխված՝ ձևավոր /ջուր-ջրեր/ հիմքերին(ի/(ը), ու/(ը), -/յ, -ն, ի/ա, ի/-): <<Հնչյունափոխությունները այս դեպքում ինքնուրույն իմաստային ծանրաբեռնվածություն չունեն, այլ ավելցուկային միջոցներ են՝ պայմանավորված հնչյունական և պատմական որոշ պայմաններով: Վերջիններս ոչ այլ ինչ են, եթե ոչ թվանիշ հիմքերի կազմիչներ կամ հիմքակազմ տարրեր>>:[2]

Զրո վերջավորության և հիմնական վերջավորությունների հակադրությունը նպատակ ունի առաջին հերթին արտահայտելու բովանդակության դիտվածքի միաթվության/եզակիության/ և անմիաթվության/հոգնակիության/ հակադրությունը:

ԻԿ մասնիկով ժամանակակից արևելահայերենում հոգնակի է կազմում միայն **մարդ** բառը և այն բաղադրյալ բառերը, որոնք վերջանում են մարդ բառով: Օր.՝ **մարդ-մարդիկ, տղամարդ-տղամարդիկ:** Ժամանակակից արևմտահայերենում **մարդ** բառի համար կանոնական է համարվում **մարդեր** ձևը, սակայն զուգահեռաբար գործածական է նաև **մարդիկ** տարբերակը:

ԱՅՔ մասնիկով ժամանակակից արևելահայերենում կազմվում է **կին** բառի հոգնակին՝ **կանայք**: Ժամանակակից արևմտահայերենում սրան զուգահեռ գործում է կանոնական **կիներ** ձևը: Երկու գրական լեզուներում գործում են **տիկիններ-տիկնայք, պարոններ-պարոնայք** զուգահեռ տարբերակները:

ԵՐ և **ՆԵՐ** մասնիկների բաշխումը պայմանավորված է վանկաքանակությամբ: Միավանկ բառերը ստանում են **ԵՐ**, բազմավանկ բառերը՝ **ՆԵՐ** մասնիկները: Օր.՝ **ծով-ծովեր**: Ընդհանուր օրինաչափությունից շեղվում են՝

1.գրաբարյան **ն** վերջնահնչյուն ունեցող մի շարք միավանկ բառեր՝ **մկներ, ձկներ, դոներ, բեռներ, լեռներ, եզներ, մկներ, գառներ** և այլն: Ի տարբերություն արևելահայերենի՝ <<արևմտահայերենում լեզվական նորմը այս հարցում վերջնական ձևավորում չի ստացել: Մի քանի բառերում **/լեռ, բեռ**…/ պահպանվում է գրաբարյան օրինաչափությունը **/լեռներ, բեռներ**…/, մի քանի բառերում գործում է աշխարհաբարյան օրինաչափությունը, և **ն**-ն չի վերականգնվում/հարսեր, նուռեր, ձուկեր, մուկեր, ծունկեր, մատեր/, մնացած բառերում հոգնակին անկայուն է, հանդես են գալիս զուգաձևություններ /**դուռեր-դռեր-դռներ**…/: [3]

2.**ռուս** բառը, որի հոգնակին արևելահայերենում կազմվում է **ներ**-ով՝ կապված բառի բարբառային երկվանկ արտասանության հետ՝ **ռուսներ**: Արևմտահայերենում այս բառն ունի կանոնական հոգնակի՝ **ռուսեր**:

3. այն բաղադրյալ բառերը, որոնցում միավանկ վերջնաբաղադրիչը ունի գոյականական իմաստ և պահպանում է իր անկախ գործածության իմաստը՝ **ձեռագրեր, առանձնատներ, միջակետեր, նստացույցեր** և այլն: Այս կանոնը գործում է նաև արևմտահայերենում՝ **գարեջուր-գարեջուրեր-գարեջրեր, ստացագիր-ստացագիրեր-ստացագրեր, բառգիրք-բառգիրքեր-բառգրքեր:**

4.մեկուկես վանկանի այն բառերը, որոնցում գաղտնավանկով է վերջին վանկը՝ **կայսր-կայսրեր, դուստր-դուստրեր, սանր-սանրեր** և այլն:

Հոգնակի թվի կազմությունը ներկայացնող լեզվական նորմը ժամանակակից գրական հայերենում կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով [4]՝

Վերջավորություններ	**Վերջավորությունների ընտրության պայմանները**
-եր	1. միավանկ հիմքերի դեպքում (հանած իկ-ի և այք-ի տակ նշված հիմքերը) 2. այն բարդությունների դեպքում, որոնց վերջին բաղադրիչը միավանկ է, և նրա իմաստը հակադրվում է ամբողջ բարդության իմաստին, ինչպես սեռը՝ տեսակին
-ներ	բազմավանկ հիմքերի դեպքում /հանած նախորդի երկրորդ պայմանով որոշվող հիմքերը/
-իկ	*մարդ* հիմքի և նրանով վերջացող բարդ հիմքերի դեպքում
-այք	*կին* հիմքի և նրանով վերջացող բարդ հիմքերի դեպքում

Ի տարբերություն ժամանակակից հայերենի, որտեղ հոլովակազմ և հոգնակիակազմ հիմքերը տարբեր են և գոյականի թվակարգն արտահայտվում է մենիմաստ թեքույթների միջոցով, ժամանակակից ռուսերենը, պահպանելով նախալեզվի թեքական կառուցատիպը, թվի, սեռի և հոլովի քերականական կարգերն արտահայտում

[1]Տե՛ս Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 229:
[2]Գ. Ջահուկյան, Լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 142:
[3]Ռ. Սաքապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Եր., 2006, էջ 121:
[4]Գ. Ջահուկյան, Լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 146:

է համադրական թեքույթներով՝ միևնույն հիմքից: Եզակի և հոգնակի հակադրության երկու եզրերի իմաստներն արտահայտվում են վեց հոլովական ձևերով, որոնք իրենց մեջ համատեղում են նաև սեռի, թվի քերականական իմաստները: Համադրական թեքույթները, որոնք տարբերակվում են ըստ հոլովման տիպերի,ինչպես եզակի և հոգնակի ուղղականում, այնպես էլ բոլոր թեք հոլովներում արտահայտվում են տարբեր թեքույթներով: Ներկայացնենք դրանք ըստ առանձին տիպերի:

1-ին տիպի հոլովման պատկանում են **а, я** վերջավորություն ունեցող իգական և արական սեռի գոյականները:

Օր.՝

И. п.	книга	книг*и*	папа	па’пы
Р. п.	кни’г*и*	книг	па’п*ы*	пап
Д. П.	кни’г*е*	книг*ам*	па’п*е*	па’п*ам*
В. П.	кни’г*у*	книг*и*	па’п*у*	пап
Т. П.	кни’г*ой*	книг*ами*	па’п*ой*	па’п*ами*
П. П.	/о/ кни’г*е*/	о/ книг*ах*	*/о/* па’п*е*	*/о/*па’п*ах*

2-րդ տիպի հոլովման են պատկանում վերջավորություն չունեցող արական սեռի գոյականները և **о, е** վերջավորություն ունեցող չեզոք սեռի գոյականները՝

И. п.	дом	дом*а*’	край	кра*я*’	мо’ре	мор*я*’	село	се’л*а*
Р. п.	до’м*а*	дом*о’в*	кра*я*	кра*ев*	мо’р*я*	море*’й*	сел*а*’	сел*ов*
Д. П.	дом*у*	дом*а’м*	кра*ю*	кра*я’м*	мо’р*ю*	мор*я’м*	селу’	селам
В. П.	дом	дома’	край	*края*	мо’ре	моря’	село’	се’л*а*
Т. П.	до’м*ом*	дом*а’ми*	кра*ем*	кра*я’ми*	мо’р*ем*	моря’ми	сел*о’м*	се’л*ами*
П. П.	/о/дом*е*	/о/дом*ах*	/о/кра*е*	/о/кра*я’х*	/о/мо’ре	/о/моря’х	/о/ селе’	/о/ се’л*ах*

3-րդ տիպի հոլովման են պատկանում վերջավորություն չունեցող իգական սեռի գոյականները՝

И. п.	ночь	но’чи
Р. п.	но’чи	ночей
Д. п.	ночи	ноча’м
В. п.	ночь	но’чи
Т. п.	но’чью	ноча’ми
П. п.	/о/ но’ч*и*	о/ ноч*а’х*

Ժամանակակից ռուսերենում համադրական թեքույթներով եզակի-հոգնակի հակադրությունը, այսպիսով, դրսևորվում է կա՛մ բառի վերջին դրանց կցումով /океан-океаны, плащ-плащи/, կա՛մ հնչյունական հերթագայությամբ՝ **а/и** книга-книги, **а/ы** страна-страны, **о/а** - село-села, **о/я** - дерево-деревя , **е/я** - море-моря, **е/а** - блюдце-блюдца:

Եզակի-հոգնակի հակադրությունը կարող է արտահայտվել նաև շեշտի տեղափոխությամբ, որի դեպքում եզակի սեռականի և հոգնակի ուղղականի հոլովաձևերը իրարից տարբերվում են միայն շեշտով, օր.՝ **страны’-стра’ны, семьи’-се’мьи, ружья’-ру’жья:** Կան բառեր էլ, որոնց եզակի սեռականն ու հոգնակի ուղղականը իրարից չեն տարբերվում ո՛չ հնչյունակազմով, ո՛չ շեշտով: Նման բառերի թվային իմաստների տարբերակումը կատարվում է համատեքստում: Օր.՝ **до’чери-до’чери, но’чи-но’чи** և այլն: Ժամանակակից ռուսերենում կան մի շարք գոյականներ, որոնց մեջ եզակի-հոգնակի հակադրությունը արտահայտվում է միաժամանակ ածանցներով և վերջավորություններով, երբեմն ածանցների հերթագայությամբ՝ **чудо-чудеса, татарин-татары:**

Իրրև թվակարգի արտահայտման լրացուցիչ միջոց ժամանակակից ռուսերենում համարվում է նաև բաղաձայնների հերթագայությունը և տարարմատությունը՝ **друг-друзья, ухо-уши, око-очи, ребенок-дети, человек-люди, лесенок-лисята, гражданин-граждане, армянин-армяне:** [1]

Ժամանակակից անգլերենում գոյականների մեծ մասի հոգնակին կազմվում է մասնիկավորմամբ, հոգնակիակազմ հիմքին ավելանում են մենիմաստ-**s/ boy-boys, grief-griefs** և այլն/ կամ**–es** վերջավորությունները: Վերջինի դեպքում բառն ավարտվում է **s, o, z, x, ss, ch, tch, sh** տառերով կամ տառակապակցություններով / **bus-buses, tomato-tomatoes, quiz-quizzes, box-boxes, dress-dresses, bench-benches, brush-brushes** և այլն/:

Ինչպես ժամանակակից հայերենում, այնպես էլ անգլերենում հոգնակիակազմ հիմքերը կարող են լինել անհնչյունափոխ /**desk-desks/** կամ հնչյունափոխված: Եթե գոյականի հիմքը վերջանում է **y** տառով, որին նախորդում է բաղաձայն, ապա **–es** մասնիկից առաջ հիմքը ենթարկվում է **y/i** հնչյունափոխության, օր.՝ **baby-babies, country-countries, fly-flies, family-families:** Հոգնակիակազմ հիմքը հնչյունափոխության է ենթարկվում նաև **f-**ով կամ **fe**-ով վերջացող մի շարք բառերի դեպքում: Կատարվում է **f/v, fe/v** հերթագայություն: Այդ բառերն են՝ **calf-calves, half-halves, knife-knives, leaf-leaves, loaf-loaves, life-lives, self-selves, sheaf-sheaves, shelf-shelves, thief-thieves, wife-wives, wolf-wolves, elf-elves: Hoof, scarf, wharf, handkerchief, dwarf** գոյականների հոգնակին արտահայտվում է զուգաձևությամբ՝**scarf-scarfs-scarves, hoof-hoofs-hooves, wharf-wharfs-wharves, handkerchief-handkerchiefs-**

[1]Տե՛սՎалгина Н. С. И др., Современный русский язык, М., 1987, էջ 164-168:

handkerchieves: F –ով կամ **fe**-ով վերջացող մյուս բառերի հոգնակին կազմվում է անհնչյունափոխ հիմքին ավելացնելով **s** մասնիկը, օր.՝ **roof-roofs, grief-griefs, safe-safes, proof-proofs, belief-beliefs, gulf-gulfs, cuff-cuffs:**

Եթե բառը վերջանում է **o**-ով, որին նախորդում է բաղաձայն, հոգնակիում ստանում է –**es** մասնկը՝ **cargo-cargoes, potato-potatoes, Bravo-Bravoes, Innuendo- Innuendoes** և այլն: Այս ընդհանուր օրինաչափությունից շեղվում են մի շարք տեխնիկական տերմիններ **/Cantos, Cooncertos, Folios** /, օտար լեզուներից փոխառած բառեր **/Commandos, Gringos, kimonos** /, իսկ եթե գոյականը վերջանում է **o** տառով, որին նախորդում է ձայնավոր, կամ եթե **o** տառով վերջացող գոյականը փոխառություն է այլ լեզվից, միայն ստանում է-**s՝ radios, pianos, photos:**

Մի խումբ գոյականների հոգնակին կազմվում է հնչյունական հերթագայությամբ՝ ներքին թեքմամբ՝ **man-men, tooth-teeth, foot-feet, goose-geese, mouse-mice, louse-lice** և այլն:

Անգլերենում կան բառեր, որոնց եզակի և հոգնակի իմաստային հակադրությունը ձևով չի արտահայտվում, և իմաստային տարբերակումը կատարվում է համատեքստում: Այդպիսի գոյականներից են՝ **a sheep-sheep, a deer-deer, a fish-fish, a swine-swine, a means- means, a series- series** և այլն:

Անգլերենում կան մի շարք գոյականներ, որոնց հոգնակին, հակադրվելով եզակիին թե՛ ձևով և թե՛ իր քերականական իմաստով, ստանում է նաև մի նոր բառային իմաստ: Օր.՝ **colour-colours /** գույն-գույներ/ և **colours /դրոշակ**/, **part-parts** /մաս-մասեր/ և **parts** /տեղանք, վայր/, **room-rooms /**սենյակ-սենյակներ/ և **rooms** /բնակարան/ և այլն:

Ժամանակակից անգլերենի հոգնակերտ մասնիկները մենիմաստ են: **-S,-OS, -ES** մասնիկները ունեն հնդեվրոպական ծագում: - **S**-ը, սակայն նախալեզվում եզակիության ցուցիչ էր, այն և՛ հոլովակերտ էր, և՛ թվակերտ: **-OS, -ES** համադրական մասնիկները նախալեզվում հանդես էին գալիս ուղղականում և սեռականում, իսկ ժամանակից անգլերենում դրանք մենիմաստ մասնիկներ են և արտահայտում են միայն հոգնակիության իմաստ, կցվում ինչպես անհնչյունափոխ, այնպես էլ հնչյունափոխված հիմքերին:

Անգլերենում կան նաև լատիներենից և հունարենից փոխառյալ բառեր, որոնք պահպանել են այդ լեզուներում ունեցած ձևերը: Եզակի և հոգնակի եզրերը հակադրվում են հետևյալ մասնիկներով՝ **-us - -i /radius** -շառավիղ –**radii**-շառավիղներ/, **-us- -era** կամ -**ora /genus**-տեսակ-**genera**-տեսակներ/, **-a --ae /amoeba-ameobae, -um - -a /medium—media/, -is- -es /analysis-analyses/, -on- -a /phenomenon-phenomena/, -ex, ix—ices /appendix-appendices/ և այլն:**[1]

Այսպիսով՝ երեք լեզուների ժամանակակից շրջանների զուգադրական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գոյականի թվակարգը կարող է արտահայտվել մենիմաստ մասնիկներով /հայերենում, անգլերենում/, բազմիմաստ մասնիկներով /ռուսերենում/, բառավերջում հնչյունական հերթագայությամբ և ներքին թեքմամբ /ռուսերենում, անգլերենում/, շեշտի տեղափոխությամբ և տարարմատությամբ /ռուսերենում/: Հակադրության երկու եզրերի տարբերակման համար որոշ բառերի դեպքում կարևորվում է համատեքստը /ռուսերենում, անգլերենում/, քանի որ իմաստային հակադրությունը չի արտահայտվում ձևային հակադրությամբ:

Օգտագործված գրականություն

1.Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987:
2.Վ.Գրիգորյան, Ժամանակակից անգլերենի գործնական քերականություն, Ստ., 2007:
3.Հ.Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Եր., 1972:
4.Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987:
5.Գ. Ջահուկյան, Լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969:
6.Ռ. Սաքապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Եր., 2006:
7.Валгина Н. С. И др., Современный русский язык, М., 1987:

[1]Տե՛ս Վ. Գրիգորյան, Ժամանակակից անգլերենի գործնական քերականություն, Ստ., 2007, էջ 16-22:

ՀՏԴ 371.31: 809.198.1 Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա

Ծովինար Հասրաթյան,
Ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի ավագ դասախոս
E mail tsovinar-asratyan@mail.ru

ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ («ՄԱՅՐԵՆԻ 6»)

Սույն հոդվածում քննվում են պատկերավորման մի շարք միջոցներ, որոնք մեծապես նպաստում են աշակերտի բառապաշարի հարստացմանը, պատկերավոր խոսքի զարգացմանը, պատկերավոր մտածողությանը: Քննարկման նյութ ենք դարձրել պատկերավորման միջոցներից մակդիրի, փոխաբերության, համեմատության ուսուցումը և դրանց գործածության կարևորությունը խոսքում: Վերջիններս ավելի տպավորիչ են դարձնում խոսքը:Բնագրային օրինակները և թեմատիկ բառախումբը ընտրված են 6-րդ դասարանի մայրենիի դասագրքից, քանի որ միջին դպրոցի աշակերտները պատկերավորման միջոցներն ուսումնասիրում են հենց այդ դասարանից սկսած:

Բանալի բառեր – պատկերավոր խոսք, գրականություն, ուսուցում, մեթոդիկա, մեթոդ, դասագիրք, պատկերավորման միջոցներ, բառերի բացատրություն, միջառարկայական կապ, քերականական գիտելիքներ, բառապաշարի հարստացում, մակդիր, փոխաբերություն, համեմատություն, ծրագրային նյութ, «Մայրենի 6»:

Цовинар Асратян,
Кафедра армянского языка имени Ак. С.Абраамяна, старший преподаватель
E –mail: tsovinar-asratyan@mail.ru

ИЗОБРАЗИТЕЛЬНЫЕ СРЕДСТВА КАК СРЕДСТВО ОБОГАЩЕНИЯ ЛЕКСИКИ (СЛОВАРНОГО ЗАПАСА)

В данной статье рассматриваются изобразительные средства речи, которые значительно способствуют обогащению словарного запаса ученика, развитию образной речи, образного мышления. Из изобразительных средств предметом обсуждения стали обучение эпитета, метафоры, сравнения и важность их использования в речи. Последнее делает речь более впечатляющим. Примеры и группа слов выбраны из учебника 6-го класса по родному языку, так как в средней школе изучение изобразительных средств начинается с данного класса.

Ключевые слова – образная речь, литература, обучение, методика, метод, учебник, изобразительные средства языка, объяснение слов, межпредметная связь, грамматические знания, обогащение лексикона, эпитет, метафора, сравнения, программный материал, родной язык 6-ого класса.

Tsovinar Asratyan
Department of Armenian language name of ak. S. Abrahamyan, senior lecturer
E –mail: tsovinar-asratyan@mail.ru

EXPRESSIVE MEANS AS MEANS ENRICHMENT OF LEXICON

The article deals with expressive (figurative) means which considerably promote the enrichment of a lexicon of the pupil, the development of figurative speech, figurative thinking are considered. From figurative means of expression epithet, metaphor, comparison and the importance of their use in the speech have become the subject of discussion. The latter makes the speech more impressive. Examples and group of words are chosen from the textbook of the 6th class on the native language as pupils of secondary school study expressive (figurative) means in this grade.

Keywords - figurative speech, literature, training, methodology, method, textbook, expressive (figurative) language means, words of explanation, intersubject communication, grammatical knowledge, enrichment of a lexicon, epithet, metaphor, comparison, software material, the mother tongue of 6th class.

Աշակերտի խոսքի զարգացման հարցը մշտապես եղել և մնում է լեզվի մասնագետների ուշադրության կենտրոնում, քանի որ աշակերտի խոսքի զարգացման ելակետը և հիմքը հայոց լեզվի դասընթացն է: Լեզվական գիտելիքներն ուսուցանելուն զուգընթաց՝ ուսուցիչը հավասարաչափ աշխատանք է տանում նաև խոսքի զարգացման, բառապաշարի հարստացման ուղղությամբ, քանզի միայն լեզվական գիտելիքների իմացությունը դեռ բավական չէ, որ մարդը դիտվի որպես կիրթ, զարգացած ու գրագետ: Հայոց լեզվի դպրոցական դասընթացը, լեզվական գիտելիքների յուրացումը և խոսքի կուլտուրան միահյուսվելով՝ ստեղծում են գեղեցիկ, պատկերավոր, կատարյալ խոսք:

Աշակերտի խոսքի զարգացման,բառապաշարի հարստացման գործում մեծ նշանակություն ունեն նաև պատկերավորման միջոցները: Սույն հոդվածով էլ կփորձենք վեր հանել այն միջոցները, որոնք այս կամ այն չափով նպաստում են աշակերտների բառապաշարի հարստացմանը: Վերջիններս հիմնականում որպես տեսական նյութ աշակերտներին մատուցվում է 6-րդ դասարանում,իսկ դեռևս կրտսեր դպրոցում տրվում են դրանց մասին նախագիտելիքներ, չնայած պետական ծրագրով[1] առանձին ժամ չի հատկացվում մակդիր, փոխաբերություն,

[1] Ուսուցչի ձեռնարկ, Մայրենի 5-6-րդ դասարաններ, Եր., 2011թ.:

համեմատություն թեմաներին: Սկզբում տեսականորեն տրվում է նյութը, այնուհետև հաջորդում են առաջադրանքները: Դասագրքի մի քանի վարժություններով և տեսական նյութով բավարարվելը ճիշտ չի լինի, քանի որ արդեն նշել ենք, որ վերջինիս ուսուցումն ավելի շատ գործնական բնույթ է կրում: Գրականությունից ընտրված վառ ու ցայտուն օրինակներով ուսուցիչը պետք է հիմնավորի տեսական նյութը: Որպես այդպիսին՝ կարող են նպատակին ծառայել անցած և անցնելիք դասերը: Անկախ նրանից, թե ինչ թեմա են անցնում, կամ ինչքանով է դա առնչվում, ասենք, մակդիրին կամ համեմատությանը, պատկերավորման նման միջոցների հանդիպելիս միշտ պետք է կանգ առնել դրանց վրա, տալ ճիշտ ու համոզիչ բացատրություն և պահանջել հաճախ գործածել նման արտահայտություններ: Պարտադիր է նաև աշակերտին հիշեցնել խոսքում պատկերավորման միջոցների կարևորության մասին: Որպեսզի փոքր- ինչ պատկերացում կազմվի այն մասին, թե ինչ նշանակություն ունի մակդիրների, փոխաբերությունների, համեմատությունների կիրառությունը խոսքի մեջ, նախ՝ պետք է մանրակրկիտ բացատրվի դրանց գործածության նպատակը,ապա՝ վերլուծվի որևէ հատված և բացատրվի դրանց կարևորությունը խոսքում: Մենք բնավ այն մտքին չենք,որ 6-րդ դասարանում հանգամանորեն ուսուցանվեն պատկերավորման միջոցները: Բայց այն կարծիքին ենք,որ դրանց իմացությունը նպաստում է պատկերավոր խոսք կազմելուն, ուրեմն՝ ուսուցիչը չպետք է անտեսի այդ կարևոր հանգամանքը: Բնականաբար, ուսուցումը պետք է կազմակերպել՝ հաշվի առնելով 6-րդ դասարանցիների կարողություններն ու ունակությունները: Նշենք, որ գեղարվեստական խոսքում առարկան կամ գործողությունը պատկերավոր ներկայացնելու նպատակով գրողները հաճախ են գործածում հատկանիշ արտահայտող բառեր կամ կապակցություններ, որոնք կոչվում են մակդիրներ: Մակդիրի միջոցով տրվում է առարկայի, երևույթի, երբեմն նաև գործողության ոչ թե հիմնական ու բնորոշ հատկանիշը, այլ նրա գեղարվեստական, պատկերավոր, գեղագիտական բնութագրությունը: Մակդիրների առաջին և հիմնական հատկանիշն այն է, որ նրանք ունեն փոխաբերական իմաստ: Առարկան բնութագրում են ոչ թե սովորական, տարբերակիչ հատկանիշներով, այլ՝ գեղարվեստական, արտահայտչական տեսանկյունից:[1] Մակդիրը միաժամանակ արտահայտում է նաև խոսողի վերաբերմունքն ու գնահատականը: Մակդիրն ամենից առաջ նպաստում է խոսքի պատկերավորությանը, ուստի և այն առավել գործածական է գեղարվեստական ոճում:

Բերենք Ավ.Իսահակյանի «Արագածին» բանաստեղծությունից մի քառատող.

Դու, Արագած, *ալմաստ* վահան,
Կայծակեղեն թրերի,
Գագաթներդ բյուրեղ վրան
Թափառական ամպերի:(1,125)

Կամ՝ Հ.Սահյանի «Ուր որ նայում եմ» բանաստեղծությունից.

Ուր որ նայում եմ, քարե բարձունք է,
Քարե արցունք է, *քարե ժպիտ*,
Քարե սարսուռ է, ու *քարե սունկ* է,
Քարե ծաղկունքի քնքշանք է *բիրտ:(1,189)*

Եթե ուշադրություն դարձնենք ընդգծված մակդրային կապակցություններին, ապա ակնհայտ կդառնա նրանց ոճական, արտահայտչական երանգավորումը:

Արձակ ստեղծագործություններում մակդիրները հաճախ արտահայտում են հեղինակի կամ որևէ կերպարի հոգեվիճակն ու տրամադրությունը:

Սիրում եմ և՛ գարնան *ուրախ* անձրևը, և՛ աշնան *մելամաղձոտ* անձրևը:(1,25)

Աշնան մեղմ արևի մեջ գեղեցիկ էին ծիծեռնակների լուռ բները:(1,55)

6-րդ դասարանի մայրենիի դասագրքից բերենք մակդրային կապակցություններ. մռայլ կեսօր, հինավուրց հուշեր, խելացի լռություն, խորամանկ ժպիտ, խենթ սարսուռ, շառաչուն խավար, հեքիաթական վերջալույս, վառվռուն սարեր, քնքուշ մարմին, ղողանջուն անտառ, անծիր տխրություն, թանձր լռություն, ծանր լսողություն, լուռ բներ, կապույտ տեսիլք, կապույտ աստղեր, զրնգուն տեսիլք:

Փորձենք ներկայացնել, թե նշված օրինակներով ինչպես կարելի է հարստացնել աշակերտի բառապաշարը:

ա. Ընտրել նշված մակդրային կապակցություններից մի քանիսը և կազմել կապակցված խոսք:
բ. Հորինել փոքրիկ պատմություն և նշվածներից մեկը ընտրել վերնագիր:
գ. Կապակցությունները գործածել նախադասությունների մեջ:
դ. Մակդրակիր կապակցությունները դարձնել սովորական բառակապակցություններ:
ե. Ընտրել մի քանի կապակցություններ և բառարանի օգնությամբ մակդիրը փոխարինել հոմանիշով:
զ. Մակդրային կապակցության գերադաս անդամը փոխարինել մեկ ուրիշ բառով:

Համեմատությունը խոսքն ավելի դիպուկ և խոսուն է դարձնում: Այն լեզվի պատկերավորման միջոց է, որի դեպքում որևէ առարկայի կամ երևույթի նկարագրությունն ավելի պարզ ու տպավորիչ, պատկերավոր դարձնելու նպատակով համադրվում է այդ առարկայի կամ երևույթի հետ:[2] Այսպես՝ Հ. Շիրազի «Հորս հիշատակին» բանաստեղծությունից մի երկտող.

Կգար հայրս Շիրակի հովերի հետ իրիկվա,
Կշողշողար բահն ուսին, *սարից ելնող լուսնի պես:(1,22)*

Կամ՝ Ս.Կապուտիկյան, «Մասիսին մոտիկ».

[1] Լ.Եզեկյան, Ոճագիտության ուղեցույց, էջ 329, Եր., 2007թ.:
[2] Լ.Եզեկյան, Ոճագիտության ուղեցույց, էջ 334, Եր., 2007թ.:

Գույներդ այնքան ջինջ են, նրբերանգ,
Ասես չես նյութված քար ու ավազից:(1,110)

Մ.Մարգարյան, «Հայրենի մեր հող».

Դու մի բուռ, մի ափ,
Դու մի սրտի չափ
Դու սրտի պես լայն,
Դու սրտի պես խոր,
Հայրենի՛ իմ հող:(1,92)

Համեմատությունը, բացի երկու առարկաների միջև եղած ընդհանրությունները մատնանշելուց, միաժամանակ արտահայտում է հեղինակի վերաբերմունքը համեմատվող առարկայի կամ անձնավորության նկատմամբ:

Այսպես՝

Հետո հիշում եմ մի ցանկապատ, որի փշերը *մագիլների նման* բռնել են շորերս:
Մեր հարևանի բարդին բոցավառվում է երկինք հասնող *կրակե սյունի պես:*(1,12)
Նրա ականջին էր հասնում եկեղեցու *տոնական* զանգահարությունը, որը *կարծես թրթռում, խաղում էր օդի մեջ:(1,41)*
Նայում էինք հեքիաթական վերջալույսով վառվռուն սարերին, որոնց վրա մակաղած *հոտերի նման մեղմորեն հանգչում էին ոսկեգեղմ անտառները:(1,194)*

Ներկայացնենք դրանց մեթոդական նշանակությունը՝ բերելով համապատասխան առաջադրանքներ.

ա. Հորինել փոքրիկ հեքիաթ և նկարագրել:
բ. Որևէ ստեղծագործությունից դուրս գրել համեմատության օրինակներ:
գ.Ստեղծել համեմատություններ:

Փոխաբերությունը նույնպես լեզվի պատկերավորման միջոցներից է, որը խոսքին հաղորդում է հուզական – արտահայտչական երանգավորում, ընթերցողի երևակայության մեջ ստեղծում հույզեր, առարկայական, տպավորիչ պատկերներ: Փոխաբերությունը ոչ միայն նպաստում է խոսքի պատկերավորությանը, նկարագրությունը դարձնում ավելի տպավորիչ ու տեսանելի, այլև նրա միջոցով հաճախ բացահայտվում են մարդկային բնավորության որոշակի գծեր, իրավիճակներ ու գործողության տարբեր հանգամանքներ:[1]

Այսպես՝

Արևը հանգչում է հեռվում,
Գետից բարձրանում է մշուշ,
Հեքիաթդ անվերջ օրորում,
Իլիկդ խոսում է անուշ:(1,28)

Կամ՝

Աղբյուրներդ գիշեր ու զօր
Խոսքի բռնված իրար հետ…(1,125)

Կամ՝

Մերթ նժույգի պես բաշդ ցնցում ես,
Սանձդ կրծում ես դու խենթացած,
Մերթ քարերն ի վեր դու մագլցում ես,
Մերթ գալարվում ես քարերից ցած:(1,132)

Կամ՝

Մի *թանձր* լռություն կխտանար շուրջը:[2]
Անտառը կանչում է նրան, ընկերների ազատ վազքն է տեսնում:
Ամպերը եկել թառել էին շենքերի տանիքներին:(1,196)

Բառապաշարի հարստացմանը նպաստող մի քանի առաջադրանքներ.

ա. Հորինել փոքրիկ առակ կամ պատմություն՝ գործածելով փոխաբերություն:
բ. Պահանջել առանձնացրած օրինակներում ցույց տալ փոխաբերությունը:
գ. Որևէ ստեղծագործությունից հանել փոխաբերության օրինակներ:
դ. Հետևելով բերված օրինակներին՝ ինքնուրույն բերել փոխաբերության օրինակներ:

Վերոգրյալների շուրջ ավելի արդյունավետ կլինի աշխատանքը տեքստի վրա: Կարելի է տարբեր տեսակի և բնույթի աշխատանքներ կատարել տեքստի վրա՝ հենվելով պատկերավորման միջոցների վրա:

Աշակերտները կհամոզվեն, որ ընդգծված բառերն առավել արտահայտիչ ու տպավորիչ են դարձնում խոսքը: Այսպիսի բացատրական աշխատանքը երաշխիք է թեմայի հաջող յուրացմանը: Մայրենիի դասաժամերին, լեզվառճական վերլուծություններ կատարելիս, պետք է ուշադրություն դարձնել պատկերավորման միջոցներին: Անհերքելի փաստ է, որ աշակերտի պատկերավոր խոսքի զարգացմանը մեծապես նպաստում են գեղարվեստական գրականությունից հատվածների մեկնաբանումն ու վերարտադրումը: Եթե աշակերտը յուրաքանչյուր գրական տեքստից սովորի թեկուզ մեկ գեղեցիկ համեմատություն, մակդիր, անգամ բառ, որ դեռ անծանոթ է իրեն, ապա՝ որոշ ժամանակ անց նրա մեջ կկուտակվի որոշակի բառապաշար, կձևավորվի գեղեցիկ,

[1] Լ.Եզեկյան, Ոճագիտության ուղեցույց, էջ 339, Եր., 2007թ.:
[2] Դ.Գյուրջինյան, Թ.Ալեքսանյան, Ա.Գալստյան, Մայրենի 6, էջ 135, Եր.,2016թ.:

պատկերավոր խոսք: Սակայն միայն գրական տեքստի ընթերցումը, մեկնաբանումն ու վերարտադրումը դեռ բավական չեն, նշված նպատակին հասնելու համար, պետք է դրանք անընդհատ կիրառել խոսքում: Նոր նյութի հաղորդման ժամանակ նպատակահարմար կլինի օրինակները բերել հենց իրենց դասագրքի գրական տեքստերից, որոնք արդեն անցնում են կամ դեռ պետք է անցնեն,թեկուզ իրենց ծանոթ, հայտնի ստեղծագործություններից, որտեղ խոսքը հագեցած կլինի պատկերավորման միջոցներով: Նույնը պահանջել և աշակերտներից: Վերջնարդյունքում աշակերտները կկարողանան և՛ գեղեցիկ, հստակ շարադրել իրենց մտքերը, և՛ ունենալ հարուստ, պատկերավոր խոսք, և՛ հնարավորություն՝ թափանցելու գրական երկերը ու ընտրելու տպավորիչ, պատկերավոր խոսք: Այս հարցում, անշուշտ, ուսուցիչն իր ներդրումը պետք է ունենա: Իր ճիշտ ուղղորդումներով և ճիշտ մոտեցմամբ աշակերտներին պետք է օգնի բառերի ճիշտ ընտրության, ինչպես նաև՝ դրանք ճիշտ կապակցելու և խոսք կազմելու հարցում: Աշակերտին պետք է օգնել դուրս գալու սահմանափակումներից, սովորեցնել օգտվելու մեր լեզվի հարուստ բառաֆոնդից:

Ուսուցիչը պետք է պահանջի ստեղծել գեղեցիկ պատկերներ՝ մակդիրների օգնությամբ, համեմատություններ կամ փոխաբերական իմաստ ունեցող արտահայտություններ, որի համար տալիս է թեմատիկ բառախումբ: Որևէ տեքստից (դրանք կարող են լինել չափածո գրվածքներ, փոքրիկ պատմություններ և այլն) դուրս գրել համեմատություններ, բառակապակցություններ՝ կազմված մակդիրներով: Կամ՝ հատուկ տետրում գրառել իրենց հանդիպած ամեն մի գեղեցիկ արտահայտություն: Դասագրքում գործածված գեղեցիկ համեմատությունները,մակդիրները խմբավորել և առաջադրել աշակերտներին՝իրենց շարադրանքում կամ խոսքում օգտագործելու համար: Սակայն միայն նշված աշխատանքները բավական չեն բառապաշարի հարստացման համար, շատ կարևոր է արդեն յուրացրած կամ նորածանոթ բառերի ակտիվացումը: Ուրեմն, պետք է նախ՝ այդ մասին աշակերտներին տեղեկացնել, ապա՝ պարտավորեցնել, որ դրանց գործածությունը խոսքում լինի պարբերաբար: Ի վերջո, աշակերտի գիտակցությանը պետք է հասցնել այն միտքը,որ բառապաշարի աղքատությունը խոսքին տալիս է միապաղաղություն,միօրինակություն:

Բավարարվելով միայն դասագրքի վարժություններով և տնային աշխատանքներով՝ ուսուցիչը երբեք չի հասնի իր առջև ծառացած հարցի լուծմանը: Նպատակահարմար կլինի կազմել որոնողական, ճանաչողական ու ստեղծագործական բնույթի առաջադրանքներ, որն էլ աշակերտներին կմղի ինքնուրույն մտորելու, դատելու, գիտակցաբար աշխատելու, եզրահանգումներ կատարելու: Իրավացի կարծիք է՝ աշակերտի պատկերավոր մտածողությունը ստեղծում է պատկերավոր խոսք:

Գրականություն

1.Դ. Գյուրջինյան,Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 6, Եր.2016թ.:
2. Լ. Եզեկյան,Ոճագիտության ուղեցույց,Եր.,2007թ.:
3. Գ. Բ. Ջահուկյան, Ֆ. Հ. Խլղաթյան,Հայոց լեզվի ոճաբանություն, Ուսումնական ձեռնարկ ուսուցիչների և ավարտական աշակերտների համար, Եր., 2007թ.:
4. Ուսուցչի ձեռնարկ, Մայրենի 5-6-րդ դասարաններ, Եր., 2011թ.:

ՀՏԴ 371.31:809.198.1 Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա

Միրա Յարամիշյան
մ.գ.թ., դոցենտ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
E-mail- mirayaramishyan@mail.ru

ԵՂԵՌՆԻ ԹԵՄԱՆ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԻ «ՄԱՅՐԵՆԻ» ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ

Հայոց եղեռնը, իրավամբ, 20-րդ դարի սկզբի մարդկային ոճրագործության սահմռկեցուցիչ և անհերքելի փաստն է: Ամեն տարի ապրիլի 24-ին յուրաքանչյուր հայ (և ոչ միայն հայ) իր սուրբ պարտականությունն է համարում ընտանիքի մեծ ու փոքր անդամներով այցելելու Մեծ Եղեռնի անմեղ զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողին և խնկարկելու թուրքական յաթաղանի զոհ դարձած արդար հոգիների համար: «Մայրենի» դասագրքերի հեղինակները նրբազգաց մոտեցում են ցուցաբերել եղեռնի թեման շոշափելիս, որի շուրջն էլ խոսք է գնում սույն հոդվածում:

Բանալի բառեր- եղեռն, ցավ, կարոտ, հայրենիք, Մասիս, պահանջատիրություն, ոճրագործություն, հուշակոթող, անկախություն, դասագործընթաց, ամենագեղեցիկ սար, հուշարձան, նվիրյալներ

Мира Ярамишян
к.п.н., доцент,
кафедра армянского языка им. академика С. Абрамяна

ТЕМА ГЕНОЦИДА В УЧЕБНИКЕ «МАЙРЕНИ» ДЛЯ НАЧАЛЬНОЙ ШКОЛЫ

Неоспоримым считается тот факт, что геноцид конечно является чудовищным преступлением 20-го века. Ежегодно, 24 апреля, каждый армянин (и не только армянин) считает своей священной обязанностью со всеми членами семьи, даже самыми малыми, посетить мемориал, памяти невинных жертв, и зажечь свечи за души, ставшие жертвами турецкого ятагана. Авторы учебников <<Майрени>> проявили особый подход к теме геноцида, о чем и идет речь в этой статье.

Ключевые слова- геноцид, боль, тоска, родина, Масис, консистенция, безобразие, мемориал, независимость, курс, самые красивые горы, памятник, преданные

Mira Yaramishyan,
Ph.D., Associate Professor,
Chair of Armenian Language after Academician S. Abrahamyan

ARMENIAN GENOCIDE IN «MAYRENI» TEXTBOOK OF JUNIOR SCHOOL

Genocide is the most appalling crime of the 20th century, and that is an unquestionable fact. Every year on April 24 all the Armenians (and not only the Armenians) believe their sacred duty to visit the memorial dedicated to the innocent victims, and to light candles for the souls of the victims of the turkish yataghan .The authors of the textbooks <<Mayreni>> showed special approach to the subject of the genocide, which is the topic of the article.

Key words- Genocide, pain, anguish, birthplace, Masis, consistency, outrage, memorial, independence, course, the most beautiful mountains, monument, dedicated

Հայոց եղեռնը, իրավամբ, 20-րդ դարասկզբի մարդկային ոճրագործության սահմռկեցուցիչ և անհերքելի փաստն է, որի կողքով մարդկային նվազագույն բանականություն ունեցող էակը չի կարող անտարբեր անցնել: Ցավոք, դարը բոլորեց, բայց այդպես էլ սթափ միտքը ոչ բոլորի մոտ հաղթեց ու առայսօր մեզանից մեծ ջանքեր է պահանջվում՝ ապացուցելու հազարամյա պատմություն ունեցող մի հերոսական ժողովրդի գլխով անցած բազում արհավիրքներից սարսափելի իսկությունը:

Այս տարի ևս ապրիլի 24-ին յուրաքանչյուր հայ /և ոչ միայն հայ/ իր սուրբ պարտականությունն է համարելու ընտանիքի մեծ ու փոքր անդամներով այցելելու արդեն սրբատեղի դարձած Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողին ու խնկարկելու թուրքական յաթաղանի զոհ դարձած արդար հոգիների համար: Անգամ նախադպրոցական տարիք ունեցող երեխան էլ կարող է յուրովի ՝ իր տարիքին հատուկ մտածողությամբ ու բառապաշարով արժևորել ապրիլի 24-ին իր կողմից թեկուզ մի հատիկ ծաղիկ դնելը անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող կոթողին, որովհետև կորստի ցավը նրա արյան մեջ է փոխանցվել իր ծնողներից, տատիկներից ու պապիկներից, ապուպապերից:

Հայ ժողովուրդը ավանդապահ է, նրա զավակները՝ հավատարիմ բարոյական լավագույն չափանիշներին, որոնց հիմքը դրվում է յուրաքանչյուր հայ ընտանիքում և շարունակում ընդարձակվել դպրոցում: Մեր նպատակից դուրս համարելով հանրակրթական միջնակարգ դպրոցի միջին և ավագ օղակներում խնդրո առարկա հարցն ուսումնասիրելը՝ կանգ առնենք միայն կրտսեր դպրոցի «Մայրենի» դասագրքերում (I-IV դդ) զետեղված այն բնագրերի քննարկման վրա, որոնք ուղղակի կամ անուղղակի կապով առնչվում են Մեծ եղեռնին:

Մանկան դաստիարակությունը շատ բարդ և համակողմանի աշխատանք է, ուստի այդ գործով զբաղվողները, քաջ գիտակցելով իրենց ուսերին դրված պատասխանատվությունը, պետք է լինեն և' մանկավարժ, և' հոգեբան, և' պատմաբան,և' արվեստագետ: Հարցին նույն ձևի լրջություն պետք է ցուցաբերեն նաև դասագրքի հեղինակները համապատասխան բնագրեր ընտրելիս կամ կազմելիս, քանզի գեղարվեստական գրականությունը թերևս լավագույն

միջոցն է անհատի ճիշտ դաստիարակության գործում: Բարեբախտաբար, «Մայրենի» դասագրքերի հեղինակները, շատ լավ հասկանալով իրենց առաքելությունը, նրբազգաց մոտեցում են ցուցաբերել եղեռնի թեման շոշափելիս, այսինքն՝ նրանք կողքանց չեն անցել, բայց նաև կրտսեր դպրոցի «Մայրենի» դասագրքերում չկան ակներև փաստեր, դեպքերի նկարագրություններ կամ սարսափելի տեսարաններ (իհարկե, նկատի ունենալով երեխաների տարիքային առանձնահատկությունները), այլ նրբին մոտեցումներով սովորողներին հանգեցնում են համապատասխան տրամաբանական եզրակացությունների, այն է՝ դարեր շարունակ հայ ժողովուրդը պայքարել է իր անկախության ու ազատության համար, այդ ճանապարհը հարթ ու դյուրին չի եղել, եղել է դեգերումներով, հերոսամարտերով, ջարդերով լեցուն, բայց, միևնույն ժամանակ, ապագայի նկատմամբ լիահույս հավատով լցված ճանապարհ է եղել ու մնում է:

Ծանոթանանք դրանցից մի քանիսին:

Ահա «Մայրենի-1» դասագրքի «Մեր հայրենիքը Հայաստանն է» թեմատիկ խումբը, որ բացվում է Հայաստանը խորհրդանշող սիմվոլներով՝ հայոց եռագույն դրոշ, գերբ, Կառավարական տուն, Մատենադարան, Տիգրան Մեծ թագավոր, իհարկե, Մեծ և Փոքր Մասիսներ՝ արևով ճառագած: Իրոք, Հայաստան ասելիս՝ ակամա ոտքի ես կանգնում:

Վեցուկես-յոթ տարեկան երեխային քաջածանոթ է գրքի 38-րդ էջի նկարը՝ երկինք խոյացող սյունաշար, որի գլխին թխպամած երկինք է, կողքին՝ բարդիներ, պտղով ծանրաբեռնված ծիրանենիներ ու ծաղիկնե՞ր, ծաղիկնե՞ր՝ հատկապես ինքը կարմիր, սիրտը՝ սև կակաչներ, և երկու մանչուկ՝ տղա և աղջիկ՝ծաղկեփնջերը ձեռքներին Ծիծեռնակաբերդ շտապելիս:Նկարի տակ հեղինակի՝ Վասի հղումն է սիրելի փոքրիկ բարեկամներին. « Այս հուշարձանին նայելիս՝ մենք հիշում ենք մեր անմեղ զոհերին»:

Մնացյալը ուսուցչի գործն է՝ պարզագույն բացատրություններով ուղղորդելու յոթնամյա երեխային, թե ինչ արհավիրք է Հայոց եղեռնը, երբ է տեղի ունեցել և ինչու:

Հանրակրթության նոր Կրթակարգի պահանջներին համաձայն՝ այսօրվա դասագործընթացում ուսուցումը պետք է տարվի այնպես, որ աշակերտը, ստացած գիտելիքներն ու տեղեկությունները հիմք ընդունելով, ինքը կատարի համապատասխան եզրահանգումներ, այլ ոչ թե սպասի, որ ուսուցիչը պատրաստի դեղատոմսեր տա այս կամ այն երևույթի կամ գործողության վերաբերյալ, այլ խոսքով՝ նախկին ավանդական ուսուցչակենտրոն ուսուցումն այսօր պետք է իր տեղը զիջի աշակերտակենտրոն ուսուցմանը:

Այս պահանջի բավարարմամբ էլ «Մայրենի-2» դասագրքում զետեղված «Մասիս» գործնական զրույցը (էջ 124) ստիպում է աշակերտին մտածել, փնտրել, որոնել և պատասխանել այն հարցերին, թե ինչո՞ւ .

-եթե Մասիս սարի ստորոտից չափենք մինչև գագաթը, ապա կտեսնենք, որ նա աշխարհի ամենաբարձր սարն է,

-եթե Մասիսին նայենք հայի աչքերով, ապա կտեսնենք, որ նա աշխարհի ամենագեղեցիկ սարն է,

-եթե ուզենանք հասնել Մասիս սարին, ապա կտեսնենք, որ նա աշխարհի <u>ամենահեռու սարն է</u>,

-եթե աշխարհի բոլոր հայերը ցանկանան, որ Մասիսը նորից մե'րը լինի,ապա կլինի':

Ժողովրդական խոսքն ասում է. «Կարոտից է առաջ գալիս ամեն բան»: Հենց հայրենինքի, հայրենի տան ծխի ու եզերքի կարոտն է պարտադրել «Մայրենի-4» դասագրքի հեղինակներին, որ տասնամյա աշակերտներին ոչ թե իրական էքսկուսիա կամ արշավի տանեն դեպի Արևմտյան Հայաստան, այլ Արամի դարբին պապի հետ միասին մտովի այցելեն Մասիս լեռան քարանձավ , ուր հավատարիմ

շները կրծում են Արտավազդ թագավորի շղթաները, որ ազատեն նրան, հույս են տածում, որ Արտավազդը դուրս կգա և Մասիսին կտիրի, ու մենք կունենանք ոչ թե գերի Մասիս, այլ մե՛ր Մասիսը: Երեխաները անկեղծ ցանկությամբ ուզում են իրե՛նք գնալ – ազատել իրենց սուրբ սարը, բայց ո՞վ կթողնի բարձրանալ գերված Մասիսը:

Սակայն դա ժամանակի հարց է, ու նրանց ընդունած որոշումն էլ ապագայական՝ մի մասը կգնա Ագռավաքար՝ Մհերին ազատելու, մի մասը կբարձրանա Մասիս՝ Արտավազդին ազատելու, և կիրակնան հայի երազանքները, որոնք թռչունների տեսքով ամբողջ աշխարհից գալիս և բույն են հյուսում Մասիսի լանջերին:Ու ճանապարհից չեն շեղվում, որովհետև ճանապարհի ուղղությունը սիրտն է հուշում:

Կյանքում հարազատ ու թանկ բաներ կան, որոնք չես կարող կորցնել, եթե քեզ չպարտադրեն:

Հայի մեր տեսակը մեր հաղթանակների պտուղն է՝ ուսումնատենչ, ինքնավստահ, հավատավոր: Այս միտքն է արծարծվում Վրեժ Իսրայելյանի «Չնվաճված աշխարհամաս» պատմվածքում, որից բերված մի փոքրիկ հատվածը բավական է նորից շեշտադրելու այն տխուր փաստը, որ իրագործվել է 101 տարի առաջ, և առայսօր չի մորմոքվում ցավը. « Աշխարհի բոլոր պապերն էլ գեղեցիկ հեքիաթներ գիտեն: Բայց Արշակ պապն ուրիշ էր: Նա միայն մեկ հեքիաթ գիտեր. «Լինում է, չի՞ լինում՝ լեռների մեջ մոլորված մի գյուղ է լինում: Էս գյուղը միայն մի ճանապարհ է ունենում, էն էլ տանում էր լեռան գագաթ…»: Դա մի տխուր ու անվերջանալի պատմություն էր հեռվում թողած ծննդավայրի, հարազատ մարդկանց, տան ու լեռների մասին: Երբ մամը հուզմունքից ծածկում էր արտասվախառն աչքերը, Հակոբիկը ըմբոստացած վեր էր թռչում. «Պա՞պ, ո՞վ հնարեց այդ հեքիաթը, ո՞վ»: Արշակ պապը լռում էր: Հետո պապի հեքիաթն այլ ընթացք է ստանում, որովհետև թռռն ասում է, որ գիտե՝ աշխարհում քանի աշխարհամաս կա՝ Եվրոպա, Ասիա, Ամերիկա, Աֆրիկա, Ավստրալիա, հաջորդի անունը դժվար է, մոռանում է:

-Տո՞ւն ,- համարյա գոռալով ասում է պապը և շարունակում,-տո՞ւն: Էդ աշխարհամասի անունը ոչ մի գրքում գրված չի, բայց ամենամեծ աշխարհամասն է, ամենասիրունը, ամենահսկականը: Գրքում գրում են էն աշխարհամասի անունը, որը նվաճել են, իսկ տունը չնվաճված աշխարհամաս է:

Թռռը հավատում է, որ կա՛ այդպիսի աշխարհամաս՝ չնվաճված, ամենասիրուն, ամենահսկակա՞ն, և նկարում է արար աշխարհին այդ տունը, որ մեկ դար առաջ շեն էր, պատերը անտաշ քարից էին, ծեփը՝ հարդախառն ցեխով, դուռը՝ մեկփեղկանի, պատերի ներսում յոթ թախտ էր, հինգ օրորոց, օջախի սալը շիկացած էր, Ջեյրան, Շեկո կովերը, Կարմիր եզը կուշտ էին, Իսրո պապը քնած էր, ճիշտ է, բայց ամբողջ օրը ձիու վրա է եղել, նանն էլ դրսում երկանք է աղում: Ահա չնվաճված աշխարհամասի բնակչի կարոտը…

Հովհ. Շիրազը կասեր. «Այսքան մոտ եմ, բայց կարոտ եմ Մասիսին…»: Ա՜խ, այս Մասիսը, որից փափկում են սրտերը բոլոր, իսկ ինքը… քար է, ջերմացնում է սրտերը մոլոր, երբ ինքը…սառն է, աշխարհներից հեռավոր-հեռու բոլոր հայերին այստեղ է բերում, երբ ինքն…այստեղ չէ, միաբանության քարող է կարդում աշխարհում ցրված հայերին անտուն, երբ որ…կիսված է, որ մեծ սիրո պես ո՛չ հեռանում է, ո՛չ էլ գալիս է (Գևորգ Էմին) «Ա՜խ, այս Մասիսը», «Մայրենի-4», էջ 76): «Երևի հայրենիքը հենց այն է, որ կորցնելուց հետո այլևս ոչինչ չես ունենա կորցնելու»,-ասել է Վարդգես Պետրոսյանը: Այսօր մենք ունենք մեկ աշխարհամասի արժեք ունեցող մի Հայրենիք՝ մի Հայաստան ու մի փոքրիկ Արցախ, բայց Մեծ և Փոքր Մասիսները ձեռք ձեռքի տված կարոտով սպասում են մեր սերնդի հայրենանվեր գործերին: Եվ ինչպես Հրաչյա Մաթևոսյանն է ասում.

«Ես հավատում եմ հավերծ հին ու հավերժ նոր մեր ժողովրդի ու նոր եկող սերնդի զորավոր ճակատագրին»: Հայ ժողովուրդն ունեցել է և կունենա ամենասիրելի հերոսներ, որոնց կմեծարի նրանց կատարած գործերի ու արժանիքների համար այնպես, ինչպես մեծարել է զորավար քաջ Անդրանիկին՝ ասելով. «Չարին դատող, Ազգին սիրող, Ազգապաշտպան Հայ Անդրանիկ: Հուշարձանիդ մեծ պատվանդան՝ Մասիսն է քեզ միայն արժան»(«Մայրենի-3, էջ 98»):

Բավական չէ՛ իր ազգի զավակը լինել, պետք է նաև նրա հրաշունչ զինվորը լինել (Գ. Նժդեհ), այնպիսին, ինչպիսին էին հայ նշանավոր ֆիդայիները, հայոց դատավճիռն իրականացնող հայորդիները, հայ դատի նվիրյալները, հայ վրիժառուները, այսօր իրենց պահակակետերում կանգնած տասնութամյա մեր պատանիներն ու զինվորները, մերօրյա հերոսները, որոնց ուխտն է՝ արյան գնով պահպանել մեր ամեն մի թիզ հողը և ոչ միայն պաշտպանել, այլև պահանջատերը լինել կորցրածների համար, չնվաճված հայրենիքի համար: 21-րդ դարի մատաղ սերունդը այլ հոգեբանություն ունի, այլ դաստիարակություն է ստանում, նա ավելի ազատ է, անկախ, ինքնիշխան, և համոզված պետք է լինենք, որ վաղ թե ուշ նա կապրի եթե ոչ ծովից ծով, ապա իր պատմակա՛ն Հայաստանում, ի՛ր Արարատի լանջերին:

Այս ոգով դաստիարակելուն նպաստում են նաև «Մայրենի» դասագրքերը:

Գրականություն

1.Թորոսյան Կ.,Սարգսյան Վ.,Խաչատրյան Հ.,Չիբուխչյան Կ. -Մայրենի-4,Երևան,2009
2. Թորոսյան Կ.,Սարգսյան Վ.,Խաչատրյան Հ,Ջիլավյան Ե. -Մայրենի-3,Երևան,2008
3.Սարգսյան Վ.,Թորոսյան Կ.,Գրիգորյան Ս.,Խաչատրյան Հ.-Մայրենի- 2, Երևան,2007
4..Սարգսյան Վ.-Մայրենի-1,Երևան,2006:

ՀՏԴ- 809.198 .1 Հայոց լեզու

Ռենա Մովսեսյան,
Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի դասախոս

ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ ԲԱՐԲԱՌԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բարբառները բնական հիմքն են լեզուների գրական տարբերակների, և բարբառային իրողությունների դրսևորումը գեղարվեստական ստեղծագործության մեջ այդ առումով օրինաչափ է: Բարբառային իրողությունները գիտական գրականության մեջ դիալեկտիզմ՝ բարբառայնություն, եզրույթով են բնորոշվում: Բարբառայնությունը սահմանվում է որպես բարբառին բնորոշ լեզվական առանձնահատկություն՝ գործածված գրական լեզվում:

Սույն հոդվածում քննվում են Արցախի գրողների կողմից գործածված բառիմաստային բարբառայնություններ, այսինքն այն բառային միավորները, որոնք նշված գեղարվեստական գրականության մեջ գործածվել են ոչ գրական իմաստով:

Արցախի գրողները իրենց ստեղծագործություններում գործածել են մեծ թվով բառիմաստային բարբառայնություններ ու բարբառերանգ հատուկ անուններ:

Բանալի բառեր. բառիմաստային բարբառայնություններ, բարբառային միավորներ, լեզվական առանձնահատկություն, գրական լեզու, գրական տարբերակներ, Ղարաբաղի բարբառ, բնական հիմք, ոչ գրական իմաստ, գեղարվեստական ստեղծագործություն:

Рена Мовсесян,
преподаватель кафедры армянского языка и литературы
университета имени «Григора Нарекаци»

СЕМАНТИЧЕСКИЕ ДИАЛЕКТИЗМЫ В ПРОИЗВЕДЕНИЯХ АРЦАХСКИХ ПИСАТЕЛЕЙ

Диалекты являются естественной основой литературных вариантов и в этом смысле закономерно выявление диалектных единиц в художественном произведении. Эти единицы определяются в научной литературе как диалектизмы. Диалектизм-это характерная диалекту языковая особенность, применявшаяся в литературном языке.

Арцахские писатели в своих художественных произведениях использовали большое количество семантических диалектизмов.

В данной статье были исследованы те семантические единицы, которые в произведениях арцахских писателей были употреблены в нелитературном значении.

Ключевые слова: семантические диалектизмы, диалектные единицы, языковая особенность, литературный язык, литературные варианты, художественные произведения, карабахский диалект, естественная основа, нелитературное значение.

Rena Movsesyan
Lecturer, the chair of the Armenian language and Literature
at Grigor Narekatsy University

SEMANTIC DIALECTISMS IN THE WORKS OF ARTSAKH WRITERS

Dialects are natural bases for literary versions and in this sense the identification of natural dialectal units in literary works is regular. Dialectal units are defined in the scientific literature as dialectisms. Dialectism is a language peculiarity particular to the dialect used in the literary language.

Artsakh writers used numerous semantic dialectisms in their works.

Semantic units used in the works of Artsakh writers in non-literary meaning are investigated in this article.

Key Words: semantic dialectisms, non-literary versions, dialectal units, language peculiarity, literary language, literary work, Karabakh dialect, natural basis, non-literary meaning.

Բարբառները բնական հիմքն են գրական տարբերակների, և բարբառային իրողությունների դրսևորումը գեղարվեստական ստեղծագործության մեջ այդ առումով օրինաչափ է: Այդ միավորները գիտական գրականության մեջ **դիալեկտիզմ՝ բարբառայնություն**, եզրույթով են բնորոշվում **[տես՝ 13-60]:**

Բարբառայնությունը սահմանվում է որպես բարբառին բնորոշ լեզվական առանձնահատկություն՝ գործածված գրական լեզվում: Եվ տարբերակվում են հետևյալ տեսակները. **հնչյունական, քերականական, բառակազմական, բառային**: Բառայինը իր հերթին լինում է **բուն բառային, ազգագրական և բառիմաստային [17]:**

Հատկանշական է, որ ընդհանուրհայերենյան մի շարք բազմիմաստ բառեր, ինքնին ունենալով բարբառային գործածության հասցեականություն, գեղարվեստական գրականության մեջ, ըստ անհրաժեշտության, կիրառվում են հենց բարբառային իմաստներով՝ համահենքին հաղորդելով ժողովրդախոսակցական երանգ: Դրանք բառիմաստային բարբառայնություններ են:

Այդպիսի միավորներ են Արցախի գրողների ստեղծագործություններում գործածված հետևյալ բառերը. **մարդը՝** «տղամարդ ամուսին, այր» մասնավորված նշանակությամբ, ***տարանալը՝*** «*բարկանալ, հուզվել*», **քաշել**-ը՝ «*ծխել», «կրել, տանել, ապրել*» և «*խնայել*» իմաստներով, **կոխել** բայը «*ծավալվել, տարածվել» և «վրա հասնել, լրանալ», **ցուրտ**-ը* «*մտերմությունից զուրկ*», ***թիվ*** -ը «*թվական և ընդհանրապես ժամանակաշրջան»,* ***օր*** -ը «*վիճակ, դրություն, կարգավիճակ*», ***նախշել***-ը *«հայհոյել»*, ***կտրել***-ը «*թալանել, կողոպտել*», ***մաքուր***- ը *«ամբողջովին, կատարելապես»*, ***ընկնել***- ը *«սկսվել, վրա հասնել»*, ***պառկեցնել***-ը *«խփել»*, ***բռնել***-ը «*տարածվել*», ***ծնունդ***-ը *«տարեդարձ »*, ***ներանալ***-ը «*վիրավորվել*», ***ուզել***-ը «կանչել», ***վերցնել***-ը «*ձեռնարկել*», ***բերել***-ը «ծնել», **կապելը՝** «բաց թողնել, հոսքն ուղղել՝ջրի

մասին» իմաստներով և այլն: Օրինակ՝ *Մարդդ քեզ լավ է պահում, դարձել ես հաս՝ գաթայի մեջը դրած* [8- 399]: *-Էլ ինչ լինի,-նորից տաքացա,-կեղտի մեջ գցեցիր քեզ էլ, ինձ էլ* [10-79]: *«Էն աշխարհքում էլ պիտի ցավ քաշես»,-մտքում ասաց Օսնիը* [8- 292]: *Սրան էդ անտեր քաշելն է էդ օրը գցել* [9-218]: *Մի քիչ բողազներիցդ քաշեք և մի կողմից մի սենյակ ավելացրեք* [8-230]: *Արդեն մութը կոխել էր, որ էշը խոտով բեռնած դուրս եկավ արտից* [8-344]*: Երևանից վերադարձավ նրա շրջկոմական քեռին ու միլիցիային հայտնեց, որ տունը կտրել են* [66-46]: *Ծերությունը կոխել է. Վանի, դժգոհեց ինքն իրեն* [8- 112]: *Անդրանիկը կնոջ վրա ձեռք բարձրացրեց և մորն էլ ցուրտ խոսք ասաց* [8- 231]: *Էս քո ասած թիվը չի, Եղիազար…* [9-110]: *Տավարի օրում մարդիկ են, դեպի ուր քշեն, էն ուղղությամբ էլ կգնան* [1-262]: *Մեր մեջ ի՞նչ է եղել: Ոչինչ: Էրկու ցուրտ խոսք* [1- 129] *:Ջուրը կապեց լոբու արխին ու նստեց* [8-152]: *Դա պանիկա է, մաքուր պանիկա* [16- 26]: *Երբ որ ընկնեն տաքները /Ու գան գարնան/ Հավքերը* [4- 34]: *Հայկազը գնաց ջուրը վարունգի վրա կապելու* [8-306]: *Ճիպոտը մի լավ պառկեցրեց ջորու տռուզ կոնքերին, ելավ քարե կածան* [9-55]: *Խորոմածդ այնպես արա, որ հոտը սաղ թաղը բռնի* [1-5]: *Տոն օրերին կամ երեխաներից մեկի ծննդին լակոտները սովորականից շուտ էին արթնանում* [8-226]: *Դո՛ւրս եկ, քեզ ուզող կա* [10-18]: *- Էն շանը մի ասան լաթի տվեք,- նեղացած կանչեց Ոսկեհատը՝ ակնոցն աչքից առնելով* [9-23]: *Ասում եմ, Սաթենիկ աքերը մի տղա յա բերել* [1- 511]:

Բառային այդ միավորները միայն նշված իմաստներով են պահպանում իրենց «բարբառայնության բարուրը». Եվ եթե վերոնշյալ միավորները իմաստային ծավալումով են պահպանել բարբառային երանգը, ապա ներքոնշյալ բառեզրերը լիովին չեն ազատվել բարբառայնության իրենց նկարագրից: Ինչպես՝ *Զարությունից էլ տնից փող էր թռցնում (գողանում)* [10-18]: *Առավոտյան նախագահի հետ բռնվեց (վիճել), ամբողջ օրը՝ կեղտաբերան ու զզվելի, դարձել էր քոլի աղու տանձ* [8- 355]: *Զմեռս չէ՞ր, որ Մուքանի կոկորդը թոնրից հանեցին,- ու խոսողը թունդ (խիստ վիրավորական) հայհոյեց* [8-136]: *Ու օգոստոսի կեսերին Սոկրատից, Վարսենից, Հարարի մյուս այլոկողներից (թալանող) շուտ ընդհին խունկուձեթ շլորը քաղում, որ լավաշ անես* [8-334]: *Նախագահը խմած ժամանակ լավ ջրիկանում է (թեթևամտանալ)* [8-352]: *Սեպտեմբերին նա ցուլը կրտել տվեց, որ սկսեր միս գցել (ավելացնել, ուժեղացնել)* [9-159]: *Բայց կարող է քաշվենք (ձախողվել)* [10-21]: *Արի քեզ դերասան շինենք (դարձնել)* [8-344]: *–Ճաքեք, տրաքվեք, է, (զայրանալ), որ ճաքվում տրաքվում եք* [8-323]: *Դու էլ ես լսել, որ Մելսիկը խփվել է (հրազենով սպանվել է)* [10-88]:

Բառի բառիմաստային ծավալումները դրսևորվում են հաղորդակցության գործընթացում՝ հիմնականում խոսակցական մակարդակում: Իսկ բառերի բարբառային իմաստների գրականացման ճանապարհներից մեկը գեղարվեստական գրականությունն է, այն «ամրագրում է» իր՝ ժողովրդի կողմից գործածվող իմաստը, տարածում և հաճախ հասցնում գրական մակարդակի:

Ուշագրավ են **հատուկ անուններով** ձևավորվող բարբառայնությունները. գեղարվեստական ստեղծագործություններում բարբառային երանգավորում ունեն այն հատուկ անունները, որոնք բարբառին հատուկ հնչողությամբ էլ կերպավորված են: Դրանք նախ՝ անձնանուններ են. ինչպես՝ **Մոսո (Մովսես), Սաթի (Սաթենիկ), Սերգո (Սերգեյ), Օսնի (Հովսեփ), Կուքի (Գրիգորի), Ուհանես (Հովհաննես), Նեսի (Ներսես), Թագուշ (Թագուհի)** և այլն: Ինչպես՝ *Հա, ընկեր Արամյան, իմ անունս էլ Սաթի է, Ծուկանանց Սաթի [1- 17]: Աստծատուրին գյուղում Ծատի էին ասում, Խաչատուրին՝ Խաչի [1-291]: Ուհանես, դու քո աստվածը, չառնես: Քեզ պետքական փա՞յտ է հարկավոր [9- 87]: Դա խի՞ղճ է, մի տեղ գրելո՞ւ բան է: Օսնիը խեղճանում է [8- 371]: Դու էլ նստիր, Կուքի, դիմեց նա տնտեսվարին [1- 101]: Սահակյանների մոտիկ հարևանուհի պառավ Մարանգյուլն էր [1-228] :Դեռ մեկին էլ / Մեջքիդ դրել, / Բլանց Մոսուն / Հյուր ես բերե՞լ [4- 108]: Ինձ ուշադիր լսում էր միայն Նեսի ապան, բանջարանոցի տնտեսվարը [16- 9]: Համբարձի, ձեզ սպասե՞նք, թե՞ կթողնես, որ առաջից մենք գնանք,-լեզուն ծլթացնելով ասում է Արտուշը [8- 183]: Հովգյում, Առաքել, Ռուբեն, Հովսեփ, Մանուկ, Ներսես, Կուքան, Սոփին եմ ձեր ցավը տանեմ [16- 4]:

Եթե նույնիսկ տեքստում ապահովվել է գրական հայերենի անաղարտությունը, այնուամենայնիվ այդպիսի անվանակիր հերոսները տեղական բարբառային երանգն են նաև տեսանելի դարձնում:

Նույնպիսի գործառույթ ունեն նաև հերոսների զբաղմունքը և այլ հատկանիշներ բնութագրող բարբառային այն լրացումները, որոնք մականվան արժեք ունեն: Օրինակ՝ *Հայրը «հայտնի» մարդ էր, Արցախում Տկլոր Մկը էին ասում նրան [7- 456]: Եսայու տղան ո՞վ է, չոլախ Սանթուրն ինչացո՞ւ է, որ նստել է պապական ունեցվածքիդ [9- 48]: Մարդուն ուղարկում է սեզոն, ինքը դամբաշ Վանոյին բերում տուն [8-285]: Զաբելի համար գիր գրողի ձեռքը ծկթի, ինքը տղա մնծացնի, ուրիշները վայելեն՝ Եղիշն ու Ճուխի Շարմաղը [8- 322]: Ադունն արեց, Ադունը, հնձվոր Գալուստի լաչառ Ադունը [16- 260] :-Գոմաղբ պիտի տանել ջերմոց,-բրիգադիր Սավադը դառնում է քոռ Մուքանին [8- 128]: Քաչալ Շաբոյին կուղարկեի ֆերմա, քեզ վերցնեի տեղակալ [16- 345] :Գերանդին չհատվող սիգախտի վրայից անցնում է, ոնց որ դալլաք Ղևոնդի սափրած երեսը [8- 331]: Եվ մեկն էլ չոբան Սարոյի երգն էր, որ թևահարում էր այգում* [1- 331]: *Ականջները քլառա Ներսես վարժապետի թոռն է* [1- 319]:

Հատուկ անունների ընդգծված լրացումները պատկանում են բարբառային բառաշերտին և ունեն հետևյալ իմաստները. **տկլոր**– մերկ, **դամբաշ** – նվագողին կամ երգողին նվագակցող, ձայնակցող, **չոլախ** – ոտքից կամ ձեռքից հաշմանդամ, **չոփուռ** - չեչոտ՝ ծաղկատար երես ունեցող, պեպենոտ, **լաչառ**- լկտի, կռվարար, չարաբարո, **ճուխի**- խոզ, **քոռ** - տեսողությունից զուրկ (մարդ, կենդանի), **քաչալ** 1.մազերը թափված, ճաղատ, 2.փխբ. բուսականությունից զուրկ, **դալլաք** –վարսավիր, սափրիչ, **չոբան** - ընտանի չորքոտանիների (հատկապես ոչխարների և այծերի) հովիվ, **քլառա** - ականջները կտրած, **դուքանչի** - 1.մասնավոր խանութ պահող մարդ,2.խանութի վաճառող-գործակատար:

Ժողովուրդը նույնիսկ որպես մականուն կիրառում է ամբողջական դարձված, ինչպես՝ *Անունը Եսթեր, փոտ անունը՝ տյուս արծած Եսթեր*: [7-136]

Տյուս արծած դարձվածը Ղարաբաղի բարբառում գործածվում է անբարոյական իմաստով:

Ստեղծագործողի կողմից գրական հերոսներին նման մականուններով դիմելը կերպարակերտման յուրահատուկ եղանակ է, որը երկին տալիս է ականատեսի անմիջականություն:

Բարբառին բնորոշ երևույթ է ազգակցական հարաբերություն արտահայտող բառանվանումների ընդհանրական ազգական և նույնիսկ ոչ ազգական նշականությամբ կիրառությունը: Եվ հատկանշական է, որ այդ բառանվանումներն իրենց այդ ընդհանրական իմաստներով դրսևորվել են Արցախի գրողների ստեղծագործություններում՝ հանդես գալով իբրև հատկանվան լրացումներ՝ որոշիչներ: Այդպիսով բնագրին հաղորդվում է բարբառային բներանգ: Ինչպես՝ ***աքիր*** *(հորաքույր),* ***հնգեր*** *(1.մտերմությամբ՝ սիրով՝ գործունեությամբ՝ ընդհանուր հայացքներով մեկի հետ կապված մարդ, ընկեր, 2.գործածվում է անունների կամ ազգանունների հետ՝ քաղաքացի նշանակությամբ),* ***ապեր*** *(1.հայր, 2.եղբայր),* ***տյուտյա*** *(1.կանանց դիմելու ձև, 2.մորաքույր),* ***ապա*** *(1.պապ, 2.հայր, 3.տարեց տղամարդկանց դիմելու հասարակ անուն),* ***այա*** *(1.մեծ մայր, տատ, 2.ծեր կանանց դիմելու կոչական բառ),* ***ձյած*** *(1.տղամարդկանց դիմելու ձև, 2.հորեղբայր),* ***ամի*** *(հորեղբայր),* ***ազի*** *(1.հորաքույր, 2.մայրիկ, 3. տարեց մարդկանց կոչական բառ),* ***բաջի*** *(1.հեգն. քույր,*

2.մորաքույր, հորաքույր, 3.կանանց տրվող հարգական կոչում, որ գործածվում է հատուկ անունից հետո), ***քիքի*** *(1.մորաքույր, 2.տարեց կանանց տրվող հարգական անուն և կոչական բառ),* ***դայի*** *(1.քեռի, մորեղբայր, 2.տարեց տղամարդկանց դիմելու հարգական կոչական բառ):* Օրինակ՝ Պառավը՝ Անուշ աքիրը, որ խնամում էր նրան, բղավում էր գլխին **[9- 217]:** Տատիս ավագ քույրը՝ Նանա քիքին, մահամերձ էր **[16-56]:** Այսինքս, էսպես է, էլի, հնգեր Մարգարիտ, ես խոխիս բերանի հացը, ջանի շորը, ոտքի տրեխը, գլխի փափախը տալի՞ս եմ **[1- 349]:** Խանում աքեր, գնացողը գնում է, մնացողն էլ պիտի մնա **[7- 149]:** Կուքի դայի, ասում է Օղտանց Համբարձումը, մեծ տղայիդ երեկ գիշեր եկան ու ձերբակալեցին **[7- 149]:** Եկել եմ Արսեն ապոր, մերոնց շիրիմներին այցելության **[7-368]:** Եվ փոքր աչքերն արագ-արագ թարթելով՝ ձեռքը մեկնեց. - Տուր, Աշիկ տյոտա **[1- 198]:** Նախշուն աբոր տուն է **[1- 226]:** –Օսնի ապան էլ իրեն կբերի,-և Մեխակն իր հերթին աչքով ր անում Ադվանին **[9- 241]**: -Ես իմն ասացի, մենք սաղ, Քաթան այան մեռած, կտեսնենք **[8- 239]:** Ճչում էր, կանչում՝ ձյած Աղթեմ, ձյած Աղթեմ **[7- 617]:** Նախշուն ագին կանչում էր **[16- 19]:** Մինա ագին երազում Վիտալիկին էր տեսել **[8- 349]:** Մենք էլ մի Բուդաղ ամի ունենք, իմ բրիգադումն է աշխատում **[1- 231]:**

Այսպիսով՝ Արցախի գրողներն իրենց կերտած կերպարներին դիմելով ժողովրդի կողմից ընդունված կամ հենց ժողովրդի հորինած անուններով՝ յուրովի արտահայտում են իրենց վերաբերմունքը և համապատասխան վերաբերմունք ձևավորում ընթերցողների մեջ՝ նպաստելով կերպարի մտերմացմանն ու հարազատացմանը ընթերցողի համար:

Նույն սկզբունքով էլ գեղարվեստական երկում նկարագրվող միջավայրն է հարազատ դառնում, երբ գրողները հմտորեն կիրառում են ժողովրդական ձև ունեցող տեղանունները:

Օրինակ՝ Ա՛յ տղա, ոչխար ասացիր հիշեցի, ասում են՝ քո աներ Սարուն ծառից ընկել, ոտքը ջարդել է, ճի՞շտ է **[8- 348]:** Թամբը վեր կալ, բխովիր, Սեռուտի էն մախմուր խոտը թող արածի **[16- 320]:** Բա դու, ասա, ի՞նչ էիր ուտում տուներտեղդ կորցնելուց հետո, Ղաբանի սարերն անցնելիս **[9- 89]:** Ինձ ասա՝ տեսնեմ Գանձասարից քիչ վերև՝ Ռուսեն աղբյուրի կաղնու մոտ էն ինչ զրույցներ էր Ռոմանը **[7-116]**: Իջանք Սալտափ, որ այնտեղից թեքվենք Դրախտի ձոր **[8- 133] :** Բոլորքեն տախտումը էս տարի պտմիդորը պիտի որ լավ լինի… **[16- 222]:** Վաղ ծեգին գնում է մի իշաբեռ փայտ է բերում, իրեն հալալ, հետո նետ գնում է Տկողնուտ, Դաշխա քարից պարկով տկողին հավաքելու **[9- 162]:** Մեր էշը տարել է Ծառեխի ծմակը: **[8- 321]** Հաջորդ օրը Կոմունարը կոլխոզի հորթերը տարավ Զոխուր **[8- 136]:** Դեմս Դովթալար սարն է՝ մի հոնքին ամպ, մի հոնքին՝ արև **[16- 338]:** Կես ժամ հետո Մարությանը հեռացավ պառավների մոտից և ձին քշեց Դաշխա-քարի **[1- 469]**: Առավոտյան վաղ վեր են կենում, գնում Դաշխա խութի վրա կանգնում **[7- 130]:** 33-ին Սեյրան Բաբայանը Զորոտում 150 տարվա արտ կատարեց **[16-192]:** Խաշար խութից Տանձուն աղբյուրի վրա իջնող ճանապարհին գարու մի խուրձ էր դրված **[8- 112]**: Էն է, Տափերը կես ժամվա ճամփա է… : **[9- 204]:** Կովը քշեց գյուղից վեր՝ Զուխուրի քոլուտը, թողեց, որ անասունը գիշերվա հովին մի քիչ արածի **[8-112]:** Սատկած խոճկորները տարել ու Խամհատի տափում թաղել է **[7- 475]:** Մինչև հասան Գյադուկ՝ Հարարա աքաղաղների կանչը արդեն սկսվել էր **[8- 307]:** Երբ «ռացիայով» հայտնեցին՝ սպասել Մաննեն խութում …**[7- 573]**:

Ընդգծված տեղանուններն Արցախի գրողների երկերում գործածվում են ժողովրդի կողմից օգտագործված ձևերով և իրենց կազմում ունեն բարբառային ձևույթներ,որոնք տեղ են գտել Ա. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարանում» ինչպես՝ **սրէռ**- լեռան գագաթնային գիծը, որի երկու կողմերից սկսվում է վայրէջքը, **խաշար**- խոշոր, **խութ-բլուր,** , **ջրռ**-վայրի, չպատվաստված, **գյադուկ**-լեռնանցք, **տափ**-գետին, **շոր**-աղի, **ծմակ**-անտառ, **քոլ**-թուփ, **մաննը**-մատ և այլն:

Տեղանունների այսպիսի կիրառությունն ունի նաև ճանաչողական նշանակություն:

Այսպիսով՝ բարբառի բառապաշարը հատկանշվում է բառիմաստային ուշագրավ իրողություններով: Դրանք իրապես բնութագրում են բառային այդ միավորների իմաստային զարգացման ընթացքը: Եվ այդ իրողությունների վերլուծությունը ներկայացնում է բառի իմաստային տեղաշարժերը: «Մեր լեզվի բառերի բազմիմաստությունը նաև երկար դարերի ընթացքում կենդանի խոսքի մեջ գործածվելու ժողովրդական բառ ու բանին հատուկ պատկերավորությամբ, ժողովրդական մտածողությամբ իմաստների զարգացման, ժողովրդական բանահյուսության մեջ մշակելու և յուրահատուկ զարգացում ապրելու հետևանք է» **[14- 216]:**

Գրական լեզվի բառիմաստային տարողունակությունը ևս աճում է ընդհանուրհայերենյան բառերի բարբառային իմաստների գրականացմամբ, ինչը հաճախ կատարվում է գեղարվեստական գրականության միջոցով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ս., Սերունդների հետ, Երևան, «Ամարաս» հրատարակչություն, 2008, 595 էջ:
2. Ավետիսյան Ն., Սրտի կայծեր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2013:
3. Գաբրիելյան Գ., Արցախյան նվագարան, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2002, 193 էջ:
4. Գաբրիելյան Գ., Ընտրանի, Ստեփանակերտ «Դիզակ պլյուս» հրատ., 2007, 25 էջ:
5. Խանյան Ս., Ընտիր երկեր, հ 4, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ., 2010, 479 էջ:
6. Հակոբյան Վ., Երկեր, հ.դ, Ստեփանակերտ , ԼՂՀ ԳՄ «Վաչագան բարեպաշտ» հրատ., 2008, 655 էջ:
7. Հակոբյան Վ., Զատիկը ջրավազանի հատակին, «Դիզակ պլյուս» հրատ., Ստեփանակերտ, 2010, 665 էջ:
8. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 468 էջ:
9. Ղահրիյան Ա., Պատրանք, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1983, 248 էջ:
10. Մարտիրոսյան Հ., Համազարկ հրաժեշտից առաջ, ՀԳՄ հրատ., Երևան, 2007,94 էջ:
11. Մինասյան Ս., Արցախյան արձակագիրների լեզվաոճական մի քանի առանձնահատկություններ, Ստեփանակերտ, «Սոնա» գրահրատ., 1997, 50 էջ:
12. Մուրադյան Հ.Դ., Հայոց լեզվի պատմական քերականություն, Ե., 1982, 345 էջ:
13. Պետրոսյան Հ. Զ, Հայերենագիտական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1987, 685 էջ:
14. Զահուկյան Գ., Բ, Աղայան Է. Բ, Առաքելյան Վ. Դ, Քոսյան Վ. Ա, Հայոց լեզու, Առաջին մաս, Ա պրակ «Լույս» հրատարակչություն, Երևան, 514 էջ:
15. Սարգսյան Ա. Յու., Ղարաբաղի բարբառի բառարան, «Էդիտ պրինտ» հրատ., Երևան, 2013, 84 էջ:
16. Օվյան Վ, Կապույտ տարիներ, «Դիզակ պլյուս» հրատ., Ստեփանակերտ, 2007, 527 էջ:
17. Шерба Л. В., Избранные работы по русскому языку, Москва, учпедгиз, 1957, 188 стр.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրանտ Աբրահամյան
1988թ. ՇՈՒՇԻԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ 3

Հասմիկ Ամիրջանյան
ՀՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՂՈՒԹՅԱՆԻ ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԵՏ ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (XVIII Դ. ՎԵՐՋ) 6

Անդրեյ Արեշեվ
ՋՄՊՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԻՆ 11

Իսկուհի Ավանեսյան
ԿԱՆԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԺԱՄԱՆԱԿ (1988-1994ԹԹ.) 15

Սերգեյ Հախվերդյան, Գայանե Շաբունց
ՃՇՏՎՈՒՄ Է ՄԱՐԳԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅԴ ԳՅՈՒՂՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՅԱԾ ՍՅՈՒՆԵՅԻ ՏԻԿՆՈՋ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ 19

Վ. Բալայան
ԱՂԱ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱՆԻ 1795 ՈՒ 1797 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԴԵՊԻ ՇՈՒՇԻ և ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 22

Նելլի Բաղդասարյան
ԱՐՏԱՔԻՆ ՀԱԿԱԿՇՌՈՒՄՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԱ-ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՍՐՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼՈՒՄ /2016 Թ. ԱՊՐԻԼ-ՀՈՒԼԻՍ/ 28

Էդուարդ Դանիելյան,
ԱՐՑԱԽԻ ԳԱՀԵՐԵՑ ԻՇԽԱՆ ՀԱՅԿԱԶՈՒՆ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼ ԴՈԼԱՅԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 34

Վլադիմիր Յեվսեյեվ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՌԱԶՄԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՏԵՍԱԿԵՏ) 39

Ա.Գաբիլայա
ԱԲԽԱԶԻԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԿԱՆ 43

Ինեսա Կարապետյան, Արմինե Գաբրիելյան,
ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԽԵՑԵՂԵՆԸ 46

Տարոն Հակոբյան
ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԿԻԶԲԸ և ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1992 Թ. ՀՈՒՆՎԱՐ - ԱՊՐԻԼ ԱՄԻՍՆԵՐԻՆ) 52

Հայկ Հակոբյան
ԽՈՐԱՆԱՇԱՏԻ ՎԱՆՔՆ ՈՐՊԵՍ ԱՐՑԱԽԻ ԿՐՈՆԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԼԻՄ ՄԻ ՎԱՌ ՎԿԱ (ՁԵՌԱԳՐԵՐԻ ՈՒ ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳՐԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ) 56

Լյուբա Կիրակոսյան
ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԱՄՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 61

Ալեքսանդր Կրիլով
ԼՂՀ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԸ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 67

Մարինե Հարությունյան
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՃՅՈՒՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՐՑԱԽՈՒՄ XVII Դ.ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII Դ. ՄԿԶԲԻՆ 70

Արսեն Մելիք-Շահնազարյան
1991Թ-Ի ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊՈՒՏՉԸ ԵՎ ԼՂՀ ՀՌՉԱԿՈՒՄԸ 76

Էդիկ Մինասյան
ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ, ԱԶԱՏԱՄԱՐՏԻ և ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ ՈՒ ԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ 81

Արևիկ Պետրոսյան,
ՄՈԴԵՌՆԻԶԱՑԻԱՅԻՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ:ԼՂՀ-ՈՒՄ ՄՈԴԵՌՆԻԶԱՑԻԱՅԻ ԸՆԹԱՑՔՆ ԱՐԳԵԼԱԿՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ 90

Հավլետ Պետրոսյան
ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՆ ՈՒ ՎԱՉԱԳԱՆ ԲԱՐԵՊԱՇՏԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ 96

Վլադիմիր Պոնոմարյով
ԱՐՑԱԽՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՐՈՍԻ ՓԱՌԱՈՐ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ. 110

ՇԱՐՔԱՅԻՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՐՇԱԼ

Միհեր Քումունց, Զոհրաբ Ըռքոյան
ՔԱՐԱՎԱՋ (ԽՈՒԴԱՓԵՐԻՆ). ԿԱՄՈՒՐՋԸ և ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ 113

Վ.Ա. Սաֆարյան,
ԱՐՑԱԽԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 121

Ն.Պ.Սարուքյան
ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ՝ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ 125

Մեպյան Կ.Ա.
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՏԱՄԱՌՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ 132

Գևորգ Ստեփանյան
ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԻ ԴԵՐԸ ԲԱՔՎԻ ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ. XIX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ-XX ԴԱՐԱՍԿԻԶԲ
(ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ) 137

Թեյմուրազ Թադտայեվ
1920Թ. ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԻԱՅԻ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 142

Մալիկ Թելունց
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ և ԱՐՑԱԽՈՒՄ 1722-1730ԹԹ. ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ: ԱՐՑԱԽԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ 149

Տատյանա Վարդանեսովա
IX- XIII ԴԴ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՋՆԱՐԱԿԱՊԱՏ ԽԵՅԵՂԵՆԸ ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ 153

Արարատ Վարդանյան
ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԼՂՀ-ՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 160

Ռուբեն Զարգարյան
ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 165

Շահեն Աբրահամյան
ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԼՂՀ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐՑԸՆԹԱՑԻ ՇՈՒՐՋ 170

Ալվարդ Աբրահամյան
ԼՂՀ ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏՄԱՆ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵԼԱԿԵՏՆԵՐԸ 173

Լարիսա Ալավերդյան
ԼՂՀ ՕՐԻՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԳԻՏԻՄ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ (ՔԱՂԱՔԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՈՆՑԵՊՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ) 176

Վահե Դավթյան
ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉ 184

Աննա Հակոբյան
ՆԵՐԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԿԱՊԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 187

Արմեն Քարայան
ԱՐՑԱԽԸ և ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՄՏՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ 189

Ինալ Սանակոյեվ
ՎՐԱՅ-ՕՍԵԹԱԿԱՆՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸՈՐՊԵՍԻՆՔՆՈՒԹՅԱՆՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ 193

Մալիկ Թելունց
«ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԸ». ԴՐԱ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԼՂՀ և ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ և ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՊՐԻԼՅԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՏՐՎԱԾՔՈՎ 196

Մարետա Նիկողոսյան
ԷԹՆԻԿ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ 204

Հրայր Փաշայան, Լիանա Բալայան
1991-Ի ԼՂՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ ԵՎ ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԳԱՂԱՓԱՐԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 211

Ալեքսանդր Մանասյան
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ
(Ստատուս-քվոյից նահանջելու առաջարկության օրինակի վրա) 216

Արման Նավասարդյան
ՀՀ և ԼՂՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՆԵՐԿԱ 221

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	
Սողոմոնյան Նաիրա *ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼԻԶՄԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ*	226
Արմինե Արզումանյան *ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ*	229
Նելլի Աթանեսյան ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ԽԱՉԵՆԻ ԽՈՍՎԱԾՔՈՒՄ	233
Կարինե Ավանեսյան *ԳՐԱԲԱՐԻ Ի(Յ) ՆԱԽԴՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՂԻՇԵԻ «ՎԱՄՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ*	236
Օֆելյա Բաբայան *ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ. ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ*	239
Միլվա Մինասյան *ԱՐՑԱԽ//ՂԱՐԱԲԱՂ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎՀ. ՇԻՐԱԶԻ ՁԱՓԱԾՈՅՈՒՄ*	242
Շողեր Մինասյան *ԼԵԶՎԱԱՐՏԱՀԱՅՏԶԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ԴԱՐՁՎԱԾՆԵՐՈՒՄ*	246
Ժենյա Պողոսյան *ՄԻ ՇԱՐՔ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԱՉԵՆԻ ԽՈՍՎԱԾՔՈՒՄ*	251
Արմեն Սարգսյան *ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ*	255
Շուշանիկ Սաղյան *«ԱՐՑԱԽ» ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀԻՄՔՈՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ*	260
Նունե Խաչատրյան *ԵՐԳԻԾԱՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԴՐՍԼՈՐՈՒՄՆԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐ» ՊՈԵՄՈՒՄ*	263
Հասմիկ Ղազարյան *ԳՈՅԱԿԱՆԻ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ*	267
Ծովինար Հասրաթյան ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ («ՄԱՅՐԵՆԻ 6»)	272
Միրա Յարամիշյան ԵՂԵՌՆԻ ԹԵՄԱՆ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԻ «ՄԱՅՐԵՆԻ» ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ	276
Ռենա Մովսեսյան *ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ ԲԱՐԲԱՌԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*	279

СОДЕРЖАНИЕ

Грант Абрамян
ТРАГЕДИЯ ШУШИ В 1988 ГОДУ 3

Асмик Амирджанян
ПЕРЕГОВОРЫ МЕЖДУ АРХИЕПИСКОПОМ ИОСИФ АРГУТЯН И РУССКИХ ДЕЯТЕЛЯХ ОБ ОСВОБОЖДЕНИЯ АРЦАХА (КОНЕЦ XVIII В.) 6

Андрей Арешев
О МЕХАНИЗМАХ СДЕРЖИВАНИЯ В НАГОРНОМ КАРАБАХЕ НА ФОНЕ РЕГИОНАЛЬНОЙ НЕСТАБИЛЬНОСТИ 11

Искуи Аванесян
ДЕЯТЕЛЬНОСТЬ ЖЕНЩИН В ОБШСТВЕННЫХ –БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЯХ И СОЮЗАХ В ГОДЫ НАЦИОНАЛЬНО- ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ АРЦАХА (1988-1994ГГ.) 15

Сергей Ахвердян, Гаяне Шабунц
УТОЧНЯЕТСЯ МЕСТОПОЛОЖЕНИЕ СЕЛА МАРГАДЗОР И ИДЕНТИЧНОСТЬ СЮНИКСКОЙ ДАМЫ, КОТОРАЯ В ЭТОМ СЕЛЕ ПОСТРОИЛА ЦЕРКОВЬ 19

В. Балаян
НАШЕСТВИЯАГА МОХАММЕДА НА ШУШУ В 1795-97ГГ. И ИХ ПОСЛЕДСТВИЯ 22

Нелли Багдасарян
ПРОЯВЛЕНИЕ ВНЕШНИХ ПРОТИВОВЕСОВ НА НОВОМ ЭТАПЕ ОБОСТРЕНИЯ АЗЕРБАЙДЖАНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА /АПРЕЛЬ-ИЮЛЬ 2016 Г./ 28

Эдуард Даниелян
ОБЩЕАРМЯНСКАЯ ЦИВИЛИЗАЦИОННАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ВЕЛИКОГО КНЯЗЯ АРЦАХА АЙКАЗУН ХАСАНА-ДЖАЛАЛА ДОЛЫ 34

Владимир Евсеев,
О НЕКОТОРЫХ ПОДХОДАХ К УРЕГУЛИРОВАНИЮ НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА (ВЗГЛЯД ВОЕННОГО ЭКСПЕРТА) 39

Габелая А.С.
АБХАЗИЯ В ФОКУСЕ ВНИМАНИЯ МИРОВЫХ ДЕРЖАВ: ИСТОРИЯ И СОВРЕМЕННОСТЬ 43

Инеса Карапетян, Армине Габриелян
ИМПОРТНАЯ КЕРАМИКА ИЗ АРЦАХСКОГО ТИГРАНАКЕРТА 46

Тарон Акопян
НАЧАЛО И ОСОБЕННОСТИ ПРОЦЕССОВ ГОСУДАРСТВЕННОГО СТРОИТЕЛЬСТВА В НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКЕ (январь – апрель 1992г.) 52

Айк Акопян
ХОРАНАШАТСКИЙ МОНАСТЫРЬКАК ЕЩЕ ОДНО ПОДТВЕРЖДЕНИЕ АРЦАХСКОЙ РЕЛИГИОЗНО-ПОЛИТИЧЕСКОЙ И КУЛЬТУРНОЙ ЖИЗНИ (ОСНОВАННЫЕ НА НОВЫХ РУКОПИСЯХ И ЛИТОГРАФИИ) 56

Люба Киракосян
ОБОРОНИТЕЛЬНЫЕ СООРУЖЕНИЯ АРЦАХСКОГО ТИГРАНАКЕРТА В КОНТЕКСТЕ ЭЛЛЕНИСТИЧЕСКОЙ ФОРТИФИКАЦИИ 61

Александр Крылов
ПЕРВОЕ ДЕСЯТИЛЕТИЕ НКР: ОСОБЕННОСТИ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ 67

Марине Арутюнян
РАЗВИТИЕ НЕКОТОРЫХ ОТРАСЛЕЙ НАУКИ В АРЦАХЕ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 17-ГО ВЕКА И В НАЧАЛЕ 18-ГО ВЕКА 70

Арсен М елик-Шахназаров
АВГУСТОВСКИЙ ПУТЧ 1991 ГОДА И ПРОВОЗГЛАШЕНИЕ НКР 76

Эдик Минасян 81

Аревик Петросян,
ТЕОРИЯ МОДЕРНИЗАЦИИ: ФАКТОРЫ ПРЕПЯТСТВУЮЩИЕ МОДЕРНИЗАЦИИ НКР 90

Гамлет Петросян
АРЦАХСКИЙ ТИГРАНАКЕРТ И РЕЛИГИОЗНЫЕ РЕФОРМЫ ВАЧАГАНА БЛАГОЧЕСТИВОГО 96

В.А. Пономарёв
СЛАВНЫЙ БОЕВОЙ ПУТЬ ВЫДАЮЩЕГОСЯ НАРОДНОГО ПОЛКОВОДЦА ИЗ АРЦАХА: ОТ РЯДОВОГО ДО МАРШАЛА 110

Мгер Кумунц, Зограб Ркоян
МОСТ И ИСТОРИЧЕСКАЯ ТЕРРИТОРИЯ КАРАВАЗА / ХУДАПЕРИН/ 113

В.А.Сафарян
К ВОПРОСУ ФАЛЬСИФИКАЦИИ ИСТОРИИ АРЦАХА 121

Н.П.Сарумян
АРЦАХСКОЕ ДВИЖЕНИЕ КАК ПРОЯВЛЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ВОЗРОЖДЕНИЯ 125

Сепян К.А.
КОРНИ НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА 132

Геворг Степанян
РОЛЬ АРЦАХСКИХ АРМЯН В РАЗВИТИИ НЕФТЯНОЙ ПРОМЫШЛЕННОСТИ В БАКУ В КОНЦЕ 19-ОГО 137

И НАЧАЛЕ 20-ОГО ВЕКОВ

Таймауараз Тадтаев
ТРАГИЧЕСКИЕ СОБЫТИЯ В ЮЖНОЙ ОСЕТИИ В 1920 ГОДУ 142

Малик Телунц
ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА СЮНИКА И АРЦАХА В 1722–1730 ГГ. И РОССИЯ. ТЕРРИТОРИЯ И ОРГАНЫ САМОУПРАВЛЕНИЯ АРМЯНСКИХ ОБЛАСТЕЙ АРЦАХА И СЮНИКА 149

Татьяна Варданесова
СРЕДНЕВЕКОВАЯ ГЛАЗУРОВАННАЯ КЕРАМИКИ IX-XIII ВВ.ПО МАТЕРИАЛАМ РАСКОПОК ТИГРАНАКЕРТА В АРЦАХЕ 153

Арарат Варданян
ВКЛАД БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ И БЛАГОТВОРИТЕЛЕЙ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ОСУЩЕСТВЛЕНИИ ЗДРАВООХРАНИТЕЛЬНЫХ ПРОГРАММ В НКР 160

Рубен Заргарян,
ПОЛИТИКА ВЗАИМНОЙ ПОДДЕРЖКИ АЗЕРБАЙДЖАНА И МЕЖДУНАРОДНОГО ТЕРРОРИЗМА 165

Шаген Абрамян
РАЗМЫШЛЕНИЯ ПО ПОВОДУ ПРОЦЕССА СОЦИАЛИАЦИИ В НКР 170

Алвард Абрамян
ИСТОРИКО- ПОЛИТИЧЕСКИЕ АРГУМЕНТЫ СТРОИТЕЛЬСТВА ГОСУДАРСТВЕННОСТИ НКР 173

Лариса А. Алавердян
ЛЕГАЛЬНОСТЬ ОБРАЗОВАНИЯ И ЛЕГИТИМНОСТЬ ВЛАСТИ НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ (ПОЛИТИКО-ПРАВОВОЕ ОБОСНОВАНИЕ В КОНТЕКСТЕ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА И СОВРЕМЕННОЙ КОНЦЕПЦИИ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ) 176

Ваге Давтян
ЭНЕРГЕТИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ КАК СИСТЕМООБРАЗУЮЩИЙ ЭЛЕМЕНТ СТАНОВЛЕНИЯ И РАЗВИТИЯ ГОСУДАРСТВЕННОСТИ В НАГОРНОМ КАРАБАХЕ 184

Анна Акопян
СВЯЗЬ ВНУТРИНАУЧНЫХ И СОЦИАЛЬНЫХ ЦЕННОСТЕЙ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННОЙ НАУКИ 187

Армен Дилан Караян
АРЦАХ И НАЦИОНАЛИЗМ В ЗАПАДНОЙ ИДЕОЛОГИИ 189

Инал Санакоев
ГРУЗИНО-ОСЕТИНСКИЙ КОНФЛИКТ КАК КОНФЛИКТ ИДЕНТИЧНОСТЕЙ 193

Малик Телунц
«КАРАБАКСКИЙ КОНФЛИКТ» ПУТИ И ПРЕДПОСЫЛКИ ЕГО РЕШЕНИЯ: В СВЯЗИ С 25-И ЛЕТНЕГО ЮБИЛЕЯ НЕЗАВИСИМОСТИ НКР И РА И ПРОБЛЕМА СОЗДАНИЯ НАЦИОНАЛЬНОГО ЕДИНСТВА:В СВЕТЕ АПРИЛСКИХ СОБЫТИЙ 196

Мариета Никогосян
ЭТНИЧЕСКАЯ КУЛЬТУРА КАК ГАРАНТИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ 204

Грайр Пашаян, Лиана Балаян
РЕФЕРЕНДУМ НЕЗАВИСИМОСТИ НКР В 1991 ГОДА И КОНЦЕПЦИЯ ОТЛОЖЕННОГО РЕФЕРЕНДУМА В ПРОЦЕССЕ КАРАБАХСКОГО РЕГУЛИРОВАНИЯ 211

Александр Манасян
ИСТОРИЯ И ПРАВО В ПЕРЕГОВОРНЫХ ПРОЦЕССАХ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА 216

Арман Навасардян
ДИПЛОМАТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ АРМЕНИИ И НКР В СОВРЕМЕННЫХ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЯХ 221

Наира Согомонян
ВОПРОС О СУЩНОСТИ ЧЕЛОВЕКА— ОДНА ИЗ ОСНОВНЫХ ПРОБЛЕМ ФИЛОСОФИИ ЭКЗИСТЕНЦИОНАЛИЗМА 226

Армине Арзуманян
ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ РЕЧИ НА ОСНОВЕ ИЗУЧЕНИИ БУКВАРЯ 229

Нелли Атанесян
ПСЕВДОНИМЫ НА ХАЧЕНСКОМ ГОВОРЕ КАРАБАХСКОГО ДИАЛЕКТА 233

Карине Аванесян
ПРЕДЛОГ ի(յ) В ПРОИЗВЕДЕНИИ ЕГИШЭ « Վասն Վարդանայ...» 236

Офелия Бабаян
ЗАПАДНОАРМЯНСКИЙ: СТАРЫЕ И НОВЫЕ ПРОБЛЕМЫ 239

Сильва Минасян
ЭТИМОЛОГИЯ СЛОВ АРЦАХ, КАРАБАХ И ИХ СТИЛИСТИЧЕСКОЕ ПРИМЕНЕНИЕ В ПОЭЗИИ ОВАНЕСА ШИРАЗА 242

Шогер Минасян
ВЫРАЖЕНИЕ ЭКСПРЕССИВНЫХ ЯЗЫКОВЫХ СРЕДСТВ ВО ФРАЗЕОЛОГИЗМАХ КАРАБАХСКОГО ДИАЛЕКТА 246

Женя Погосян
СТИЛИСТИЧЕСКОЕ ПРИМИНЕНИЕ НЕКОТОРЫХ ЗАИМСТВОВАНИЙ НА ХАЧЕНСКОМ ГОВОРЕ 251

Армен Саркисян 255

ИССЛЕДОВАНИЕ ЭТНОГРАФИИ АРЦАХА В ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ

Шушаник Сагиян
СОСТАВНЫЕ СЛОВА ИЗ СЛОВООБРАЗУЮЩЕЙ ОСНОВЫ «АРЦАХ» В ЛИТЕРАТУРНОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ 260

Нуне Хачатрян
НЕКОТОРЫЕ ПРОЯВЛЕНИЯ САТИРЫ В ПОЭМЕ О. ШИРАЗА "ТОНДРАКИЙЦЫ" 263

Асмик Газарян
СОПОСТАВИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ КАТЕГОРИИ ЧИСЛА СУЩЕСТВИТЕЛЬНОГО В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ 267

Цовинар Асратян
ИЗОБРАЗИТЕЛЬНЫЕ СРЕДСТВА КАК СРЕДСТВО ОБОГАЩЕНИЯ ЛЕКСИКИ (СЛОВАРНОГО ЗАПАСА) 272

Мира Ярамишян
ТЕМА ГЕНОЦИДА В УЧЕБНИКЕ «МАЙРЕНИ» ДЛЯ НАЧАЛЬНОЙ ШКОЛЫ 276

Рена Мовсесян
СЕМАНТИЧЕСКИЕ ДИАЛЕКТИЗМЫ В ПРОИЗВЕДЕНИЯХ АРЦАХСКИХ ПИСАТЕЛЕЙ 279

CONTENTS

Hrant Abrahamyan
TRAGEDY OF SHUSHI IN 1988 3

Hasmik Amirjanyan
THE AGREEMENTS BETWEEN ARCHBISHOP HOVSEP ARGHUTYAN AND THE RUSSIAN FIGURES FOR THE LIBERATION OF ARTSAKH (THE END OF THE 18th CENTURY) 6

Andrey Areshev
THE MECHANISMS OF CONTAINMENT IN NAGORNO-KARABAKH ON THE BACKGROUND OF REGIONAL INSTABILITY 11

Iskuhi Avanessyan
THE WOMEN'S ACTIVITY IN PUBLIC- BENEVOLENT ORGANIZATIONS AND UNIONS IN ARTSAKH NATIONAL LIBERATIONAL STRUGGLE (1988-1994) 15

Sergey Hakhverdyan Gayane Shabunts
SPECIFY ING THE LOCATION OF MARGADZOR VILLAGE AND THE IDENTITY OF SYUNIK'S WOMAN WHO BUILT A CHURCH IN THAT VILLAGE 19

V. Balayan
THE INVASIONS OF AGHA MUHAMMAD KHAN TO SHUSHI IN 1795 AND IN 1797 AND THEIR CONSEQUENCES 22

Nelly E.Baghdasaryan
THE MANIFESTATION OF EXTERNAL BALANCES AT THE NEW STAGE OF ESCALATION OF THE AZERBAIJANI-KARABAKH CONFLICT/APRIL-JULY 2016/ 28

Eduard Danielyan
PAN-ARMENIAN CIVILIZATIONAL ACTIVITIES OF THE GREAT PRINCE OF ARTSAKH HAYKAZUN HASAN-JALAL DOLA 34

Vladimir Yevseev
ON SOME APPROACHES TO THE SETTLEMENT OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT (THE MILITARY EXPERT OPINION) 39

Aslan Gabelaya
ABKHAZIA IN THE FOCUS OF ATTENTION OF POWERS: THE HISTORY AND CURRENT STATE 43

Inesa Karapetyan, Armine Gabrielyan
IMPORTED CERAMICS OF TIGRANAKERT IN ARTSAKH 46

Taron Hakobyan
THE BEGINNING AND FEATURES OF STATE BUILDING IN THE NAGORNO-KARABAKH REPUBLIC (January-April of 1992) 52

Hayk Hakobyan
KHORANASHAT MONASTERY AS BRIGHT WITNESS OF ARTSAKH'S RELIGIOUS-POLITICAL AND CULTURAL LIFE (ON THE BASIS OF NEWLY DISCOVERED MANUSCRIPTS AND LAPIDARY INSCRIPTIONS) 56

Lyuba Kirakosyan
DEFENSE SYSTEM OF TIGRANAKERT OF ARTSAKH IN THE CONTEXT OF HELLENISTIC ARCHITECTURE 61

Alexander Krylov
THE FIRST DECADE OF THE NKR: PECULIARITIES OF ECONOMIC DEVELOPMENT 67

Marine Harutyunyan
THE DEVELOPMENT OF SOME BRANCHES OF SCIENCE IN ARTSAKH IN THE SECOND HALF OF THE 17TH CENTURY AND AT BEGINNING OF THE 18TH CENTURY 70

Arsen Meliq-Shakhnazarov
THE AUGUST 1991 PUTSCH AND NKR INDEPENDENCE 76

Edik Minasyan
INDEPENDENCE OF ARTSAKH, CONTEMPORARY STATE AND OBJECTIVES OF STUDYING THE HISTORY OF LIBERATION FIGHT, PROCLAIM AND PROCLAIM AND FORMATION OF STATEHOOD 81

Arevik V.Petrosyan
MODERNIZATION THEORY: FACTORS IMPEDING THE MODERNIZATION PROCESS IN NKR 90

Hamlet Petrosyan
TIGRANAKERT OF ARTSAKH AND THE RELIGIOUS REFORMS OF VACHAGAN THE PIOUS 96

Vladimir Ponomarev
GLORIOUS BATTLE PATH OF OUTSTANDING NATIONAL MILITARY LEADER FROM ARZAKH: RANK-AND-FILE TO MARSHAL 110

Mher Kumunts , Zohrab Rkoyan
BRIDGE KARAVAZ (KHUDAVERIN) AND ITS HISTORICAL TERRITORY 113

V. A. Safaryan
REGARDING THE ISSUE OF ARTSAKH'S HISTORY FALSIFICATION 121

Nouneh Saroumyan
ARTSAKH MOVEMENT AS A MANIFESTATION OF NATIONAL AWAKENING 125

Karina Sepyan
THE ROOTS OF THE NAGORNO KARABAGH CONFLICT 132

Gevorg Stepanyan
THE ROLE OF ARTSAKH ARMENIANS IN THE DEVELOPMENT OF OIL INDUSTRY OF BAKU AT THE END OF THE 19TH AND AT THE BEGINNING OF THE 20TH CENTURIES 137

Taymuraz Tadtayev
TRAGIC EVENTS IN SOUTH OSETIA OF 1920 142

Malik Telunts
THE LIBERATION MOVEMENT OF 1722 TO 1730 IN SYUNIK AND ARTSAKH AND RUSSIA. THE TERRITORIES 149

AND LOCAL AUTHORITIES OF ARTSAKH AND SYUNIK	
Tatiana Vardanesova *THE MEDIEVAL GLAZED CERAMICS OF THE IX-XIII CENTURIES FROM THE EXCAVATIONS OF TIGRANAKERT IN ARTSAKH*	153
Ararat Vardanyan *THE CONTRIBUTION OF THE BENEVOLENT ORGANIZATIONS AND ARMENIAN BENEFICIARIES FROM THE DIASPORA TO THE HEALTH PROJECTS REALIZATION IN THE NKR*	160
Ruben Zargharyan *THE POLICY OF MUTUAL SUPPORT OF AZERBAIJAN AND INTERNATIONAL TERRORISM*	165
Shahen Abrahamyan *CONTEMPLATIONS ON THE PROCESS OF SOCIALIZATION IN THE NKR*	170
Alvard *Abrahamyan* *HISTORICAL AND POLITICAL ARGUMENTS OF THE STATEHOOD BUILDING IN THE NKR*	173
Larisa Alaverdyan *THE LEGALITY OF THE FORMATION AND THE LEGITIMACY OF POWER OF NAGORNO KARABAGH REPUBLIC (POLITICAL-LEGAL GROUNDING IN THE CONTEXT OF INTERNATIONAL LAW AND THE CONTEMPORARY CONCEPTION OF INTERNATIONAL RELATIONS)*	176
Vahe Davtyan *ENERGY SECURITY AS A BACKBONE ELEMENT OF FORMATION AND DEVELOPMENT OF STATEHOOD IN NAGORNO KARABAKH*	184
Anna Hakobyan *THE LINK BETWEEN INTRA-SCIENTIFIC AND SOCIAL VALUES IN THE CONTEXT OF THE CONTEMPORARY SCIENCE*	187
Armen Dylan Karayan *ARTSAKH AND NATIONALISM IN WESTERN IDEOLOGY*	189
Inal Sanakoev *THE GEORGIAN-OSSETIAN CONFLICT AS A CONFLICT OF IDENTITIES*	193
Malik Telunts *KARABAGH CONFLICT: ITS SOLUTION AND PREREQUISITES IN THE EVE OF THE 25TH ANNIVERSARY OF INDEPENDENCE OF THE REPUBLIC OF NAGORNO-KARABAGH AND REPUBLIC OF ARMENIA AS WELL AS THE MAIN ISSUE OF THE CREATION OF A NATIONAL UNITY WITHIN THE FRAME OF APRIL EVENTS*	196
Marieta K. Nikoghosjan *ETHNIC CULTURE AS NATIONAL SECURITY GUARANTEE*	204
Hrayr Pashayan, Liana Balayan *THE REFERENDUM OF THE NKR INDEPENDENCE IN THE 1991 AND THE CONCEPTION OF THE DELAYED REFERENDUM IN THE PROCESS OF THE SETTLEMENT OF KARABAKH CONFLICT*	211
Alexander Manasyan *HISTORY AND LAW IN KARABAKH CONFLICT NEGOTIATION PROCESS*	216
Arman Navasardyan ARMENIAN AND NKR PROBLEMS OF FOREIGN POLICY AND DIPLOMACY IN PRESENT INTERNATOINAL RELATIONS	221
Naira Soghomonyan *THE QUESTION OF BEINGNESS AS THE MAIN PROBLEM OF PHILOSOPHY OF EXISTENTIALISM*	226
Armine Arzoumanyan *PROBLEMS OF SPEECH DEVELOPMENT ON THE BASIS OF RESEARCH OF THE PRIMER BOOK*	229
Nellie Atanesyan *NICKNAMES IN KHACHEN ACCENT OF THE KARABAKHIAN DIALECT*	233
H.K. Avanesyan *THE USE OF PREPOSITION I(J) IN EGHISHE'S " VASN VARDANAJ...."*	236
O. Babayan *WESTERN ARMENIAN: OLD AND NEW PROBLEMS*	239
Silva Minasyan *THE ETYMOLOGY OF WORDS ARTSAKH, KARABAKH AND THEIR USAGE IN THE POETRY OF H. SHIRAZ*	242
Sh. Minasyan *OCCURRENCE OF LINGUISTIC EXPRESSIVE MEANS IN THE IDIOMS OF THE KARABAGH DIALECT*	246
Zhenya Poghosyan *STYLISTIC USAGE OF SOME BORROWINGS IN KHACHEN DIALECT*	251
Armen Sargsyan *THE STUDY OF ARTSAKH ETHNOGRAPHY DURING THE YEARS OF INDEPENDENCE*	255
Shushanik Saghyan *COMPOUND WORDS WITH STEM OF DERIVATION «ARTSAKH» IN THE LITERARY ARMENIAN*	260
Khachatryan N. G. *SOME FORMS OF SATIRE IN H. SHIRAZ'S POEM "TONDRAKIANS"*	263
Hasmik Ghazaryan *COMPARATIVE STUDY OF THE CATEGORY OF NUMBER OF THE NOUN IN MODERN ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH*	267
Tsovinar Asratyan *EXPRESSIVE MEANS AS MEANS ENRICHMENT OF LEXICON*	272
Mira Yaramishyan *ARMENIAN GENOCIDE IN «MAYRENI» TEXTBOOK OF JUNIOR SCHOOL*	276
Rena Movsesyan *SEMANTIC DIALECTISMS IN THE WORKS OF ARTSAKH WRITERS*	279

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
(հոդվածների ժողովածու)

SCIENTIFIC READINGS
(collection of articles)

НАУЧНЫЕ ЧТЕНИЯ
(сборник статей)

Տեխնիկական խմբագիր՝ Ռ. Հովսեփյան

Հանձնված է շարվածքի՝ 25.10.2016թ.: Ստորագրված է տպագրության՝ 14.12.2016թ.: Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ; Ծավալը, 36,25 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100:

Հիմնադիր՝ Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5
հեռ. (047) 94-04-91, ֆաքս (047) 97-12-14
E-mail: rector@asu.am
ԱրՊՀ հրատարակչություն՝ հեռ. (097) 34-01-86,
e-mail printery.asu@mail.ru

Основатель – Арцахский государственный университет г.Степанакерт, ул.Мхитара Гоша 5,
тел. (047) 94-04-91, факс (0479) 7-12-14
Издательство АрГУ: тел. (097) 34-01-86

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert

Tel.: (047) 94-04-91, Fax: (0479) 7-12-14
ASU Publishing house: tel. (097) 34-01-86